

Նատալիա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

Մարդն ու կենդանական
աշխարհը
(Աստվածաշնչյան դիտումներ)



«Ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների
յայտնութեանը, քանի որ ստեղծուածները ունայնութեանը հնազանդուեցին (ոչ
իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստուած հնազանդեցրեց նրանց) այն
յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան
ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար.
քանզի գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են
մինչեւ այժմ. եւ ոչ միայն այսչափ . այլ եւ մենք իսկ, որ Հոգու առաջին պտուղն
ունենք, մենք եւս մեր մէջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրութեանը՝ մեր
մարմնի փրկութեանը»
(Էջմիածնի թարգ. - Հոով 8: 19-23)

Բուենոս Այրես 2024

Նատալիա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

Մարդն ու կենդանական աշխարհը
(Աստվածաշնչյան դիտումներ)

Բուժնոս Այրեն 2024

Ter-Grigorian de Demianiuk, Natalia
Mardn u kendanakan ashjarhn : observaciones bíblicas / Natalia Ter-Grigorian de
Demianiuk. - 1a edición especial - Ciudad Autónoma de Buenos Aires : Credo, 2024.
Libro digital, PDF
Archivo Digital: descarga y online
ISBN 978-631-90705-0-7
1. Biblia. 2. Ciencias Sociales y Humanidades. I. Título.
CDD 220.07

Գրքի՝ շապիկը վերցված է համացանցից: Ցավոք, չգտա նրա հեղինակի անունը:

Գիրքը նվիրված է Պողոս առաքյալի Հռոմեացիներին ուղղված թղթի 8: 19-23 հատվածի տեքստային վերլուծությանը, որտեղ խոսվում է մարդու և կենդանիների միջև եղած էական կապի մասին, որն իր հերթին թույլ է տալիս մեզ քողագերծել աստվածաշնչյան տեքստի մեջ մարդու կողմից մտցված կեղծիքներն ու մանիպուլյացիաները հոգուտ մարմնի և ի հակառակ Սուրբ Ռգու:

Բովանդակություն

Ներածություն: Փարիսեցիական եկեղիցիներ	4
1. Հարցի պատմությունը՝ համառոտ	4
2. Ի՞նչ է իրականում ասվում Ծննդոցի 9-րդ գլխի 1-6-րդ համարներում, որոնք բոլոր Եկեղեցիները մեկնաբանում են որպես կենդանիների միա ուտելու թույլտվություն:	9
3. Ղևտացին և նրա տեկստի աղավաղումը բացահայտող մարգարեները:	23
ա) Ղևտացին մասկերության մասին:	23
բ) Ղևտացին զոհաբերությունների և ողջակեզությունների մասին	27
I. Մարդը եւ կենդանական աշխարհը:	38
Նախաբան. Մարդու և կենդանիների, թռչունների, սողունների եւ ձկների բնության կապի մասին	38
ա) Այրը (Մարդը)	42
1. Կենդանի հոգի	42
2. Հոգու կոնցեպցիան քրիստոնեական աստվածաբանություններում	45
3. Աստվածաշունչը հոգու և մարմնի մասին: «Մերկ» հոգին ու «կաշվե զգեստները»	52
4. Հոգու հրեշտակային բնույթը, կամ առաջնաստեղծ օրհնված «երկիրը» և նրա ստեղծման նպատակը: Ադամը դրախտում	56
5. Անկման «հողը» կամ «մարմինը»: Ժամանակավոր աշխարհ:	70
6. Ժամանակավոր աշխարհի վերջը	78
7. Շնչավոր (Ոգու) մարմինը որպես հարության կամ Յոթերորդ օրվա մարմին:	85
II. Կենդանական աշխարհը (եզրակացություններ եւ քննադատություններ)	95
Եզրակացություն առաջին	95
Եզրակացություն երկրորդ	101
Եզրակացություն երրորդ	105
Վերջաբան	116

Ներածություն Փարիսեցիական եկեղիցիներ

«Ոչ թե ամեն ինձ Տէ՛ր, Տէ՛ր ասողը կ'մտնէ երկնքի արքայութիւնը. Այլ նա որ կատարում է իմ Հօր կամքը, որ երկնքումն է: Շատերը կ'ասեն ինձ այն օրը, Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, եւ քո անունովը դուեր հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք: Եւ ես այն ժամանակ պարզ կ'ասեմ նորանց, թէ Երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ:»
(Մաթ 7: 21-23)

1. Հարցի պատմությունը՝ համառոտ

Մարդը մեր մոլորակում ապրում է շրջապատված տարբեր տեսակի կենդանիներով, թռչուններով, սողուններով և ձկներով, ճիշտ այնպէս, ինչպէս Աստվածն է շրջապատված Իր արարածներով: Եվ չնայաց նրան, որ նա ակնհայտորեն տարբերվում է այլ արարածներից, նրանց միջև ինչ-որ սուբստանցիալ կապ կա, որը դրսևորվում է նրանով, որ Աստծո բոլոր արարածները բազմանում են մարդու նման, ինչպէս և մարդը, նրանք սիրում են իրենց ձագերին և խնամում նրանց: Ուշադիր դիտորդը նկատում է, որ նրանց, ինչպէս և մարդուն (նույնիսկ, գուցե, ավելի մեծ չափով), բնորոշ է սեր ու երախտապարտություն զգալ իրենց բարերարի հանդէպ, ամբողջովին նվիրվելով նրան և նույնիսկ, ինչպէս վկայում են բազմաթիվ օրինակներ, զոհաբերելով իրենց հանուն նրա, - և դա այն պարագայում, որ այդ արարածները, ինչպէս և մարդը, ցանկանում են ապրել և զգվանք են զգում մահվան առջև: Ինչպէս և մարդը, նրանք ոչ միայն ֆիզիկական ցավ են զգում, երբ խոցում են իրենց մարմինը կամ երբ սպանում են նրանց, այլ նաև հոգեկան ցավ, երբ խլում են իրենցից կամ սպանում իրենց ձագերին, կամ երբ նրանց դավաճանում է այն մարդը, որին լիովին վստահում էին, տեսնելով նրա մեջ Աստծուն, - ինչը զարմանալի չէ, չէ՞ որ մարդը ստեղծվել է որպէս Աստծո պատկեր ու նմանություն և իրականում՝ չար թե բարի, այդպիսին է նրանց աչքերում: Վերջապէս, նրանցից շատերը, որոնց մարդը առհամարհանքով գիշատիչ է անվանում, նույնքան գիշատիչ են, որքան գիշատիչ է ինքը մարդը, քանի որ նա էլ է սպանում Աստծո արարածներին, որ սնվի իրենց մսով, այսինքն սպանում և ուտում է նրանց, ում Աստվածը կյանք է տվել, ինչպէս և իրեն:

Այդքան նմանություններ ունենալով կենդանիների, թռչունների, սողունների ու ձկների հետ՝ մարդը, որ ամենից վեր իր կյանքն է գնահատում, հակառակ ձևով բոլորովին չի արժեւորում այդ արարածների կյանքը, կարծելով, որ նրանք

ստեղծված են միայն իր կարիքները բավարարելու ու սպասարկելու համար և, առանց աչք թաղթելու, որսում է նրանց, կոտորում սպանդանոցներում, նրանց միաբնակարանում, նրանց բրդից ու կաշվից իրեն համար հագուստ ու կոշիկ ստեղծելու նպատակով: Նրանց մարմնի վրա է փորձարկում իր բուժման համար պատրաստվող դեղանյութերը: Օգտագործում է նրանց կրկեսներում և կենդանաբանական այգիներում իր ժամանցի ու հաճույքի համար... մինչդեռ նման վերաբերմունքը իր հանդեպ հանցագործությունն է համարում:

«Մի՛ սպանիր», - ասում է Տերն Իր որդիներին (Ելք 20:13): Ուրեմն ինչո՞ւ է մարդը սպանում և այդքան դաժանորեն վարվում Աստծո մյուս արարածների հետ՝ ոչնչի տեղ դնելով նրանց և զրկելով իրենց ամենաթանկածեղ ունեցվածքից՝ իրենց կյանքից ու ազատությունից: Կասե՞ք, որովհետև մարդը ստեղծվել է Արարչի պատկերով ու նմանությամբ. Այո՛, նա ստեղծվել է այն միտումով, որ իր մեջ բացահայտվի Սրբագույն Արարիչը, բայց Սրբագույն Արարիչը կյանք է տալիս և ոչ թե խլում այն. Նա կենարար Ոգի է, որն սիրում ու հոգ է տանում Իր յուրաքանչյուր արարածի կյանքի համար: Կարծես թե նույնը պիտի աներ նաև մարդը, ստեղծված որպես Աստծո պատկեր ու նմանություն: Բայց նա, ի հակառակ դրան, մահ ու սարսափ է սփռում իր շուրջը:

Հայտնի է, որ Արարչի Խոսքին հակառակ Օձի խոսքը նախընտրելով՝ մարդը ոգով նմանվեց նրան, ում խոսքը նախընտրեց, և, ինչպես հետևանք, Աստծո պատկեր լինելու փոխարեն ընդունեց Նրա հակառակորդի հրեշտային պատկերը, սկիզբ դնելով այն ողբերգությանը, որը Աստծո կողմից կյանքի և ուրախության համար ստեղծված արարածներին (ներառյալ մարդուն), ընկղմեց մասայական սպանդի ու առանձին սպանությունների, դավաճանությունների ու դաժանությունների մղձավանջի մեջ: Այսպիսով ամեն մի կենդանի հոգի, որ ծնվում է երկրի վրա, կրելով իր մեջ կյանքի ու երջանկության ակնկալիք, շուտով բախվում է հրեշտավոր մի դաժանության հետ, որը զրոյացնում է ծնվածի բոլոր սկզբնական ակնկալիքները, լինի դա մարդ թե այլ կենդանի արարած: Այդ պատճառով է Հիսուսն ասել. «Մի սիրե՛ք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մեջ է: Եթե մեկը աշխարհը կսիրե, ազնոր ներսիդին Հորը սերը չկա» (1 Հովհ 2: 15):

Սակայն իր մեծության պատրանքի մեջ ապրող՝ մարդը, կարծես թե, չի ընկալում այդ ամենը ու, փաստորեն, պատանդ պահելով Աստծո մյուս արարածներին, բացարձակ անտարբեր է մնում նրանց տառապանքների առջև և դրանով հանդերձ անհեթեթորեն շարունակում է իրեն Սուրբ Աստծո պատկերն ու նմանությունը համարել:

«Մարդ» ասելով, նկատի ունեմ, իհարկե, նրա աշխարհում գերիշխող կերպարը: Սակայն մոլորակի լավագույն մարդիք միշտ աչքի են ընկել բարի ու կարեկից վերաբերմունքով իրենց կողքը ապրող այլ կենդանի էակների նկատմամբ և միշտ իրենք իրենց հարց են տվել. ո՞րն է կենդանիների, թռչունների, սողունների և ձկների տեղը արարչության մեջ և արդյոք ճիշտ է սպանել նրանց, ու սնվել իրենց մսով:

Այս հարցը տվել են իրենց նաև քրիստոնյա աստվածաբաններից շատերը, որ անզգա չեն մնացել Աստծո այլ արարածների գոյության դաժան իրականության առջև, սակայն իրենց մտորումներում ոչ մի եզրակացության չեն կարողացել գալ: Նրանցից մեկն է, օրինակ, Օկսֆորդի աստվածաբան, կենդանիների պաշտպանությանը նվիրված բազմաթիվ գրքերի հեղինակ՝ Էնդրյու Լինզեյը (Andrew Linzey): Խորապես ցավաքցելով Աստծո բոլոր արարածների տառապանքներին նա ձեռնարկեց քննել, թե ինչպես է քրիստոնեական աստվածաբանությունը պարզաբանում կենդանիների խնդիրը: Այդ հարցը ուսումնասիրելուց հետո նա գրեց իր «Animal Theology» գիրքը, հրատարակված Իլինոյսի համալսարանի կողմից 1995 թվականի հունվարի 1-ին, որը ես կանվանեի աստվածաբանական տեսակետների անթույլգիա, նույն հարցի վերաբերյալ քանի որ այն ընդգրկում է ամենանշանավոր (հիմնականում արևմտյան, կաթոլիկ և բողոքական) աստվածաբանների և բոլոր Եկեղեցիների կողմից ընդունված հին փիլիսոփաների աշխատությունները: Սակայն դրված հարցին նա այդպես էլ հստակ պատասխան չգտավ:

Նույնը կարելի է ասել Ուղղափառ Եկեղեցու աստվածաբանների և եկեղեցականների տեսակետների մասին նշված հարցի շուրջը, թեև վերջերս կարծես թե միտում է նկատվում ավելի մարդասիրական վերաբերմունքի դեպի, ինչպես նրանց անվանում են, «մեր կրտսեր եղբայրները»: ¹ Բայց այնուհանդերձ այստեղ ևս մենք չենք գտնում այդ հարցի հստակ դիրքորոշում կամ պատասխան: Դրա պատճառը, ինչպես խոստովանում է հայտնի ուղղափառ աստվածաբան Ա.Ի. Օսիպովը, նրանում է, որ «հարցը դեռևս չի ուսումնասիրվել Եկեղեցու կողմից, և, - ըստ իրեն, - պետք էլ չի, որ ուսումնասիրվի, քանի որ կարևորը մարդն է, մարդու մասին պիտի խորհել, այլ ոչ թե այլ արարածների, որ ոչ մի կարևորություն չունեն»: ²

Այսպիսի հայտարարություն անելով՝ պարոն Օսիպովը չի նկատում, որ Աստծո մի դաժան պատկեր է ստեղծում, քանի որ Արարիչը այդ «նշանակություն չունեցող կենդանի արարածներին» նույն զգացմունքներն է տվել, ինչպես և մարդուն: Բացի դրանից, նա մոռանում է, որ Աստված ոչ մի աննշան բան չի ստեղծում. Նրա մոտ ամեն ինչ փոխկապակցված է, ամեն ինչ կարելու է և լի իմաստով: Նա, ով դա չի հասկանում, չի ճանաչում Աստծուն :

Ինչ վերաբերում է Հայ եկեղեցուն, նա խուլ ու համր է մնում այդ հարցի վերաբերյալ: Ավելին, ինչպես և այլ Եկեղեցիները, գլխավորապես բառացի ընդունելով սուրբ տեքստը՝ նա ի տարբերություն մյուսներից, *օրինականացրել է* զուտ հեթանոսական մի անախրոնիզմ, ծնված, ինչպես կտեսնենք, Աստծո Խոսքի սխալ մեկնաբանությունից, որը «մատաղ» է կոչվում ու վերաբերում կենդանիների զոհաբերությանը, անընդունելի սրբություն ու բարություն քարոզող Աստվածաշնչի համար: Բայց հարկ է նկատել, որ վերջին հաշվով ոչ միայն Հայ Եկեղեցին, այլև բոլոր մյուս Եկեղեցիները մաքուր չեն Աստծո արարածների արյունից, քանի որ նրանցից ոչ մեկը չի դատապարտում կենդանի հոգիների սպանությունը հանուն մարդու արգանդի բավարարման, որի

պատճառով էլ բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները, հեթանոսների նման, հաճույքով ուտում են մորթված կենդանիների, թռչունների և ձկների միսը, չտեսնելով դրա մեջ ոչ մի դատապարտելի բան:

Այսպիսով նշանակում է, որ բոլոր Եկեղեցիները հավասարապես խուլ են Աստծո արարածների տառապանքների առջև և բոլորը մեղսակից են Աստծո կողմից ստեղծված կենդանի հոգիների սպանությանը:

Ուրեմն, կարող ենք եզրափակել, որ քրիստոնեական բոլոր դավանանքների աստվածաբանությունը հստակ պատասխան չի տալիս քննարկվող հարցին: Եվ դրա պատճառը այդ դավանանքների կողմից միահունչ որդեգրված Օննդոցի 9-րդ գլխի 1-6 տողերի սխալ ու պարտադրված մեկնաբանությունն է, ըստ որին մարդուն իբր թե թույլատրվում է միս ուտել, թափելով Աստծո արարածների արյունը - կարծես թե յուրաքանչյուր կենդանի արարած հենց այն բանի համար է ստեղծված, որ կերակուր դառնա մարդու համար: Այդ դավանանքները, չնայած իրենց կողմից հայտարարված տարբերությունների, միավորված են այն համոզմունքի մեջ, որ Աստվածը, թեև սկզբում մարդկանց ու կենդանիներին միայն բուսական սնունդ է պատգամել (Օննդոց 1: 29-30), բայց հետո՝ Նոյի հետջրհեղեղյան «ժամանակներում», փոխել է իր սկզբնական խոսքը և թույլ տվել մարդուն ուտել Իր մյուս արարածների միսը (Օննդոց 9: 1-6): **Վերոհիշյալ տողերի** հենց այսպիսի, հավատք դարձած, մեկնաբանությունն է, որ շփոթության է հանգեցնում և խանգարում է եկեղեցականներին ու Աստվածաշունչը ուսումնասիրողներին վճռականորեն դիրքորոշվել այս հարցում: Այդ դիրքորոշման բացակայության պատճառով էլ նրանց գրվածքները բաղկացած են միայն հարցերից, որ հստակ պատասխան չունեն:

Սակայն հստակ պատասխանը ոչ միայն կա, այլ ևս, ինչպես կտեսնենք ստորև, ակնհայտ է, թեև Եկեղեցիները համառորեն հրաժարվում են դա նկատել: Բացի այդ, այն ընկած է արարչության մեջ մարդու դերի հետ կապված Աստծո Խոսքի հիմքում, որի մասին ես խոսել եմ իմ նախքին գրքերում և դեռ կխոսեմ այստեղ: Բայց այդ պատասխանը հնարավոր է գտնել միայն Սուրբ Գրքի տեքստերի ամբողջական ուսումնասիրության հետևանքում, այլ ոչ թե առանձին գրքերի կամ հատվածների մեկնաբանությամբ, քանի որ Աստվածաշնչի ճշմարտությունը նման է մի մեծ խճանկարի, որի քարերը ցրված են Սուրբ գրությունների բոլոր գրքերի միջև, և վերակազմել այն հնարավոր է միայն գտնելով այդ ցրված քարերը և միացնելով դրանց ըստ իմաստի:

Ինչպես արդեն նշեցի, նույն հարցը դիտարկել եմ նաև ես իմ աշխատություններում, հատկապես դրանցից երեքում: Առաջին հերթին դա ռուսերեն ու իսպաներեն լեզվով գրված «*Библейские корни вегетарианства*»/ «*Las raíces bíblicas del vegetarianismo*» գրքուկն է, որը 2012 թվականին էլեկտրոնային տարբերակով հրատարակել եմ իմ «*Таинство Святой Троицы*»/ «*El misterio de la Santísima Trinidad*» ժողովածուում: Այնուհետև անդրադարձել եմ այդ հարցին քրիստոնեական բոլոր դավանանքներին նվիրված իմ վերոհիշյալ լեզուներով գրված «*Болезни земной Церкви, или вопреки учению Иисуса Христа*»/ «*Las*

afecciones de la Iglesia terrenal o pése a la enseñanza de Jesucristo” 2015 թվականին նույն ձևով հրատարակված գրքի «*O mataxe, практикуемом в Армянской церкви*»/ «*Acerca de “mataj” que se practica en la Iglesia apostolica armenia*» գլխում, որը 2020 թվականին հրատարակել էմ նաև հայերեն լեզվով «*Մատաղի մասին*» վերնագրի տակ իմ միայն հայերեն լեզվով գրված «*Աստվածաշնչի հայ թարգմանության և աստվաբանության մութ կողմերը*» ժողովածուում: Եվ, վերջապես, կրկին վերադարձել էմ այս նյութին 2022 թվականին հրատարակված իմ եռալեզու «*Երկակի չափանիշներ Աստվածաշնչում և աստվածաշնչյան պարականոն գրվածքներում. Ո՞վ է դրանք ներդրել սուրբ տեքստի մեջ:*» գրքի «*Մարդու սնունդի հետ կապված հակասությունները, որ գտնում ենք աստվածաշնչյան պարականոն «Հոբեյանների գրքում»*» գլխում: ³

Չնայած նրան, որ հիշատակված գործերում ես ընդհանուր ձևով արդեն պատասխանել էմ այդ հարցին, այնուամենայնիվ անհրաժեշտություն էմ տեսնում նույն հարցը ներկայացնել ավելի ընդլայնված ու խորը ձևով:

Կսկսեմ հենց այն սկզբնաղբյուրի վերլուծությունից, որում, իբր թե, մարդուն թույլտվություն է տրվել ուտել Աստծո այլ արարածների միսը:

1. Տե՛ս, օրինակ, Քրիստոֆեր Անատոլիչ Կուդենսկու «*Կենդանիների նկատմամբ վերաբերմունքը ուղղափառ աստվածաբանության մեջ*» հոդվածը, որը հրապարակվել է 2016 թվականի մայիսին Երիտասարդ գիտնականի թիվ 9 (113)-ում

2. Տես «*Какая посмертная участь ждет животных?*»: «*вопрос этот пока не исследован Церковью, да и нет в этом необходимости, так как важен только человек, и Церковь должна заниматься лишь исследованием того, что касается человека, а не животных, не имеющих никакого значения*».
<https://www.youtube.com/watch?v=gTup5qTzPIM>

3. Տես իմ www.criteriocristiano.com.ar կայքի մեջ:

2. Ի՞նչ է իրականում ասվում Ծննդոց 9-րդ գլխի 1-6-րդ համարներում, որոնք բոլոր Եկեղեցիները մեկնաբանում են որպես կենդանիների միս ուտելու թույլտվություն:

Այսպիսով, բոլոր երկրային Եկեղեցիները հավատում են, որ Աստված սկզբում միայն բուսական սնունդ էր տվել մարդուն, իսկ Ջրհեղեղից հետո՝ Նոյի օրոք, փոխել է Իր Խոսքը և թույլ տվել նրան ուտել Իր կենդանի արարածների միսը: Ուստի այդ եկեղեցիները ներկայացնող հոգևորականները ոչ միայն չեն դատապարտում մսակերությունը, այլև իրենք էլ են միս ուտում:

Բայց նույնիսկ դեռ չանդրադառնալով բուն տեքստերին, կարող ենք նկատել, որ հենց այն հայտարարությունը, թե Տերը փոխել է Իր Խոսքը, հակասում է Տիրոջ և Իր Խոսքի անփոփոխ էությանը, որը արձանագրվել է մարգարեների ու առաքյալների միջոցով: Օրինակ՝ Հակոբ առաքյալը Աստծուն «Լույսի Հայր» անվանելով, նշում է նաև, որ Նրա «մեջ չկայ փոփոխում կամ էլ փոփոխման ստվեր» (Հակոբ 1:17- էջմ.), կամ Եսայիա մարգարեն, ում շրթերով Տերն ասում է. «Անձովս եմ երդումս, որ ինչ էլ դուրս գայ իմ բերանից՝ արդարություն է, եւ իմ խօսքերը չեն եղծուելու» (Էս 45: 23- էջմ)

Նշանակում է. Տիրոջ խոսքը անփոփոխ է:

Այսպիսով, առաջին եզրակացությունը, որ մենք կարող ենք անել այս և նման հայտարարություններից, այն է, որ Տիրոջ կողմից Իր Խոսքը փոխելու գաղափարը կեղծ է, նույնիսկ չնշելով այն փաստը, որ Տերը փորձարկող չէ, փորձերի միջոցով փնտրող ճշմարտությունը, այլ, ըստ Երեմիա մարգարեի, հենց ինքը ճշմարտությունն է (Երեմիա 10.10): Նույնը ընդգծեց նաև Հիսուս Քրիստոսը, խոսելով Իր և Հոր Խոսքի նույնության մասին.

«Ես եմ Ճանապարհը եւ Ճշմարտությունը եւ Կեանքը:» (Հովհ 14: 6) և «քո խօսքը ճշմարտություն է:» (Հովհ 17: 17)

Իսկ ճշմարտությունը այլընտրանք չունի, քանի որ նա միակն է և գտնվում է Արարչի Խոսքի մեջ, որ ամփոփոխ է, ինչից բխում է երկրորդ եզրակացությունը. Նոյին հետջրհեղեղյան «Ժամանակներում» տրված Աստծո պատգամը ոչ մի կերպ չի կարող իր էությամբ տարբերվել նրանից, որը Արարիչը տվել էր ի սկզբանե Ադամին, քանզի Նրա Խոսքը «չի եղծվում», այսինքն՝ չի փոխվում:

Մյուսն էլ Աստծո Խոսքից բխող տրամաբանական եզրակացություններ են, որոնց հետ ոչ մի ողջամիտ մարդ չի կարող չհամաձայնվել: Բայց, ինչպե՞ս եղավ, որ Աստծո Խոսքի մեկնաբաններն ու թարգմանիչները դա չնկատեցին: Ինչի՞ մասին է դա վկայում, եթե ոչ աստվածաբանության չկայացման մասին: Պատճառը նախ այն է, որ մեկնաբաններն ու թարգմանիչները կապեր չեն փնտրում Աստվածաշնչի տարբեր գրքերում ցրված հաղորդակցությունների մեջ, հաճախ նաև Աստծո Խոսքն չընկալելով, սխալ թարգմանություններ են անում և, վերջապես, հաճոյանում ու ծառայում են ավելի իրենց մարմնի պահանջներին, քան Տիրոջը, դրանով իսկ հիշեցնելով այն «սերմերին», որ ըստ Հիսուսի առակի, ընկել էին «Ճանապարհի եզերքին» կամ «փշերի մեջ» (Մթ 13: 4, 7, 18-19, 22): Այսինքն՝ կա՛մ աստվածաբանները չեն կարողացել ըմբռնել Աստծո Խոսքի

իմաստը, կա՛մ էլ աշխարհի մարմնական շահերը վերջնականապես ստվերել են նրանց միտքն ու խիղճը:

Այժմ անցնենք Աստծո կողմից մարդուն և Իր մյուս կենդանի արարածներին տրված սննդին վերաբերող Ծննդոցի առաջին և իններորդ գլուխների տեքստերի համեմատական վերլուծությանը, որը, ինչպես կտեսնենք, միայն կհաստատի վերը նշված եզրակացությունները:

Առաջին տեքստում ասվում է.

«Եւ Աստուած ասեց. Ահա ամեն խոտը որ սերմ ունի բոլոր երկրի վերայ եւ ամեն ծառ՝ որի մէջ կայ սերմ տուող ծառի պտուղ, ձեզ տուի որ ձեզ համար կերակուր լինի. Եւ երկրի բոլոր կենդանիների եւ երկնքի բոլոր թռչունների եւ երկրի վերայ բոլոր սողունների համար, որոնց մէջ կենդանութեան շունչ կայ, ամեն կանաչ խոտը կերակուր լինի: Եւ այնպէս եղաւ:» (Ծնդ 1: 29-30 – Արարատ թ.)

Նշենք, որ այս տեքստը բացարձակապես պարզ է և որևէ կասկածի տեղիք չի տալիս. ինչպես մարդուն, այնպես էլ մյուս կենդանի արարածներին բուսական կերակուր է տրվում, այսինքն՝ այն, որ աճում ու սերմ է ցանում: Բնականաբար, այստեղ մսի ու արյան մասին խոսք չկա, քանի որ դրանք մարդու անկումից հետո են առաջացել, իսկ մինչ այդ մարդը մի մերկ կենդանի հոգի ¹ էր, որ սպասում էր իր անապական հագուստին: ²

Բայց նույնիսկ Ադամի անկումից հետո, երբ Աստված նրան անապական հավիտյալ հագուստի փոխարեն ժամանակավոր *«կաշվի զգեստ»* հագցրեց մսից և արյունից բախկացած, այս պատգամը մնում է նույնը, քանի որ կրկին ի ցույց բերելով Իր Խոսքի անփոփոխությունը, Տերը ասաց նրան. *«Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կեանքի բոլոր օրերին: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, եւ դու դաշտային բոյսերով սնուես: Քո երեսի քրտինքով ուտես հացը»* (Ծնդ 3: 17-19): Այսինքն՝ սնունդը մնում է նույնը (*դաշտային բոյսերով սնուես*), բայց հողի աղքատացման պատճառով դժվարանում է հացի ձեռք բերումը:

Այժմ անցնենք նույն Ծննդոցի 9-րդ գլխի տեքստին, որը վերաբերում է Նոյի հետջրհեղեղյա ժամանակներին և որտեղ, իբր թե, Տերը թույլ է տալիս մարդուն միս ուտել.

«Ամեն մի կենդանի զեռուն թող կերակուր լինի ձեզ, ինչպէս խոտն ու բանջարն եւ տուել: Կենսատու արիւն պարունակող միս չուտէք, քանզի ես էլ ձեր կենսատու արիւնը կը պահանջեմ, բոլոր գազանների, ինչպէս նաեւ մարդու միջոցով կը պահանջեմ այն: Մարդու միջոցով պիտի պահանջեմ իր եղբօր հոգին: Ով թափի մարդու արիւնը, նրա արեան փոխարէն թող թափուի իր արիւնը, որովհետեւ Աստծու պատկերով եւ ստեղծել եւ մարդուն:» (Ծնդ 9: 3-6)

Ինչպես տեսնում ենք, այս տեքստում, իսկապես, նոր հրահանգներ կան, որոնք նախկինում չեն եղել: **Ժամանակակից աստվածաբանությունը այս տեքստի առաջին արտահայտությունը - «Ամեն մի կենդանի զեռուն թող կերակուր լինի**

ձեզ», - մեկնաբանում է, որպես միս ուտելու թույլատվություն և անում է դա անտեսելով նույն խոսքի շարունակությունը, որ պարզ ասում է. «*Կենսատու արին պարունակող միս չուտեք*»: Ուրեմն ի՞նչ է ստացվում. Սկզբից Աստվածը թույլ է տալիս միս ուտելը, իսկ անմիջապես հետո՝ արգելում: Հնարավոր բան չէ, քանզի Տիրոջ Խոսքում ոչ հակասություն կա, ոչ կասկած, ոչ էլ տատանում: Ակնհայտ է ուրեմն, որ այստեղ մարդու մտքի միջամտություն կա Սուրբ տեքստի մեջ և ամենայն հավանականությամբ Աստծո Խոսքն չհասկանալու պատճառով: Այս հարցը պարզաբանելու համար, տեսնենք, թե ի՞նչ է մեզ ասում հունական բնագիրը: ³ Իսկ նա ասում է:

«καὶ πᾶν ἐρπετόν ὃ ἐστὶν ζῶν ὑμῖν ἔσται εἰς βρώσιν ὡς λάχανα χόρτου δέδωκα ὑμῖν τὰ πάντα»

Այստեղ առաջին հերթին ուշադրություն դարձնենք *ἐρπετόν* բառին, որ թարգմանված է, որպես «*կենդանի զեռուն*», չնայաց նրան, որ իրականում երկրի վրա «*սփռվողի*» իմաստ ունի, քանզի դրանից հետո անմիջապես շեշտվում է. *ինչպես խոտն ու բանջարն են տուել*, որ սփռվում են երկրի վրա: ⁴

Լիովին պարզ է դառնում, որ այստեղ Աստված նորից մարդուն (և այլ կենդանի արարածներին) միայն բուսական կերակուր է տալիս, իսկ միս ուտելը արգելում, ասելով. «*Կենսատու արին պարունակող միս չուտեք*», քանզի դրա մեջ սպանություն կա, որովհետև կենսատու արյուն պարունակող միս ուտելու համար, սկզբից պիտի սպանես կենդանի արարածին, թափելով նրա արյունը, որը իր մեջ իր կյանքն է պարունակվում և որը կապված է մսի (մարմնի) հետ անխզելի կապով, ինչպես երկիրն երկնքի հետ: Սակայն հայերեն թարգմանությունը այնպես է արված, կարծես թե այս դրվագը միայն մարդուն է վերաբերում, մինչ դեռ նրա իսկական իմաստը բոլոր տեսակի կենդանի արարածների արյանն ու մսին է վերաբերում: Բնագիրը դա շատ պարզ է ասում: Ուստի զարմանալի է, թե ինչպե՞ս է կարելի միս ուտելու բնագրի հստակ ու միանշանակ արգելքից ամբողջովին հակառակ եզրակացություն անել: - Բայց Եկեղեցիները դա անում են: Ավելին, նրանցից ոչ մեկը իրեն նեղություն չի տալիս ուսումնասիրել այս հատվածը, հասկանալ և ուրիշներին բացատրել, թե ի՞նչ է ասում Աստվածն իրականում: Իսկ իրականում Նա ասում է՝ մի սպանեք կենդանի արարածներին և բույսերով սնվեք:

Միայն այլասեռված գիտակցությունը, որը ֆիքսված է միս ուտելու վրա, կարող է միս ուտելու պարզ արգելքը հասկանալ որպես միս ուտելու թույլտվություն, այսինքն՝ որպես կենդանի արարածներ սպանելու թույլտվություն, կամ արյունը մարմնից բաժանելու և միայն մարմինը ուտելու թույլտվություն, որն ամեն դեպքում սպանություն է նշանակում:

Այսպիսով, նշենք, որ Տերը հենց Նոյի հետջրհեղեղյան ժամանակներում է առաջին անգամ խոսում մսի և նրա արյան մասին: Բայց ինչո՞ւ հենց այդ ժամանակ: Մենք գիտենք, որ դրախտում մսակերություն չկար: Այն հայտնվեց ավելի ուշ՝ ընկած Ադամի աշխարհում, ով կրկին չհնազանդվելով Իր Հոր Խոսքին, ամբողջ երկիրն այնքան ապականեց, որ Տերը որոշեց ոչնչացնել Իր

արարչությունը, Ջրհեղեղ ուղարկելով երկրի վրա: Այս փաստը Սուրբ Գիրքը շատ տեղերում է ընդգծվում:

: Ահա դրանցից մի քանիսը.

«Ապականուեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցուեց անարդարութեամբ: ¹²Տէր Աստուած տեսաւ, որ երկիրն ապականուած է, որովհետեւ երկրի վրայ ամեն էակ ապականել էր իր ճանապարհը: ¹³Տէր Աստուած ասաց Նոյին. «Բոլոր մարդկանց վերջը հասել է, որովհետեւ երկիրը լցուել է նրանց անիրաւութիւններով: Ես կ'ոչնչացնեմ նրանց ու երկիրը:» (Ծնդ 6: 11-13)

Այն, որ ամեն էակ այլասեռել է իր ճանապարհը երկրի վրա, նշանակում է, որ մարդու հետ մեկտեղ ապականել են իրենց ճանապարհը նաև մնացած բոլոր կենդանի արարածները, ինչի արդյունքում, ինչպես Սիրաքն է նկատել, մարդ ու արարած հայտնվեցին «Մահու ու հակառակության», արյան ու սրի, հարուածների ու սովի, կործանման ու տանջանքների» մեջ, որ «ստեղծուել են մեղաւորների համար: Նաեւ նրանց պատճառով եղաւ ջրհեղեղը:» (Սիրաք 40: 8-10)

Բայց կոնկրետ ինչո՞վ էր պայմանավորված երկրի ապականությունը: Սուրբ Գրությունների «սրբագրողները» փորձում էին թաքցնել դա, որպեսզի չբացահայտվեն իրենց կեղծ մեկնաբանությունները, մտցված սուրբ տեքստերի մեջ: Այնուամենայնիվ, անհնար է ընդգրկել անսահմանությունը, քանի որ բնագրի տեքստի հետքերը, ժամանակ առ ժամանակ հայտնվում են ինչպես չնկատված հենց Աստվածաշնչում, այնպես էլ հնագույն պարականոն գրվածքներում, որոնց վավերականությունը մենք ճանաչում ենք իրենց մտքի համապատասխանությամբ Արարչի սիրո, սրբության և կատարելության տրամաբանությանը: Այսպիսին է, օրինակ, պարականոն Հոբեյանների գրքի հետևյալ ուղերձը.

«Այնուհետև անօրենությունը մեծացավ երկրի վրա, և բոլոր մահկանացուները ապականեցին իրենց վարքը՝ մարդկանցից մինչև կենդանիներ, գազաններ, թռչուններ և սողուններ: Բոլորը ապականեցին իրենց վարքն ու չափանիշը, և սկսեցին խժռել միմյանց: Անօրենությունը աճեց երկրի վրա, և մարդկանց բոլոր զավակների հերիյությունները միշտ չար էին: Այդ ժամանակ Տերը նայեց երկրին, և ահա, ամեն ինչ ապականված էր. յուրաքանչյուր մահկանացու շեղվել էր իր ճանապարհից, և բոլոր նրանք, ովքեր երկրի վրա էին, չարություն էին անում Իր աչքի առջև: Եվ նա ասաց. - Ես կկործանեմ Իմ ստեղծված մարդուն և բոլոր մահկանացուներին, երկրի երեսից:» (Գիրք Հոբեյանների 5:2-4) ⁵

Նույն պարականոն գիրքը, Ծննդոցից վերևը բերված հատվածին համահունչ, ընդգծում է, որ **հենց այդ «միմյանց խժռելն» էր ջրհեղեղի պատճառներից մեկը**, ասելով.

«Այս երեք արատների պատճառով ջրհեղեղը եկավ երկրի վրա, այն է՝ պտոնկության համար, որով պահապանները, հակառակ իրենց օրենքի ցուցումներին, պտոնկացան մարդկանց դուստրերի հետ և իրենց համար կանայք

առան նրանց, ում կամեցան, ինչը հիմք դրեց անմաքրությանը: Եվ նրանց որդիները՝ նեֆիլիմները և բոլոր մյուսները, սկսեցին չհամաձայնվել միմյանց հետ, և մեկը խժոեց մյուսին. հսկան սպանեց Նեֆիլին, և Նեֆիլը սպանեց Էյոռին, և Էյոռին՝ մարդկանց որդիներին, և մարդը սպանեց մարդուն: Եվ բոլորը [...] անարդարություն գործեցին և անմեղ արյուն թափեցին. և երկիրը լցվեց չարությամբ: Նրանց հետևեցին բոլոր գազանները, թռչունները, երկրի վրա շարժվող և քայլող ամեն որ, և շատ արյուն թափվեց: Մարդկանց բոլոր մտքերն ու ձգտումները դատարկ էին ու չար: Եվ Տերը ոչնչացրեց ամեն ինչ երկրի երեսից. Նրանց գործերի չարության և երկրի վրա թափած արյան պատճառով Նա կործանեց ամեն ինչ»։ (Գիրք Հոբեյանների 7) ⁶

Այսինքն՝ նախջրհեղեղյան ժամանակները նշանավորվեցին նրանով, որ բոլորը սկսեցին իրար արյունը թափել և սնվել միմյանց արյունով ու մսով. ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիները:

Նույն բանն է ասում նաև Ենոքի գիրքը.⁷

«Հսկաները շրջվեցին մարդկանց դեմ, որ ուտեն նրանց», և «սկսեցին մեղք գործել նաև թռչունների, կենդանիների, ամեն մի շարժվողի և ձկների դեմ, և սկսեցին իրար հետ ուտել նրանց մարմինը և արյունը խմել : Այն ժամանակ երկիրը սգաց ամբարիշտների պատճառով» : (Գիրք Ենոքի 2:12-13) ⁸

Եզրակացությունը, որը մենք կարող ենք անել այստեղից, այն է, որ նախահեղեղյան ժամանակներում կատարված չարություններից մեկը, որի պատճառով համաշխարհային Ջրհեղեղն ուղարկվեց երկրի վրա, հենց բոլոր կենդանի հոգի ունեցողների կողմից կատարված արյունահեղությունն ու փոխադարձ մսակերությունն էր: Հաշվի առնելով դա՝ պարզ է դառնում, որ հետջրհեղեղյան ժամանակներում՝ արդեն նոր աշխարհում, ոչ թե թույլատրվում էր, այլ ընդհակառակը, արգելվում էր սովորություն դարձած կենդանի էակների միս ուտելը, քանի որ թույլտվությունը կնշանակեր, որ Ջրհեղեղն իզուր էր ուղարկվել.

Ինչպես հայտնի է, միակն, որ փրկվել էր, դա Նոյն էր, որին Պետրոս առաքյալը անվանեց «արդարութեան քարոզիչ» (2 Պետ 2: 5)), այսինքն՝ Աստծո Խոսքի քարոզիչ, կամ Ճշմարիտ խոսքի քարոզիչ, ընդդեմ ապականված երկրի վրա տիրող ստախոս Օձի մահաբեր խոսքի, քանի որ ստի վրա ոչինչ չի ստեղծվում, այլ միայն քանդվում ու ոչնչացվում է:

Այստեղից հասկանում ենք Ծննդոցի հետեյալ խոսքերը Նոյի մասին
«Սա մեզ կը հանգստացնի մեր գործերից, մեր ձեռքերի ցաւերից եւ այն երկրից, որ անիծեց Տէր Աստուած»։ (Ծնդ 5: 29)

Հասկանալի է, որ Նոյը «կհանգստացնի» նշանակում է Աստծո կողմից անիծված երկրի վրա մարդկանց ծանրագույն գործերից, այսինքն՝ վերջ կդնի պոռնկությանը, կռվին, ընդհանուր արյունաթափությանը ու մսակերությանը: Ըստ առակի՝ Նոյը ներկայացնում է Աստծո պատկերը, ինչն նշանակում է, որ այդ բոլորը նա կանի՝ հաստատելով Աստծո Խոսքի զորությունը բոլոր արարածների վրա, քանի որ միայն Աստծո Խոսքն է կարող «անեծքի տակ ընկած երկիրը

մշակել ու հանգստացնել: Թեև առաջին բանը, որ այս հատվածից սովորաբար հասկանում են Աստվածաշունչը ընթերցողները, դա նրանց բառացի իմաստն է, այսինքն «հող մշակելը»: Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, այստեղ խոսվում է մարդու հոգու կրթման ու ընտելացման մասին, այսինքն այն նպատակի մասին, որի համար Ադամն ու Եվան վտարվեցին դրախտից, քանի որ ասվում է. «*Եւ Տէր Աստուած արտաքսեց նրան բերկրութեան դրախտից, որպէսզի նա մշակի այն հողը, որից ստեղծուել էր.*» (Ծնդ 3: 23) ինչը պետք է հասկանալ որպես երկրի փոշուց կերտված հոգու զարգացման ու ընտելացման համար ճիշտ այնպես, ինչպես կենդանիներին են ընտելացնում, կամ ինչպես քանդակագործը, մշակելով քարը, աստիճանաբար վերածում է այն պատկերի, քանի որ «*մշակված հողը*» խելամիտ, ներդաշնակ հող է, որը ենթակա է Աստծո օրենքներին, իսկ անմշակ հողը, կարծես թե, անգլուխ լինի, առանց միավորող գաղափարի և, հետևաբար, վայրի և տարաձայնություններով լի: Հենց այսպես է, ըստ Փիլիպոսի պարականոն Ավետարանի, Հիսուս Քրիստոսը բացատրում հողի մշակությունը՝ ընդգծելով մարդկային գործության ոգեղենությունը.

«*Մարդու տիրապետությունը,* - ասում է Նա, - *բաց չէ, այլ թաքնված: Հետևաբար, նա տիրում է իրենից ուժեղ և չափերով մեծ կենդանիների վրա, ինչպես երևում է աչքով և ինչպես իրականում է, և միևնույն ժամանակ նա է նրանց կերակուր տալիս: Բայց եթե մարդը նրանցից բաժանվում է, նրանք սպանում են միմյանց, կծում են միմյանց: Եվ նրանք խժոեցին միմյանց, որովհետև ուտելիք չգտան: Բայց այժմ կեր են գտել, որովհետև մարդը մշակել է հողը:*» (Փիլիպոսի ապ.ավետարան 58)⁹

Այսպես է եղել նախաջրհեռեղյաման ժամանակներում. ¹⁰ մարդը բացակա է, քանզի, երես թեքելով Արարչի Խոսքից, նա դարձել էր Իր թշնամու՝ սատանայի կերպարի կրողը, որին խորհրդանշում է աստվածաշնչյան Օձը: Այսինքն՝ չկար բոլորին միավորող մի սկզբունք, որի բացակայության արդյունքում ուժեղները սկսեցին սպանել ու խժոեել թույլերին, այսինքն՝ մարմինը սկսեց ոչնչացնել ինքն իրեն, և մահը թագավորեց աշխարհում: Այսպիսով, երբ Քրիստոսը, ասում է կենդանիների (և անուղղակիորեն նաև մարդու մասին), որ «*այժմ նրանք կեր են գտել, որովհետև մարդը մշակել է հողը*», Նա նկատի ունի Իր հոգևոր ազդեցությունը կենդանի արարածների վրա, Իր ներկայությունը, որպես Աստծո Խոսքի ներկայություն, ճշմարտության, այսինքն՝ ճշմարիտ Մարդու, կամ արարչության գլխի ներկայություն, որն ապահովում է ինչպես մարմնի (արարչության) ¹¹ սնունդը, այնպես էլ սերն ու ներդաշնակությունը նրա մեջ, քանզի, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը. «*Աստուած սէր է:*» (1 Հովի 4: 8) և Նրա կողմից ստեղծված ամեն ինչ ծնվել և կնքվել է սիրով: ¹²

Այսպիսով, Նոյի կողմից հողի մշակման գործերից հանգստացնելը ցույց է տալիս արարչագործության հոգևոր իշխանի փոխումը. ստի իշխանությունից դեպի Աստծո ճշմարտության իշխանություն, որը քարոզել է Նոյը, իսկ երկրային կյանքում՝ Աստծո Խոսքի միջամտությունը արարչության մեջ, որն առաջին

անգամ դրսևորվեց Ջրհեղեղից հետո՝ ի դեմս Աբրահամի և նրա գալիք Սերմի՝ Հիսուս Քրիստոսի:

Այսպիսով, մենք վերլուծեցինք եկեղեցիների կողմից որպես միա ուտելու թույլտվություն մեկնաբանված հիմնական տեքստը և պարզեցինք, որ այդ մեկնաբանությունը լիովին կեղծ է և ամբողջովին հակասում է Աստծո Խոսքին, քանի որ իրականում Տերն այստեղ վերահաստատում է այն, ինչ Նա ասել էր սկզբում Ադամին, ավելացնելով միայն նախադրեղեղյան ժամանակներում (ինչպես նաև այժմ), սովորություն դարձած սպանությունների ու մսակերության արգելքը, և միևնույն ժամանակ զգուշացնելով որ բոլոր նրանք, ովքեր չեն հնազանդվի այս պատգամին, կկործանվեն, քանի որ ով սպանում է կենդանի հոգուն, ինքն էլ է մահանում:

Այսպիսով, մեծ հաշվով, հատվածի մեկնաբանությունը որպես կենդանի էակների միա ուտելու Աստծո թույլտվություն ոչ միայն ճիշտ չէ և զուրկ է տրամաբանությունից, այլ նաև պարունակում է թաքնված նպատակ՝ խաբեության ուժով վերականգնել «նախադրեղեղյան ժամանակները» կամ. երկարացնել դրանք՝ թույլ չտալով որ մարդու միտքը պայծառանա ու մարդը արիացվի, ինչը ուղղակիորեն վկայում է Աստծո Խոսքի ազդեցության բացակայության մասին ոչ միայն աշխարհում, այլ նույնիսկ հենց եկեղեցիներում, որ ստեղծել են իրենց կեղծ օրենքները, վկայելով, որ իրենց մեջ առկա են նույն մեղքերը, որոնց մեջ Հիսուս Քրիստոսը մեղադրում էր դպիրներին և փարիսեցիներին:

Հասկանալի է, որ նման անտրամաբանական կամ չարամիտ մեկնաբանությունը հիմնված է անմաքուր ոգու (Քամի ¹³) ցանկության վրա, որ մարդը իր այլասերված մարմնին հաճոյանա և նրա ստրուկը մնա: Հետևաբար պարզ է նաև, որ այդպիսի մեկնաբանությունը դրդված է Աստծո թշնամու՝ այս աշխարհի Իշխանի, սատանայի կամ աստվածաշնչյան օձի կողմից:

Այսպիսով, Ծննդոցի 9-րդ գլխի հատվածը մեկնաբանված է այն «խելագարության վարագույրի» լիակատար ազդեցության տակ, որը ծածկել է ոչ միայն ամբողջ մարդկությանը, այլև եկեղեցիներին, որ կարդում են Աստծո Խոսքը և չեն հասկանում այն, կամ չեն ցանկանում հասկանալ:

Բայց, ինչպես ես գրել եմ իմ «*Երկակի չափանիշներ Աստվածաշնչում և աստվածաշնչյան պարականոն գրվածքներում. Ո՞վ է դրանք ներդրել սուրբ տեքստի մեջ*» աշխատության մեջ, և ինչպես արդեն տեսանք այստեղ, կան նաև այլ, ուղակիորեն հակառակ իմաստի տեքստեր, որոնք սրբություն են պահանջում առաջին հերթին եկեղեցականներից իսկ հետո մնացած մարդկանցից, համահունչ լինելով Աստծո Խոսքի տրամաբանությանը և մարգարեների վկայությանը: Սրանք պահպանվել են պարականոն գրքերից շատերում, ինչպիսիք են, օրինակ, Սիբիլայի օտակույները, Հոբելյանների գիրքը, Ենոքի գրքերը, Էսսեանների ավետարանը և այլն: Օրինակ, Հոբելյանների գրքում նման սրբապահանջ տեքստը կա՝ մ չի նկատվել Աստծո Խոսքի «սրբագրողների»

կողմից, կամ էլ ենթագիտակցական վախից է թողվել, սակայն «լրացվել» միևնույն ժամանակ աղավաղված տեքստով, որը այնպես է «ծեփել» բնագրայինին, ինչպես ցորենի հատիկներն են «ծեփվում» առատորեն աճող մոլախոտերով, որ՝ փորձում են խեղդել ցորենը և միշտ առաջինն են աչքի ընկնում: Այդպես էլ այսատեղ. խեղաթյուրված տեքստը միշտ առաջինն է ներկայացվում՝ ինչը զուտ հոգեբանական հնարք է կարդացողի ուշադրությունը կենտրոնացնելու հենց այդ խեղաթյուրված տեքստի վրա:

Կատարյալ Աստծո Սուրբ Խոսքին տրամաբանորեն համապատասխանող այդ տեքստը հենց այն պատճառով է եկեղեցիների կողմից թաքցված, կամ անտեսված, կամ սխալ մեկնաբանված, որովհետև երկրի վրա ամեն սրբություն առհամարված կամ ծաղրված է: Այդ տեքստը հետևյալն է.

«Եվ այս վկայությունը տրված է նրանց, որ դուք էլ միշտ հետևեք դրան և երբեք զազանների արյուն չուտեք (...): Եվ այն մարդը, ով ուտում է զազանների, անասունների և թռչունների արյունը, քանի դեռ երկիրը կանգուն է, կկործանվի երկրի վրա, նա և նրա սերունդը: Եվ նա հրամայեց Բսրայելի որդիներին արյուն չուտել, որպեսզի նրանք և նրանց սերունդները հավիտյան լինեն մեր Տեր Աստծո առաջ: Եվ այս օրենքի համար ժամանակի վերջ չկա. հավիտյան նրանք պետք է պահեն դա սերնդից սերունդ, որպեսզի զոհասեղանի առաջ անընդհատ ներում փնտրեն արյունով (այսինքն՝ հոգով կամ բարոյական զոհաբերությամբ ¹⁴). Ամեն օր՝ առավոտ և երեկո, պետք է Տիրոջից ներում խնդրեն նրանց համար, որպեսզի նրանք դա պահպանեն և չկործանվեն»: (Գիրք Հոբելյանների 6) ¹⁵

Պարզ է, որ արյուն ուտելու համար նախ պետք է սպանել այդ արյունը կրողին: Եվ քանի որ երկրի վրա կյանքը արյունով է խորհրդանշվում, Սուրբ Գիրքը, խոսելով սպանության մասին, այն սահմանում է որպես արյունահեղություն: Ուստի «արյուն չթափել» և «արյուն չուտել» նշանակում է կենդանի հոգի չսպանել, ոչ մեկի կյանքը չուտել, քանի որ դա մահացու մեղք է: Միայն մեկ դեպք կա, երբ կենդանիներին սպանելը պատժելի չէ. Դա երբ նրանք ինքներն են հարձակվում մարդու վրա՝ սպառնալով նրա կյանքին: Ըստ էսենցիների Ավետարանի՝ Հիսուս Քրիստոսն իրեն տրված հարցին. «*Ի՞նչ պետք է անեմ, ուսուցիչ, եթե անտառում տեսնեմ, որ մի զազան տանջում է եղբորս: Ես թողնեմ եղբորս մեռնի՞, թե՞ վայրի զազան սպանեմ: Այս դեպքում ես օրենք եմ խախտում:*» պատասխանում է.

« եղբորդ կյանքը փրկելու համար վայրի զազան սպանելով, դուք օրենքը չեք խախտում: Որովհետև ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարդն ավելի մեծ է, քան զազանը: Բայց եթե որևէ մեկը սպանում է կենդանուն առանց պատճառի, երբ կենդանին չի հարձակվում նրա վրա, այլ սպանելու ցանկության պատճառով՝ կա՛մ մսի, կա՛մ մոռթու, կա՛մ նրա ժանիքների համար, ապա նա չարություն է գործում, քանի որ ինքն է վերածվում վայրի զազանի. Եվ նրա վախճանը վայրի զազանների վախճանի նման կլինի»: (Էսենցիների Ավետարան) ¹⁶

Որ Տերը պատժում է Իր արարածների միսն ուտելու համար ապացույցներ կան նաև Հին Կտակարանում: Դրանցից ամենատպալոբիչը կապված է

խորայելացիների եգիպտական ելքի հետ: Երբ խորայելացիները իրենց 40-ամյա անապատում թափառելու ժամանակ սնվելով միայն «երկնային հացով» (Ելք 16:13-15), սկսեցին դժգոհել, քանզի ցանկանում էին միս ուտել (Ելք 16:2-3), ապա վրդովված Տերն ասաց նրանց.

«Մաքրուեցէ՛ք վաղուայ համար, որ միս ուտէք, որովհետեւ լաց լինելով Տիրոջ առջեւ՝ ասում էիք. «Ո՛վ մեզ միս կը տայ ուտելու: Մեզ համար լաւ էր Եգիպտոսում»: Տէրը ձեզ միս կը տայ ուտելու, եւ դուք միս կ'ուտէք: ¹⁹Կ'ուտէք ոչ թէ մէկ, երկու, հինգ օր, ոչ էլ տասը կամ քսան օր, ²⁰այլ կ'ուտէք ամբողջ ամսուայ բոլոր օրերին, մինչեւ որ ձեր քթից դուրս գայ, մինչեւ որ զգուէք, որովհետեւ արհամարհեցիք Տիրոջը, որ միշտ ձեր մէջ է, լաց լինելով նրա առջեւ՝ ասացիք. «Մեր ինչին էր պէտք Եգիպտոսից դուրս գալ»: (Թվեր 11: 18-20) ¹⁷

Եվ դրանից հետո

«Տէրը քամի բարձրացրեց եւ ծովի կողմից լորամարգիներ բերեց-թափեց բանակատեղիի շուրջը մէկ օրուայ ճանապարհի երկարութեամբ ու գետնից երկու կանգուն բարձրութեամբ: ³²Ժողովուրդը ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշերը, նաեւ յաջորդ օրը մինչեւ երեկոյ լորամարգի էր հաւաքում: Ամենաքիչ հաւաքողը տաս քոռ հաւաքեց: Մորթեցին, ապխտեցին ու փռեցին բանակատեղիի շուրջը: ³³Դեռ միսը նրանց ատամի տակ էր ու դեռ չէին ծամել, որ Տէրը, ժողովրդի վրայ զայրացած, մեծամեծ հարուածներ հասցրեց նրանց: ³⁴Այդ վայրը կոչուեց Ցանկութեան գերեզմաններ, որովհետեւ այնտեղ թաղեցին բազում անկուշտ մարդկանց: ԑնկութեան գերեզմաններից ժողովուրդը ճանապարհ ընկաւ դէպի Ասերոք:» (Թվ 11: 31-34)

Այսպէս Տերը ցույց տվեց միս ցանկացողների վախճանը:

Այն, որ Տիրոջը միայն բուսական կերակուրն է հաճելի, վկայում է նաև Դանիելի և նրա եղբայրների պատմությունը, որոնք թագավորի սեղանի ճաշատեսակների փոխարեն նախընտրեցին բացառապէս բուսական կերակուր (Դան 1: 1-16):

Դրա մասին են վկայում նաև Տիրոջ ուղիղ ցուցումները մարգարե Եզրասին, ով ցանկանում էր խոսել Նրա հետ և ում Նա ասաց. «...դու միայն վայրի ծաղիկներ կ'ուտես և միս չ'ուտես, (...), իսկ ես կգամ քեզ հետ կ'իտես»: (3/4 Եզրաս 9:23-26) ¹⁸

Կան նաև այլ նմանատիպ ցուցումներ, օրինակ, Սողոմոնից, որը ասում է. «Լաւ է բանջարեղէնի ճաշ ուտել՝ սիրով ու շնորհքով, քան թէ մսուրի արջառի միս՝ թշնամութեամբ:» (Առակ 15: 17), քանզի սպանությունը չարություն ու թշնամություն է ծնում:

Նմանատիպ ցուցումներ ենք տեսնում նաև Ենոքի (Ենոքի) Երրորդ գրքում, որտեղ ասվում է.

«Ատելի է դարտր բռնած ձեռքը, որ ծակում է եղնիկի և նապաստակի փափուկ մարմինը: Բայց կյանք ինայողի երեսին շողում է ջրաշուշանը»: (Ch. 15: 148-151) ¹⁹

Կամ Սիբիլի Օրակուլներում, որտեղից եզրակացվում է, որ ամեն տեսակի մասայական սպանություն իր էությունը գոհաբերություն է Հերմեսին (սատանային) և ով դա անում է, չի խուսափի պատժից:

«Ուրեմն (Աստված), - կարդում ենք Սիբիլայի գրքում, - չի կարելի թշնամաբար տրամադրված մարդկանց, ուրեք իրենց նվիրում են գառների, ոչխարների և ցուլերի

նախիրները զոհաբերելուն, ոսկե եղջյուրներով մեծ հորթերին, անշունչ Հերմեսին և քարե աստվածներին»։ (Sibl էջ 332-333, Գիրք V), ²⁰ **քանի որ սպանվածը չի կարող զոհաբերվել Նրան, ով Կյանք է և ստեղծում է միայն կենդանի էակներ։** Նույնը վերաբերում է նաև սպանդանոցներում աշխատողներին։

Այսպիսով, Սուրբ Գրքի բացարձակապես հստակ արգելքը՝ սպանել կենդանիներին, թռչուններին և այլ արարածներին և ուտել նրանց միսը եկեղեցիները հասկանում են ճիշտ հակառակ ձևով։ Եվ դրա համար կա երկու փոխկապակցված պատճառ. Առաջինն ու գլխավորը ոչ թե սրբությանը, այլ մսին ծառայությունն է, որի համը ճաշակելով՝ եկեղեցականները այլևս չեն ցանկանում հրաժարվել նրանից և ամեն կերպ փորձում են արդարացնել մսակերությունը նույնիսկ պղծելով Աստծո Խոսքը։ Երկրորդ պատճառը՝ կապված է առաջինի հետ, Աստծո օրենքների սխալ մեկնաբանումն ու ակնհայտ խեղաթյուրումն է։ Վերջինս հստակորեն դրսևորվում է Ղևտականի գրքում, որն ամբողջովին նվիրված է Աստծո պատվիրաններին և մարդու վարքին։ Այդ գրքի մասին կխոսենք հաջորդ գլխում։

1. Կենդանի հոգու մասին տես «Կենդանի հոգի» գլխում ստորև
2. Մարգարե Եսայան այդ հազուստը «փրկության զգեստ» է անվանել։ (Ես 61: 10)
3. Բնագիր ասելով նկատի ունեմ Մեպտուազինտան, որ այն ժամանակվա հեբրեական տեքստից էր արված, որ այժմ չկա, քանի որ քրիստոնեության հայտնվելուց հետո այդ տեքստի մեջ փոփոխություններ մտցվեցին։ Այդ փոփոխված տեքստը այսօր Մաստրետական է կոչվում։ Մեպտուազինտայից են (կամ նրա հիմքի վրա) արված Աստվածաշնչի համարյա բոլոր հաջորդող թարգմանությունները։
4. Ցավոք, այս հատվածը չմտածված ձևով է թարգմանվել, ավելի ճիշտ, ըստ մսակերի գիտակցության, որում ոչ մի Աստծուն բնորոշ սրբություն չկա։ Եվ այդպիսի դրվագներ, որտեղ սրբությունը արհամարված է, Աստվածաշնչի թարգմանության մեջ շատ կան։
5. Տես, օրինակ, ռուսերեն թարգմանությունը. «И неправда усилилась на земле, и всякая плоть извратила свой путь, от людей до скота, и до зверей, и до птиц, и до всего, что ходит по земле. Все извратили свой путь и свой порядок, и начали пожирать друг друга. И неправда усилилась на земле, и все помышления разума сынов человеческих сделались столь злыми во всякое время. И Господь воззрел на землю, и вот она извратилась, и всякая плоть извратила свой порядок, и они совершали всякое зло пред Его очами — все, что было на земле. И Он сказал, что Он уничтожит людей и всякую плоть, которую Он сотворил на земле.» - (5: 2-5) http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm Ветхозаветные апокрифы. Книга юбилеев.

Համեմատիր իսպաներեն թարգմանության հետ.

“Creció entonces la iniquidad sobre la tierra, y todos los mortales corrompieron su conducta, desde los hombres hasta los animales, bestias, aves y reptiles. Todos corrompieron su conducta y norma, empezaron a devorarse mutuamente, creció la iniquidad sobre la tierra y los pensamientos conscientes de todos los hijos de los hombres eran malvados siempre. Miró entonces el Señor a la tierra, y he aquí que todo estaba corrompido, que todo mortal había desviado su norma, y que todos cuantos había en la tierra hacían mal ante sus ojos. Y dijo: -Destruiré al hombre y a todos los mortales sobre la faz de la tierra que creé.” (Libro de Jub 5: 2-4) - LIBRO DE LOS JUBILEOS (Parte I de IV) Traducción de la versión etiópica - <http://antepasadosnuestros.blogspot.com.ar/2010/07/el-libro-de-los-jubileos-parte-i-de-iv.html>

6. Ռու. թ-նր. «Ибо за эти три вины пришел на землю потоп, именно — за любодеяние, которым стражи вопреки предписаниям их закона блудили с дочерьми человеческими и взяли себе жен из всех, которые им понравились: они положили начало нечистоте. И их сыны, Нефилимы и все другие стали разногласить друг с другом, и один пожирал другого: исполин убивал Нефила, и Нефил убивал Ельйо, и Ельйо сынов человеческих, и один человек другого. И каждый был [...], чтобы делать неправду и проливать неповинную кровь; и земля наполнилась нечестием. И за ними последовали все дикие звери, и птицы, и что движется, и что ходит по земле; и пролилось много крови на земле. И все помышление и стремление людей было пустое и злое. И Господь истребил все с поверхности земли; за лукавство их дел и за кровь, которую они пролили на земле, Он истребил все.» (Книга Юбилеев 7) Հասցեն տես Վերևը՝ համար 5-ում:

Տես նաև իսպան. թ-նր.

“Por estas tres causas” continuamos leer ahí, “ha ocurrido el diluvio sobre la tierra, por la fornicación que cometieron los custodios con las hijas de los hombres, contra lo que se les había ordenado. Tomaron por mujeres a cuantas escogieron entre ellas, cometiendo la primera impureza, y tuvieron hijos gigantes, todos ellos descomunales, que se devoraban unos a otros: un titán mataba a un gigante, un gigante mataba a un jayán, éste al género humano, y los hombres, unos a otros. Todos pasaron a cometer iniquidad y derramar mucha sangre, llenándose la tierra de maldad. Luego pecaron con todas las bestias, aves, reptiles y sabandijas, derramándose mucha sangre sobre la tierra, pues el pensamiento y la voluntad de los hombres concebían error y maldad constantemente. El Señor destruyó todo de la faz de la tierra a causa de sus malas acciones y por la sangre derramada en ella,” (Libro de los Jub 7: 21-25) Հասցեն տես Վերևը՝ համար 5-ում:

7. Հայերենում ընդունված է այդ պատրիարքին Ենովք անվանել, բայց դա արդարված չէ: Տես այդ մասին իմ... «Երկակի չափանիշներ Աստվածաշնչում և աստվածաշնչյան պարականոն գրվածքներում. Ո՞վ է դրանք ներդրել սուրբ տեքստի մեջ» եռալեզու գրքի «Ենովք (Ենովք) պատրիարքը և Կայենի, և Սէթի ծագումնաբանություններում» գլուխում:

8. Ռու. թ-նր. «исполины обратились против самих людей, чтобы пожирать их», и «они стали согрешать по отношению к птицам и зверям, и тому, что движется, и рыбам, и стали пожирать друг с другом их мясо и пить из него кровь. Тогда сетовала земля на нечестивых» (Книга Еноха 2: 12-13) Ветхозаветные

Տէս նաև իսպան. թ-նր.

“Entonces los gigantes se volvieron contra ellos y se comían a los hombres. Comenzaron a pecar con aves, bestias, reptiles y peces, consumiendo su propia carne y bebiendo su sangre. Entonces la tierra se quejó de los inicuos.” (Libro I de Enoc 7: 4-6)

- Fuente: A. Díez Macho, ed. Apócrifos del Antiguo Testamento, en 5 vols. publicados. Libro 1 de Henoc (etiópico y griego), trad. por Federico Corriente y Antonio Piñero, en vol. 4 [Cristiandad: Madrid, 1982], págs. 39—143.

9. Տէս «Господство человека, - говорит Он, - не открыто, но скрыто. Поэтому он господин над животными, которые сильнее его и больше размером, как это видно на глаз и как это на самом деле, и вместе с тем это он, кто даёт им пропитание. Но если человек отделяется от них, они убивают друг друга, они кусают друг друга. И они пожирали друг друга, ибо не находили пищи. Но теперь они нашли пищу, ибо человек возделал землю». (Ап. Ев. от Филиппа 58) - Евангелие от Филиппа - Русская апокрифическая студия. Библиотека Наг-Хаммади: http://apokrif.fullweb.ru/nag_hammadi/ev-phil.shtml

Դավ : “La superioridad del hombre no es patente, sino oculta. Por eso domina las bestias que son más fuertes que él y de gran tamaño —tanto en apariencia como realmente— y les proporciona su sustento. Mas cuando se separa de ellas, éstas se matan unas a otras y se muerden hasta devorarse mutuamente por no hallar qué comer . Mas ahora —una vez que el hombre ha trabajado la tierra— han encontrado su sustento.” (Ev según Felipe 58)

Fuente: Los Evangelios Apócrifos, por Aurelio De Santos Otero, BAC

10. Եվ շարունակվում է մինչ օրս, քանի որ Ջրհեղեղն իր ներքին իմաստով վերաբերում է ապոկալիպտիկ ժամանակներին: Փաստն այն է, որ ամբողջ Սուրբ Գիրքը տարբեր ձևերով, նույնիսկ պատմական իրադարձությունների օրինակով, միշտ խոսում է նույն բանի մասին՝ մարդու անկման, մահկանացու սովերային աշխարհում նրա կյանքի և այնտեղից Աստծո հավիտենական աշխարհ դուրս գալու ճանապարհի մասին:

11. Տէս ստորև

12. Տէ՛ս. իմ իսպաներեն և ռուսերեն լեզվով գրված “Como es Dios biblico y como es su creacion. Dos arboles del paraíso”/»Каков библнйский Бог и каково Его творение. Два райских древа», գրքն, հրատարակված 2019 թվականին. «Credo» էլեկտրոնային հրատարակությունում, B-A

13. Տէս, օրինակ, իմ եռալեզու «Քանաան» գիրքը

14. Տէս ստորև

15. Աստվածաշնչյան գոհաբերությունների իրական իմաստի համար տե՛ս ստորև:

Ռուս. տեկստը. «И это свидетельство предписано им, дабы и вы соблюдали это во все дни, чтобы вам никогда не есть крови зверей (...). И человек, который ест кровь дикого зверя, и скота, и птиц, пока стоит земля, будет истреблен на земле — он и его семья. И Он повелел сынам Израиля не есть крови, дабы они и их семья существовали пред Господом, Богом нашим, всегда. И для сего закона нет конца времени; вечно они должны соблюдать его вместе с потомками, чтобы непрерывно

кровию (то есть душою, или нравственной жертвой) за вас испрашивалось прощение пред жертвенником; ежедневно, утром и вечером, должно испрашивать у Господа прощение за них, чтобы они соблюдали это и не были истреблены.» (Кн. Юбилеев 6) – Հաւցեն տես 5-րդ հաւատքով:

Կամ իսպաներեն թ-ն. “Escrito os queda este testimonio, para que lo guardéis siempre: No comáis nunca sangre de bestia, animal o ave en todos los días de la tierra. **Quien comiere sangre de bestia, animal o ave en todos los días de la tierra será arrancado de ella, él y su descendencia.** Ordena tú a los hijos de Israel que no coman sangre, para que permanezca siempre su nombre y descendencia ante el Señor vuestro Dios. Esta ley no tiene término de días, pues es perpetua: guárdenla por todas las generaciones, para que rueguen por sí con sangre, ante el altar, cada día; al tiempo del amanecer y del atardecer implorarán siempre ante el Señor que la observen y no sean desarraigados»” (Libro de Jub 6: 12-14) - Հաւցեն տես 5-րդ հաւատքով:

16. «-Что же мне делать, Учитель, если я увижу, как дикий зверь терзает брата моего в лесу? Должен ли я позволить брату моему погибнуть или убить дикого зверя? Не преступлю ли я закон в этом случае? И Иисус ответил: (...)убивая дикого зверя, чтобы спасти жизнь своего брата, ты не преступаешь закон. Ибо истинно говорю вам, человек более велик, чем зверь. Но если кто убивает зверя без причины, когда зверь не нападает на него, а из-за желания убить или ради мяса его или ради шкуры его или ради клыков его, то совершает он зло, ибо сам превращается в дикого зверя. И конец его будет таким же, как конец диких зверей». (Евангелие от есеев) - Евангелие от Есеев Из Библиотеки Гумер Евангелие от есеев (Евангелие мира) - Перевод с арамейского Э. Б. Шекли; русское изд., С. Богачкина, А. Журавлёв

Կամ իսպ. թ-ն.

"¿Qué debo hacer, Maestro, si veo que una bestia salvaje ataca a mi hermano en el bosque? ¿Debo dejar perecer a mi hermano o matar a la bestia salvaje? ¿No transgrediría así la ley?" Jesús respondió:

"Fue dicho a aquellos de los antiguos tiempos: "Todos los animales que se mueven sobre la tierra, todos los peces del mar y todas las aves del cielo, han sido puestos bajo vuestro poder". En verdad os digo que de todas las criaturas que viven sobre la tierra, sólo al hombre creó Dios a su imagen" Por ello, los animales son para el hombre, y no el hombre para los animales. No transgredirás, por tanto, la ley si matas al animal salvaje para salvar a tu hermano. Pues en verdad te digo que el hombre es más que el animal. Pero quien mata al animal sin causa alguna, sin que éste le ataque, por el deseo de matar, o por su carne, o porque se oculta, o incluso por sus colmillos, malvada es la acción que comete, pues él mismo se convierte en bestia salvaje. Y Por tanto su fin ha de ser también como el fin de los animales salvajes". - [EL EVANGELIO DE LOS ESENIOS – EVANGELIO DE LA PAZ – Edmond Székely, Londres, 1937, Primera edición: Junio de 1986, Octava edición: Febrero de 2001](#)

17. Եզդիպտական Ելքի իմաստն ու նշանակությունը նույնպես աղավաղված են թարգմանիչների կողմից: Այս մասին տես իմ իսպաներեն ու ռուսերեն լեզուներով գրված «Шесть дней творения и Седьмой День» / “Los seis días de la creacion y el Día septimo” և «Армения библейская – земля неведомая»/ “Armenia bíblica – tierra incognita” գրքերի համապատասխան գլուխներով:

18. Հստ ռուսական թարգմանության դա Եզրասի 3-րդ գիրքն է, իսկ ըստ իսպանական՝ 4-րդ.

Ռուս տարբերակ. «...станешь питаться только от полевых цветов и не вкушать мяса, (...), и Я приду и буду говорить с тобою.» (3 Езд 9: 23-26) – Библия. Из-во «Жизнь с Богом» 2-оу издю 1983 Брюссель

Իսպ. տ-կ. “Y tú si perseveras otros siete días, mas sin ayunar durante ellos, irás a los floridos campos donde no hay casa edificada, y sólo comerás flores del campo, y no probarás carne ni beberás vino, sino flores. Ora al Altísimo sin cesar, y vendré y hablaré contigo. Y fui, como me dijo, al campo que se llama Ardath, y me senté entre flores; y comí de las hierbas del campo, y me sacié de ese alimento.” (IV Esdr 9, 23-26) – La Sagrada Biblia según Vulgata traducción del Dr. F.T. Amat. Revisada y anotada por Mons. Dr. Juan Straubinger. Publicada por los Padres del verbo Divino.

19. Ենոքի 3-րդ Գիրքը «Odiosa es la mano del que maneja el dardo, Que atraviesa la blanda carne del ciervo y la liebre, Pero el lirio de agua brilla en el rostro De aquél que perdona la vida»: (Cap 15: 148-151) - <http://www.scribd.com/doc/6541879/Anonimo-El-Tercer-Libro-de-Enoc>

20. «El (Dios) no sentirá entonces ninguna compasión por los hombres hostiles, que se dedican a sacrificar rebaños de corderos, ovejas y toros mugientes, de terneros grandes de cuernos áureos, para los inánimes Hermes y los pétreos dioses». - Oraculos sibilinos p. 332-333, Libro V. - del Apocrifos del AT por A., Diez Macho, Tomo III.

3. Դևտացին և նրա տեկստի աղավաղումը բացահայտող մարգարեները:

Դևտացու գիրքը, ամբողջությամբ նվիրված լինելով Աստծո օրենքներին, թերևս հենց այդ պատճառով է, որ Հին Կտակարանի ամենաաղավաղված գրքերից մեկն է, որտեղ Աստծո սուրբ պատվիրանները փոխարինված են Աստծու հակառակ անմաքուր և արյունարբու պատվիրաններով, ինչը առաջին հերթին բացահայտում են աստվածաշնչյան մարգարեների հաղորդությունները, իսկ հետո նաև մեջբերված մտքերում սրբության բացարձակ բացակայությունը:

Ըստ այդ տեքստի իմ դիտումների, նշված կեղծիքներն ու աղավաղումները հիմնականում երկու տեսակի են: Առաջինը նրանում է, որ թարգմանիչը կամ «սրբագրողը» չընկալելով Աստծո Խոսքի բուն իմաստը, կուրորեն հետևում է նրա ընդունված սխալ մեկնաբանությանը և այդպես դարից դար մոլորեցնում ընթերցողին:

Իսկ երկրորդ տեսակը, ինչպես ես բազմիցս ընդգծել եմ իմ գործերում, դա դիտավորյալ սուտն է, որը մտցված է տեքստի մեջ այս աշխարհի Իշխանի ներշնչումով, որի նպատակն է մարդուն թույլ չտալ ճշգրտորեն կողմնորոշվել Աստծո Խոսքում:

Այս աղավաղումները, որպես կանոն, կամ ամբողջությամբ են փոխարինում կորցված բնագրի տեքստը, կամ համեմում են այն կեղծ մեկնաբանությունների «ստուսով», որը ներկայացվում է որպես Աստծո Խոսք: Իմ վերջին աշխատություններում ես նման աղավաղումների բազմաթիվ օրինակներ եմ բերել, իսկ այսօր ցույց կտամ բնօրինակը կեղծիքներով համեմելու մեխանիզմը Դևտացու գրքի օրինակի վրա, որտեղ Աստծո Խոսքի մարմնի մեջ ներդրված մարդկային մեկնաբանությունները շփոթություններ են առաջացնում նրա մեջ:

Այժմ դիտարկենք նման փոխարինումները նախ մարդկանց սննդի (ա) և հետո զոհաբերությունների ու ողջակեզությունների (բ) հետ կապված տեքստերում, որոնց սուտը բացահայտվում է մարգարեների հայտարարություններով:

ա) Դևտացին մսակերության մասին

«Երբ աղօթքի համար դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռքերը, երես եւ դարձնելու ձեզանից, եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը չի են արհեստով» (Ես 1: 15)

Ուշադրություն դարձնենք Դևտացու 17-րդ գլխի 10-14-րդ տողերին, որ սկսվում են Աստծո ճշմարիտ Խոսքով, ներկայացված 10-12 –րդ տողերում, որտեղ արգելում է ուտել յուրաքանչյուր կենդանու արյուն:

«Եթէ Իսրայելի որդիներից կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատածներից մէկը որեւէ կենդանու արիւն ուտի, եւ իմ զայրացած հայեացքը կ'ուղղեմ արիւն ուտող այդ մարդու վրայ եւ նրան կը վերացնեմ իր ժողովրդի միջից, որովհետեւ ամէն մի մարմնի հոգին»¹ իր արիւնն է: Այդ արիւնը

ես եմ տուել ձեզ՝ զոհասեղանի վրայ քաւելու համար ձեր մեղքերը, որպէսզի նրա՝ արիւնով քաւուեն ձեր մեղքերը: ² Դրա համար էլ Իսրայէլի որդիներին ասել եմ. «Ձեզնից ոչ ոք արին թող չուտի: Արին թող չուտի նաեւ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած մարդը»: (Դտ 17: 10-12)

Պարզ է, որ Սուրբ Աստվածն, ասելով «Եթէ (...) որեւէ կենդանու արին ուտի» որեւէ բառի տակ նկատի ունի ցանկացած արյուն՝ առանց ոչ մի սահմանումների կամ վերապահումների, այսինքն՝ ումնիցե արյուն ուտողը կվերացվի Աստծո ժողովրդից և կմնա Երկնային Երուսաղեմի պատերից դուրս, որ հավասարազոր է Կյանքից դուրս մնալուն: Այնուհետև այս պատժի պատճառը այսպես է բացատրվում. «որովհետև ամեն մի մարմնի հոգին արյունն է», կամ ամեն մի մարմնի կյանքը արյան մէջ է: Եվ քանի որ, ինչպես արդեն նշեցի, արյուն ուտելու համար նախ պետք է սպանել մարմինը, այսինքն՝ թափել նրա արյունը, ապա արյուն ուտելու արգելքը համարժեք է միս ուտելու արգելքին, քանի որ վերջինի մէջ կենդանի հոգի է թաքնված, կամ նրա մէջ արյուն կա, իսկ մարմինն ու արյունը (հոգու խորհրդանիշը) այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ միայն մահը կարող է բաժանել նրանց:

Հաջորդ, 12-րդ տողը մեկ անգամ ևս հաստատում է Աստծո ցանկացած արարածի արյուն ուտելու արգելքը:

Ներկայացված հատվածը լիովին համապատասխանում է Աստծո կտակին մարդու սննդի վերաբերյալ, որը, ինչպես տեսանք վերևը, Նա կրկնել է Ջրհեղեղից հետո:

Բայց արի ու տես, որ անմիջապես այդ տողերից հետո հայտնվում է մի անսպասելի հաղորդագրություն, որը, հակասելով նախորդին, հայտարարում է, որ կան կենդանիներ, թռչուններ և այլն, որոնց կարելի է ուտել և կան նաև որոնց չի կարելի ուտել:

«¹³Իսրայէլի որդիներից կամ դրսից եկած ու ձեր մէջ բնակութիւն հաստատած մէկը եթէ որեւէ երէ կամ ուտելի թռչուն որսայ, պէտք է թափի դրա արիւնն ու այն ծածկի հողով» (Դտ 17: 13)

Ստացվում է, որ ի հակառակ Աստծո Խոսքի, կենդանիներին կարելի է ուտել, բայց միայն որոշակիներին, այսինքն՝ կարելի է խլել նրանց կյանքը, բայց ընտրովի: Նման դրույթը, որը հիմնովին ժխտում է Աստծո Խոսքը, անմիջապես հիշեցնում է մեզ սատանայի «չէք մահանա» (Ծննդոց 3.4) խոսքը, ասված Աստծո Ադամին ուղղված «մահկանացու կղաղնաս» Խոսքի դեմ (Ծնդ 2:17), - այսինքն՝ Աստծո ոչ-ի դիմաց սատանայի այո-ն:

Ավելին, այստեղ պահանջվում է արյուն թափել ու ծածկել այն հողով (այլ կերպ ասած՝ «թաղել» կյանքը կամ հողին հավասարեցնել այն) և հետո ուտել արյունաքամ որսի միսը, ինչը, փաստորեն, ամեն դեպքում սպանություն է նշանակում, և այն էլ ամենադաժան ձևով. արյունաքամ անելով կենդանուն, ինչը նույնիսկ ընկած է հրեական, այսպես կոչված, կոշեր մսի պատրաստման հիմքում: Բայց ի՞նչ է նշանակում սպանել: Քանի որ կյանքը Ինքն Աստվածն է և

Իրենից է բխում, Աստծո արարածներին սպանողը իրականում ձգտում է Աստծուն քշել Իր արարչության միջից:

Կասկածից վեր է, որ այս տողերը կա՛մ սատանայի ուղղակի ներշնչանքով են գրված, կա՛մ էլ ներկայացնում են իրենցից մարմնով ուղևորվող, դաժան մի մարդու ջանքերը հասկանալ Աստծո խոսքը, որն իրականում իրեն բոլորովին խորթ է և անհասկանալի, ճիշտ այնպես, ինչպես խորթ ու անհասկանալի են նրա համար այս աշխարհում մշտապես ծաղրի ենթարկվող սիրո, սրբության և կատարելության հասկացությունները: Սակայն նշված ջանքերին Աստծո իրական Խոսքի տեսք տալու համար, «սրբագրողը» անփոփոխ է թողնում հաջորդ, 14-րդ տողը, որ բոլորովին հակառակ է իր մտքով նախորդ 13-րդ տողին, համահունչ լինելով 10-12-րդ տողերին և որտեղ ասվում է.

«¹⁴որովհետեւ ամէն մի մարմնի հոգին իր արինն է: Ես Իսրայէլի որդիներին ասել եմ. «Ոչ մի մարմնի արին չուտէք», որովհետեւ ամէն մի մարմնի հոգին իր արինն է: Ով որ ուտի դա, կը վերանայ:» (Ղևտ 17: 14)

Ուրեմն, ակնհայտ է, որ այստեղ նորից է ընդգծվում միս ուտելու արգելքը:

Այս տողերը, հավանաբար, խորամանկությամբ են թողնված այստեղ իբրեւ մի խափուսիկ «ապացույց» 13-րդ տողի, որ «Ոչ մի մարմնի արին չուտէք» արգելքը հասկացվի, որպես միայն արյանը վերաբերող, այլ ոչ թե մսին:

Ճշմարտության և ստի այս վայրի խառնուրդը կատարյալ խելագառության դրսևորում է, որը բացահայտվում է նաև նրանում, որ աստվածաշնչյան տեքստի նման «սրբագրողները», իրենց մեկնաբանությունները մտցնելով Սուրբ տեքստի մեջ և ներկայացնելով նրանց որպես Աստծո Խոսք, շատ հաճախ հակասում են ինքները իրենց: Մենք դա տեսանք արդեն վերևը բերված տողերում և տեսնում ենք նաև հետևյալ երկու հակասական դրվագներում,՝ այս անգամ Ղևտացու 11-րդ գլխից:

Ուշադրություն դարձնենք նշված գլխի 41-44 տողերին, որ արգելում են սողունների և զեռունների միս ուտել և որտեղ ասված է.

«Երկրի վրայ փոքրոց գնացող ամէն մի կենդանի թող պիղծ համարուի ձեզ համար, ուրեմն եւ թող չուտուի: Մի՛ կերէք բոլոր այն կենդանիները, որոնք սողում են իրենց որովայնի վրայ. բոլոր այն կենդանիները, որոնք սողում են չորս ոտքով, նաեւ բազմոտանիները, երկրի վրայ սողացող բոլոր զեռունները, քանի որ դրանք ձեզ համար պիղծ են: Մի՛ ապականէք ձեզ երկրի վրայ սողացող սողուններով, դրանցով մի՛ պղծուէք եւ դրանց պատճառով անմաքուր մի՛ դարձէք: (Ղևտ 11: 41-43)

Ինչպես երևում է, այս հատվածում արգելքը վերաբերում է բոլոր տեսակի սողուններին ու զեռուններին և ամրապնդվում է Աստծո հաջորդ խոսքերով. «⁴⁴Ե՛ս եմ ձեր Տէր Աստուածը: Սրբուեցէ՛ք եւ սո՛ւրբ եղէք, որովհետեւ ես՝ ձեր Տէր Աստուածը, սուրբ եմ: Դուք ձեզ մի՛ պղծէք երկրի վրայ սողացող զեռուններով:» (Ղևտ 11: 44):

Բայց ահա դրանք հակասում են նույն գլխի 21-23 տողերին, որտեղ ասվում է

«Թռչնազգի զեռուններից կուտեք դրանք, որոնք քայլում են չորս ոտքով, որոնց ոտքերը գետնի վրայ ուստոստելու համար սրունք ունեն: Կուտեք հետեւեալները. ջորեակ եւ այն, ինչ սրա նման է, խարագուլ եւ այն, ինչ սրա նման է, մորեխ եւ այն, ինչ սրա նման է, օձամարտ մորեխ եւ այն, ինչ սրա նման է: Թռչնազգի ամեն մի այլ զեռուն, որ չորս ոտք ունի, պիղծ է ձեզ համար. դրանցով չպղծուէք:» (Ղևտ 11: 21-23)

Այսպիսով, եթե առաջին հատվածում արգելվում էր ուտել բոլոր տեսակի սողունների ու զեռունների միսը, ապա այստեղ պարզվում է, որ նույն կենդանիներից կան այնպիսիները, որոնց կարելի է ուտել և այնպիսիները, որոնց չի կարելի ուտել:

Արդյունքում, ի տարբերություն Աստծո Խոսքի, որը միշտ պարզ, հակիրճ ու անփոփոխ է և որը միանշանակ արգելում է ուտել որևէ արյուն պարունակող արարածի, Ղևտական գիրքը այդ Խոսքը ներկայացնում է վերապահումներով, ըստ որոնց կենդանիները, թռչունները, սողուններն (ու ձկները) բաժանվում են երկու տեսակի, որոնցից մեկին կարելի է ուտել, իսկ մյուսին՝ ոչ: Նշանակում է, որ մեկի կյանքը (արյունը) կարելի է ուտել, իսկ մյուսինը՝ ոչ:

Այս վերապահումների նպատակը մարդու մարմնին հաճոյանալն է, մարդուն ապակողմնորոշելն ու շփոթեցնելն է, որ նա երբեք չկարողանա փրկվի: Մինչ դեռ Աստծո Խոսքերի սրբությունը, որ փոխանցվել է մեզ աստվածաշնչյան մարգարեների միջոցով, ինչպես տեսանք, մասկերությունը կապում է մարդկային մահկանացիության հետ: Դրա մասին է, օրինակ, Տիրոջ զայրացած և հեգնանքով լի հետևյալ Խոսքը, տրված մեզ Եսայա մարգարեի միջոցով.

«Բսկ նրանք ուրախութիւն ու ցնծութիւն արեցին. արջառներ էին սպանում,ոչխարներ էին մորթում, որպէսզի միս ուտեն, գինի խմեն եւ ասեն. «Ուտենք ու խմենք, որովհետեւ վաղը մեռնելու ենք»: Բայց դա հասնելու է Զօրութիւնների Տիրոջ ականջին: «Եւ ձեր այդ մեղքերին մինչեւ ձեր մահը թողութիւն չի տրուելու», -ասում է Զօրութիւնների Տէրը:» (Ես 22: 13-14)

Ավելին, մարգարեի այս պատգամը վերաբերում է ոչ միայն մարդու սննդին, այլև, ինչպես արդեն նշել եմ այս գլխի սկզբում, մարդուց պահանջվող զոհաբերություններին ու ողջակեզություններին, որոնց քննարկմանը կանցնենք այժմ:

1.Այստեղ հայերեն թարգմանության մեջ գրված է «շունչը», որ ես փոխել եմ «հոգի» բառով, քանի որ սեպտուագինտայում **փսչի** -ի է գրված, այսինքն *ստեղծված հոգի*, իսկ *շունչը* ստեղծված չէ, նա Աստծունն է՝ Աստծո շունչը, որ կյանք է տալիս, այսինքն՝ Աստվածաշունչը:

2. Արյունով մեղքերի քամվան նշանակության մասին տես ստորև, զոհաբերությունների ու ողջակեզությունների մասում, նաև կենդանի հոգուն նվիրված գլխում:

բ) Ղևտացին գոհաբերությունների
և ողջակեզությունների մասին

*Եւ եւ նորան գրեցի իմ բիրաւոր օրէնքները.
Իսկ նորանք օտարոտի բանի պէս համարուեցան:
Իբրեւ իմ ընծաների գոհեր նորանք միս են զոհում եւ ուտում,
Տէրը նորանց չէ հաւանում. հիմա նա պիտի յիշէ
նորանց անօրէնութիւնը եւ պատժէ նորանց մեղքերը.
նորանք Եգիպտոս պիտի ետ դառնան: (Ու 8: 12-13)*

*Այսպէս է ասում Զօրաց Տէրն՝ Բարայէլի Աստուածը.
Ձեր ողջակէզները աւելացրէք ձեր գոհերի վերայ, եւ միս կերէք:
Որովհետեւ եւ չեմ խօսել ձեր հայրերի հետ եւ նորանց պատուէր
չեմ տուել, 'այն ժամանակ երբոր նորանց դուրս հանեցի Եգիպտոսի
երկրիցը ողջակէզի եւ գոհի վերաբերութեամբ: (Եր 7: 21-22)*

Ղևտական գրքի առաջին իսկ տողերից մեր առջև ներկայանում է կենդանի արարածների ամենադաժան սպանությունների մի հրեշափոր պատկեր, որտեղ նրանց մասնատում են, թափելով նրանց արյունը գոհագետանների վրա և ողջակեզում, ինչը, ինչպես արդեն տեսանք ու դեռ կտեսնենք, մահացու մեղք է, բայց, չնայաց դրան, այդ բոլորը ներկայացվում է այստեղ որպես «անուշահոտ պատարագ Եհովայի համար»:

«Եւ կանչեց Մովսէսին, - կարդում ենք Ղևտացու առաջին տողերից, - ու խօսեց նորա հետ Եհովան ժողովրդի խորանիցն ասելով. Խօսիր Բարայէլի որդիների հետ, եւ ասիր նորանց. Եթէ ձեզանից մէկ մարդ զոհ մատուցանելու լինի Եհովային, ձեր գոհը արջառներից կամ հօտերից մատուցանէք: Եթէ նորա գոհը ողջակէզ է արջառներիցը, արու անարատ մատուցանէ նորան. Եւ ժողովրդի խորանի դրան մօտ մատուցանէ նորան՝ Եհովայի առաջին ընդունելի լինելու համար: Եւ իր ձեռքը ողջակէզի գլխին դնէ, որ ընդունելի լինի իրան քաւութիւն լինելու համար: Եւ զուարակը մորթէ Եհովայի առաջին. Եւ Ահարօնի որդիքը՝ քահանաները մատուցանեն արիւնը ու սրսկեն արիւնը ժողովրդի խորանի դրան մօտ եղած սեղանի վերայ շուրջանակի: Եւ ողջակէզը մաշկէ, եւ յօշոտէ նորան կտոր կտոր: Եւ Ահարօն քահանայի որդիքը կրակ դնեն սեղանի վերայ, եւ փայտեր շարեն այն կրակի վերայ: Եւ Ահարօնի որդիքը՝ քահանաները շարեն կտորները, գլուխը եւ ճարպը սեղանի վերայ եղած կրակի վերայի փայտերի վերայ: Բայց նորա փորոտիքը եւ ոտքերը ջրով լուանայ, եւ քահանան այրէ ամենը սեղանի վերայ՝ իբրեւ ողջակէզ Եհովային անուշահոտ պատարագ լինելու համար: » (Ղևտ 1: 1-9)

Այս, կարծես թէ, մագործի կողմից գրված խելագառ տողերը կարդալուց հետո, անմիջապէս հարց է առաջանում. Այս ի՞նչ Տիրոջ մասին է այստեղ խոսքը, որ մի կողմից կենդանի արարածներ է ստեղծում, իսկ մյուս կողմից՝ վայելում է, երբ նրանց մասնատում ու սպանում են: Ո՞ւմ են իրականում արվում նման

գոհաբերությունները: Անշուշտ, այսպիսի դաժանությունը Աստծո արարածների հանդեպ չի կարող բնորոշ լինել նրանց Արարչին՝ Աստծո Սուրբ Ոգուն, Կյանք տվողին ու պահպանողին: Դա, ավելի շուտ, բնորոշ է նրան, ով, Աստված չլինելով, իրեն Աստծո տեղ է դնում՝ այս աշխարհի Իշխանին, Աստծո թշնամուն, որը, ըստ Պողոս առաքյալի, *օղում է իշխում, ներգործելով ապստամբության որդիների մեջ:*» (Եփ 2: 2)

Տեքստի շարունակությունը կարդալիս՝ մեր մեջ նույն հարցն է ծագում.

«Եւ եթէ նորա զոհր հօտերից՝ այսինքն ոչխարներից կամ այծերից է ողջակէզի համար, արու անարատ մատուցանէ նորան: Եւ մորթէ նորան սեղանի մօտ հիւսիսային կողմումը Եհովայի առաջին. Եւ Ահարօնի որդիքը քահանաները սրսկեն նորա արիւնը սեղանի վերայ շուրջանակի: Եւ յօշոտեն նորան կտոր կտոր, եւ գլուխը եւ ճարպը. Եւ քահանան շարէ նորանց սեղանի վերայ եղած կրակի վերայի փայտերի վերայ: Եւ փորոտիքն ու ոտքերը ջրով լուանայ. Եւ քահանան ամենը բերէ եւ սեղանի վերայ այրէ. Սա ողջակէզ է՝ անուշահոտ պատարագ Եհովայի համար:» (Ղևտ 1: 10-13)

Այնուհետև նման ոգով նկարագրվում են թոշունների գոհաբերության ու ողջակեզման կանոնները:

«Եւ եթէ թոշուններից է նորա ողջակէզ զոհր Եհովայի համար, այն ժամանակ նա իրան զոհր տատրակներից կամ աղաւնու ձագերից մատուցանէ: Եւ քահանան սեղանի մօտ բերէ նորան եւ նորա գլուխը ոլորէ, եւ սեղանի վերայ այրէ, եւ նորա արիւնը սեղանի կողմին քամուի: Եւ նորա կտնարն իր աղբովը հանէ, եւ դէն գցէ նորան սեղանի արեւելեան կողմում եղած մոխրանոցի մէջ: Եւ պատառէ նորան թելերիցը առանց բաժանելու. Եւ քահանան այրէ նորան սեղանի վերայ՝ կրակի վերայի փայտերի վերայ. Սա ողջակէզ է՝ անուշահոտ պատարագ Եհովայի համար:» (Ղևտ 1: 14-17)

Տպավորություն է ստեղծվում, որ կատարվում է ինչ-որ չարաբաստիկ մի ծես, ատելությամբ սնված ամեն մի կենդանի արարածի հանդեպ, որի ողջակեզման ծուխը այնուամենայնիվ ներկայացվում է որպես «անուշահոտ պատարագ Եհովայի համար», - նկատենք՝ այն Եհովայի, որն ասում է՝ «Մի՛ սպանիր»: (Ելք 20:13) Ավելին, այդ դժոխքային պատկերները համառորեն ուղղեկցվում են Տիրոջ սրբության շեշտադրումով. «Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ» (Ղևտ 11: 44-45, 19: 2, 20: 7, 26), թեև, ինչպես տեսնում ենք, այս կեղծ «պատվիրաններում» ոչ մի սրբություն չկա: Այստեղ, ըստ Արարչի, չարիք է կատարվում Իր դեմ և այդ չարիքը Իրեն է վերագրվում: Պարզ է, որ դա արվում է այն միտումով, որ մարդը կորցնի սրբության մասին իր պատկերացումը կամ կորցնի հավատքը սրբության հանդեպ:

Մակայն Աստծո իրական պատվիրանները, բացի նրանից, որ բխում են ամենաանսպասելի տեղերից, նաև պահպանվել են Աստվածաշնչի այլ գրքերում, մասնավորապես, մարգարեների գրքերում, առաքյալների նամակներում և նույնիսկ որոշ Աստծո կողմից ներշնչված պարականոն կոչված տեքստերում: Օրինակ, դա պահպանվել է Եսայիա մարգարեի գրքում, որտեղ նրա շրթերով

Աստված, կարծես թե պատասխանելով Ղևտականի տեքստում պահանջվող գոհաբերություններին, արգելում է մորթել կենդանիներին, հավասարազոր համարելով նրանց սպանությունը մարդու սպանությանը, ինչը համարժեք է առհասարակ կյանքին դիմադրելուն:

«Արջառ մորթողը, - ասում է Տերն մարգարեի շրթերով, - մարդասպան է, գառը գոհողը շուն մորթող է, նուէր մատուցանողը խոզի արին մատուցանող է, կնդրուկ յիշեցնողը կուռք օրհնող է: Նորանք էլ են ընտրել իրանց ճանապարհները, եւ իրանց սրտին հաճելի են իրանց կուռքերը. Ես էլ եմ ընտրում իրանց թշուառութիւնները, եւ նորանց վախեցած բաները պիտի բերեմ նորանց վերայ, որովհետեւ ես կանչեցի եւ պատասխանող չ'կար, խօսեցի եւ նորանք չ'սեցին, եւ չարութիւն արին իմ աչքի առաջին, եւ իմ չ'ուզած բանը ընտրեցին:» (Ես 66: 3-4)

Միանգամայն պարզ է, որ անասունների սպանողը, որ հեթանոսներին է բնորոշ, տհաճ է Աստծուն: Եվ երբ Նա մարդուն տալիս է «Մի սպանիր» պատվիրանը, այն վերաբերում է ոչ միայն մարդու, այլև յուրաքանչյուր կենդանի արարածի սպանությանը, լինի դա գազան, անասուն, թռչուն, սողուն, ձուկ և այլն, քանի որ սպանությունը կենդանի արարածներին զրկում է այն կյանքից, որը նրանց տվել է Ինքն Արարիչը: Ուստի սպանությունը դա միշտ խոտվություն է Աստծո դէմ: Տերը նույն պատվիրանը կրկնում է բոլոր մարգարեների շրթերով, անուղղակի ձևով վկայելով Ղևտականում արված աղավաղումների մասին: Այդ մարգարեներից մեկը, օրինակ, Ովսեեն է, որի շրթերով Նա ասում է, ամենայն հավանականությամբ, նկատի ունենալով Ղևտականը.

«Եւ ես նորան գրեցի իմ բիրաւոր օրէնքները. Բսկ նորանք օտարոտի բանի պէս համարուեցան: Իբրեւ իմ ընծաների գոհեր նորանք միւ եւ գոհում եւ ուտում, Տէրը նորանց չէ հաւանում. հիմա նա պիտի յիշէ նորանց անօրէնութիւնը եւ պատժէ նորանց մեղքերը. նորանք Եգիպտոս պիտի ետ դառնան:» (Ու 8: 12-13)

Հնարավոր չէ ավելի պարզ ասել: Աստված Իր մարգարեների շրթերով Ինքն է վկայում, որ Իր կողմից տրված օրենքները աղավաղվել են կամ փոխարինվել օտարի պատվիրաններով, որոնք մարդուն ետ են տանում դեպի Եգիպտոս՝ դեպի «խաւարի ու մահուան ստուերները» (Սաղ 106: 14 Էջմ. Թարգ., Եսայա 9: 2), զրկելով նրան Երկնային Երուսաղեմ մտնելուց:¹

Նույն բանը Նա հաստատում է նաև Երեմիա մարգարեի շրթերով, ըստ որին, արձանագրում է հեգնանքով.

«Այսպէս է ասում Զօրաց Տէրն՝ Բարայէլի Աստուածը. Ձեր ողջակէզները աւելացրէք ձեր գոհերի վերայ, եւ միւ կերէք: Որովհետեւ ես չեմ խօսել ձեր հայրերի հետ եւ նորանց պատուէր չեմ տուել, 'այն ժամանակ երբոր նորանց դուրս հանեցի Եգիպտոսի երկրիցը ողջակէզի եւ գոհի վերաբերութեամբ:» (Եր 7: 21-22) – Այսինքն՝ Աստվածն նորից պարզ ասում է, որ ողջակէզումների մասին չի խոսել և ոչ էլ պատվեր տվել նրանց վերաբերյալ:

Բայց այդ դեպքում ո՞վ է պղծել Ղևտականը: - Պարզ է, որ դա նրանք են արել, ովքեր չեն ցանկանում, որ մարդը դուրս գա «Եգիպտոսից» ու Երկնային Երուսաղեմ մտնի:

Այս և ուրիշ մարգարեների վկայությունները բացահայտ ձևով ի ցույց են բերում այն փաստը, որ Ղևտական գրքի պատվիրանները, տրված Աստծո կողմից Իր որդիներին Եգիպտոսից նրանց դուրս հանելուց հետո, աղավաղված են և չեն համապատասխանում Աստծո պատվիրաններին: Ավելին, ըստ Եսայա մարգարեի վերը բերված խոսքերի և ինչպես նույնը մեզ բացատրում է Պողոս առաքյալը, դրանք ոչ այլ բան են, քան «*ճառայություն դներին*»:

«*Տեսե՛ք Իսրայելին մարմնի կողմանէ, - ասում է առաքյալը. - չէ՞ որ զոհուածներն ուտողները մասնակից են սեղանին: Արդ ի՞նչ ասեմ. մի՞թէ կուռքը մի բան է, եւ կամ թէ կուռքերի զոհուածները մի բան են: Բայց այն որ հեթանոսները զոհում են, դներին են զոհում, եւ ոչ թէ Աստուծուն. Իսկ ես չեմ կամենում, որ դուք դներին մասնակից լինեք. չեք կարող Տիրոջ բաժակը խմել եւ դների բաժակը. Չեք կարող Տիրոջ սեղանիցը վայելել՝ եւ դների սեղանիցը: » (1 Կոր 10: 18-21)*

Եվ հետո ավելացնում.

Ուստի «*եթէ մէկն ասէ ձեզ, թէ Դա կուռքի զոհուած բան է, մի ուտե՛ք՝ նորա պատճառովը որ իմացրեց, եւ խղճմտանքի պատճառովը. Որովհետեւ Տիրոջն է երկիրը եւ նորա բոլոր լիութիւնը:* » (1 Կոր 10: 28)

Արյունոտ զոհերը՝ որպես *զոհաբերություններ դներին*, հիշատակում է նաև մարգարետուհի Սիբիլան: Նրա միջոցով Տերը կրկին ընդգծում է կատարվող ծեսերի չարաբաստիկ էությունը, սահմանելով նրանց որպես «*դաժան ու աղետալի ծեսեր*», որ բացի նրանից, որ խլում են Իր արարածների կյանքը, նաև անհեթեթաբար ներկայացվում են որպես զոհաբերություններ «*հանուն Իրեն*».

«*...որովհետև երբ նրանք զոհեր են բերում իրենց զոհասեղանների վրա, - ասում է Տերը Սիբիլայի շրթերով, - արյուն են թափում իրենց աստվածների համար, վառում են էությամբ (ուղեղով) լի միսն և ոսկորները և ճրագներ վառում ինձ համար. մինչդեռ ես ինքս եմ յույս տվողը: Մահկանացուներ լինելով հարբած անպետք կուռքերով, ինձ վրա գինի են լցնում, կարծես թե ծաքավ աստված լինեմ: Ինձ պետք չեն ոչ ձեր զոհաբերությունները, ոչ ձեր ըմպելիքները, ոչ անիծված ճարպը, ոչ էլ զգվելի արյունը, այս դաժան և աղետալի ծեսում, որը կատարվում է արդեն մահացած թագավորների և բռնակալների հոգիների համար, կարծես թե դրանք երկնային էակներ լինեն: Մարդն իմ պատկերն է, օժտված արդար մտքով. Նրա համար մարուր և անարյուն, բարությանը առատ սեղան պատրաստիր, հաց տուր քաղցածին, խմիչք՝ ծաքավին, իսկ մերկին՝ հագուստ: Ընտրի՛ր այս ամենը քո ցանքերով մարուր ձեռքերով՝ ձեռք բերածից:» (Գիրք 8, էջ 357)²*

Եթե ինչ-որ մեկի մտքով անցնի առարկել մարգարետուհու սուրբ խոսքերին, վկայակոչելով այն փաստը, որ աղբյուրը համարվում է պարականոն, ապա նա կարող է համեմատել դրանց Դավթի սաղմոսի խոսքերի հետ, որտեղ նույն միտքն է արտահայտվում.

«Լսիր, իմ ժողովուրդ, - ասում է Աստվածը Դավթի շրթերով, - եւ ես խօսիմ. Ուր Բսրայէլ, եւ ես վկայութիւն տամ քեզ. ի եւ եմ Աստուած, քո Աստուածը: Քո պատարագների համար քեզ չեմ յանդիմանում, եւ քո ողջակէզները միշտ իմ առաջին են: Քո տանիցն արջառ չեմ առնում, եւ ոչ այծեր՝ քո փարախներիցը: Որովհետեւ իմն են անտառի ամեն գազանները եւ հազարաւոր սարերի անասունները: Ես գիտեմ սարերի բոլոր թռչունները, եւ վայրի գազաններն իմ առաջին են: Եթէ սովածանամ, քեզ չեմ ասի, ձ որովհետեւ իմն է աշխարհքս եւ նորա յիութիւնը: Մի՞թէ ես արջառների միս կ'ուտեմ եւ այծերի արիւն կ'իմեմ: Պատարագիր Աստուծուն գոհութիւն, եւ ի վճարիր Բարձրելոյն քո ուխտերը, Եւ ձ կանչիր ինձ ներութեան օրումը. Եւ ես կ'ազատեմ քեզ, եւ ի դու կ'իտաբանես ինձ:» (Սաղ 50: 7-15) ³

Վերընշված մարգարետիւն իր «Օռակույներում» բազմիցս է կրկնում, որ Աստծո համար հաճելի են միայն անարյուն գոհաբերությունները.

«Հրաժարվիր քո նախկին ծեսերից, - հորդորում է նա, - և մաքրվիր դրանց արյունից. որովհետեւ Նա չի փափկվում քո աղոթքներից և հավերժական լինելով՝ ուշադրություն չի դարձնում քո մահկանացու գոհերին. մատուցիր Նրան սուրբ գովաբանություն՝ բխած իմաստուն շուրթերից, և հասկացիր, թե ով է Նա, և այն ժամանակ կտեսնես Արարչին»: (Գիրք 8, էջ 355) ⁴

Այսպիսով, Աստվածն մարգարետիւն շրթերով ցույց է տալիս, որ գոհաբերությունների բառացի հասկանալը վկայում է միայն Իրեն չճանաչելու մասին, որը Սուրբ Ոգի լինելով, պահանջում է միայն հոգևոր գոհաբերություններ, այսինքն՝ «սուրբ գովաբանություն՝ բխած իմաստուն շուրթերից», այլ ոչ թե անմեղ արարածների արյունաթափություն: Ուստի, խոսելով Իր իրական որդիների մասին՝ Նա նույնիսկ բացահայտում է քարե տաճարների և ցոհասեղանների անիմաստությունը, ասելով..

«Նրանք կթողնեն բոլոր տեսակի տաճարներն ու գոհասեղանները, անիմաստ շինությունները՝ ստեղծված համր քարերից, ներկված կենդանիների արյունով և չորս ոտանի կենդանիների գոհաբերությամբ. նրանք միայն իրենց հայացքը կուղղեն դեպի միակ Աստծո մեծ փառքը...»: (4-րդ Գիրք, էջ 314) ⁵

Ինչ է ուզում Աստվածն ասել, երբ շեշտում է Սիբիլայի շրթերով. «հայացքը կուղղեն դեպի միակ Աստծո մեծ փառքը»: Պարզ է, որ Նա ակնարկում է այն «անձեռագործ տաճարը», որը հիշատակում էր Հիսուս Քրիստոսը (Մկ 14: 58, Հովհ 2: 21), նկատի ունենալով մարդու հոգին, ստեղծված որպես Աստծո նմանություն ու պատկեր, «օժտված, - ինչպես ինքը՝ Սիբիլան է ընդգծում, - արդար մտքով»: Հենց այդ հոգին է այն տաճարը, որում իրականում պիտի կատարվեն պահանջվող «հոգևոր պատարագի» գոհաբերություններն ու ողջակէզումները, մարդու մաքրման ու սրբացման նպատակով: Այդ նույն հոգու տաճարին են վերաբերում նաև Պետրոս առաքյալի հետևյալ խոսքերը. «կենդանի քարերի պես շինուեցէք հոգևոր տաճար, սուրբ քահանայութիւն, որ հոգևոր պատարագներ մատուցանէք Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:» (1Պեղո 2: 5) ⁶

Այսինքն մարդը պիտի հասկանա, որ ինքն է Աստծո տաճարը և ամեն օր մաքրվի ու սրբանա հանուն Աստծո:

Նույն միտքը արտահայտում է նաև Պողոս առաքյալը, ասելով.

«Չ'գիտե՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք եւ Աստուծոյ Ոգին բնակուած է ձեզանում: Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կ'ապականէ. Որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք.» (1 Կոր 3: 16-17)

Այստեղից միակ եզրակացությունն այն է, որ *«խավարի ու մահվան սովերների»* աշխարհում, որտեղ մենք ապրում ենք մինչ օրս (քանզի մահանում ենք) և որը մեկ Եզրիպտոս ենք կոչում, մեկ Բաբելոն, մեկ Քանաան և այլն, քարե տաճարներն ու զոհասեղանները ստեղծված են, որ փոխարինեն կենդանի հոգուն: Այդ պատճառով է, որ Աստծո որդիները, ինչպես, ըստ Սիբիլայի, այնպես էլ ըստ Նոր Կտակարանի առաքյալների, ողջակեզումները իրականում իրենց հոգու մեջ պիտի կատարեն, մաքրելով այն անսուրբ մտքերից ու ցանկություններից: Միայն վերջինների ողջակիզման հոգևոր ծուխն է, որ *«անուշահոտ պատարագ է Եհովայի համար»*, և ոչ թե անմեղ կենդանի արարածների անիմաստ ողջակեզման նյութական ծուխը:

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ Ղևտականում գրվածը՝ Աստծո խոսքը չէ, այլ մարդու խոսքն է, ով, ի վիճակի չլինելով հասկանալ Աստծո առակների իմաստը, ամեն ինչ ընկալում է նյութա-մարմնական մակարդակի վրա, փաստորեն, արդարացնելով արյունաթափությունները զոհասեղանի վրա, այսինքն՝ կենդանի արարածների սպանությունը, ինչը մարդուն հոգեպես և բարոյապես վեհացնելու փոխարեն ապականում է: Արդյունքում մարդը դառնում է աշխարհի մահաբեր մեքենայի մասը, - այն աշխարհի, որի չարաբաստիկ էությունը իր ամբողջության մեջ նույնիսկ չի պատկերացնում: Հետևելով այս կեղծ պատգամներին՝ նա այլ կենդանի արարածների սպանությունը ընդունում է որպես բնական մի բան, ինչի պատճառով էլ Տերը դադարել է պատասխանել նրա խնդրանքներին: Եսայիա մարգարեի շրթերով Նա այսպես է բացատրում Իր լռությունը.

«Երբ աղօթքի համար դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռքերը, երես եւ դարձնելու ձեզանից, եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը լի են արիւնով:» (Ես 1: 15)

Այսպիսով Տերը ամեն անգամ ցույց է տալիս, որ չի ընդունում ոչ մի արյունաթափություն, իսկ մեկ ուրիշ տեղում բացահայտում է, որ մարդը կերպարանափոխվել է՝ *«ընտիր որթից»* դառնալով *«վայրի որթի անպիտան ճիւղ»* (Երեմ 2: 21), քանզի *մոռացել է իր փրկութեան Աստծուն ու օտար* (այսինքն՝ սատանայական ոգու) *որթի ճիւղեր տնկել*: (Եսա 17: 10) Հենց նույն պատճառով Ովսե մարգարեն այդ արյունոտ զոհաբերությունները համեմատում է *«սգավորների հացի»* հետ՝ ասելով նրանց մասին. *«Նորանք գինիի նուէր պիտի չ'մատուցանեն Տիրոջը եւ նորան ընդունելի չեն նորանց զոհերը. սգաւորների»*

հացի պէս են նորանց համար. Նորա բոլոր ուտողները պիտի պղծուին, որովհետեւ նորանց հացը նորանց անձերի համար պիտի չ'մտնէ Տիրոջ տունը:» (Ովս 9: 4) ⁷

Այլ կերպ ասած, այդ հացը ուտողները կման «Եգիպտոսում» և չեն մտնի Երկնային Երուսաղեմ:

Ներկայացված դիտարկումները արդեն պարզաբանում են, թե ի՞նչ զոհաբերություն է ուզում Տերը, երբ ասում է արյան մասին. «Այդ արիւնը ես եմ տուել ձեզ՝ զոհասեղանի վրայ քաւելու համար ձեր մեղքերը, որպէսզի նրա՝ արիւնով քաւուեն ձեր մեղքերը:» (Ղևտ 17: 11)

Եթե մարմնի կյանքը արյան մեջ է, ուրեմն՝ արյան թափելն զոհասեղանի վրա խորհրդանշում է Աստծո ցանկությունը, որ մարդն իր կյանքը ամբողջովին Տիրոջը նվիրի, ողջակեզելով հանուն Նրա իր միջի գազանին:

Իսկ այն հարցին, թե ինչու՞ է Տերը զոհաբերությունների մասին խոսելիս կենդանիների կերպարներին դիմում, կպատասխանենք ստորև, այս գրքի հիմնական մասում, մինչդեռ այժմ նշենք միայն, որ մարդիկ, ովքեր մտածում են ըստ մարմնի, և հեռու են Աստծուց, որ Ոգի է Սուրբ, այս խոսքերն ընկալում են բառացիորեն, այսինքն՝ որպէս կենդանիների սպանության, նրանց արյունը զոհասեղանի վրա ցողման ու նրանց մասնատված մարմիններն այրելու կոչ: Առանց Ղևտականի հաղորդությունները կապելու Աստվածաշնչի այլ գրքերում ու տեղերում պահպանված Աստծո Խոսքի հետ - և, հետևաբար, առանց դրանցից եզրակացություններ անելու, - նրանք չեն կարող հասկանալ նշված փաստը, այսինքն՝ որ զոհասեղանների համար նախատեսված արյունը (հոգին) չի ենթադրում կենդանի արարածի սպանություն, այլ պահանջում է նվիրվածություն Աստծուն հոգևոր և բարոյական զոհաբերությունների միջոցով, որոնց նպատակն է մերժել հենց այն նյութամարմնական կեղծ «բարիքները» (այդ թվում և մսակերությունը), որոնց հետ երկրային մարդը սերտ կապված է մարմնով ու հոգով, քանի որ դրանք վկայում են նրա մասին, որ մարդը աշխարհին դիտում է որպէս հատուկ ստեղծված իրեն ծառայելու համար: Իսկ դա ուղղակիորեն քշում է նրա միջից Սուրբ Ոգու ամեն մի դրսևորում, Որի ներկայությունը մարդու մեջ, հակառակը, վկայում է, որ մարդը տեսնում է իր դերը Աստծո աշխարհին ծառայելու մեջ: Իսկ քշելով իր միջից հոգևորականը, նա քշում է իր միջից իրական Կյանքը, որ ներկայացնում ու պարունակում է իր մեջ միայն Արարիչը՝ Աստծո Սուրբ Ոգին:

Նշանակալից է, որ այն մասին, որ հենց այսպէս, անարյուն ձևով է հարկավոր հասկանալ Աստծուն նվիրված զոհաբերությունները, վկայում է նաև հենց ինքը Ղևտ, ըստ պարականոն «12 Պատրիարքների կտակների», որը, բարեբախտաբար, գոնե այս հարցում անձեռնամխելի է մնացել.

«Եվ նրանք մատուցում են Աստծուն, - կարդում ենք այնտեղ, - անուշահոտ անարյուն բուրմունքներ, հոգևոր ու մտավոր զոհի»: (Ղևիի Կտակը 3: 6) ⁸

Նկատենք, որ սրանք Ղևի խոսքերն են, որին Աստվածն տվել է Ղևտականը՝ քահանայության օրենքը Աստծո ծառայության և զոհաբերությունների վերաբերյալ: Իսկ այժմ համեմատենք այս պարականոն Ղևի հոգևոր ու մտավոր

զոհի անուշահոտ անարյուն բուրմունքները, Ղևտական գրքի կենդանի հոգիների արյունաթափությունների և ողջակեզման «Եհովայի համար անուշահոտ պատարագի» հետ:

Ինչպես տեսնում ենք, անարյունը դարձել է արյունոտ, ինչը մեկ անգամ ևս ուղղակիորեն վկայում է Ղևտական գրքի տեքստի խեղաթյուրման մասին, որ պարտավոր է նրա մեջ ներմուծված կեղծ մեկնաբանություններին, որոնք իրենց հերթին պարտավոր են Աստծո այլաբանական լեզուն չհասկանալու փաստին:

Այն, որ կենդանիների զոհաբերությունների մեջ այլաբանություն է թաքնված, մենք կարող ենք եզրակացնել նաև Եզեկիել մարգարեի հետևյալ խոսքից.

«Եւ ամեն օր մէկ տարեկան կատարեալ գառ ողջակէզ մատուցանես Տիրոջը. Ամեն առաւօտ մատուցանես նորան:»: (Եզեկ 46:13)

Հասկանալի է, որ ոչ ոք չի կարող Տիրոջը ամեն օր մատուցել մեկ տարեկան անարատ մի գառ: Եվ ահա ինչու. տարվա մեջ 365 օր կա: Դա նշանակում է, որ Աստծուն հնազանդ մարդը տարվա մեջ 365 օր պետք է ունենա մեկ տարեկան անարատ գառ, ինչը անհնար է, եթե նույնիսկ անտեսենք կենդանիների բազմացման խիստ պարբերականությունը և մարդկանց անհավասար կարողությունները: Այստեղից պարզ է դառնում, որ երբ Աստվածը խոսում է կենդանիների զոհաբերությունների մասին, դա վերաբերում է ոչ թե նրանց արյունաթափությանը, այլ մարդու կենդանի հոգու (որ նույնպես կենդանի է) մաքրմանը՝ մարմնի տարբեր անմաքուր և ամբարտապան պահանջների այրմանը իր մեջ, այսինքն՝ նրանցից հրաժարման միջոցով, որպեսզի ամեն առավոտ մարդը հայտնվի Աստծո առջև անարատ և մաքուր, ինչպիսին է մեկ տարեկան անառատ գառը, քանի որ գառը մաքրության և խոնարհության խորհրդանիշ է, ինչը Սուրբ Աստծո աչքում, ամենաարժեքավոր բանն է, որ մարդը կարող է ունենալ: Հետևաբար, ճշմարիտ զոհը և ճշմարիտ ողջակեզումը մարմնական անմաքուր բնագոյները խելքով ճնշելու մեջ են, այսինքն՝ սեփական մարմնի խորհրդանշանական «սպանդը» և մեղքերի ողջակեզումը: Հենց այս մտավոր զոհաբերությունն է, որ պետք է կրկնվի ամեն օր, որպեսզի մարդը վերջապես կատարյալ դառնա, ինչպես իր Արարիչը: (Մտ 5:48; Ղևտ 19:2)

Այսպիսով, Ղևտական գրքի տեքստում նկատված անհաջորդականությունն ու անտրամաբանականությունը թույլ են տալիս մեզ հասկանալ, թե որտեղ է խոսում Աստվածը և որտեղ է խոսում մարդը, քանի որ կեղծիքներ կազմողները, հետևելով իրենց մարմնի հրահանգներին, ակամա տարբեր հակասություններ կամ անհամապատասխանություններ են ստեղծում տեքստում, օրինակ՝ մի կողմից հաստատելով Աստծո սրբությունը, իսկ մյուս կողմից՝ վերագրելով Նրան զուտ սատանայական դաժանություն Իր կողմից ստեղծված և կենդանության արժանացված հոգիների հանդեպ, ինչը ցույց է տալիս, որ իրենք, «մեկնաբանները» Աստծուն սատանայից չեն տարբերում: Իմիջայլոց, դա նշում են նաև մարգարեները (օրինակ՝ Ովսեն 2:16) և կարող է նկատել ամեն մի սուրբ տեքստերի ուշադիր ընթերցող, հատկապես որ, ինչպես տեսանք, Ղևտական գրքի խեղաթյուրված օրենքները, քահանաների կեղծավորությունը, իրենց

մեկնաբանությունները ներկայացված որպես Աստծո խոսք, Ինքն Աստվածն է բացահայտում Իր մարգարեների բերանով: .

Բացի այդ, այս աղավաղումների աղբյուրի վերաբերյալ էվսեմոնների պարականոն Ավետարանում մի հետաքրքիր բացատրություն կա, կապված Մովսեսի հետ. Այստեղ կարդում ենք.

«Թույլ տուր, Տե՛ր, - ասում է Մովսեսը, - նրանց այլ օրենքներ տալ, որպեսզի չկորչեն: Եթե նրանք չեն կարող քեզ հետ լինել, Տե՛ր, թող քո դեմ չլինեն, որ կարողանան իրենց պահել, և երբ ժամանակը գա և նրանք հասունանան քո խոսքերի համար, բացահայտիր նրանց քո օրենքները»: Եվ այդ նպատակով Մովսեսը կոտրեց երկու կտոր քարը, որոնց վրա գրված էին տասը պատվիրանները և փոխարենը տվեց դրանք տասնապատիկ տասը: Այդ տասնապատիկ տասը, դպիրներն ու փարիսեցիները հարյուրապատիկ տասը պատվիրաններ արին: Եվ նրանք անտանելի բեռ են դրել ձեր ուսերին, որը իրենք էլ չեն կարող տանել: Որովհետև որքան ավելի մոտ են պատվիրանները Աստծուն, այնքան ավելի քիչ է դրանց կարիքը : Եվ որքան հեռու են նրանք Աստծուց, այնքան մեծ է նրանց կարիքը մեզ համար: Ուստի փարիսեցիների և դպիրների օրենքներն անթիվ են»: (Ավետարան էսեմոնների) ⁹

Տեսնում ենք, որ նշված ավետարանը բացահայտում է այն բազմաօրինակ փոփոխությունները, որ ներդրված են եղել Աստծո Խոսքի վրա: Ուստի մենք չենք սխալվի, եթե արյունոտ զոհաբերությունները իրենց բոլոր մանրամասություններով վերագրենք այդ դպիրներին ու փարիսեցիներին և նրանց հետնորդներին Եկեղեցիների մեջ, որ իրենց քրիստոնեական են համարում:

Այսպիսով, Ղևտական կանոնական Գիրքը, որն օրինականացնում է կենդանի էակների արյունաթափությունը Եկեղեցիները ընդունում են որպես Աստծո խոսք, ինչպես դա չհասկանալու պատճառով, այնպես էլ նրա մեջ ներդրված դպիրների և փարիսեցիների մեկնաբանությունների պատճառով: Մինչ դեռ, որոշ պարականոն գրքեր կամ հատվածներ նրանցից, որ առանձնանում են մարդու մտքի համար անսովոր սրբությամբ ու կատարելությամբ, վկայելով այսպիսով, որ Աստծո իրական Խոսքն են ներկայացնում, խորթ են դառնում Եկեղեցիների համար: Արդյունքում, Ղևտական գրքի ներկայումս գրանցված օրենքները կարելի է անվանել, ավելի շուտ, մարդուն ստրկացնող ու խաբեությամբ նրան «Եզիպտոսում» պահող օրենքներ, քանի որ դրանք ճշմարտությունը փոխարինում են մեխանիկացված դաժանագույն ծեսերով, որ խցանում են մարդու մտավոր ունակությունների ցանկացած դրսևորում:

Համոզվելով, որ կենդանիների սպանությունն ու մսակերությունը զգվելի են Տիրոջ համար, ինչպես և մարդու սպանությունը, նշենք, որ տեքստի դրանց հետ կապված բոլոր աղավաղումները, ի վերջո, պայմանավորված են բոլոր հավատքների աստվածաբանության մեջ հաստատված «հոգի» հասկացության սխալ մեկնաբանությամբ: Ուստի այժմ անցնելով այս գրքի հիմնական հարցի

քննարկմանը, հասկանանք, թե ինչ է *հոգին* և ինչո՞ւ է Տերն զոհաբերությունների մասին խոսելիս կենդանական կերպարներ օգտագործում:

1. Եգիպտոսից Ելքի իրական նշանակությունը տարբերվում է ընդունվածից: Նա մեկ երկրից մյուսը չէ տանում Աստծո զավակներին, այլ մեկ աշխարհից մյուս աշխարհ, այսինքն: «*խավարի ու մահվան ստվերներից*» հանում է իսրաելացիներին դեպի Աստծո հավիտյան կյանքի աշխարհ: Մանրամասը դրա մասին տես իմ ռուսերտեն ու իսպաներեն լեզուներով գրված «*Шесть дней творения и Седьмой День*»/ «*Los seis días de la creación y el Día Séptimo*»/ և «*Армения библейская – земля неведомая*»/ «*Armenia bíblica – tierra incógnita*» գործերի համապատասխան գլխում:

2. «*Oraculos sibilinos*» - Apocrifos del AT por A.Diez Macho, Tomo III. Libro VIIIp.357: “...**pues queman carnes y huesos llenos de médula**”, dice el Señor por la boca de Sibila, “*cuando sacrifican en sus altares y vierten sangre para las divinidades y encienden candiles para mí, que soy el que da la luz, y ellos, mortales, me hacen libaciones de vino como si fuera un dios sediento, borrachos para nada por ídolos inútiles. No necesito de vuestros sacrificios o vuestra libación, ni la grasa maldita, ni la sangre abominable, pues éstas son las ofrendas que harán para recuerdo de reyes y tiranos a sus espíritus, ya muertos, como si fueran seres celestiales, realizando así un rito impío y pernicioso....El hombre es mi imagen dotada de recta razón. Dispón para él tú una mesa limpia e insangüe, repleta de bienes, y da pan al hambriento, bebida al sediento y vestidos para el cuerpo desnudo: proporciónaselo de tu propio esfuerzo con manos puras*”.

3. Սա ընդհամենը մեկ օրինակ է բացահայտող, որ նաև պարականոն գրքերում կարող ենք գտնել աստվածաշունչ խոսքեր: Ուստի նրանք ևս արժանի են լուրջ ուսումնասիրության:

4.«*Oraculos sibilinos*» տես համար 3 կետը: “*Rechaza los anteriores preceptos y límpiate de su sangre, pues el no se aplaca con tus cantos, ni tus plegarias, ni atiende a tus sacrificios perecederos, a el, que es imperecedero, presentale un himno santo surgido de inteligentes bocas y aprende, quien es el, y entonces veras al Creador.*” (Libro VIII pg. 355)

5. Տես նույն տեղում. “*Ellos se negaran a ver toda clase de templos y altares, edificaciones sin sentido de piedras mudas, mancilladas por la sangre de animales y por los sacrificios de cuadrúpedos; dirigirán su mirada hacia la gran gloria del único Dios*” (Lb. IV, pg. 314)

6. Այստեղ «միջոցով»-ի փոխարեն թարգմանված է «ձեռքով» , սակայն այսպիսի թարգմանությունը մոլորեցնող է: Դրա համար ես փոխեցի այն «միջոցով» բառի հետ:

7. Համեմատել Հիսուս Քրիստոսի առաջարկած կյանքի հացի հետ:

8. Տես. “*Ofrecen al Señor un sacrificio de suave olor, una ofrenda razonable y sin sangre*.” (Leví 3: 6) - TESTAMENTOS DE LOS DOCE PATRIARCAS, HIJOS DE JACOB. Ntstamento de Levi. (apócrifo pseudoepigráfico) por A. Díez Macho.

Շաւոյ ընկերէն. «*И подносят они Богу ароматы благоуханные, жертву мысленную и незапятнанную кровью*» (Завещание Левия, 3, 6) - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001 или http://krotov.info/acts/01/joseph/apok_01.html

9.Տաւ ընկ. թԱ. «Позволь мне, Господи, дать им другие законы, чтобы не погибли они. Если они не могут быть с тобой, Господи, пусть же не будут они против тебя, чтобы могли они поддержать себя, и когда время придет и созреют они для слов твоих, раскрой для них свои законы». И с этой целью разбил Моисей два куска камня, на которых были начертаны десять заповедей и вместо них дал десять раз по десять. Из этих десять раз по десять книжники и фарисеи сделали сто раз по десять заповедей. И они возложили невыносимую ношу на ваши плечи, такую, какую они сами не в силах вынести. Ибо чем ближе заповеди к Богу, тем меньше их нужно нам. И чем дальше они от Бога, тем больше их нужно нам. Поэтому законы фарисеев и книжников неисчислимы» (Еванг от ессеев или Евангелие мира) – Библиотека Гумерю Перевод с арамейского Э.Б.Шекли; русское изд. С. Богачкина, А.Журавлёва

Շաւոյ իւշախնէրէն. “Y Moisés dijo al Señor, Mi corazón está lleno de tristeza, pues mi pueblo se perderá. Porque no tienen conocimiento, ni son capaces de comprender tus mandamientos. Son como niños pequeños que no pueden entender aún las palabras de su padre. Consiente, Señor, que les dé otras leyes, para que no se pierdan. Si ellos no pueden estar contigo, Señor, que al menos no estén contra ti; que puedan mantenerse a sí mismos, y cuando haya llegado el momento y estén maduros para tus palabras, revélales tus leyes". Por eso rompió Moisés las dos tablas de piedra donde estaban escritos los diez mandamientos, y les dio en su lugar diez veces diez. Y de estas diez veces diez, los escribas y los fariseos han hecho cien veces diez mandamientos. Y han puesto insoportables cargas sobre vuestros hombros, que ni ellos mismos sobrellevan. Pues cuanto más cercanos a Dios están los mandamientos, menos necesitamos, y cuanto más lejanos se hallan de Dios, más necesitamos entonces. Por eso innumerables son las leves de los fariseos y de los escribas,” - EL EVANGELIO DE LOS ESENIOS – EVANGELIO DE LA PAZ – Edmond Székely, Londres, 1937, Primera edición: Junio de 1986, Octava edición: Febrero de 2001

I. Մարդը եւ կենդանական աշխարհը

Նախաբան

Մարդու և կենդանիների, թռչունների, սողունների եւ ձկների բնության կապի մասին

Կենդանիներին ընդունված է հակադրել մարդուն որպես անտրամաբանական արարածներ, որոնք ապրում են մարդու կողքին երկրագնդի վրա: Նման հակադրության ուշագրավ օրինակն է վերը նշված եւ, կարելի է ասել, բոլորի կողմից լուր համաձայնված, ուղղափառ աստվածաբան Օսիպովի կենդանիների մասին կարծիքը, որը նրանց կյանքը համարում է «ոչ մի նշանակություն չունեցող»:

Բայց եկեք տեսնենք, թե ինչ են ասում Սուրբ Գրությունները նրանց մասին :

Սուրբ Գրքի մեզ հասած տեքստում առաջին հայացքից բավականին քիչ են տեղեկությունները կենդանիների, թռչունների, սողունների եւ ձկների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մենք գտնում ենք այնտեղ որոշ ակնարկներ արարածների էության եւ արարչության մեջ նրանց տեղի մասին: Նշված «ակնարկների» ամենահետաքրքիր ու խորհրդավոր օրինակը Պողոս առաքյալի հայտնի խոսքերն են, որ վկայում են մարդու եւ այլ կենդանի արարածների բնության միջեւ մի միաստիկ կապի առկայության մասին:

«Ստեղծուածները, - ասում է առաքյալը, նկատի ունենալով կենդանիներին, թռչուններին, սողուններին ու ձկներին, - մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը, քանի որ ստեղծուածները ունայնութեանը հնազանդուեցին (ոչ իրենց կամքով, այլ նրանց հնազանդողի կամքով ¹) այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար. քանզի գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են մինչեւ այժմ. եւ ոչ միայն նրանք ². այլ եւ մենք իսկ, որ Ոգու ³ սկզբնապատուղն ունենք, մենք եւս մեր մէջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրութեանը՝ մեր մարմնի փրկութեանը» (Հռոմ 8: 19-23)

Ի՞նչ նկատի ունի առաքյալն այստեղ :

Ակնհայտ է, որ նա մեզ շատ կարեւոր ակնարկներ է անում Աստծո բոլոր տեսակի արարածների եւ մարդու վարքերի միջեւ նշված կապի մասին, որը այս կամ այն կերպ անուղակիորեն հաստատում է գտնում նաև Հին Կտակարանում եւ որոշ պարականոն գրություններում, ⁴

Որո՞նք են այդ կարևոր ակնարկները:

Ինչպես տեսնում ենք, առաքյալի ասածները հիմնականում վերաբերում են երկու առարկայի՝ մարդու եւ մնացած Աստծո կենդանի արարածների հարաբերությանը: Առաքյալի խոսքը լավ հասկանալու համար, մենք նրա վկայությունը կբաժանենք երեք կետերի, որոնցից յուրաքանչյուրը ավելի ուշ

առանձին կքննարկենք: Իսկ այժմ նշենք միայն այն եզրակացությունները, որ առաջին հայացքից են ծագում կարդացողի մտքում:

1. ստեղծութեանը ունայնութեանը հնազանդութիւնը (ոչ իրենց կամքով, այլ նրանց հնազանդողի կամքով)

Այս խոսքերից հետևում է, որ Ադամի անկումը ոչ միայն իրեն գցեց սապկանութեան ծառայութեան եւ ունայնությունից մեջ, այլեւ Աստծո բոլոր արարածներին՝ բոլոր կենդանիներին, թռչուններին, սողուններին ու ձկներին (ինչպէս նաեւ ողջ բուսական աշխարհը): Սրանից երկու տրամաբանական հետևություններ կարող ենք անել. առաջինը՝ որ մինչ Ադամի անկումը բոլոր կենդանիները, ինչպէս և ինքը Ադամը, գերծ էին ունայնությունից, եւ երկրորդը՝ որ կենդանիները լիովին կախված են մարդուց, իսկ նրանց վարքը ոչ այլ բան է, քան հայելական արտացոլում մարդու վարքի:

2. գիտենք, որ բոլոր ստեղծութեանը հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են մինչ եւ այժմ. ²³եւ ոչ միայն նրանք, այլ եւ մենք իսկ, որ Ոգու սկզբնապաւուրդն ունենք, մենք եւս մեր մէջ հեծեծում ենք:

Այս բառերից հասկանում ենք, որ առաքյալի խոսքը ակնարկում է մարդու եւ Աստծո մյուս կենդանի արարածների միջեւ եղած միակ տարբերությունը՝ մարդու մէջ «ոգու սկզբնապատուղի» առկայությունն է:

3. ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը (...) այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար. (...) սպասելով որդեգրութեանը՝ մեր մարմնի փրկութեանը

Այստեղի ակնարկն այն է, որ մարդու սապկանութեան ծառայութեան ունից եւ ունայնությունից ազատումը կազատի նաև բոլոր արարածներին՝ կենդանիներին, թռչուններին, սողուններին եւ ձկներին նույն սապկանութեան ծառայութեան ունից եւ ունայնությունից: Եվ ոչ միայն կազատի, այլեւ Աստու որդիների փառքի ազատութեան կիսացնի նրանց, ինչը նշանակում է, որ ինչպէս նրանք ընկած մարդու անարգության մասը կազմեցին, այնպէս էլ կկազմեն նրա փառքի մասը, - այսինքն՝ արարածը ինչ-որ միատիկ ձևով կապված է մարդու հետ, կազմելով նրա պատկերի ու մարմնի մասը:

Պողոս առաքյալի այս, եւ կասեի, ամենաընդգրկող խոսքերը, չնայած իրենց կարեւորությանը, կարծես, չեն ուսումնասիրվել, քանզի հայտնի չէ մեկը, որ նրանց ենթարկած լինի խորը սեմանտիկ վերլուծության: Հավանական է, դրա պատճառն այն է, որ, ըստ ընդունված հավատքի, դրանք միայն կենդանիներին են վերաբերուն և, այդ պատճառով աննշան են համարվում:

Մակայն, ինչպէս արդեն նշեցի, իրականում նրանց իմաստը ընդգրկում է ամբողջ արարչությունը եւ հավասար է Աստծո հայտնություններին: Ուստի որոշեցի եւ ինքս այդպիսի վերլուծությաւն ենթարկել դրանց, որպէսզի բացահայտվի դրանց մէջ պարունակվող աստվածաշնչան իմաստը: Հենց այս է ներկայացվող գրքի նպատակը :

Բայց նախքան նշված կետերից յուրաքանչյուրին մանրամասնորեն անդրադառնալը, տեսնենք, թե առհասարակ ինչ է ասում Սուրբ Գիրքը մարդու եւ կենդանիների, թռչունների, սողունների եւ ձկների բնության մասին:

1. Այստեղ, ցավոք, պետք է անդրադառնանք թարգմանությանը, որտեղ *նչ իրենց կամքով, այլ նրանց հնազանդողի կամքով* արտահայտության փոխարեն գրված է «*նչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստված հնազանդեցրեց նրանց*», որը բացակայում է բնագրում և, տրամաբանությունից դուրս լինելով, ոչ այլ բան է քան սխալ մեկնություն թարգմանչու կողմից մտցված բնագրի մեջ որպես աստվածաշունչ խոսք: Բանը նրանում է, որ Աստվածն Իր արարածներին չի հնազանդեցնում ունայնությանը, քանի որ Աստվածը չէ մահվան հեղինակն ու պատճառը: Ինչպես ասում է Սողոմոնը, «*Արդարեւ, Աստուած մահ չի ստեղծել, եւ նա չի ուրախանում ողջերի կորստեան համար*: ¹⁴Նա ամէն ինչ հաստատել է լինելու համար, եւ աշխարհի գործերը փրկութեան համար են: Ոչ մահաբեր թոյն կայ նրանց մէջէ՛ւ ոչ էլ դժոխքի թագաւորութիւն՝ երկրի վրայ, ¹⁵որովհետեւ արդարութիւնը անմահ է: ¹⁶Իսկ ամբարիշտները ձեռքով ու խօսքով իրենց մօտ կանչեցին մահը, նրան իրենց բարեկամ համարեցին, հալումաշ եղան եւ դաշինք կնքեցին նրա հետ. եւ իսկապէս արժանի են բաժնեկից լինելու նրան: » (Եզմիածին թ. Իմաստ.Սող 1: 13-16)

Նկատի ունենալով այս և բազմաթիվ այլ վկայություններ՝ տեսնում ենք, որ թարգմանությունը արված է առանց հասկանալու Աստվածաշնչի խոսքը Աստծո էության մասին, և, հետևաբար, տեկստի իմաստը, որտեղ միայն ասվում է, որ արարածները *ունայնությանը* հնազանդվեցին նրանց հնազանդողի կամքով. - *διὰ τὸν ὑποτάξαντα* - և ոչ մի բառ ավել: Իսկ նրանք հնազանդված էին ԱդամինՈւրեմն, խոսքը այստեղ կարող է գնալ միայն Ադամի մասին: Իսկ թե ինչ է նշանակում այդ հնազանդումը, կտեսնենք ստորև:

2. Այստեղ նորից պետք է անդրադառնանք հայերենի թարգմանությանը, որտեղ «*նրանք*» բառի փոխարեն անիմաստ ու տրամաբանությունից դուրս մի արտահայտություն ենք տեսնու. «*եւ ոչ միայն պաշտի*, մինչ դեռ բնագիրն ու տրամաբանությունը պահանջում են «*եւ ոչ միայն նրանք . այլ եւ մենք*» արտահայտու թ ու նը:

3. Այստեղ թարգմանության «*հոգի*» բառը եւ փոխարինել եւ *Ոգի (Շունչի իմաստով)* բառով, քանզի ցավոք, նաև այստեղ թարգմանության մի անփառոք սխալի առջև ենք գտնվում: Նկատի ունենալով «*հոգի*» բառը, որ բացահայտում է հայ աստվածաբանության ծանրագույն թերությունը, քանզի հունական բնագրում՝ Սեպտագինտայում, ինչպես կտեսնենք ստորին, «*հոգին*» վերաբերում է ոչ միայն մարդու, այլև բոլոր ստեղծված կենդանիների բնությանը, որ *մեկ՝ Մտչի*, բառով է սահմանվում; *Ուրեմն, այն, ինչ որ միացնում է մարդուն բոլոր կենդանիների հետ, չի կարող նրանց տարբերությունը լինել*: Մանավանդ որ առաքյալը այստեղ ուրիշ՝ *πνεῦμα* բառն է օգտագործում /*τοῦ πνεύματος*/, որը վերաբերում է ոչ ստեղծված, ոչ

նյութական , բայց իմաստությամբ լի մի էությանը: Լատիներեն *spiritus* է կոչվում: Ներկա հայերենում դա թարգմանություն չունի, սակայն հայի գիտակցության մեջ *spiritus* –ը մնացել է որպես *ոգի*, կամ *շունչ*: Չնայաց դրան, «գիտական» հարթակի վրա ընդունված է *ոգին հոգուց* չտարբերել, ինչը մեծագույն սխալ է, քանզի «*կենդանի հոգին*» (*Ψυχή* –ն) ստեղծված է, իսկ «*ոգին*» (*πνεύμα*–ն) անստեղծ: Բացի դրանից, ըստ Անարյանի արմատական բառարանի, *հոգի* բառը կապված է *հոգու* բառի հետ: Իսկ հոգսը Արարչին, որ ոգի է, չի կարող վերաբերել, քանզի Նա, ըստ Սողոմոնի, «սուրբ է, միածին, բազմաբաշխ, նուրբ, դիւրաշարժ, պարզ, անարատ, յայտնի, անվրէպ, բարեսէր, արագ, անարգել, բարերար, 23մարդասէր, հաստատուն, զգուշաւոր, **անհոգ**, ամենազօր, ամենահայեաց եւ կարող թափանցելու մտաւոր, մաքուր եւ նրբին բոլոր բաների մէջ:» (Էջ թ-ն Իմաստ 7»: 22-23)

Այսինքն՝ Նա «*միածին*» է, ոչ՝ ստեղծված, և «*անհոգ*», հեռու ամեն մի հոգսից, որը միայն Ադամի անկման հետևանքով հայտնվեց և կապված է, ինչպես կտեսնենք, նրա արտաքին՝ մեղքի մարմնի հետ: Ավելին՝ *Πνεύμα*–ն այն էությունն է, որ «ոգեցնում» է մարդու «*կենդանի հոգին*» : Մանրամասը տես իմ «*Աստվածաշնչի հայ թարգմանության և աստվածաբանության մուծ կողմերը*» գրքում տեղադրված «*Ψυχή*, և *πνεύμα*. Հոգի և ... (Հոգի)» հոդվածը :

Ուրեմն՝ **միշտ թարգմանությունը կլինի. «ոգու սկզբնապատուրդ (հոգում)»: Ոգին կարելի է բազատել նաև որպես «շունչ», բայց միշտ տարբերելով այն շնչառությունից, որ բնորոշ է բոլոր «կենդանի հոգիներին»: Իսկ «շունչը» Նա է, որ Աստվածաշունչ է կոչվում և որով միայն փոքրաթիվ անհատներն են օծված:**

4. Բոլոր պարականոնները հանարյա առանց բացառության, ցավոք, մերժված են Եկեղեցիների կողմից կա՛մ նրանց նյութերի ուսումնասիրության մեջ խորանալու ցանկության բացակայությունից, կա՛մ էլ եկեղեցականների ներքին անազատության պատճառով, քանզի վերջինները, գրեթե, միշտ սահմանափակվում են եկեղեցու ճանաչված հայրերի կարծիքներով և հրաժարվում են Աստծո Խոսքի ինքնին անկախ, և ամբողջական (ոչ թե մասնատված ձևով) ուսումնասիրությունից անիմաստ համարելով այդ և արգելափակելով այդպես Սուրբ Ոգու գործողությունը իրենց հոգում: Մինչդեռ պարականոն գրվածքների մեջ հաճախ, կեղծիկներից բացի, կարելի է գտնել նաև իսկական հոգևոր գանձեր:

Այրը (Մարդը)

1. Կենդանի հոգի

Բուն հարցին անցնելուց առաջ պետք է նշեմ, որ «մարդ» բառը վերաբերում է ընկաց Ադամին որպես մահաժույժ, քանի որ նրա արմատը միջազգային է և մահ է նշանակում: ¹ Իսկ Աստվածը, ինչպես պնդում է Սողոմոնը, մահ չի ստեղծել: ԵՌԻԵՄԱՆ, քանի որ հոգին անմահ է, նրան իր ստեղծելու պահին «մարդ» բառով սահմանելը սխալ է, քանի որ մինչև Ադամի անկումը նա «այր» պիտի անվանվի (ինչպես նաև նրա վերականգնումից հետո):

Բացի դրանից, պետք է նորից նկատեմ, որ հայ թարգմանիչները Աստվածաշնչի *խոսքին* (որ «Բանն» է, այսինքն՝ Արարիչը (Հավի 1: 1)), փաստորեն, կարևորություն չտալով, տարբեր ձևերով են թարգմանում այրին և այլ կենդանի արարածներին՝ բնորոշող, բնությունը, որը հունական բնագիրը՝ Սեպտուագինտան միևնույն՝ *Ψυχή ζῶσαν*՝ («կենդանի հոգի»), բառով է սահմանել, վկայելով, այդպես, որ մարդու և այլ արարածների բնությունը նույնն է և դա «կենդանի հոգին» է:

Ահա թե ինչպես է Տերը կոչում Իր կողմից առաջին հերթին ստեղծված *այրին* (մարդուն), ըստ տարբեր հայերեն թարգմանությունների.

«Տեր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանութեան շունչ փչեց, եւ մարդն եղաւ կենդանի էակ:» (Էջմ. թարգ., - Ծնդ 2: 7) և

«Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուցը շինեց մարդը. Եւ նորա ռնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ:» (Արարատ թարգ., - Ծնդ 2: 7)

Այս երկու թարգմանություններից նախընտրելին երկրորդն է, այսինքն՝ «Արարատ» թարգմանությունը, որովհետև «էակը» կարող է ստեղծված լինել և կարող է վերաբերել չստեղծված էություններին, իսկ *հոգի* հետ կապված «հոգին» միանշանակ է ցույց տալիս, որ ստեղծված է:

Իսկ ահա թե ինչպես է Սեպտուագինտան մեզ հայտնում (մարդու) ստեղծման մասին.

καὶ ἐπλασεν ὁ θεὸς τὸν ἄνθρωπον χοῦν ἀπὸ τῆς γῆς καὶ ἐνεφύσησεν εἰς τὸ πρόσωπον αὐτοῦ πνοὴν ζωῆς, , καὶ ἐγένετο ὁ ἄνθρωπος εἰς ψυχὴν ζῶσαν. (Ծնդ 2: 7)

Ինչպես տեսնում ենք, երկրի փոշուց ստեղծված մարդը կոչվում է ψυχὴν ζῶσαν, - «կենդանի հոգի», այսինքն՝ կենդանի մի անոթ, օրգանիզմ:

Ճիշտ նույն ձևով (հղղվվումի կամ թվի տարբերությամբ) - ψυχὴν ζῶσαν («կենդանի հոգի»), - Սեպտուագինտան սահմանում է նաև ջրից ստեղծված կենդանիներին, ասելով.

Καὶ εἶπεν ὁ θεός· Ἐξαγάγέτω τὰ ὕδατα ἐρπετὰ ψυχῶν ζωῶν καὶ πετεινὰ πετόμενα ἐπὶ τῆς γῆς κατὰ τὸ στερέωμα τοῦ οὐρανοῦ. καὶ ἐγένετο οὕτως. καὶ ἐποίησεν ὁ θεὸς τὰ κήτη τὰ

μεγάλα καὶ πᾶσαν ψυχὴν ζώων ἐρπετῶν, ἃ ἐξήγαγεν τὰ ὕδατα κατὰ γένη αὐτῶν, , καὶ πᾶν πετεινὸν πτερωτὸν κατὰ γένος. καὶ εἶδεν ὁ θεὸς ὅτι καλὰ. (Ծնդ 1: 20-21)

Սակայն հայ թարգմանիչը որոշեց տարբերել կենդանիների բնությունը, հետևյալ ձևով թարգմանելով բնագրի խոսքը և դրանով շփոթություն մտցնելով այդ հասկացության մեջ.

«Աստուած ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանութեան շունչ ունեցող զեռուններ, եւ երկրի վրայ ու երկնքի տարածութեան մէջ թռող թեւաւոր թռչուններ լինեն»: Եւ եղաւ այդպէս: ²¹Աստուած ստեղծեց խոշոր կէտեր, կենդանութեան շունչ ունեցող ամէն տեսակ զեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների, եւ ամէն տեսակ թեւաւոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստուած տեսաւ, որ լաւ է»:(Էջմ. թարգ. - Ծնդ 1: 20-21)

Կամ այսպէս.

«Եւ Աստուած ասեց. Ջրերը եռան կենդանի շունչ ունեցող զեռուններով. եւ թռչուններ թռչեն երկրի վերայ երկնքի հաստատութեան երեսին: Եւ Աստուած ստեղծեց մեծամեծ կէտերը, եւ բոլոր կենդանի շունչ ունեցող սողունները, որ ջրերը եռացին նորանցով նորանց տեսակի պէս, եւ բոլոր թեւաւոր թռչուններն իրանց տեսակի պէս: Եւ Աստուած տեսաւ, որ բարի է»:(Արարատ թարգ.- Ծնդ 1: 20-21)

Ինչպէս տեսնում ենք, այստեղ կենդանի հոգու (ψυχὴν ζώων - ի) փոխարեն կենդանի շունչ է նշված, այսինքն՝ տարբերություն է մտցված այնտեղ, որտեղ բնագիրը նույնացնում է: Բացի այդ, շունչը Աստծուն է բնորոշուն, որ ստեղծված չէ: Այդ պատճառով էլ Աստվածաշունչը Աստվածաշունչ է կոչվում:

Նույնը վերաբերում է երկրի հողից ստեղծված կենդանիներին.

Ահա թե ինչ է ասում հունական տեկստը.

Καὶ εἶπεν ὁ θεός Ὑἱαγάγέτω ἡ γῆ ψυχὴν ζώσαν κατὰ γένος, τετράποδα καὶ ἐρπετὰ καὶ θηρία τῆς γῆς κατὰ γένος. καὶ ἐγένετο οὕτως. (Ծնդ 1: 24)

Նկատենք, որ այստեղ նորից տեսնում ենք ψυχὴν ζώσαν, այսինքն՝ «կենդանի հոգի»: Բառակապակցությունը:

Իսկ ահա թե ինչպէս են արձագանքել դրան հայկական թարգմանիչները,

«Աստուած ասաց. «Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ եւ գազաններ իրենց տեսակներով»: Եւ եղաւ այդպէս»:(Էջմ. թարգ. - Ծնդ 1: 24)

«Եւ Աստուած ասեց. Երկիրը շնչաւոր կենդանի հանէ իր տեսակի պէս, անասուններ եւ սողուններ եւ երկրի գազաններ իրանց տեսակի պէս: Եւ այնպէս եղաւ»:(Արարատ թարգ.- Ծնդ 1: 24)

Սրանցից առաջինը (Էջմիածնի թարգմանությունը) նույնիսկ չի մատնանշում կենդանիների բնությունը, իսկ երկրորդը՝ նորից առհամարիելով բնագրի նրանց սահմանումը, գազաններին շնչաւոր կենդանի է անվանում,- կարծես թէ անշունչ կենդանիներ էլ կան:

Թարգմանության կենդանի շունչ կամ շնչավոր կենդանի սահմանումները ծագել են այն սխալ մեկնաբանված հայտարարությունից, որ Ադամի ψυχὴν -ն

ստեղծելուց հետո Աստվածը նրա դեմքին *կենդանութեան շունչ փչեց*, ինչից հետո Ադամը [*փսչին Հօսեան*](#) դարձավ, այսինքն՝ «*կենդանի հոգի*»:

Այդ *Մտալի* բառը, որով բնագիրը սահմանում է Աստծո կողմից ստեղծված բոլոր արարածներին, ըստ իր հունական իմաստի, նշանակում է պսիխոմոտորային հատկություններ, այսինքն՝ զգացմունքներ, զգացողություններ, հիշողություն եւ մտածելու ունակություններ, ունեցող, մի կենդանի անոթ: Եվ հասկանալի է, որ այդ բառի աղաղաղված թարգմանությունը չի նպաստում Աստծո Խոսքն ճիշտ հասկանալուն, այլ հակառակը՝ վկայում է, որ «*կենդանի հոգի*» հասկացությունը ընկալված չէ:

Ուստի առաջին հերթին հասկանանք, թե ինչ ասել է «*հոգի*»: Դրա համար սկզբից տեսնենք, թե ինչպե՞ս է այն մեկնաբանում քրիստոնեական աստվածաբանությունը:

-
1. Տես դրա մասին Աճարյանի արմատական բառարանում:

2. Հոգու կոնցեպցիան քրիստոնեական աստվածաբանություններում

Չնայած այն հանգամանքին, որ աստվածաբանների եւ եկեղեցականների միջև «*հոգի*» հասկացության տարբեր մեկնաբանություններ կան, քրիստոնեական բոլոր դավանանքներում «*հոգու*» մի ընդհանուր սահմանում է ձևավորվել, ըստ որին բնագրի *ψυχήν* -ն, այսինքն՝ *հոգին*, նույնացվում է *πνεύμα*-ին, այսինքն՝ *նզուն*, կամ *շնչին*, քանզի վերջինը շփոթվում է *շնչառության* հետ, որը բնորոշ է ամեն մի կենդանի էակին և նույնիսկ Սեպտագինտայում հիշատակված է որպես *πνοήν*, որ «*քամի*», «*շնչառություն*» է նշանակում, այլ ոչ թե որպես *πνεύμα*, որի նշանակությունը՝ «*շունչ*» է, «*նզի*»: Ահա հունական տեկստը.

«καὶ ἔπλασεν ὁ θεὸς τὸν ἄνθρωπον χοῦν ἀπὸ τῆς γῆς καὶ ἐνεφύσησεν εἰς τὸ πρόσωπον αὐτοῦ *πνοήν* ζωῆς, , καὶ ἐγένετο ὁ ἄνθρωπος εἰς *ψυχήν* ζῶσαν.» (Օնդ 2: 7)

Այս շփոթությունը ընդհանուր է, չնայաց նրան, որ, ի բացառություն Հայ Եկեղեցու, մնացած բոլոր Եկեղիցիները «*հոգին*» ու «*շունչը*» (կամ «*նզին*»), հետևելով հունական բնագրին, տարբեր բառերով են սահմանում: Միայն Հայ Եկեղեցին է, որ այդ երկու տարբեր բառերը, այսինքն՝ *ψυχή*-ին և *πνεύμα* – ն մեկ «*հոգի*» բառով է սահմանում և այսպիսով հանուն ընդունված մեկնաբանության խաղտում բնագրի այդ բառերի տարբերությունը:

Ինչպես արդեն նշեցի, «*հոգի*» բառը հունական բնագրում համապատասխանում է *ψυχή* բառին, որը մատնանշում է երկրի փոշուց ստեղծված մի կենդանի անոթի, օժտված տարբեր հոգեբանական հատկություններով, ինչպիսիք են միտքը, զգացողությունը, հիշողությունը եւ նույնիսկ խոսքը: Հետևաբար, բավականին անհերթելի է այն մեկնաբանել որպես «*շունչ*», «*նզի*», մինչդեռ այդ հասկացողությունը համապատասխանում է *πνεύμα*-ին , որ նշված տողերում բացակայում է և, բացի դրանից, վերաբերում է անստեղծ Աստծո էությանը:

Ուստի այստեղ մինչ շարունակելը, կարևոր էմ գտնում մեկ անգամ ևս անդրադառնալ *πνεῦμα*-ին մի կարճ ակնարկ անելով, թե ինչ ասել է *πνεῦμα* , այսինքն՝ «*նզի*», կամ «*շունչ*» (ոչ շնչառության իմաստով), և որն է *հոգու* - *ψυχήν* -ի - և *նզու* - *πνεῦμα-ի* - տարբերությունը:

Πνεῦμα –ն և *ψυχήν* –ն չտարբերելը՝ Քրիստոնեական աստվածաբանության ամենամեծ սխալն է, որ շփոթություններ ու հակասություններ է առաջացնում, թույլ չտալով ճիշտ ընկալել Աստվածաշնչի խոսքը: Իսկ Հայ Եկեղեցին այդ սխալը կրկնապատում է նույնիսկ նշված բառերը չտարբերելով: Այդ շփոթություններ առաջացնող սխալի հետ մենք Աստվածաշնչի հայկական տարբերակում առնչվում ենք ամեն քայլին:¹

Հենց այդ սխալի բացահայտմանն էմ նվիրել «*Միտք, և πνεῦμα. Հոգի և ... (Հոգի)*» հոդվածը տեղադրված իմ «*Աստվածաշնչի հայ թարգմանության և*

աստվածաբանության մույժ կողմերը» գրքում:² Ուստի այստեղ միայն կավելացնեմ, որ թե՛ *պսալմ* –ին և *պսալմ* –ին կարելի է համեմատել *երկնքի* և *երկրի* հետ. Եվ եթե մենք դրանք չենք տարբերում, ուրեմն չենք տարբերում նաև *երկնքի երկրից*, *Աստծուն՝ մարդուց*, *տղամարդուն՝ կնոջից*, մինչդեռ այդ երկու տարբերությունների միության վրա է հիմնված ամբողջ արարչությունը: Եվ եթե մենք, օրինակ, հունական բնագրի *թեոֆանի* –ը (Հովհ 4: 24) թարգմանում ենք որպես «Հոգի է Աստուած» (Հովհ 4: 24), դա միևնույնն է, թե ասենք «*երկիրն է Աստվածը*», կամ «*մարդն է Աստվածը*», կամ «*կինն է Աստվածը*», կամ «*ստեղծագործությունն է (պսալմ –ն) Աստվածը*», մինչ դեռ Աստվածը, – *թեոֆանի* –ն է, – այն էությունը, որ ինքը անստեղծ լինելով, մարդուն ստեղծեծ, որպես *կենդանի* մի անոթ (*պսալմ*), կազմված, ինչպես կտեսնենք, *երկնքից* (գլխից) ու *երկրից* (մարմնից) Իր իսկ ամբողջության բնական ու հայտնության համար: Սակայն այդ անոթը, այսինքն՝ *կենդանի հոգին*, որ բնորոշում է նաև բոլոր այլ Աստծո արարածներին, պիտի երկար ժամանակ *արարվի*, մինչև կարողանա կենդանուց սուրբ Այր, կամ Աստված դառնալ, քանզի Աստծո սուրբ *շունչը*, կամ *հոգին* կարող է միայն մաքրագույն անոթում (հոգում) բնակվել: Նա այն «ամենակարողն» է, որ, ինչպես Սողոմոնն է ասում իր «Իմաստության» մեջ, «*սերնդից սերունդ անցնում է մաքուր հոգիների մեջ եւ պատրաստում Աստծու բարեկամներ եւ մարգարէներ:*» (Իմաստ 7: 27) – *Այսինքն՝ հոգիների միջով անցնողը չի կարող ինքը՝ հոգին լինել: Ավելի հասարակ ձևով ասած, պսալմ –ն և թեոֆանի –ն չտարբերելը նույնն է, թե բաժակն իրեն մեջ ցրած օրից չտարբերել:* Մի խոսքով, *թեոֆանի* –ն և *պսալմ* –ն՝ այն երկուսն են (ոչ այն *մեկը*, ինչպես ստացվում է, ըստ հայերեն թարգմանության, որ դրանց հավասարապես *հոգի* է անվանում), որ իրենց տարբերությամբ *պետք է մեկ մարմին ստեղծեն* (Ծննդ 2: 24) հայտնաբերելով, այսպես, երրորդին՝ Աստծուն, որ Այր դարձած մարդը կարողանա ասել. «*Ես եւ իմ Հայրը մի ենք:*» (Հովհ 10: 30) և «*Հայրը իմ մեջ է, եւ ես՝ Հօր մեջ:*» (Հովհ 10: 38)

Ավելացնեմ նաև, որ այն փաստը, որ Սուրբ Գիրքը հայերեն լեզվով Աստվածաշունչ է կոչվում (և ոչ Աստվածահոգի), որանով իսկ արդեն ցույց է տալիս Աստծուն «Սուրբ հոգի», այսինքն՝ «Սուրբ Արարած» անվանելու անհերթելությունը, միաժամանակ վկայելով, որ Աստվածաշունչի սկզբնաղբյուրում Աստվածը «շունչ» է համարվել և միայն հետագայում են Նրան «հոգի» դարձրել:

Ավելի մանրամասն՝ ստորին գլուխներում:

Շարունակելով այժմ հոգուն նվիրված այս գլուխը՝ նորից շեշտեմ, որ միայն *հոգու* (*պսալմ*–ի) ստեղծվածության փաստը արդեն ցույց է տալիս, որ ի տարբերություն *թեոֆանի* –ի *հոգին* նյութական է եւ ներկայացնում է մարդու մտածող կենդանի անոթը: Սակայն, ինչպես կտեսնենք ստորեւ, նույնքան անհերթել է, բնորոշելով *հոգին* որպես *շունչ* (շնչառության իմաստով), այնուամենայնիվ այն նույնացնել մարդու տեսանելի քայքայվող մարմնին: Ցավոք, հենց այդպես են հասկանում *հոգին* երկրային եկեղեցիները:

Ահա թե ինչպես է բացատրում այն, օրինակ, Կաթողիկ եկեղեցին.

«Հոգին՝ մի շունչ է, որ չունի մարմնի նման նյութական սուբստանցիա: Նրան ո՛չ

կարելի է տեսնել, ո՛չ էլ դիպչել: Իրականում նրա միությունն է մարմնի հետ (որին նա կենդանացնում է), որ ամբողջական մարդ է կազմում: (...) Կատեխիզմը սովորեցնում է, որ հոգին անմահ շունչ է: Նա նյութական չէ և տարածություն չունի (...) նա ընդարձակ չէ, ոչ էլ մարմնական, եւ իր ներքին էությանը կախված է մարմնից»:³

Պարզ է, որ «մարմինը» այստեղ վերաբերում է մարդու տեսանելի, փթությանը ենթարկվող մարմնին:

Այս մեկնաբանությունը, հավանաբար, պայմանավորված է Եկեղեցու հայր Հովհաննես Դամասկոսցու (675-753) տեսակետով: Նա ասում է. «հոգին ստեղծվել է մարմնի հետ միասին, (...) և ոչ, ինչպես դատարկախոսում էր Օրիգենեսը (185-253), ասելով, որ սկզբից ստեղծվել է հոգին, իսկ հետո մարմինը»:⁴

Ինչպես տեսնում ենք, ըստ Հովհաննես Դամասկոսցու, հոգին՝ այն շունչն է, որ կենդանացնում է տեսանելի մարմին:

Նույն ձևով է *հոգին* մեկնաբանում նաև Ռուս Ուղղափառ եկեղեցին: Նա շարունակում է Դամասկոսցու միտքը, ասելով.

«Սրբազան Հայրերը, հիմք ընդունելով Աստվածաշունչը, սովորեցնում են, որ հոգին եւ մարմինը օտար տարրեր չեն միայն ժամանակավորապես միավորված անհատի մեջ, այլ տրվում են միաժամանակ եւ ընդմիշտ հենց արարչագործության գործողությամբ. հոգին «ամուսնացած է մարմնի հետ» եւ անբաժան է նրանից: Միայն հոգու եւ մարմնի միությունն է, որ ամբողջովին յիարժեք մարդ է ներկայացնում. ո՛չ հոգին, ո՛չ էլ մարմինը առանձին դա չեն անում. - ասում է Սբ. Յուստին Փիլիսոփան»:⁵

Այս խոսքերից պարզ է, որ նշյալ սրբազան հայրերը դատում են մարդու արտաքին, տեսանելի մարմնի տեսանկյունից, միաժամանակ անտեսելով այսպես կոչված «ներքին մարդու» (2 Կոր 4:16), կամ «*հոգու մարմնի*» գոյությունը, որի մասին մեզ հայտնում է Պողոս առաքյալը եւ որին նրանք շփոթում են արտաքին տեսանելի մարմնի հետ:

Համապատասխանաբար, նաև մահացածների հարությունը նրանք հասկանում են որպես հարություն այն նույն մարմնի, որը իրականում մահկանացու ծնողների մարմնի պտուղն է, և ոչ թե Աստծու: Ներքևը մեջբերում են ուղղափառ Հիերոմոնկ Սերաֆիմի (Ռոուզի) խոսքը որպես մարդկային մտածողության դասական օրինակ, որն չի բարձրանում մարմնական մակարդակից, քանզի ծագում է ոչ թե անտեսանելի ստեղծագործությունից, այլ տեսանելիից: (Կող 1:16)

«... Իսկապես, կյինի, կյինի մահացածների հարություն, - հաստատում է նա: - Բայց երբ խոսում ենք հարության մասին, պատկերացնում ենք մարմնի հարությունը, քանզի հարությունը՝ ընկածների երկրորդ բարձրացումն է. Իսկ հոգիները, անմահ լինելով, ինչպե՞ս պիտի հարութիւն առնեն: Ուստի, եթե մահը սահմանվում է որպես հոգու բաժանում մարմնից, ապա հարությունը, անշուշտ, հոգու եւ մարմնի երկրորդական միությունն է և երկրորդական բարձրացումը մեռած կենդանի էակի: Այսպիսով՝ **այն նույն մարմինը, որը քայքայվում եւ փթում է, հենց դա է հարություն առնում,**՝⁶ քանզի Նա, ով ի սկզբանե ստեղծեց նրան երկրի փոշուց, կարող է կրկին հարություն տալ նրան այն բանից հետո, երբ նա կրկին փոշի կդառնա, որից որ վերցված էր...»:⁷

Այս, նյութի վրա կենտրոնացած և նյութից ծագած մտածողությունը իր անհեթեթությամբ կարելի է համեմատել միայն շփոթված Նիկողեմոսի

մտածողության հետ, որն, չհասկանալով Քրիստոսի խոսքերը նորից ծնվելու մասին եւ ամեն ինչ ընկալելով մարմնական մակարդակի վրա, հարցնում է Հիսուսին. «Ինչպե՞ս կարող է մարդը ծնվել, երբ ծերանա», (...) «Կարո՞ղ է նորից մտնել մոր արգանդ ու ծնվել»։ (Հովհ 3.4)

Ինչեւ, սա է *հոգու* ընկալումը նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու, թեեւ, օրինակ, Անդրեաս առաքյալը, որից, ինչպես պնդում է նույն Եկեղեցին, նա ստացել է իր առաքելական անունը, միանգամայն հակառակ տեսակետ ունեւ *հոգու* եւ *մարմնի* ծագման վերաբերյալ։ Նա ասում էր.

«Եթե կարծում եք, որ *հոգին՝ հոգու եւ մարմնի միությունն է, այնպես որ նրանց բաժանումից հետո ոչինչ չկա, դուք մտածում եք գազանների պես եւ պետք է համարվեք վայրի գազաններ»* (Նահատակություն Անդրեաս առաքյալ 56(6))⁸

Այդպիսի տեսակետի ծագումը Նույն Անդրեաս առաքյալը հետեւյալ կերպ է բացատրում.

«Իսկ այդ բոլորը գալիս է անմշակ *հոգուց, որ մոլորվել է բնության մեջ եւ պահում է իր մոլորության գրավները*»։ (Նահատակություն Անդրեաս առաքյալ 47(15))⁹

Խոսելով *բնության մեջ մոլորված հոգու անմշակությունից՝* առաքյալը նկատի ունի մարդու կողմնորոշումը դեպի տեսանելի բնությունը, ինչը բնորոշ է հենց նրա *անմշակ* հոգուն, որը չի գիտակցում մարդու տեսանելի եւ անտեսանելի մարմինների տարբերությունը եւ միշտ ապավինում է միայն տեսանելի, փթող մարմնի, կամ տեսանելի բնության վրա։

Զարմանալի է, իհարկե, որ Ռուս ուղղափառ եկեղեցին չի խորհում իր իսկ առաքյալի խոսքերի վրա։ Մակայն վերոնշյալ պատճառները հասկանալի են դարձնում եկեղեցիների, հաճախ անհիմն, առհամարհական վերաբերմունքը այն աղբյուրների նկատմամբ, որոնք չեն ներառված Աստվածաշնչի ժողովածուում, - հասկանալի, բայց ոչ ընդունելի։

Այս ամենով հանդերձ հարկ է նշել նաև, որ Եկեղեցու Հայրերի եւ աստվածաբանների միջև կան և այնպիսիները, ովքեր Անդրեաս առաքյալի նման, այլ տեսակետ ունեն։ Ըստ նրանց, *հոգին նյութական է*, սակայն ներկայացնում է իրենից *նյութի մի նրբագույն, հոգևոր տեսակ, որը անհասանելի է մահկանացուի աչքերին*։ Օրինակ, ինչպես նշում են նույն ուղղափառ աղբյուրները, «ըստ Սուրբ Հովհաննես Կասիան հոռմեացու;՝ Ioannes Massiliensis) (մոտ 360-435), դա հաստատում են քրիստոնեական Եգիպտոսի մեծագույն սրբերի՝ մեծ Անտոնիոսի, աբբա Անտոնիոսի, Մակարիոսի աբբա Մակարիոսի, եգիպտոսի Պախոմիոսի աշակերտները, որոնք, մասնավորապես, ասում են.

«Թեեւ մենք որոշ էակներին անվանում ենք *հոգեւոր* ինչպիսին են իրականում հրեշտակները, հրեշտակապետերը եւ այլ գոյությունները, նույնպես և մեր հոգին, կամ էլ, իհարկե, այդ *նրբագույն օդը. սակայն դրանց ոչ մի դեպքում չի կարելի համարել անմարմին*։ Քանի որ նրանք իրենց համար յուրահատուկ մարմին ունեն, որի մեջ պարունակվում են, թեեւ այդ մարմինը շատ ավելի նուրբ է, քան մերը։ Դրանք մարմիններ են, ըստ Առաքյալի, ով ասում է. «Կան նաև երկնաւոր մարմիններ եւ երկրաւոր մարմիններ.» (Ա. Կոր. 15:40); եւ կրկին. «սերմանում

է հոգևոր¹⁰ մարմին եւ յարութիւն է առնում շնամոր¹¹ մարմին» (Ա Կորնթացիս 15.44): Այս Առաքյալի խոսքերից հետեւում է մի հստակ եզրահանգում, որ անմարմին ոչինչ չկա, բացի Աստծուց, եւ որ, հետեւաբար, միայն Նա է կարող թափանցել բոլոր հոգեւոր եւ ռացիոնալ էակների մեջ, քանի որ Նա միակն է, որ ամենուր է եւ ամեն ինչում, այնպես որ Նա տեսնում ու կանխատեսում է մարդկանց մտքերն ու ներքին շարժումները, նրանց հոգու (մտքի) բոլոր գաղտնիքները...»: ¹²

Ներկայացնելով Կաթողիկէ և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների *հոգու* բացատրությունը, էլ չեմ խոսում Հայ Առաքելական Եկեղեցու մասին, քանի որ այն, թե ինչպես է հայ աստվածաբանությունը *հոգին* հասկանում, երևում է արդեն նշված թարգմանություններից և «*Սուրբ Հոգի*» բառակապակցությունից, որ հակասում են Աստվածաշնչի խոսքին և «*Աստվածաշունչ*»-ի անվանը, վկայելով հայ աստվածաբանության մեջ «*հոգի*» բառի երկու տարբեր և իրար հակասող նշանակությունների առկայության մասին. մեկը ստեղծվածին վերաբերող, իսկ մյուսը՝ անստեղծին: Բայց եթե մեկ բառի երկակի կամ բազմակի նշանակությունները բնորոշ են մարդկային լեզվին կամ դատողությանը, ապա Աստծո լեզվում դա անհեթություն է, քանզի Աստվածը բառով է արարում: Ուստի Նրա ամեն մի բառ մի առանձին ստեղծագործություն է ներկայացնում իրենից և, հետևաբար, միայն մեկ նշանակություն ունի:

Եթե հոգու այս տարբեր բացատրություններին նայենք տրամաբանական տեսանկյունից, ապա կտեսնենք, որ Եզիպտոսի սրբերի աշակերտների տեսակետը ամենատրամաբանականն է, քանի որ այն չի հակասում հոգու *ստեղծման* փաստին, մինչդեռ մյուսները, ընդհակառակը, հակասում են դրան եւ, հետևաբար, զուրկ են աստվածաշնչյան տրամաբանությունից:

Այսպիսով, այստեղ ամենաընդհանուր տերմիններով ներկայացվեց աստվածաբանությունների կողմից *հոգու* մասին ընդունված տեսակետը: Բայց տեսնենք այժմ, թե ինչ են իրականում ասում *հոգու* մասին Աստվածաշունչի և նրան համահունչ պարականոն աղբյուրների տեկստերը:

1. Օրինակ, Առակներից վերցված հետևյալ հատվածում, որտեղ *πνεῦμα* – ն (Արարիչը) իր մասին է խոսում ասել օվ. «*Տէրն ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար. յաւիտենութիւնից էլ առաջ հաստատեց ինձ: 23Նա ծնեց ինձ հէնց սկզբին, դեռ երկիրն արարելուց առաջ*» (Առակ 8: 22-23) Այստեղ Նա Իրեն սկզբից «*ստեղծված*» է հայտարարում, հետո՝ «*ծնված*»: Ակնհայտ է, որ ստեղծվածը չի կարող ծնված լինել, իսկ ծնվածը՝ ստեղծված: Այս կոպիտ հակասությունը վկայում է թարգմանչու մտքի նյութականության ու նրա հոգու և ոգու մեջ չկողմնորոշվածության մասին: Սա միայն մեկ օրինակ է բազմաթիվ ուրիշների միջեւ, որ պահանջում են Աստվածաշնչի նոր հայերեն թարգմանություն նոր, ճշտված աստվածաբանության հիմքի վրա: Այս գրքում մենք դեռ կհանդիպենք նման օրինակներին:

2. Տես այդ գիրքը իմ կայք-հրատարակության մեջ այստեղ.
www.criteriocristiano.com.ar

3. “El alma es un espíritu que no tiene sustancia material como el cuerpo; no puede verse ni tocarse. Y junto con el cuerpo que efectivamente es lo que lo anima, constituye al ser humano... El catecismo enseña que el alma es un espíritu inmortal... es inmaterial y no tiene cantidad de extensión” Alma: significado, definición en el catolicismo: <http://religioncatolicaromana.blogspot.com.ar/2013/01/alma-significado-definicion-en-el.html>

(...) No es extenso, corpóreo, y es esencialmente e intrínsecamente dependiente del cuerpo. (...) »(Enciclopedia católica. en cuerpo y alma”<http://religioncatolicaromana.blogspot.com.ar/2013/01/alma-significado-definicion-en-el.html>

4.«душа была создана вместе с телом, а не так, как пустословил Ориген(185-253),, будто сначала была сотворена душа, а потом тело» <http://www.verappravoslavnyaya.ru/?Dusha>

5.<http://lib.eparhia-saratov.ru/books/09i/ilarion/tainstvo/26.html> Православие и современность. Информационно-аналитический портал Саратовской епархии Русской Православной Церкви. Епископ Иларион (Алфеев) Таинство веры. Введение в православное догматическое богословие. Глава V. Человек. Душа и тело

«Святые Отцы на основании Библии учат, что душа и тело не являются чуждыми элементами, соединенными в индивидууме лишь на какое-то время, но даны одновременно и навсегда в самом акте творения: душа "обручена" телу и неразлучна с ним. Только совокупность души и тела является полноценной личностью-ипостасью: ни душа, ни тело сами по себе таковой не являются: "Ибо что есть человек, если не состоящее из души и тела разумное живое существо? - говорит святой Иустин Философ».

6. Այստեղից է ծագում մասնիկների հալախաւովածային փաշտամունքը:

7.Православие и современность. Информационно-аналитический портал Саратовской епархии Русской Православной Церкви. Электронная библиотека. Иеромонах Серафим (Роуз). Душа после смерти. Х. Краткое изложение Православного учения о посмертной судьбе души. Воскресение тела. «...истинно будет, будет воскресение мертвых, - утверждает иеромонах Серафим (Роуз). - Но, говоря о воскресении, мы представляем себе воскресение тел. Ибо воскресение есть вторичное воздвижение упавшего; души же, будучи бессмертными, каким образом воскреснут? Ибо, если смерть определяют как отделение души от тела, то воскресение есть, конечно, вторичное соединение души и тела, и вторичное воздвижение разрешившегося и умершего живого существа. Итак, само тело, истлевающее и разрешающееся, оно само воскреснет нетленным. Ибо Тот, Кто в начале произвел его из праха земли, может снова воскресить его, после того, как оно опять, по изречению Творца, разрешилось и возвратилось назад в землю, из которого (sic) было взято...»

8.«Если вы полагаете, что соединение души и тела и есть душа, так что по их разделении не существует ничего, вы думаете как звери и должны считаться дикими зверями». (Мученичество ап. Андрея 56 (6)).- Мученичество святого и преславного первоапостола Андрея - Библиотека Наг-Хаммади | Новозаветные апокрифы: http://biblia.org.ua/apokrif/apocryph1/acts_andrey1.shtml.htm

9.«Всё же это происходит от необученной души, заблудившейся в природе и удерживающей залогом заблуждения». (Мученичество ап. Андрея 47 (15)) -

Мученичество святого и преславного первоапостола Андрея - Библиотека Наг-Хаммади | Новозаветные апокрифы:
http://biblia.org.ua/apokrif/apocryph1/acts_andrey1.shtml.htm

10-11. Այստեղ, ցավոք, նորից պիտի ճշտեմ հաւերեն թարգմանությունը, որի սխալն պայմանավորված է *ψυχήν* -ին և *πνεῦμα-ն* չտարբերելուց: Ճիշտ թարգմանությունը կլինի հետևյալը. **«սերմանվում է հողերը մարմինը և հարություն առնում՝ ոգու, կամ շնչավոր մարմինը»:**

12..Տեւ. <http://www.verapравoslavnaya.ru/?Dusha> «Хотя мы называем некоторые существа духовными, каковы ангелы, архангелы и прочие силы, также самая душа наша, или, конечно, этот тонкий воздух; однако никак не должно признавать их бестелесными. Ибо они имеют свойственное себе тело, в котором содержатся (пребывают), хотя много тончайшее, нежели мы. Они суть тела, по изречению Апостола, который говорит так: «И тела небесная, и тела земная» (1 Кор. 15, 40); и опять: «Сеется тело душевное, возстает тело духовное» (1 Кор. 15, 44). Из сих (слов Апостола) вытекает ясное заключение, что ничего нет бестелесного, кроме единого Бога, и что, следовательно, только Он может проникать во все духовные и разумные существа, потому что един Он весь всюду и во всех находится, так что Он видит и провидит помышления и внутренние движения человеков, все тайны духа (ума)....»

3. Աստվածաշունչը հոգու և մարմնի մասին «Մերկ» հոգին ու «կաշվե զգեստները»

Չնայած այն հանգամանքին, որ մեծն Անտոնիոսի, Մակարիոսի եւ Պախոմիոսի աշակերտների վերոհիշյալ արձանագրությունը մնացել է ստվերում, արհամարհված, մենք տեսանք, որ աստվածաշնչյան տրամաբանությունը հաստատում է հենց նրանց *հոգու* բացատրությունը՝ միաժամանակ ժխտելով Հովհաննես Դամասկոսցու եւ նրա բոլոր հետեւորդների տեսակետը: Սակայն, բացի այս տրամաբանական հաստատումից, կան նաեւ այդ մեծերի խոսկի ճշտության այլ ապացույցներ:

Օրինակ՝ (եւ առաջին հերթին) ուշադրություն դարձնենք այն փաստին, որ ըստ Աստվածաշնչի, Ադամի *կենդանի հոգին*, որը ստեղծվել էր երկրի փոշուց, «*մերկ*» էր մինչ նա ապրում էր դրախտում: (Ծն. 2:25) Բայց Ադամի անկումից հետո, որ ամբողջ երկիրը անեծքի տակ գցեց (Ծննդոց 3:17), Աստվածը նրա համար «*կաշուից զգեստներ*» պատրաստեց եւ հագցնելով դրանց Ադամի վրա, արտաքսեց նրան դրախտից, «*որպեսզի նա մշակի այն հողը, որից ստեղծուել էր*» (Ծննդոց 3: 21,23) Այլ կերպ ասած, Աստվածը վտարեց Ադամին հավիտենական աշխարհից ժամանակավոր աշխարհ, որ ստեղծվեց իր անկումի հետևանքով, չթողնելով նրան վերադարձի ոչ մի հնարավորություն մինչև այդ ժամանակավոր աշխարհի վերջը:

Այժմ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում այդ «*կաշվե զգեստները*», որ թույլ չեն տալիս նրան վերադառնալ դրախտ:

Պատմականորեն մտածող քրիստոնեական դավանանքների աստվածաբանները, բառացիորեն հասկանալով «*կաշվե զգեստները*» որպես վայրիների հայտնի ազդրաշոր, ուշադրություն չեն դարձնում դրանց վրա: Մինչդեռ բավական է հաշվի առնել այն հետևանքները, որին բերեցին այդ զգեստները Ադամի կյանքում, որ տեսանելի դառնա այդպիսի հայացողության սխալը:

Իսկ հետևանքները հետևյալն էին. նախ, այն, որ այդ զգեստները Ադամի ապականության ապացույցը լինելով, նրան մահկանացու դարձրին, ինչի պատճառով և նա մինչ օրս դեռ չի կարող հավիտենական աշխարհ վերադառնալ, մանավանդ, որ, ըստ առաքյալ Պողոսի, «*մարմինն և արյունը Աստծո թագավորությունը ժառանգել չեն կարող. ոչ էլ ապականութիւնը անապականութիւն է ժառանգում:*» (1 Կոր 15: 50)

Այս խոսքերից հետևում է, որ Ադամի վերադարձը դրախտ արգելափակողը «*կաշվե զգեստներն*» են, որ, ըստ աստվածաշնչյան բանականության, համապատասխանում են «*մարմինն և արյանը*», այսինքն՝ մարդու արտաքին փթող մարմնին: Այդ պատճառով է, որ նույն առաքյալը հաստատում է. որ «*(մնալով) այս մարմնի մէջ, օտարանում ենք Տիրոջից*»: (2 Կոր 5: 6)

Այստեղից պարզ է դառնում, որ միայն այդ «*կաշվե զգեստների*», կամ մարդու տեսանելի մարմնի «մահն» է, որ կարող է նորից դրսևորել «*մերկ*» *հոգուն* և նրա

աչքերին նորից բացել դրախտը, իսկ ոմանց համար նույնիսկ մուտքն այնտեղ, որ առաջին անգամ ցուցադրեց Քրիստոսը, Ով, ինչպես ասում են, «մահով ոտնակոխելով մահը», ¹ առաջինն եղավ, որ *«հարյավ ի մեռելոց»*: Ահա թե ինչպես է, ըստ Թոմաս առաքյալի պարականոն ավետարանի, Ինքն՝ Քրիստոսը Աստվածաշնչին բնորոշ ավեգորիկ ձևով պատմում այդ վերադարձի մասին, փաստորեն, նկատի ունենալով *«կաշվե զգեստները»*.

Ի պատասխան աշակերտների հարցին. *«Ե՞րբ կհայտնվես մեզ, եւ ե՞րբ կընկալենք քեզ»*: Հիսուսն ասաց. *«Երբ կհանեք ձեր հագուստը առանց ամոթի, եւ կդնեք ոտքերիդ տակ, ոտնահարելով այն, ինչպես որ երեխաներն են անում, ապա կտեսնեք Հավիտյալի Որդուն եւ չեք վախենա»*: (Աւետարան, ըստ Թովմասի, 37), ² այսինքն, երբ տեսանելի մարմնի *արգելքը* կոչնչանա, հոգին, ազատվելով մահվան կապանքներից, կրկին կդրսեւորվի, եւ դրախտն ու Տերը կհայտնվեն հոգու աչքերի առջև:

Ուրեմն, պարզ է, որ *«կաշվե զգեստների»* տակ ենթադրվում է ոչ այլ բան, քան մարդու տեսանելի մարմինը, որ պատյանի նման ընդգրկել է իր հոգուն, կամ, ավելի ճիշտ, հոգևոր մարմնին: Իսկ դա նշանակում է, որ հոգին և նրան ընդգրկած տեսանելի ու ժամանակավոր մարմինը չէին կարող ստեղծված լինել միաժամանակ և չեն կարող անբաժան լինել, ինչպես ընդունված է մտածել, մանավանդ, որ հոգուն, ըստ Պողոս առաքյալի, նոր, *հավիտյան երկնային հագուստ է սպասվում* (2 կոր 5: 1-2), որը մարգարե Եսայան *«փրկության զգեստ»* է անվանում (Ես 61: 10) և որը – ինչն ամենակարևորն է, - ոչ արյուն, ոչ էլ փրոդ մարմին կունենա, քանզի դրանք, ինչպես արդեն ասվեց, չեն կարող ժառանգել Աստծո Թագավորությունը, ոչ էլ այլ բաներ, որոնց մասին դեռ կխոսեմ այստեղ:

Այսինքն՝ մեր տեսանելի մարմինը ոչ մի դեպքում չի կարող լինել մեր հարության մարմինը, քանի որ նա չէ, որ հարություն է առնում, այլ հենց ինքն՝ հոգին, դուրս գալով իր ժամանակավոր մարմնից, այսինքն՝ *«կաշվե զգեստներից»*, ինչպես *գերեզմանից*, որի մեջ փակված է:

Ի դեպ, ճիշտ այդպես՝ *«գերեզմանի»* հետ է համեմատում Տերը մեր տեսանելի մարմինը, երբ Եսայա մարգարեի բերանով, ասում է Իր որդիներին, որ հակառակվելով Իրեն, *«քնակվում են գերեզմաններում, եւ գաղտուկ տեղերում օթեւանում, որոնք խոզի միս են ուտում, եւ որոնց ամանների մէջ պղծութիւններ կան փրթուած. Որոնք ասում են՝ Մէկ կողմ քաշուիր, ինձ մի դիպչիր, որ ես քեզանից սուրբ եմ: Սորանք ծուխ են իմ ռնգաց մէջ, բորբոքած կրակ են ամեն օր»*: (Արարատ թ-ն. Ես 65: 3-5)

Նույնը նկատի ունի Քրիստոսը, երբ, ըստ Մաթեոսի կտակարանի, մարդու արտաքին մարմինը համեմատելով *«ծեփած գերեզմաններ»* հետ, ասում է.

«Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ նման էք ծեփած գերեզմանների, որ դրսեւանց գեղեցիկ են երեւում, բայց ներսեւանց լիքն են մեռելների ոսկորներով եւ ամեն պղծութիւնով»: (Արարատ թ-ն - Մթ 23: 27) Նկատենք, որ Քրիստոսը այդ ձևով դիմում է մարդկանց հոգիներին, և ոչ նրանց արտաքին տեսքին, քանզի Աստծո հայացքը փրոդ տեսանելի մարմնի վրա չէ

ուղղված, այլ նրա մեջ «թաղված» հոգու վրա, որ մարդու իրական, առաջնաստեղծ մարմինն է:

Այսպիսով, պարզվում է, որ մեր տեսանելի մարմինը՝ *գերեզման* է մեր *հոգու* համար, և հենց այդ պատճառով ժամանակավոր մարմին կրողը Աստծո աչքում մեռած է: Այդ է նշանակում Հիսուսի խոսքը Իր աշակերտին, որ Տիրոջը հետևելուց առաջ խնդրեց Նրան սկզբից գնալ ու թաղել իր մահացած հորը. Ի հակառակ դրան Քրիստոսը ասաց.

«Դու իմ ետեւից եկ, եւ թող մեռելները թաղեն իրանց մեռելներին»» (Արարատ թ-ն. Մթ 8: 22), ինչից հասկանալի է, որ *«Աստուած՝ մեռելների Աստուածը չէ, այլ՝ կենդանիների»* (Մթ 22: 32), քանզի *«մեռելները»* այլ իշխանություն են ընտրել իրենց համար:

Հետեւաբար, երբ Քրիստոսի մահվան ժամին տաճարի Սրբություններից Սրբությունը բաժանող *վարագույրը* (Ելից 26.33) *«վերելից մինչեւ ներքեւ երկուսի պատուեց»*, այդ ժամանակ *«երկիրը շարժուեց, եւ ժայռեր ձեղքուեցին, եւ գերեզմանները բացուեցին, եւ ննջեցեալ սրբերի բազում մարմիններ* (Հեղ. հասկացիր՝ հոգիներ, կամ հոգևոր մարմիններ) *յարութիւն առան»* (Մթ 27: 51-52) Ինչպես տեսնում ենք, այստեղ *վարագույրն* եւ *գերեզմանը* հոմանիշներ են. երկուսն էլ նույն խոչընդոտն են *հոգու*, կամ *ներքին, անտեսանելի մարդու* դրսեվորման համար, որը միայն այն ժամանակ է երևան գալիս, երբ դրանք քանդվում են: (2 Կոր 4: 16-18): Այսինքն՝ *«գերեզմանը»* եւ *«վարագույրը»* այս դեպքում խորհրդանշում են մարդու արտաքին, փթությանը ենթարկված մարմինը, կամ *«արտաքին մարդուն»*: Պողոս առաքյալը *«վարագույրը»* հենց այդպես էլ անվանում է՝ *«մարմին»*, ասելով, որ Քրիստոսը *«մեզ համար նոր եւ կենդանի ճանապարհ* (բացեց) *վարագույրի միջովն, այսինքն իր մարմնովը»*: (Արարատ թ-ն Եբր 10: 20), որը, պատովելով երկու մասի, վերելից ներքեւ, մերկացրեց Նրա ճշմարիտ մարմինը, այսինքն՝ Նրա հոգին, կամ հոգու մարմինը, որը Նրա երկրի վրա ծնվելուց հետո փթող մարմնի պատանդն էր դարձել: Այլ կերպ ասած՝ *Իր մարմնի մահով Քրիստոսը ոտնակոխ արեց մահվանը*, ազատելով իր գերության մեջ ընկած հոգուն և բացահայտելով, թե որտեղ է մահի ուժը և ինչպես են ազատվում նրանից:

Հասկանալի է, ուրեմն, թե ինչու՝ այդ նույն մարմինը (կամ *«կաշվե զգեստը»*), որը առաջացել էր որպես երկրի անեծքի հետեւանք (Օն. 3:17) Յոբը *«կալե տուն»* է կոչում, որին *«ցեցն է»* ուտում» (Հոբ 4.19), իսկ Պողոս առաքյալը՝ *«արտաքին մարդ»*, այսինքն՝ տեսանելի և մահացու, մինչ դեռ, ինչպես արդեն հիշատակել եմ, *հոգին* ներկայացնելով որպես *«ներքին մարդ»*, այսինքն՝ անտեսանելի եւ հավերժական, (2 Կորնթացիս 4:16), քանզի արարչությունն ինքը, ինչպես կտեսնենք ստորեւ, բաղկացած է երկու աշխարհներից. մեկը՝ անտեսանելի, հրեշտակային և հավերժական, իսկ մյուսը՝ տեսանելի և ժամանակավոր: (Արարատ թ-ն Կոլ 1: 16) Այլ կերպ ասած՝ *հոգին* այն *սերմն* է, կամ Քրիստոսի կողմից հիշատակված *«ցորենի հատիկը»*, որ *«հողի մեջ ընկնելով»*, ինչպես

գերեզմանի մեջ, հետո, դուրս է գալիս նրանից՝ «բազում արդյունքով»: (Հովհ 12 :24)

Ամփոփելով՝ կրկնեմ, որ այն ամենը, ինչ ասվեց այստեղ, ցույց է տալիս, որ ոչ թե Հովհանես Դամասկոսցին էր ճիշտ *հոգու* հարցում, այլ Օրիգենեսը, ում նա մեղադրեց «դատարկախոսության» մեջ, որովհետև նա իրավացիորեն պնդում էր, որ սկզբից մարդու հոգին է ստեղծվել, իսկ հետո՝ նրա մարմինը: Մինչդեռ Աստվածաշունչը հենց վերջինի տեսակետն է հաստատում՝ մերժելով միաժամանակ աստվածաբանների կողմից ընդունված պոստուլատները, որ *հոգին* մարդու տեսանելի մարմնի հետ միասին անխաղտելի միասնություն է ներկայացնում իրենից, եւ որ հենց մարդու այդ փթող տեսանելի մարմինն է, որ հարություն է առնում:

Ի հակառակ դրան մենք տեսանք, որ հոգին չի կարող լինել «շունչ» («ոգի»), որովհետև *հոգին* նյութական է, բայց ստեղծված է ոչ այն *անիծված երկրի հողից*, որից կարված էին նրա «կաշվե զգեստները», այլ բոլորովին այլ, առաջնաստեղծ *օրհնված այն նյութից*, որը անտեսանելի է դարձել մարդու մահկանացու աչքերի համար: Իսկ դա նշանակում է, որ գոյություն ունեն «երկրի» (նյութի) երկու հասկացություններ, որոնց քննարկմանը այժմ կանցնենք: Դրանք հետևյալներն են. *հոգու երկրի* («հողի») եւ «կաշվե զգեստների» *երկրի* («հողի») հասկացությունները, որոնցից մեկը օրհնված է եւ հավերժական, իսկ մյուսը՝ նզովված ու ժամանակավոր:

1. Տես Ջատկի տրոպարիոնը:

2. Թարգմանություն հեղինակի: Տես իսպանական տեկստը. “Sus discípulos dicen: ¿Cuándo te nos revelarás y cuándo te percibiremos? Jesús dice: Cuando os quitéis vuestros vestidos sin avergonzaos y toméis vuestra ropa y la pongáis bajo vuestros pies para pisar sobre ella, como hacen los niños, entonces miraréis al Hijo del Viviente y no temeréis.” EL EVANGELIO DE SANTO TOMÁS
https://es.wikisource.org/wiki/Evangelio_de_Tom%C3%A1s

Տես նաև ռուսական տեկստը. «Когда вы обнажитесь и не застыдитесь, и возьмёте ваши одежды, положите их у ваших ног, подобно малым детям, растопчете их, тогда (вы увидите) сына Того, Кто жив, и вы не будете бояться» - Евангелие от Фомы – Апокрифы древних христиан.- Гностические апокрифы из Наг-Хаммади, часть II : http://www.krotov.info/acts/01/joseph/apok_28.html

4. Հոգու հրեշտակային բնույթը, կամ առաջնաստեղծ օրհնված «երկիրը» և նրա ստեղծման նպատակը: Ադամը դրախտում

Հոգու բնության մասին մեզ հայթնում են Ծննդոցի առաջին երկու գլուխների սկզբնական տողերը:

Ինչպես ավելի վաղ գրել եմ իմ մյուս աշխատություններում, Ծննդոցի առաջին գլուխը Աստծո ամբողջ արարչության «Բովանդակությունն» է ներկայացնում, որը ներառում է նախ անտեսանելի, կամ Հրեշտակային աշխարհի, իսկ հետո տեսանելի, մահկանացու մարդկանց աշխարհի ստեղծումը, որոնց առկայության մասին վկայում է նաև Պողոս առաքյալը, ասելով.

«Հաւատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աստուծոյ խօսքովը հաստատուեցան, որ չ'երեսողներիցն այս տեսնուողներս եղած են:» (Արարատ թն.- Եբր 11: 3)

Իսկ նշված «Բովանդակության» յուրաքանչյուր կետի մանրամասն շարադրումը սկսվում է Ծննդոցի երկրորդ գլխի չորրորդ տողից եւ ձգվում ամբողջ Սուրբ Գրքի երկայնքով:

Առաջին գլուխը, որ, ինչպես նշեցի, արարչության «Բովանդակությունն» է լուսաբանում, սկսվում է հետևյալ հաղորդությամբ.

«Բ սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձեւ ու անկազմ էր, խաւար էր տիրում անհունի վրայ, եւ Աստծու Շունչը¹ շրջում էր ջրերի վրայ:» (Ծնդ 1: 1-2)

Այս առաջին գլխի երկնքի եւ երկրի ստեղծման մասին համառոտ ակնարկին, որ նախորդում է արարչագործության օրերի թվարկմանը, համապատասխանում է երկրորդ գլխի հետևյալ լայնացումը, որը, փաստորեն, պատմում է մարդու՝ որպես հրեշտակ ստեղծման մասին (քանի որ վեցերորդ օրը, որ հիշատակվում է առաջին գլխում որպես մարդու ստեղծման օր, վերաբերում է արարչության վերջին, երբ ասպարեզ է գալիս իրական Այրը որպես Աստծո պատկեր եւ նմանություն).

«Սորանք են երկնքի ու երկրի ծնունդները նորանց ստեղծուած ժամանակը, - կարդում ենք Ծննդոցի երկրորդ գլխում, - այն օրն որ Եհովայ Աստուածը երկիրն ու երկինքը արաւ: Եւ դաշտի բոլոր բոյսերը տակաւին երկրի վերայ չ'կային, եւ դաշտի բոլոր խոտերը տակաւին չէին բուսած. Որովհետեւ Եհովայ Աստուածը երկրի վերայ անձրեւ չէր բերել, եւ մարդ չ'կար հողը գործելու. Այլ երկրիցը գոլորշի էր դուրս գալիս եւ բոլոր հողի երեսը ջրում: Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուցը շինեց մարդը. Եւ նորա ոնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ»: (Արարատ թն. - Ծնդ 2: 4-7)

Նախընտրել եմ «Արարատ» թարգմանությունը, քանզի այս հատվածի թարգմանությունը այստեղ համեմատաբար ավելի մոտ է բնագրին, չնայած նրան, որ նա ևս ազատ չէ հայ աստվածաբանության նշված սխալներից:

Ինչևէ, այս հաղորդության ամենակարևոր միտքը բացահայտվում է բնագրում «երեսի» հետ կապված երկու համեմատություններով, որից մեկը հայ թարգմանության մեջ, ցավոք, բացակայում է: Խոսքը գնում է «բոլոր հողի երեսը ջրում» և «նորա ռնգացը մեջ կենդանութեան շունչ փչեց» թարգմանությունների մասին մինչդեռ բնագիրը նաև երկրորդ դեպքում է «երես» բառը օգտագործում, բառացիորեն ասելով. «նրա երեսին կենդանութեան շունչ փչեց»:

Ինչու՞ եմ կարևորում այս հատվածը և նշված փաստը: Առաջին հերթին, որովհետև նա ցույց է տալիս, որ մարդը որպես «կենդանի հոգի» ստեղծվել է նախքան այն ամենը, ինչ պետք է ստեղծվեր: Եվ ստեղծվել է «երկրի փոշուց», այսինքն՝ առաջնային նյութից, որը առաջացել էր ջրից եւ ներարկվել գոլորշիով, որ *երկրիցը դուրս էր գալիս և «բոլոր հողի երեսը ջրում»:*

Բայց նկատի ունենանք, որ երբ ասում ենք «մարդ», առհասարակ հասկանում ենք նրան որպես արարչագործության առանձին մի միավոր, կարծես թե Աստված մի բուռ հող է վերցրել եւ դրանով մարդուն կերտել: Սակայն իրականում, Տերը մարդուն երկրի մի բուռ հողից չէ կերտել, այլ ամբողջ երկրից է ձևավորել: Այս մասին են վկայում «երկրի երեսը» եւ «մարդու երեսը» բնագրի համեմատությունները: Շեշտադրումը «երեսի» (πρόσωπον) վրա, կապված և երկրի, և մարդու հետ, ուղղակի ակնարկ է, որ երբ Աստված խոսում է «երկրի» ստեղծման մասին, նա նկատի ունի «կենդանի հոգու» ստեղծումը որպես հիմք Իր ողջ արարչագործության համար, որը կոչում է «մարդ» (ավելի ճիշտ, «Այր», քանի որ «մարդ» բառը, ինչպես արդեն նշել եմ, մահկանացուն է վերաբերվում, իսկ Աստվածը Իր պատկերը անմահ է ստեղծել: Մահը Ադամի մեղքի մարմնին է վերաբերում, որը նրա ստեղծման պահին դեռ չկար): Այդ նույն միտքն են հաստատում Սիրաքի հետեւյալ խոսքերը, որ նույնպես վերաբերում են երկնքի ու երկրի ստեղծմանը.

«Այնուհետեւ Տերը նայեց երկրին եւ այն լցրեց նրա բարիքներով: Բոլոր ապրողների հոգին² ծածկեց երկրի երեսը, եւ բոլորը դարձեալ վերադառնալու են երկիր:» (Սիրաք 16: 30-31)³

Եվ այսպիսով, երբ ասվում է, որ «Տերը նայեց երկրին եւ այն լցրեց նրա բարիքներով», նշանակում է «երկիրը» կենդանացավ, ինչպես կենդանացավ Ադամի «հոգին» Աստծո շունչը ընդունելուց հետո: Նկատենք, որ Սիրաքի ներկայացված խոսքերը, փաստորեն, կրկնում են «Ծննդոցի» վերոհիշյալ մեջբերումը եւ միեւնույն ժամանակ բացատրում այն, քանի որ «երկիր» հասկացությունը որպես բոլոր կենդանիների «մայր» համապատասխանում է Ադամին, որիովհետև ենթադրում է, ինչպես ասացի, մեկ Հոգի, որ ընդգրկում է բոլոր մյուս հոգիները, մանավանդ որ Սուրբ Գրքը, ընդհանուր առմամբ, նվիրված է Աստծո միակ արարչագործությանը, որի նպատակը Իր *ոգու*, կամ *շնչի*, նյութական դրսևորումն է (Ծննդոց 1:26-27), և որը սկսվում է «բոլոր ապրողների հոգու» ստեղծումից, այսինքն՝ Ադամից (Այրից), եւ իրականացվում փոփոխվում, ի համապատասխան «հոգու» աստիճանաբար «մշակմանը»:

Իսկ այդ «մշակման» նպատակը, ըստ առաքյալ Պողոսի՝, Ադամի «կենդանի հոգին» վերածելն է «կենդանաբար ոգու», կամ «կենդանաբար շնչի», կամ այլ կերպ ասած, դրսևորված Աստվածաշնչի: Բայց, ցավոք, հայ թարգմանությունը, ինչպես միշտ խեղաթյուրված, հակառակ իմաստ է կրում, կամ, ավելի ճիշտ, իմաստազրկում է առաքյալի խոսքը, ասելով.

«Եթե կայ հոգևոր մարմին, կայ եւ՝ շնչաւոր: Այսպէս էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ կենդանի հոգի. վերջին Ադամը՝ կենդանաբար շունչ»: Բայց ոչ նախ շնչաւորը, այլ՝ հոգևորը եւ ապա՝ շնչաւորը : Առաջին մարդը՝ երկրից, հողէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկնքից:» (1 Կոր 15: 44-47) ⁴

Բայց պետք է նորից նշեմ, որ, բացի *հոգին շնչից* չտարբերելը, որ հատուկ է միայն հայ թարգմանությանը, կա նաև մի ուրիշ սխալ, որ հատուկ է բոլոր քրիստոնեական դավանանքների աստվածաբանություններին: Այդ սխալը նրանումն է, որ աստվածաբանների մեծ մասը «*հոգևոր մարմին*» ասելով, հասկանում է մարդու «*արտաքին մարմինը*», ինչը պայմանավորված է նախորդ գլուխներում նշված «*հոգու*» բնության վերաբերյալ ընդհանուր մոլորություններով:

Իսկ ինչ վերաբերում է «*շնչավոր մարմին*», դա, ինչպես տեսանք, ըստ Պողոս առաքյալի, Տիրոջ մարմինն է, որը կձևավորվի մարդու «*կենդանի հոգուց*» արարչության վերջում և որի հետ ուղիղ կապ ունի Ծննդոցի վերը բերված այն հաղորդությունը, որ դեռ «*Եհովայ Աստուածը երկրի վերայ անձրեւ չէր բերել*», և որը, ուրեմն, պիտի «բերվեր» ապագայում: Իսկ «*անձրևը*», ըստ Օսէե մարգարեի, խորհրդանշում է Աստծո Սուրբ Շնչին, կամ Ոգուն, որ «*կը գայ դէպի մեզ՝ ինչպէս վաղ եւ ուշացած անձրեւը՝ դէպի հողը*» (Օսէե 6: 3), այսինքն՝ Աստծո Սուրբ Շունչը կթափանցի *Այրի հոգին* (*երկիրը, հողը*) և վերջինը այդ ժամանակ լիովին կդրսևորի իր բոլոր պտուղների հարստությունը: Բայց դա, ինչպես ասացի, տեղի կունենա արարչության վերջում, ինչի մասին կխոսեմ առանձին գլխում, նվիրված հատուկ «*շնչավոր մարմին*»:

Իսկ մինչ այդ պարզ է դառնում, որ արարչագործության ողջ ուղին՝ առաջինից մինչև վեցերորդ օրը ներառյալ, ձգվում է առաջին եւ վերջին Ադամի միջեւ և ոչ այլ բան է, քան «*հողի*», այսինքն՝ մարդկային *հոգու*, «*մշակելու*» գործընթաց, որը, այսինքն՝ հոգին, ըստ նույն առաքյալի, պետք է նորոգվի «գիտութեամբ, ըստ իր Արարչի պատկերի» (Կող 3: 9-10), որպեսզի «*կենդանի հոգուց*» վերածվի «*կենդանաբար շունչի*», կամ Աստծո պատկերի ու նմանության:

Բայց դա հետո, իսկ այժմ մենք խոսում ենք առաջնաստեղծ *Ադամի* մասին որպես «*կենդանի հոգու*», կամ ավելի ճիշտ՝ որպես «*բոլոր կենդանիների մայրական հոգու*» մասին, որը մի կողմից կարելի է հասկանալ որպես *կենդանի նյութ*, որից ձևավորվում է յուրաքանչյուր *կենդանի հոգի*, այսինքն՝ Աստծո անթիվ արարածների *կենդանի հոգիները*, կամ որպես բոլոր կենդանի արարածների նախամայր, իսկ մյուս կողմից՝ որպես մարդու կազմ, քանզի «մարդու», կամ ավելի ճիշտ «*Այրի*» ճշմարիտ գաղափարը ընդգրկում է իր մեջ ողջ արարչությունը իր *երկնքով* ու *երկրով* հանդերձ, ճիշտ այնպես, ինչպես

Աստվածն է իր մեջ պարունակում Իր անթիվ ստեղծագործությունները, կամ էլ ինչպես Երկրային Օվկիանոսը, որի հետ կապված են երկրի բոլոր ակունքները, գետերը, վտակները, լճերը եւ ծովերը, որոնք նրանով են սնուցվում, իսկ առանց կապի նրա հետ պարզապես չորանում են:

Այս բոլորից, ուրեմն, հետևում է, որ «մարդ»/ *Այր* հասկացությունը վերաբերում է «կենդանի հոգու» գիտակցությանը այն հեռանկարով, որ նա աստվածային գիտակցություն դառնա, ըստ որի *երկնքի* ու *երկրի* հասկացությունները համապատասխանում են *Աստծո* եւ *մարդու* հասկացություններին, քանզի *երկինքը* ստեղծվել է որպես Աստծո (որ Շունչ է) պատկեր, իսկ *երկիրը*՝ որպես Նրա նմանություն: Նրանց փոխկապակցումը խաչաձև է. երկինքը իր ճառագայթների միջոցով թափանցում է Երկիրը եւ կենդանացնում նրան, իսկ Երկիրը, այդ պարագայում, ինչպես հայելու մեջ, արտացոլում է երկինքը: . Այս իմաստով *երկնքի* ու *երկրի* կապը նման է *ամուսնու* եւ կնոջ, կամ *գլխի* եւ *մարմնի* միջև եղած կապին: Ինչպես ցույց եմ տվել իմ ռուսերեն և իսպաներեն լեզուներով գրված «Шесть дней творения и Седьмой День»/«Los seis días de la creacion y el Dia Septimo» (Արարչության վեց օրերը եւ Յոթերորդ օրը) ծավալուն աշխատության մեջ, ըստ որոշ հին պարականոնների, որ հաստատվում են տրամաբանորեն իրենց հետ կապված աստվածաշնչյան տեքստի տարբեր տվյալներով, Ադամի «անվան» իմաստը հենց իր մեջ ընդգրկված *խաչն* է, որ միաժամանակ արարչության էությունն է, քանզի այդ խաչի հորիզոնական առանցքը խորհրդանշում է այն ամենը, ինչ ստեղծել ու ստեղծում է Աստվածը, այսինքն՝ նյութը ի դեմս *կենդանի հոգու*, որ *Աստծո Փարքն* է ներկայացնելու և որն այն հիմքն է, որ մարմնացված ձևով ընդգրկում է իր մեջ Բարձրագույն Հոր նյութական պատկերը իր բոլոր ստեղծված ու ստեղծվող մտավոր կառույցներով, կամ այլ կերպ ասած՝ Նրա *մարմինը*, *տունը*, *տաճարը*: Մինչդեռ ուղղանկյան առանցքը խորհրդանշում է հենց Իրեն Արարչին, այսինքն՝ իր մեջ հավիտենական կյանք պարունակող Աստուծոյ Սուրբ Շնչին, որը «անձրեւի» կամ «ճառագայթի» նման ներթափանցում է ամբողջ ստեղծագործության մեջ, ամրացնելով այն Իր հետ և այսպիսով երկուսից մեկ մարմին կազմում: Թեթեւակի ձեւափոխություններով մեջբերում եմ իմ վերոհիշյալ գրքից հետեւյալ հատվածը, որը բացատրում է այդ Ադամի հետ կապված խաչի իմաստը.

«Ադամ անվան մեջ մենք տեսանք երկու խաչվող առանցքների, - *հոգևոր* ու *նյութական*, - միասնություն, որ այլաբանորեն՝ ինչպես *արեւելք-արեւմուտք* և *հյուսիս-հարավ* ընդգրկում և կազմում են ամբողջ արարչագործությունը: Նրանց իմաստն առավել հստակ արտահայտում է սանսկրիտերեն *Ադամին* վերաբերող aur-dam բառը, որը *նախնատուն* է նշանակում: Այն հարցին, թե ում տունն է դա, պատասխանում է հենց այդ նույն բառը, որը բաղկացած է երկու արմատից: Առաջին «aur» արմատը նշանակում է *Երկնային Հայր* (ծագաց Արարատյան Հայր բառից,⁵ որ նույն իմաստով պահպանվել է հայերեն լեզվում և որի հետ կապված են նաեւ *շնչի* (*ոգու*), *օդի* մասին միջազգային պատկերացումները, օրինակ, *aero* հասկացությունը, կամ իսպաներեն *aire* (օդ), հունարեն *ahr* (օդ), հայերեն *հուր* եւ

այլն): Իսկ երկրորդ՝ *«dam»* արմատը նշանակում է *տուն, բնակատեղ* (այստեղից էլ՝ ռուսական *«дом»*, հայկական *«տուն»*, հունարեն *«δομος»*, լատիներեն *«Domus»* եւ այլն): Այսինքն՝ Ադամ անունը ամբողջովին նշանակում է *Երկնային Հոր համար (որ Աստվածաշունչ է) ստեղծված մարմին, տուն, բնակատեղ, տաճար, կամ անոթ*. (...)

Նշանակալից է նաև, որ Հին պարսկերենում *Ադամ* բառը հասկացվել է որպես *«Ես»*՝ դերանուն, որի աստվածաշնչյան իմաստը հետեւյալն է. *«Ես միակն եմ, որ գոյություն ունեմ»*, կամ *«Ես մարմնավորված Աստվածն եմ»*, կամ *«Ես յաւիտյալ Հաբեթն/Յահվեն եմ, Սուրբ Ոգին ու Արարիչը, որ պիտի բնակվեմ Մեմի (Ադամի) «տանը»* ⁶

Ուստի երբ Հուդա Թովմաս առաքյալը հորդորում է Աստծո որդիներին *«Հաստատել խաչի խորհրդանիշը (իրենց) հոգիներում»* (Հուդա Թովմաս առաքյալի գործերը, 2: 28), ⁷ նկատի ունի հենց այդ *կենդանարար Խաչը*, որ արարչության նպատակն է և որը Աստծո և Այրի *«ամուսնության»* մեջ է, իրականացված Աստվածաշնչի՝ այսինքն՝ սրբության, ճշմարտության, սիրո ու համերաշխության շնչի կողմից:

Այդ նույն պատճառով Տիբեոյան ավետարանը (որ մի պարականոն հավաքացու է, որտեղ մարդկային մտքի կեղծ կառույցների կողքին գտնուում ենք նաև Աստվածային շնչից ծագած իրական գանձեր) համահունչ Սիրաքի վերը նշված *«բոլոր ապրողների կենդանի հոգուն»*, նույն *«հոգին»* անվանում է *«Տիեզերական հոգի»* (5: 15), ⁸ այսինքն՝ *Ամենաբարձյալ Հոր հոգի, որ պիտի դրսևորվի Այրի մեջ որպես Ճշմարտության Խոսք*. Եվ հենց այդ դրսևորման առաջնեկը եղավ Հիսուս Քրիստոսը, որի մեջ, համաձայն նույն Տիբեոյան ավետարանի, *«բնակեցված էր Տիեզերքի հոգին»* (Տիբեոյի ավետարան, 1: 2), ⁹ այսինքն՝ Աստծո Սուրբ Շնչով լցված հոգին, որը հենց այդ Աստվածային Շնչի կողմից էր ստեղծված և որի մասին նույն ավետարանում ասված է.

«Հավերժական Դատավորը՝ Հավերժական Շունչը, ստեղծեց հոգին (Հեղ. ինճպես առաքյալ Պողոսն է ասում. «Իրանով և Իր համար» -(Կող 1: 16)) միակ եւ անբաժանելի աշխարհում. Նա այն միակն է ստեղծված, որ իրեն մեջ պարունակում եւ կենդանացնում է ամենին»: *«Նա (այդ աստվածային Շունչը) միակն է, որ գոյություն ունի, որ ցանկանում ու արարում է, որի գոյությունը հավերժությունից է, Նրա լինելուն վերջ չկա, Նրա նման ոչ մի բան չկա ոչ երկնքում և ոչ էլ երկրի վրա»*: (Տիբեոյի կտակարան, 5: 15-16) ¹⁰

Այն հաղորդումը, որ հոգին ստեղծված էր *«միակ եւ անբաժանելի աշխարհում»*, մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ մարդու/Այրի «կենդանի հոգու» եւ կենդանիների «կենդանի հոգիների» հիմքը միեւնույն կենդանի սուրստանցիան է, որը Աստծո միակ ստեղծագործությունն է, միակ կենդանի, մտավոր հոգին, այն մարդկային անոթը, որը պարունակում է իր մեջ եւ կենդանացնում ամենը՝ բոլոր կենդանիներին, թռչուններին, սողուններին եւ ձկներին, ինչպես նաեւ բոլոր բուսականությունը, ստեղծելով հոգևոր բերկրանքների Էդեմական այգին, որ անբաժան է իրեն գլխավորող Այրից: Այլ կերպ ասած, այդ այգին է Տիրոջ տաճարն

ու մարմինը, այնպես որ նրանում ամեն ինչ կապված է Տիրոջ հետ: Ինչպես սաղմոսն է ասում, *«Տիրոջ ձայնը ոտքի է կանգնեցնում եղնիկներին եւ մերկացնում անտառները: Նրա տաճարում բոլորը թող գովեն փառքը նրա:»* (Սաղմ 28: 9)

Եվ եթե այդ Աստծո շնչի կողմից ստեղծված *«կենդանի հոգին»* ամեն ինչ պարունակում է իր մեջ և կենդանացնում, հետևաբար, նրանում մահ չի կարող լինել և, ստեղծված լինելով հավերժության համար նա նույնպես հավելժ է, ինչպես հավերժ են Աստծո Խոսքն (Բանը) և Փառքը որ իրականում նույն բանն են նշանակում, այսինքն՝ Աստծո հավետ ապրող Մարմինը, կամ նույն Տաճարը, Աստծո Սուրբ շնչով ներթափանցված, որտեղ, որպես էդեմական այգու մեջ տեղադրվեց Ադամը, *«որպեսզի սա մշակի ու պահպանի այն:»* (Ծննդ 2: 15)

Ես արդեն նշել եմ, որ այս *«մշակությունը»* չի վերաբերում հողին/երկրին ուղիղ իմաստով, ինչպես առհասարակ հասկացվում է (ըստ Կանեի), այլ վերաբերում է սկզբնաստեղծ հոգու հոգևոր մշակությանը (ըստ Աբելի) այն նպատակով, որ վերջինը վերածվի Աստծո պատկերի ու նմանության: Այդ պատճառով է, որ որպես *«հոգի»* մարդը մեր առջև ներկայանում է հենց Ծննդոցի երկրորդ գլխում *երկնքի և երկրի* ստեղծման կապակցությամբ, մինչդեռ առաջին գլխում, այսինքն՝ արարչության *«Բովանդակությունում»*, նա, որպես *«կենդանի հոգի»* չի հիշատակվում: Այնտեղ *«կենդանի հոգիներ»* են կոչվում Աստծո այլ արարածները՝ գազանները, թռչունները, սողունները և ձկները, որոնց ստեղծումը նախորդորմ է մարդու ստեղծմանը, քանի որ մինչ արարչության վեցերորդ օրը մարդը դիտվում է, որպես նույն կենդանիների մի տեսակ այն տարբերությամբ, որ նրա գիտակցության հեռանկարը՝ Աստծո գիտակցություն վերածվելն է: ¹¹

Հենց այդ նույնությունն են մատնանշում Աստծո հետևյալ խոսքերը, կապված կենդանիների ստեղծման հետ.

«Տէր Աստուած ասաց. «Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք նրա համար»: (Ծննդ 2: 18)

Քանզի ամբողջ արարչությունը հիմնված է համապատասխանությունների վրա¹² այս բառերի հետին իմաստում այն միտքն է թաքնված, որ լավ չէ, որ գլուխը միայնակ լինի, առանց մարմնի, կամ լավ չէ, որ երկինքը միայնակ լինի առանց երկրի, կամ լավ չէ, որ այրը միայնակ լինի առանց կնոջ, այսինքն՝ մնա առանց իր նմանության, կամ, այլ կերպ ասած, առանց համապատասխան *«օգնականի»*, որը ունակ կլինի արտացոլել գլխի, երկնքի, կամ այրի բոլոր մտային կառույցները: Եվ հենց այս խնդրի լուծմանն է վերաբերում Ծննդոցի նույն հատվածի շարունակությունը.

«Տէր Աստուած ստեղծեց նաեւ դաշտային բոլոր գազաններին, երկնքի բոլոր թռչուններին եւ բերեց Ադամի մօտ, որ տեսնի, թէ Ադամը ինչ անուն կը տայ դրանց: Եւ Ադամն ինչ անուն որ տար ամէն մի կենդանուն, այն էլ կը լինէր դրա անունը: Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին եւ դաշտային բոլոր գազաններին տուեց անուններ, բայց Ադամը չգտաւ իր նմանութիւնն ունեցող մի օգնական:» (Ծննդ 2: 19-20)

Ուրեմն, Աստված կենդանիներին ստեղծեց որ Ադամը նրանց մեջ փնտրի իրեն համապատասխան օգնականին, քանզի ինքն՝ Ադամը դիտվում է որպես այդ կենդանիներից մեկը:

Այսպես սկիզբ դրվեց *երկրի/հոգու* «մշակմանը», կամ, այլ կերպ ասած, Ադամի *ինքնաճանաչմանը* իր մեջ պարունակվող կենդանի աշխարհի պատկերների միջոցով: Հետեւաբար, Աստծո արարածներին անուն տալու առաջարկը նրա գիտակցության զարգացման առաջին քայլն էր, որ ենթադրում էր նրանցից յուրաքանչյուրի հոգու գնահատումը, քանի որ ինչպես Ադամի հոգին էր մերկ, այնպես էլ մնացած արարածների հոգին, որոնց նա ընդգրկում է իր մեջ (քանզի Ադամի մերկ հոգին չի կարող իր մեջ պարունակել «զգեստավորված» հոգիներ): Իսկ մերկ հոգին նշանակում է անխաբ ու պարզ: Ուստի անուններ տալով Աստծո արարածներին, Ադամը, փաստորեն, գնահատում էր այդ արարածներից ամեն մեկի էությունն ու նշանակությունը արարչության, կամ այլ կերպ ասած, իր հոգու մեջ: Հայտնի է, որ Աստվածաշնչում ամեն մի անուն մատնանշում է նրա կրողի էությունը: Այսպես, ըստ էության, Տերը Աբրամին վերանվանեց Աբրահամ, Սարային՝ Սառա, Հակոբին՝ Իսրայել եւ ըստ էության նաև Նա պատվիրեց, որ Կույսից ծնվածը Էմմանուել կոչվի: (Եսայի 7:14)) Նշանակում է, որ մարդը պետք է, նախ, գնահատեր եւ անվաներ, կամ բնութագրեր իր կենդանի հոգու բոլոր հնարավոր ունակությունները, որոնք մարմնավորված էին կենդանի պատկերներում, որպեսզի սովորեր տարբերել յուրաքանչյուրի հատկությունները, իսկ հետո գտներ համապատասխան *«օգնական»* իրեն համար: Սակայն, Ադամը, իր մեջ ունենալով Երկնային Հոր պատկերի առաջին Ոգու պտուղը, կենդանիների մեջ չգտավ *«օգնական»* իր համար, քանի որ *ինչպես և Բարձրյալ Հայրը*, որ կոչվում է նաև *«շնչերի (ոգիների) Հայր»* (Հեբր 12: 8), կամ *«շնչերի ու բոլոր մարմինների Աստուած»* (Թվեր 16: 22) ¹³ բոլոր շնչերից, որ պարունակում է Իր մեջ, սիրեց եւ ընտրեց որպես Իր *«օգնական»* (Կին) միայն Ամենախմաստուն եւ Սուրբ Շնչին, որ միակն է, ով բացարձակ մաքրությամբ եւ ճշգրտությամբ է արտացոլում և կենդանացնում Իր Հոր բոլոր նկատառումները, կազմելով Սուրբ Երրորդության մաս (կամ Որդուն որպես Աստծո պատկեր, ծագած *«Երկնքի»* ու *«Երկրի»* Սուրբ Շնչի միջոցով իրականացված «ամուսնության» արդյունքում), *Ադամն նաև* անհրաժեշտություն ուներ՝ համապատասխան օգնականի, որը կնդգրկեր իր ամբողջ կազմվածքը, այսինքն՝ ամբողջ արարչությունը, լինելով իր պատկերի նմանությունը: Այլ կերպ ասած՝ **Ադամը, որպես երկնքի պատկեր, համապատասխանաբար երկրի կամ իր պատկերի նմանության կարիքն ուներ:** Այս երկիրը, կամ օգնականը, Եվան դարձավ, որ ստեղծվեց իր իսկ կողոսկրից, այսինքն՝ իր հոգեւոր ամբողջությունից, խորհրդանշելով Ադամի խաչի ամբողջ հորիզոնական գիծը, եւ ոչ թե նրա առանձին ներկայացուցիչներին, այսինքն՝ ընդգրկելով ինչպես և Ադամը, ողջ արարչությունը: Ժամանակի ընթացքում նա կրկին կմիանա Ադամին, բայց այս անգամ դա կանի գիտակցաբար, որպես հոգեւոր միասնություն: Ահա, թե ինչպես է Օննդոցն պատմում Եվայի ստեղծման մասին.

«Տէր Աստուած թմրութիւն բերեց Ադամի վրայ, եւ սա քնեց: Աստուած հանեց նրա կողոսկրերից մէկը եւ այդ տեղը մաշկով ծածկեց: Տէր Աստուած Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մօտ: Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց»: Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հօրն ու մօրը՝ պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին»: (Ծնդ 2: 21-24) ¹⁴

«Սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին իմ մարմնից» բառերը նշանակում են. սա իմ նմանությունն է, իսկ «եւ երկուսը պէտք է լինեն մեկ մարմին» բառերը՝ մարգարեություն են մեկ մարմնի մեջ երկուսի միասնության մասին. Աստծո Ոգու և այրի, երկնքի ու երկրի, ամուսնու և կնոջ:

Այսպիսով, Եվան՝ Ադամի նմանությունն ու օգնականը, նրա խաչի հորիզոնական բաղադրիչն է, որ որպէս Մայր ընդգրկում է իր մեջ ողջ արարչ ությունը, բոլոր կենդանի էակներին և իրականացնում Ադամի բոլոր մտային կառույցները: Նախկինում Ադամի մասն կազմելով, նա այժմ բաժանված է նրանից, ինչպէս երկիրը երկնքից, և այդ բաժանումն արված է հանուն Ադամի ինքնաճանաչման կամ արարչագործության կազմի ընկալման, որը Երկնքից և Երկրից է բախկացած և որոնց միասնությունն է, իրականացված երրորդի սրբության միջոցով, որ ընկած է մարդու ստեղծման գաղափարի և նրան տրված կամքի ազատության մեջ, նման Աստծո բացարձակ ազատությանը, քանի որ մարդուն վիճակված է դառնալ Աստծո պատկերն ու նմանությունը՝ համապատասխան գործությամբ ամբողջ արարչության, ինչպէս իր վրա: Եվային ստեղծելուց հետո «Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան, իշխեցէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ» (Ծնդ 1: 28)

Սովորաբար այս խոսքերը աստվածաբանները հասկանում են բառացիորեն՝ որպէս երկրային ամուսնության օրհնություն, այսինքն՝ կապված «կաշվէ զգեստների» հետ: Սակայն դրանք Ադամին ասվեցին դրախտում, երբ նա դեռ չուներ մահաբեր մարմին մահկանացու երեխաներ ծնելու համար, և, հետևաբար, վերաբերում էին նրա հոգևոր լայնեցմանը կամ վերաբարձրմանը Աստծո հետ սուրբ «ամուսնության» միջոցով, - այն միակ «ամուսնության», որի շնորհիվ մարդու մեջ դրսևորվում է Աստվածը, նամանավանդ որ ամբողջ իշխանությունը իրականացվում է ոգով, և ոչ թե մարմնով, և այդ իշխանության ենթարկյալների բարեկեցությունը կախված է նրանից, թե ո՞ր, կամ ավելի ճիշտ, ու՞մ ոգին/շունչն է ապրում մարդու մեջ, որը նախատեսված է միայն Աստծո Սուրբ Ոգու/Շնչի անոթը լինել, ինչպէս դա հստակ արձանագրում է Նոյը, ասելով իր մարգարեության մեջ. «Աստուած թող բարգաւաճեցնի Յաբեթին, նա թող բնակուի Մէմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան»: (Ծնդ 9: 27) ¹⁵

Որովհետև եթե Սեմի (Ադամի, մարդու) «տանը» (կամ հոգում) ապրում է կյանքի ոգին՝ Հաբեթը (Եհովան), ¹⁶ կամ հավիտյալ Արարիչը, որ ճշմարտությունը կրող Աստծո Սուրբ Ոգին է, , ապա Նա, ի թիվս այլ բաների, մարդուն դարձնում է

պոտենցիալ ունակ՝ ընկալելու արարչագործության բոլոր ներկայացուցիչների միասնությունը իր մեջ որպես իր սեփական էությունը կազմող կամ այդ էությունից բխող իրականություն: Այստեղից է ծագում չարիք չանելու և որևէ մեկին չվնասելու գաղափարը, քանի որ ոչ մի խելացի մարդ չի վնասում իր մարմնին, այլ փայփայում է այն: Սա հասկանալու կարողությունը նման է Պողոս Առաքյալի մարդու մարմնի անդամներին վերաբերող հետևյալ խոսքերը հասկանալու ունակությանը.

«Այսպես, մարմինը մեկ անդամ չէ, այլ՝ բազում: Եթե ոտքն ասի՝ քանի որ ձեռք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց: Եւ եթե ականջն ասի՝ քանի որ աչք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց. եթե ամբողջ մարմինը աչք լինէր, ո՞ւր կը մնար ականջը. եւ եթե ամբողջ մարմինը ականջ լինէր, ո՞ւր կը մնար հոտոտելիքը: Բայց արդ, Աստուած դրեց անդամները, նրանցից ամէն մէկը՝ մարմնի մէջ, ինչպէս որ կամեցաւ: Բսկ եթե ամբողջը մեկ անդամ լինէր, ո՞ւր կը մնար մարմինը: Բայց արդ, բազում անդամներ կան, սակայն՝ մեկ մարմին: Աչքը չի կարող ասել ձեռքին, թէ՛ ինձ պէտք չես. եւ կամ նոյն ձեռով գլուխը՝ ոտքերին, թէ՛ ինձ պէտք չէք: (...) Եւ եթե մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները. եւ եթե մի անդամը փառաւորւում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները: Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամներ՝ նրա անդամներից:» (1 Կոր 12: 14-21, 26-27)

Նույն կերպ ողջ արարչությունը Ադամի հոգևոր մարմինն է կազմում, որը բաղկացած է նրա կյանքի համար կարևոր բազմաթիվ անդամներից և օրգաններից, այնպես, որ Աստծո կենդանի արարած սպանելը կամ նրան վնասելը՝ լինի դա մարդ, թե կենդանի, հավասարազոր է սեփական մարմնի օրգաններին վնասելուն, օրինակ, երիկամներին, լյարդին, սրտին եւ այլն: Այնպես որ մարդու «տիրապետությունը» կամ «իշխանությունը» այլ արարածների վրա պայմանադրված է հենց այս միասնությամբ, որը նման է մարմնի վրա գլխի իշխանությանը և դրսևորվում է միայն փոխըմբռնման և սիրո միասնության մեջ, որը միշտ միայն մարդուց է կախված: Այս նույն իմաստն է ընկած առաքյալի հետևյալ խոսքերի մեջ. «Գազանների, թռչունների եւ սողունների ամէն տեսակ եւ ինչ որ կայ ծովի մէջ, հնազանդուած է եւ հնազանդում է մարդկային բնութեանը»: (Հակ 3: 7) - Պարզաբանեմ. ինչպես հայրական բնությանը: Այս առումով հետաքրքիր է Պսևդո Մատթեոսի պարականոն Ավետարանում հիշատակված մանուկ Քրիստոսի հետևյալ խոսքերը. «Բոլոր գազանները իմ առջև ձեռնասուն կդառնան»: (Պսևդո-Մատթեոսի ավետարանը, XVIII դ.),¹⁷ և դրանց հաջորդող պատմությունը, թե ինչպես մանուկ Քրիստոսի հետ Մարիամի և Հովսեփի Եգիպտոս փախչելու ժամանակ «Առյուծները նրանց ուղեկցում էին եզներով, Էշերով եւ բեռի գազաններով, եւ ոչ մի վնաս չէին հասցնում, հեզ մնալով ոչխարների ու խոյերի մէջ, որ Հովսեփն ու Մարիամը իրենց հետ բերել էին Հրեաստանից: Նրանք

քայլում էին գայլերի մեջ եւ ոչ մի վախ չէին զգում, եւ ոչ ոքի վնաս չէր հասցնում»: (Պսեւդո-Մաթեոսի ավետարանը, XIX դ.)¹⁸

Գազանների այս հեղությունը պայմանադրված է Քրիստոսի մեջ դրսևորված Ադամի հոգու հայրական բնությունով, որ Տիրոջ բնությունն է, ինչը արձանագրում է հենց Ինքը Տերը Դավիթի շրթերով.

«Իմն են անտառի բոլոր գազանները, - ասում է նա, - լեռների երէները եւ բոլոր անասունները: Գիտեմ ես երկնքի բոլոր թռչուններին, եւ դաշտի գեղեցկությունն իմն է» (Սաղմ 49: 10-11)

Նա ասում է այսպես, որովհետև գիտի բոլորին ներսից, ինչպես հայրն ու մայրն են ճանաչում իրենց երեխաներին և իրենց մարմնի վրա դրում նրանց բոլոր ցավերը:

Հետևաբար, սեփական էության ծանոթությունը օգնում է մարդու մեջ կարեկցության ու պատասխանատվության զգացմունքների առաջացմանը, որ նրան թույլ է տալիս կրկնել Հիսուսի խոսքը. *«ես Հօր մեջ եմ, եւ Հայրը՝ իմ մեջ»* (Հովհ 14:10)

Եվ, բնականաբար, ինչպես մարմինը կախված է գլխից, այնպես էլ *«բոլոր ապրողների հոգին»* կախված է նրանում բնակվող ոգուց/շնչից: Եթե մարդը առաջնորդվում է Սիրո և Կյանքի Ոգով/շնչով, ապա նրա անհատական, կենդանու գիտակցությունը փոխակերպվում է Աստծո պատկերի և նմանության համընդհանուր գիտակցության, և նրա մարմինը սուզվում է Կյանքի և Սիրո մեջ՝ իրենց համընդհանուր իմաստով: Հենց այդ գիտակցության աստիճանն է, որ որոշում է մարդու վերաբերմունքը շրջապատող աշխարհի՝ մարդկանց, կենդանիների և բուսականության նկատմամբ, որը ի ցույց է բերում ինչպես նրա հոգևոր զարգացման մակարդակը, այնպես էլ նրա վերաբերմունքը ինչպես Աստծո, այնպես էլ իր իսկ հանդեպ: Այդպիսի մարդու աշխարհում *«երկիրը»/«հոգին»* արդեն մշակված է, և այն ամենը, ինչ նրան կազմում է - բոլոր՝ մարդիք, և՛ յուրաքանչյուր արարած, - ապրում է Աստծո ողորմության, ճշմարտության, արդարության գիտակցության մեջ: Այդ այն ժամանակն է, երբ Եվան դարձյալ միանում է Ադամին, և երկուսը նորից մեկ մարմին են կազմում: Համապատասխանաբար մեկ մարմին են կազմում նաև Աստվածը (Ոգին/Շունչը) և մարդը (մարմինն), ինչի հետևանքում նաև յուրաքանչյուր անհատի մեջ Ադամը արտացոլվում է որպես Աստված:

Այսպիսով, հիմնական եզրակացությունն այս բոլորից այն է, որ մարդու իրական բնությունը, կամ հոգին մի անհատական հոգի չէ, այլ *«բոլոր կենդանի էակների հոգին»* է, այսինքն՝ այն *մատրիցան*, որից կերտված են բոլոր կենդանի հոգիները և, հետևաբար, ցանկացած վնաս հասցրած այդ հոգիներին մահացու վնաս է պատճառում հենց իրեն՝ մարդու համապարփակ հոգուն: Ուստի նրա կյանքն ու հավերժությունը կախված են միայն նրա մեջ բնակվող ոգու սրբությունից և դրա մասին մարդու գիտակցությունից, քանի որ ինչպես Սողոմոնն է ասում. *«Արդարեւ, Աստուած մահ չի ստեղծել, եւ նա չի ուրախանում ողջերի կորստեան համար: Նա ամէն ինչ հաստատել է լինելու համար, եւ*

աշխարհի գործերը փրկութեան համար են: Ո՛չ մահաբեր թոյն կայ նրանց մէջ եւ ոչ էլ դժոխքի թագաւորութիւն՝ երկրի վրայ, որովհետեւ արդարութիւնը անմահ է: Իսկ ամբարիշտները ձեռքով ու խօսքով իրենց մօտ կանչեցին մահը, նրան իրենց բարեկամ համարեցին, հալումաշ եղան եւ դաշինք կնքեցին նրա հետ. եւ իսկապէս արժանի են բաժնեկից լինելու նրան»: (Բմաստ 1: 13-16)

Հենց այս մահացու «դաշինքի» և դրա հետևանքների մասին մենք կխոսենք հաջորդ գլխում՝ նվիրված Ադամի անկման մարմնին:

1. Այստեղ ես հայերենի թարգմանության «Աստծո հոգին» փոխարինել եմ բնագրի «Աստծո շնչով», քանզի «հոգին»՝ ստեղծվողն էր և ոչ Ստեղծողը, կամ Արարիչը, որը *Աստվածաշունչն* է, այսինքն՝ Աստծո *Ոգին/շունչը* - *πνεῦμα-ն*:

2. ՅԵՍՈՒԻ ՈՐԴԻ ՍԻՐԱՔԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ. <https://ter-hambardzum.net/sirakq-sirach/> Այստեղ հայերենի թարգմանության մեջ «շունչ» ե գրված: Ես դա փոխեցի «հոգով», քանի որ խոսքը ստեղծված կենդանի հոգիների մասին է, այլ ոչ թե Աստվածաշնչի: Ըստ բնագրի, այստեղ ոչ թե «*էակաների շունչը*» ծածկեց երկրի *երեսը*, ինչպես թարգմանված է հաերեն, այլ «*բոլոր ապրողների հոգին*» - բնագրի *փսղի*-ն, որ մարդ (Այր) կոչվեց, բացահայտելով «*երկրի*» և «*հոգո*» նույնությունը:

Համապատասխանաբար, ճիշտ թարգմանությունը կլինի՝ «*բոլոր ապրողների հոգին ծածկեց երկրի երեսը*», այսինքն՝ այն *մայրական «հոգին*», որ ընդգրկում է իր մեջ բոլոր մյուս հոգիները:

3. Այս վերջին հայտարարությունը, որ «*բոլորը դարձյալ վերադառնալու են երկիր*» աստվածաբաններն ու հետազոտողները հասկանում են որպես մահ, մինչդեռ իմաստը ճիշտ հակառակն է և նշանակում է վերադարձ դեպի կյանք մսի մեջ թաղված հոգու ազատագրումից հետո: Ավելին, Սեպտագինտան այստեղ բազմիմաստ բառ է օգտագործում, *ἀποστροφή*, որը, բացի վերադարձի իմաստից, ունի նաև այլ նշանակություններ: Օրինակ, նույն միտքը կարելի էր թարգմանել նաև որպես «*երկիրը, որ բոլորի ապաստանն է*», կամ «*երկիրը, որ բոլորի փրկությունն է*», նկատի ունենալով *հոգուն*:

4. Այս խոսքերը նույնպես ուղղված են իմ կողմից, քանի որ հայերեն էջմիածնի թարգմանությունը հետևյալն է. «*եթէ կայ շնչաւոր մարմին, կայ եւ՝ հոգեւոր: Այսպէս էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ կենդանի շունչ. վերջին Ադամը՝ կենդանարար հոգի»: Բայց ոչ նախ հոգեւորը, այլ՝ շնչաւորը եւ ապա՝ հոգեւորը: Առաջին մարդը՝ երկրից, հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը երկնքից:»*

Նույնը գտնում ենք նաև «Արարատ» թարգմանության մեջ:

Բացի արդեն նշված «հոգին» «շնչից» չտարբերելը, հայ աստվածաբանության մեջ նաև չի հարգվում բառի նշանակությունը, որի պատճառով բնագրի նույն խոսքը, այսինքն՝ նույն հասկացությունը, տարբեր տեղերում տարբեր, շատ անգամ նույնիսկ հակառակ իմաստով է թարգմանված: Մեկ օրինակ բերեմ. եթե Ծննդոցի

վերը ներկայացված «Արարատ» թարգմանությունում (2: 4-7) ստեղծված մարդը «կենդանի հոգի» է անվանվում («Եւ Եհովայ Աստուածը **հողի փոշուցը շինեց մարդը. Եւ նորա ղնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ**»), նույն «Արարատ» (նաև Էջմիածնի) թարգմանությունը Պողոս առաքյալի վերը նշված հատվածում «հոգի» բառով արդեն անստեղծ Աստծուն է սահմանվում. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ **կենդանի շունչ**. վերջին Ադամը՝ կենդանարար **հոգի**: Առաջին մարդը՝ երկրից, հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկնքից»:

Այսինքն՝ այն, որ կյանք է տալիս՝ շունչը, - ստեղծված է համարվում, իսկ այն, որ ստեղծված է, անստեղծ Աստծուն է վերաբերում: Այլ կերպ ասած, այստեղ հայ թարգմանությունը իմաստափոխ է անում բառերն ու հասկացությունները, վառ վկայելով, որ հայ թարգմանիչների ու հայ աստվածաբանության կողմից խոսքի իրական իմաստը ոչ ըմբռնված է, ոչ էլ կոորդինացված տեկստում: Տպավորություն է ստեղծվում, որ թարգմանիչները ոչ թե *Աստվածաշունչն* են թարգմանում, այլ ինչ-որ մի վեպ, որտեղ միևնույն խոսքը չկրկնելու համար, իրենց կարծիքով հոմանիշներ են օգտագործում: Մակայն եթե այդպիսի գործընթացը հասկանալի է գեղավերստական ստեղծագործություններում, որտեղ խոսքի կրկնողությունը վատ է ընկալվում, ապա *Աստվածաշնչի* դեպքում հակառակն է, քանզի **կերտողը այստեղ Խոսքն է և ուստի ամեն մի խոսք՝ արարչության մի ամուր ու անփոփոխ քար է, որի փոխելը փլուզում է արարչությունը, քանդելով նրա կառուցվածքը ամրացնող իմաստային կապը:**

Ասածից արդեն պարզ պիտի լինի, որ ճիշտ թարգմանությունը այստեղ կլինի հետևյալը.

«Եթէ կայ **հոգեւոր** մարմին, կայ եւ՝ **շնչաւոր**: Այսպէս էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ **կենդանի հոգի**. վերջին Ադամը՝ **կենդանարար շունչ**»: Բայց ոչ նախ **շնչաւորը**, այլ՝ **հոգեւորը**՝ եւ ապա՝ **շնչաւորը** : Առաջին մարդը՝ երկրից, հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկնքից», որով էլ ես փոխարինել եմ սխալթարգմանությունը:

5. Այսինքն՝ այն Լեոնաշխարհի, ոչտեղ, ըստ Աստվա/աշնչի, դրաքսն էր տեղավորված: Տես իմ ռուսերեն ու իսպաներեն լեզուներով գրված «*Армения библейская – земля неведомая*»/«*Armenia biblica – tierra incognita*» գիրքի «*Hayr (Отец) как основа понятия «ариец» и связанные с ним топонимы и этнонимы Армянского/Арапатского нагорья.*»/ «*Hayr (Padre) - como la base del concepto “ario” y de los vinculados con el topónimos y nombres étnicos de la meseta de Ararat/Armenia*» գլխում:

6. Տես Նոյի խոսքերը (Ծն. 9:27): Նաև իմ վերը նշված ծավալուն գրքի «*Загадка сыновей Ноя*»/ «*Enigma de los hijos de Noé*» գլուխը:

7. «*установить символ креста в душах своих*» Библиотека Якова Кротова. Деяния Иуды Фомы апостола կամ <http://translate.google.com/translate?hl=es&langpair=en%7Ces&rurl=translate.google.com.ar&u=http://www.earlychristianwritings.com/text/actsthomas.html>
<http://www.earlychristianwritings.com/text/actsthomas.html>

“implantar el signo de la cruz en sus almas” (Actos de Thomas. Acto 2: 28), Los Hechos de Tomas: http://www.eldadoquebrado.com/Los-hechos-de-Tomas/body_los-hechos-de-tomas.html

<http://www.eldadoquebrado.com/Los-hechos-de-Tomas/Los-Hechos-de-Tomas.pdf>

8. « Вселенская душа» - См. Тибетское евангелие Электронная библиотека RoyalLib.com https://royallib.com/read/neizvesten_avtor/tibetskoe_evangelie.html#0

9. «обитала душа вселенной» - Տես նոյն տեղում»

10. «Вечный Судия, Вечный Дух создал душу единственной и неделимой в мире; она одна, сотворенная, содержит и живет все». «Существует же только Он единый, который хочет и творит; Он существует от вечности, бытию Его нет конца, Ему нет ничего подобного ни в небесах, ни на земле». (Тиб/еванг.5: 15-16) Տես նոյն տեղը:

11. Այդ իմաստով շատ նշանավոր է Ենոքի Առաջին կոչված գրքի գլուխներից մեկը, որտեղ ամբողջ արարչությունը նկարագրված է կենդանիների պատկերների միջոցով և որտեղ մարդը ներկայացված է որպես «սպիտակ ցուլ»: Ըստ ռուսական թարգմանության, դա 17-րդ գլուխն է - - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001 -http://krotov.info/libr_min/from_1/0008.html, իսկ ռուս իսպանական թարգմանության, դա այդ գրքի չորրորդ բաժնի 85-90 մասն է: A. Díez Macho, ed. *Apócrifos del Antiguo Testamento*, en 5 vols. publicados. *Libro 1 de Henoc (etiópico y griego)*, trad. por Federico Corriente y Antonio Piñero, en vol. 4 [Cristiandad: Madrid, 1982], págs. 39—143.

12 Այդ արարչության հիմքում ընկած համապատասխանությունների մասին տես իմ «*Таинство Святой Троицы/Misterio de la Santoisima Trinidad*» ռուսերեն ու իսպաներեն լեզուներով գրված գրքի «*О таинстве Святой Троицы или в чём смысл христианской морали*»/ “*El misterio de la Santísima Trinidad o ¿cuál es la razón de la moral cristiana?.....*” հոդվածում:

13. Ինչպես միշտ, ստիպված էի նաև այստեղ ուղղել հայերենի անիմաստ և անհետեվողական թարգմանությունը որ հետևյալն է. «*Հոգիների ու բոլոր էակների ու ի Տէր Աստուած*» (Թվեր 27: 16)

14. Ըստ վերընշյալի տրամաբանության՝ բոլոր կենդանիները, թռչունները, սողունները եւ ձկները նույն բույսին պիտի զուգավորվեին, քանի որ բոլորը արտացոլում են արարչության հիմքերի հիմքին՝ մարդուն:

15. Մանրամասն տես իմ ռուսերեն ու իսպաներեն լեզուներով գրված «*Шесть дней творения и Седьмой день*»/ “*Los seis días de la creacion y el dia séptimo*” գրքի «*Загадка сыновей Ноя*»/ *El enigma de los hijos de Noe*” գլխում:

16. Հաբեթի, Եհովայի կամ Յահվեի նույնության մասին տես նույն, վերը նշված գործում:

17-18. Ռուսական օրինակը. «*надлежит всем диким зверям сделаться ручными передо мной*». (Евангелие псевдо-Матфея, XVIII), «*львы сопровождали их вместе с быками, ослами и вьючными животными и не причиняли никакого зла, оставаясь кроткими среди овец и баранов, которых Иосиф и Мария взяли с собой из Иудеи. Они шли между волками и не ощущали никакого страха, и ни с кем не случилось никакой беды.*» (Евангелие псевдо-Матфея, XIX) - Евангелие псевдо-Матфея. -

Апокрифические сказания о Христе. Вып. 1. Книга Марии Девы. Спб., 1912. С. 57-145.) http://krotov.info/acts/01/joseph/apok_35.html

Իսպանական օրինակը. “*es preciso que todas las bestias de los bosques se amansen ante mi.*” (Ev de pseudo Mateo XVIII: 2) “*los leones hacían camino con ellos y con los bueyes y los asnos y las bestias de carga que llevaban los equipajes, y no les causaban ningún mal, sino que marchaban con toda dulzura entre los corderos y las ovejas que José y María habían llevado de Judea, y que conservaban con ellos. Y andaban también por entre los lobos, y nadie sufría ningún mal. Entonces se cumplió lo que había dicho el profeta: Los lobos pacerán con los corderos, y el león y el buey comerán la misma paja. Porque había dos bueyes y una carreta en la que iban los objetos necesarios, y los leones los dirigían en su marcha.*” (Ev de pseudo Mateo XIX: 2) - Evangelio de pseudo Mateo véase en Los Evangelios Apócrifos, por Edmundo González Blanco

5. Անկման «հողը» կամ «մարմինը»: Ժամանակավոր աշխարհ:

Ադամի հոգևոր, կամ հրեշտակային մարմինը, որն իրականում պարունակում է իր մեջ բոլոր կենդանի հոգիներին և որից նրանք կյանք են առնում, նրա անկումից հետո, բնականորեն, ինչպես ինքը մարդը, նույնպես նաև նրանք, հայտնվեցին «*կաշվե զգեստների*», կամ արտաքին մարմնի մահաբեր անեծքի գերության ներքո, որին Ադամը ենթարկվեց իր իսկ մեղքով, քանզի, չհնազանդվելով Սուրբ Արարչի Խոսքին եւ հետեւելով իր իսկ ծոցից ծագած արարածի խոսքին, որ լցված էր անմաքուր, Աստծուն անհնազանդ ոգով, նա, փաստորեն, քայքայեց նախնական արարչությունը:

Ինչո՞ւ դա տեղի ունեցավ:

Ստեղծելով Ադամի հոգին՝ Տերը, ինչպես արդեն ասացի, նրան ազատ կամք շնորհեց Իր կամքին համահունչ:

«*Նա ի սկզբանէ մարդուն ստեղծեց, - կարդում ենք Սիրաքի գրքում, - եւ նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին: Եթէ կամենաս, կը պահես պատուիրանները եւ հաճութեամբ կը պահպանես քո հաւատը: Քո առջեւ Տէրը կրակ եւ ջուր է դրել. որին կամենաս՝ կը մեկնես քո ձեռքը: Մարդու առջեւ է կեանքն ու մահը. ինչ հաճելի կը թուայ իրեն՝ կը տրուի նրան:*» (Սիրաք 15: 14-18)¹

Նույն փաստը նշվում է Նաև Երկրորդ Օրինաց գրքում, որտեղ Տերն ասում է մարդուն.

«*(քո) առջեւն եմ դնում կեանքն ու մահը, օրհնություններն ու անեծքները: Ընտրի՛ր կեանքը, որպէսզի ապրէք դու եւ քո սերունդը:*» (Երկր, Օրենք 30: 19) - Այսինքն՝ մարդուն ազատ կամք շնորհելով՝ Աստվածն նրան ընտրության առջև դրեց: Ծննդոցի գրքում այդ ընտրությունը այլաբանորեն է ներկայացված դրախտային երկու ծառերի տեսքով՝ Կենաց, այսինքն՝ երկնքի, կամ Աստծո Ոգու ծառի, և Բարու և Չարի գիտության ծառի, որ երկրի, կամ մարդու հոգու ծառն է, լի ստեղծված կենդանի նյութի ամենատարբեր ոգիներով:² Եթե առաջինի հետ մարդու «միությունը» կապված է կյանքի եւ հավերժության հետ, ապա «միությունը» երկրորդի հետ մահաբեր է նրա համար: Ուստի, ներկայացնելով Կենաց Ծառը, Աստվածն նախազգուշացնում է Ադամին.

«*Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, ¹⁷բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերէք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք:*» (Ծնդ 2: 16-17) - այսինքն՝ «մի սնվեք» կենդանի նյութի ոգիներով, քանզի «*մահկանացու կդառնաք:*»

Ադամը, սակայն, Աստծո պարգևներով լի, բայց անտեղյակ իր օրհնեալ գոյութեան պատճառից, քանի որ իր գիտակցությունը դեռ «*մշակուած*» չէր եւ գտնվում էր մանկան հարթակի վրա, չնայած Աստծո զգուշացումին, հետևեց հենց այն խոսքին, որ գալիս էր Բարու և Չարի գիտության ծառից: Դա եսասիրության խոսքն էր, որը պատկանում էր Օձին՝ «*դաշտի զազաններից ամենա խորամանկին*», ով ի դեմ Աստծո «*մահկանացու կդառնաս*» խոսքին իր հակառակ

խոսքն առաջարկեց մարդուն, ասելով. *«**Չէք մահանայ, ⁵որովհետեւ Աստուած գիտէր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք աստուածների նման՝ կիմանաք բարին ու չարը**»* (Ծնդ 3: 4-5)

Այսպիսով, Օձը իր խոսքը հակադրեց Սուրբ Արարչի Խոսքին, փաստորեն, նրան ստի մեջ մեղադրելով: Եվ Ադամը նախընտրեց Օձի խոսքը, այսինքն՝ առանց հասկանալու, թե ինչ է անում, հետևեց այդ Արարչի հետ անհամաձայնության ոգուն, որը կործանման եւ մահվան ոգին էր, - այն նույն ոգին, որը Նոյի հետ կապված դրվագում ներկայացված է *Քամի* անվան տակ եւ ում Պողոս առաքյալը բնորոշում է որպես *«օդում տիրող իշխանի ոգի»*, *«որ այժմ ներգործում է ապստամբող մարդկանց մէջ»* (Եֆ 2: 2), իսկ Սեթրակ առաքյալը իր պարականոն Հայտնության մեջ բնորոշելով նրան որպես *«անտեսանելի ոգի»*, որ *«ծխի նման, մոտենում է մարդկանց սրտերին և սովորեցնում նրանց ամեն տեսակի մեղքեր»*, ուղղակիորեն *«սատանա»* է անվանում, *«ստի ճարտարապետ»* (Սեդրակի հայտնություն, 5) ³ ի հակառակ Առակների գրքում նշված *«արդարության ճարտարապետի»* (Արարատ թ-ն. Առակն 8: 30), այսինքն՝ Աստծո Սուրբ, Ամենափառաստուն և հավիտյալ Ոգու/Շնչի, որ կոչվում է *Հաբեթ/Յահվեհ:* ⁴

Այսպես, սխալ ընտրություն կատարելով՝ մարդը իր գիտակցության մեջ փշրվեց ըստ իրեն կազմող հոգիների, կորցնելով արարչության միության զգացումը եւ հայտնվելով *Քամի* երկիր *Քանանում* (կամ Կայենի «երկրում»): Իսկ նրա ժառանգները, նույնպես առանց գիտակցելու, սկսեցին ապրել որպես *Քամի* որդիներ, իրականացնելով, ինչպես ճշմարտորեն բնորոշում է նրանց Ալբիգենսների գաղտնի գրքը, *«իրենց հոր դեմ/սատանայի ցանկությունները, մինչեւ այս դարի վերջը»*, ⁵ քանզի այս ժամանակավոր *«դարում»* Աստծուց չեն «ծնվում», այլ դեմից, որը, ինչպես ասվում է նույն գրքում, *«իր թույնն ու ցանկությունը թափելով նրանց մեջ, օձի որդիներ ու դեմի ուղիներ է ծնում մինչեւ այս դարի վերջը»*: (Ալբիգենսների գաղտնի գիրքը, 5) ⁶

Այդ պատճառով է, որ սոսքյալները Աստծու կողմից փրկվածներին որդեգրված են համարում:

Ուրեմն, ստացվում է, որ, ամբողջ *«երկրի»*, կամ *Ադամի տիեզերական հոգու* անիծվածության պատճառը՝ նրա հոգևոր «ամուսնությունն» էր Օձի հետ, քանզի անմիջապես դրանից հետո Տերն ասաց նրան. *«անիծեալ կդառնա երկիրը քո պատճառովը»*: (Ծնդ 3: 17) ⁷

Եվ այդպես էլ եղավ. ըստ Եսայիա մարգարեի, *«երկիրը»* հայտնվեց անմաքուր ոգու *«վարագույրի»* տակ (Արարատ թ-ն. Եսայիա 25:7), այսինքն՝ դրախտից դուրս եւ, ըստ Ծննդոցի, մսից ու արյունից ստեղծված մահաբեր *«կաշվե զգեստների»* մեջ: (Ծննդոց 3:21)

Ծանոթ լինելով արդեն Ադամի էությանն ու կազմությանը՝ հասկանում ենք, թե ինչու նրա արարքը ոչ միայն մարդուն անեծքի տակ զցեց, այլեւ ամբողջ երկիրը (տիեզերքը), որը նույնպես ժամանակավոր դարձավ: Այս անեծքը նրանով դրսևորվեց, որ Ադամն ու Եվան, ինչպես Պողոս առաքյալն է ասում, *«փոխանակեցին Աստծու ճշմարտությունը ստով, հնազանդուեցին ու պաշտեցին*

արարածներին եւ ոչ Արարչին, որ օրհնեալ է յաւիտեանս:» (Հռոմ 1: 25), ⁸ այսինքն՝, նրանք «անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի եւ թռչունների եւ չորքրտանիների եւ սողունների:» (Հռոմ 1: 23), ինչն նշանակում է, որ, լսելով Օձի խոսքը, նրանք վերջինով փոխարինեցին Արարչին, ընդունելով արարածի պատկերներ, քանզի այդ ժամանակից ի վեր Աստծուն կորցրած և լիովին կենդանի դարձած ընկած մարդը, սկսեց Օձին շփոթել Արարչի հետ: ⁹ Դրա մասին վկայում է հենց Ինքն Աստվածը, խոսելով Իր գալիք թագավորության մասին երկրի վրա .

«Այն օրը, - ասում է Տէրը, - ինձ կ'անուանի՝ «Իմ ամուսին» եւ Բահադիմ չի կոչի ինձ: Կը վերացնեմ Բահադիմի անունները նրա բերանից, եւ այլեւս չեն յիշուի նրանց անունները:» (Օս 2: 17-18)

Բահադիմ ասելով՝ Աստվածը նկատի ունի Քամի որդի Բելին, կամ Բաբելին, որ մինչ օրս աշխարհում իշխող հոգևոր Բաբելոնի հայրն է և որին «երկրում» Աստծու տեղ են դրել ու դնում, մինչ դեռ Բաբելը նույն Քանանի այլ սահմանումներից է:

Սակայն մարդը դա չի գիտակցում: Նա չի գիտակցում, որ այն աշխարհը, որի մեջ ընկավ, մեղք գործելով Արարչի դեմ, Աստծո աշխարհը չէ, այլ մահաբեր ստի աշխարհն է: Այսպես, մերժելով Արարչի Սուրբ Խոսքը՝ Ադամը, փաստորեն, կործանեց արարչագործությունը՝ մահ բերելով նրա մեջ, քանի որ ի հակառակ Օձի կեղծ հավաստիությանը, նա, ինչպես Աստված զգուշացրել էր իրեն, «մահկանացու դարձավ», իր հետ ժամանակավոր աշխարհ քաշելով ողջ տիեզերքը:

Այսպիսով, Աստծո ստեղծագործությունը ուզուրպացվեց Տիրոջ Սրբությանը անհնազանդ, անմաքուր ոգու կողմից, և ի հետևանք դրան այն ամենը, ինչ ընդգրկում է Ադամի տիեզերական հոգին, նույնպես հայտնվեց կործանման ու մահի անեծքի տակ, - և Եդեմի պարտեզը վերածվեց «անապատի»: ¹⁰

Հայտնի է, որ յուրաքանչյուր բառ, - բարի, թե չար, - ստեղծագործելու հատկություն ունի: Սակայն միակ Խոսքը, որ իրական է և հավերժական բարիք ու կյանք է բերում, դա Արարչի՝ Սուրբ Ոգու համընդհանուր արդարության եւ սիրո խոսքն է, - արարչության միակ հիմքը: Հենց այդ էր նախազգուշացնում Տէրը Ադամին, ասելով, որ Իր Խոսքին անհնազանդ լինելը կկործանի ամբողջ արարչությունը:

Եվ իրոք. ընկած Ադամի աշխարհում, ինչպես արդեն նշեցի, ամեն ինչ հիմնվեց կործանարար կեղծիքի ու պատրանքների վրա: Եվ ամեն ոք, ով ծնվում է այստեղ, - մարդ թե այլ կենդանի, - ծնվում է մահանալու համար, քանզի այն միակ կենդանի հոգին, կամ այն միակ մարդկային անոթը, որը պարունակում է իր մեջ ամեն ինչ, այսինքն՝ բոլոր մարդկանց, կենդանիներին, թռչուններին, սողուններին ու ձկներին, ինչպես նաեւ ամբողջ բուսականությունը - այլեւս չի ապրեցնում նրանց, ինչպես առաջ, այլ ընդհակառակը, սպանում է: Համապատասխանաբար, ամեն մի երկրային մարդ արտացոլում է այստեղ ընկած Ադամին՝ կրելով իր այլալված, այլ ոչ թե Սուրբ Արարչի, պատկերը (Ա

Կորնթացիս 15:49), ինչպես «ընկած» երկիրը արտացոլում է «ընկած» երկնքին, կամ ընկած մարմինը՝ ընկած գլխին:

Այսպիսով, Ադամն իր անկումով, փաստորեն, գլխիվայր արեց Աստծո աշխարհը, քանզի ոչ թե Աստվածն կառավարեց այստեղ, այլ տեսանելի մարմինը, ինչի արդյունքում մարդը, կորցնելով արարչության միության զգացումը և ենթարկվելով իր կենդանական էությանը, սկսեց թշնամաբար վերաբերվել մնացած կենդանի հոգիների հանդեպ: Իսկ այն իշխանությունը արարչության վրա, որ Աստվածը ի սկզբանե տվել էր նրան և որ իրականում պատասխանատու է անում նրան բոլորի կյանքի համար, նա ընկալեց որպես բացառիկ իրավունք անել մնացած արարածների հետ ինչ որ կկամենա. սպանել, ուտել, տանջել, օգտագործել իր քմահաճույքների համար եւ այլն: Արդյունքում նաև նրանք՝ Ադամի մասը կազմող բոլոր արարածները միանգամից արտացոլելով նրան, սկսեցին խայթել եւ ուտել միմյանց - և քառս առաջացնելով արարչության մեջ, նմանեցրին այն գլխազուրկ մարմնի:

Այսպիսով, առանց գիտակցելու, մարդը իսկական հրեշի պատկեր ընդունեց, որը, թշնամաբար ընդդիմանալով ճշմարիտ Աստծուն և Նրա կողմից ստեղծված բոլոր արարածներին, ամեն ինչ սկսեց կառուցել նրանց սպանության հիմքի վրա, այդ թվում նրանց միսը ուտել իրեն ապրեցնելու համար, համոզված լինելով, որ ուրիշի միսն է ուտում և նույնիսկ փորձելով արդարացնել իր մասկերությունը «գիտականորեն» և աստվածաբանորեն: Այդ ամենը նա սկսեց անել չգիտակցելով, որ իրականում սպանում և ուտում է իր սեփական մարմինը, քաքնզի մեռածի միսը ուտելով, մեռցնում է իրեն, և այդ պատճառով էլ այն ամենը, ինչ նա ստեղծում կամ ծնում է, նույնպես ենթակա է դառնում կործանման ու մահվան, այսինքն՝ դառնում է ժամանակավոր: Իսկ ժամանակավոր լինելը նշանակում է, որ մարդը, **չնայած նրան, որ ինքն իրեն կյանք ունեցող է համարում, իր մեջ չունի այդ կյանքը, որովհետև կյանք տվող Աստծո աչքում մեռած է:** Հենց այս հանգամանքը նկատի ունենալով՝ Քրիստոսը ճշտում է, որ *«Աստուած՝ մեռելների Աստուածը չէ, այլ՝ կենդանիների»:* (Մթ 22: 32) Նա ասում է դա, իմանալով, որ երկրի վրա Աստծուն շփոթում են այս աշխարհի *«ճարտարապետի»* հետ, որը *«անիրավության վարպետն»* է, այսինքն՝ դեվը: Ընդգծելով այն փաստը, որ մահկանացու մարդը Աստծո աչքում մեռած է, քանի որ ծնվում է մեռնելու համար, Նա Իր աշակերտի խնդրանքին՝ նախքան Իրեն հետեւելը գնալ ու թաղել իր մահացած հորը, պատասխանեց. *«Դու իմ յետելի՛ց արի եւ թո՛ղ տուր, որ մեռեալնե՛րը թաղեն իրենց մեռելներին»:* (Մթ 8: 22) Այս կերպով Նա ցույց տվեց, որ ստերի եւ բռնության աշխարհը ղեկավարվում է ոչ թե Աստծո կողմից, այլ Ստախոսի կողմից, **ով մեռածներին կենդանի է անվանում, իսկ հոգու՝ «գերեզմանը»՝ որպես կենդանի հոգի ներկայացնում:** Մատնանշելով այդ փաստը, Հիսուսը ցույց է տալիս Աստծո որդիներին, որ նրանք միշտ եւ չնայած ոչնչի, պետք է հետեւեն կյանք ունեցողին, այսինքն՝ Աստծո Սուրբ Ոգուն, քանզի Նա է կյանքի միակ աղբյուրը:

Անիծված աշխարհի առաջին ժամանակներում Արարչության մեջ Աստծո Խոսքի բացարձակ բացակայությունը հանգեցրեց, ինչպես արդեն նշել եմ, ողջ *երկրի/Ադամի հոգու* ապականմանը, ինչի պատճառով Տերը համաշխարհային ջրհեղեղ ուղարկեց երկրի վրա՝ ոչնչացնելով բոլորին ¹¹ միայն մեկ բացառությամբ՝ արդար Նոյի իր ընտանիքով հանդերձ եւ, իհարկե, իր հոգու անբաժանելի մաս կազմող բոլոր արարածներից զույգ առ զույգի: Աստվածը դրանց բոլորին միացնում է Ադամի հոգուն խորհրդանշող փրկության Տապանի մեջ և դա անում է Ադամի հոգին փրկելու համար: Իսկ ջրհեղեղից հետո Նա Նոյի բերանով կրկնում է Ադամին ուղղված իր նախորդ պատվերը մեկ այլ առակի միջոցով, որում, սակայն, որպես հրահանգ ու մարգարեություն նոր աշխարհ մտնելուց առաջ, Նա Ադամի անկման օրից հետո առաջին անգամ խոսում է Աստծո Սուրբ Ոգու *Հաբեթի (Յահվեի)* մասին, եռակի անգամ օրհնելով Սեմի միությունը *Հաբեթի (Յահվեի)* հետ, որի հովանության տակ միայն կարող է մարդը հավերժ ապրել, և եռակի անգամ անիծելով *Սեմի* ու *Քամի* միության պտուղին՝ *Քանանին* (որ, ինչպես նշեցի, նույն նյութապաշտ *Կայենն* է), ասելով. «*Անիծեալ լինի ստրուկ Քանանը եւ իր եղբայրների ծառան թող լինի*»: (Ծնդ 9: 25, 26, 27) – Այլ կերպ ասած, անիծելով նյութի ոգու իշխանությունը մարդու վրա, քանի որ այդ իշխանությունը զավթված է, իսկ նրա արդյունքը՝ մահաբեր, առավելևս, որ, ինչպես արդեն նշեցի, Սեմը նախատեսված է միայն Սուրբ Ոգու՝ *Հաբեթի (Յահվեի)* հետ միության համար: ¹²

Սակայն Սեմը (Ադամը) դարձյալ նույն սխալը գործեց՝ նորից միանալով Քամի, իր մարմնի ոգու հետ եւ ոչ թե իր համար նախորդված Աստծո Սուրբ Ոգու՝ *Հաբեթի/Յահվեի*՝ հետ, ինչպես որ անում է մինչև այսօր: Այդ միությունը մարքարե Եսայան «*մահվան հետ դաշինք*» է անվանում (Եսայ 28: 14-16), իսկ նրա կողմից առաջացված աշխարհը (նույն Քանանը)՝ «*խառնարի մեջ ընթացող*» (Ես 9: 2, Մթ 4: 16), որում մարդկությունը առանց գիտակցելու ապրում է մինչ օրս, այսինքն՝ Աստծո կողմից անիծված աստվածաշնչյան Քանանի (Կաննի) «*երկրում*», ¹³ որտեղ յուրաքանչյուր կենդանի հոգի, ենթարկված լինելով կործանման եւ մահվան, ինքն էլ է ավերածություններ անում եւ սպանում այլ կենդանի հոգիներին: Եվ դա անում է, որովհետեւ, ինչպես արդեն ասացի, Աստծո Ոգին չէ, որ գործում է իր մեջ, այլ Աստծո թշնամու խենթ, անմաքուր ոգին, որ բույն է դրել ժամանակավոր «*կաշվե զգեստների*» մեջ, որոնց միջոցով էլ տարածում ու բազմացնում է ոչ թե կյանքը, այլ մահը: Հենց այդ պատճառով է, որ Քրիստոսը բաժանելով այդ երկու ոգիների աշքարհները, ասում է. «*Իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ*» (Հովհ 18: 36) և սպանվում այստեղ «*Սոյի ճարտարապետի*» կողմից, ինչպես Աբելը սպանվեց Կայենի կողմից:

Ուրեմն պարզ է, որ միայն մարդն է պատասխանատու արարչության մեջ տիրող անհամաձայնության եւ մահվան համար, որ իրենց վրա կրում են բոլոր արարածները (այդ թվում՝ նաև ինքը՝ մարդը), տառապելով քայքայվող «*կաշվե զգեստների*» կամ իրենց ժամանակավոր մարմինների ճիրաններում:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցի, աստվածաբանների ճնշող մեծամասնությունը չի տարբերում տեսանելի մարմինը հոգու անտեսանելի մարմնից, այսինքն *«կենդանի հոգին»* չի տարբերում *«դագաղից»*, որի մեջ նա ժամանակավոր թաղված է: Այդպիսի վերլուծաբանները իրենց եզրակացությունները կառուցում են, հիմնվելով միշտ տեսանելի հողի վրա, անտեսելով անտեսանելին, այսինքն՝ ինչպես և նախկինում, առաջնորդվում են ոչ թե Սուրբ Արարչի, այլ Օձի խոսքով, որ աշխարհն ու նրա բոլոր հասկացությունները գլխավայր արեց, նրանց նյութին ենթարկելով:

Այս արարչության մեջ տեղի ունեցած ողբերգությունը բնորոշելով՝ մարքաբե Եզրասը գրում է ընկած Ադամի աշխարհի *«մութքերի»* (ծնունդների) մասին.

«Եվ այս աշխարհի մութքերը դարձան նեղ, ցավոտ, մաշված, նաեւ նենգ, լի աղետներով եւ մեծ աշխատանք պահանջող», մինչդեռ Աստծո աշխարհի մութքերը *«լայն են, ապահով եւ կրում են անմահության պտուղը»:* (Եզրասի 3-րդ գիրք 7: 12–13)¹⁴

Միեւնույն ժամանակ, նա մատնանշում է, որ ներկա հանգամանքներում մարդուն անհրաժեշտ է անցնել այս *«աղետներով լի»*, *«նեղության»* միջով, քանի որ, ինչպես ասում է, *«եթե մտնողները, ովքեր ապրում են, չմտնեն այս աղետաբեր նեղության մեջ, չեն կարող ստանալ այն, ինչ որ պատրաստված է»* (3 Եզրաս 7:14), այսինքն՝ առանց մահով անցնելու հնարավոր չէ հավերժականը ստանալ: Իսկ դա, փաստորեն, նույնն է, ինչի մասին Քրիստոսը խոսեց հետեւյալ առակում.

«եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կը մնայ, իսկ եթե մեռնի, բազում արդիւնք կը տայ: Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կը պահի յաւիտենական կեանքի համար:» (Հովհ 12: 24-25) - Նշանակում է, որ եթե քո ժամանակավոր , մահկանացու մարմինը սիրում ես այնպես, որ կարող ես նրա համար զոհաբերել ամեն ինչ, կկորցնես այդ մարմնիդ մեջ ժամանակավորապես թաղված հավերժ կենդանի հոգուդ, ընդմիջտ թողնելով նրան մահվան հետ, այսինքն՝ կիսելով նրա ճակատագիրը մահվան ճակատագրի հետ, որի վերջը, ինչպես գիտենք, *«կրակի եւ ծծմբի ծովում»* է: (Հայտնություն 20:9)

Շարունակելով իր միտքը եւ դիմելով մարդուն՝ Եզրաս մարգարեն նրան հոետորական հարց է տալիս. *«Ուրեմն ինչո՞ւ ես վրդովվում, երբ անցողական ես, եւ ինչո՞ւ ես անհանգիստ, երբ մահկանացու ես: Ինչո՞ւ քո սրտումդ չնդունեցիր այն, ինչ գալիք էր, այլ ընդունեցիր այն, ինչ ներկայում էր»:* (3 Եզրաս 7: 15–16)¹⁵ Այսինքն՝ ինչո՞ւ էիր անհամբեր դարձել եւ ուզում էիր ամեն ինչ միանգամից ստանալ՝ առանց դրան պատրաստ լինելու, երբ քո *հողը/հոգին* դեռ չէր մշակվել:

Այս խոսքերը վերաբերում են Ադամին, որ երկնքի պատկերը լինելով, թույլ տվեց, որ Օձը, Սատանու պատկերը կրող, *«Երկինք բարձրանա, իր գահը դնի երկնային աստղերից աւելի վեր. Նստի բարձր լեռան վրայ, հիւսիսի բարձր լեռների վրայ. բարձրանա ամպերից էլ վեր, նմանվի Բարձրեալին»:* (Եսայիա 14:13-14), դառնալով, փաստորեն, *«այս աշխարհի խավարի տիրակալների»*՝ Իշխանը (Եփես 6: 12), որը կոչվում էր նաեւ *«ստի Հայր»* (Հովհ. 8:44), այսինքն՝

մահվան ենթակա աշխարհի Հայր, որը արարչության կյանքը մահով փոխարինեց:

Այսպիսով, մահվան կամ մահացու մարմնի հայտնվելը արարչության մեջ պայմանավորված է ստով, որը մարդու գիտակցության մեջ բաժանեց արարածների միությունը, ինչի հետևանքում նրանք հակադրվեցին միմիանց: Ուստի Սուրբ Գիրքը ստախոսներին կոչում է «ստի ճարտարապետ» Օձի, կամ Սատանյի, ոորդիներ, կամ, ինչպես Սողոմոնն է նրանց անվանում, «անբարիշտներ», որոնք «ձեռքով ու խոսքով իրենց մոտ կանչեցին մահը, նրան իրենց բարեկամ համարեցին, հալումաշ եղան և դաշինք կնքեցին նրա հետ. և իսկապես արժանի են բաժնեկից լինելու նրան»: (Իմաստ Սող 1: 16)

-----1.
1.ՅԵՍՈՒԻ ՈՐԴԻ ՍԻՐԱՔԻ ԻՄԱՍՏՈՒԹԻԻՆԸ <https://ter-hambardzum.net/sirakq-sirach/>

2. Ավելի մանրամաս ձևով դրա մասին գրել եմ իմ ռուսերեն ու իսպաներեն լեզվով հրատարակված «*Каков библейский Бог и каково Его творение? Два райских древа*»/ «*Como es Dios y como es su creación. Dos arbokles del paraíso*» գրքում: Փաստորեն, Ադամը և այդ երկու ժառերը նույն նշանակությունը ունեն, ինչը Նոյի երեք որդիները. Սոմը և Հաբեթն ու Քամը:

3. Այս մանրամասները գտնվում են Սեդրակի «Հայտնության» ռուսերեն թարգմանության մեջ, որը պատրաստվել է Մ. R. James. Apocrypha anecdota. V. I. . Cambridge, 1893 գրքի առաջին հրատարակությունից: Տեւ. Откровение Седраха. – Русская апокрифическая студия. Библиотека Наг-Хаммади.- http://apokrif.fullweb.ru/apocryph2/ap_sedrax.shtml

4. Հաբեթը եւ Յահվեն/Եհովան նույն բառի տարբեր լեզվաբանական խոտորուններ են նույն «*հալ/ետ*» նշանակությամբ Տեւ իմ «*Шесть дней творения и Седьмой День*» / «*Los seis dias de la creacion y el Dia septimo*» գրքի «*Загадка сыновей Ноя*»/ *El enigma de los hijos de Noe*» գլխում:

5. Պարզ է, որ «*դար*» ասելով նկատի ունի ամբողջ ժամանակների շրջանը:

6. Ալբիգենսների գաղտնի գիրքի ռուսերեն տարբերակը, որից թարգմանել եմ տրված հատվածը, տես այստեղ. <http://gallardo.narod.ru/arhiv/alby/eres.html>

Հիմնական բանը, որ նրան տարբերում է աստվածաշնչյան պարականոններից, դուալիստական աշխարհայացքն է, որը աստվածաշնչյան փաստերը ներկայացնում է, ինչպես աղավաղված հայելու մեջ: Այն միանգամից կարելի էր բացառվել աստվածային ոգեշնչված գրքերի ցանկից, եթե չլինեին որոշ հետաքրքիր ճշմարտություններ, որոնք նույնպես առկա են դրանում: Եվ այս ճշմարտությունները պետք է հավաքել ամենուրեք, ինչպես թանկարժեք քարերը, նույնիսկ եթե դրանք աղբի կույտի մեջ են:

Իսկ ամուսնության մասին տես իմ ռուսերեն ու իսպաներեն լեզուներով գրված «*Болезни земной Церкви, или Вопреки учению Иисуса Христа*» / «*Las afecciones de la Iglesia terrenal oPese a la enseñanza de Jesucristo*» գրքի «*Таинство брака и святость*

семьи, согласно Слову Божию и Церкви» /«El misterio del matrimonio y la santidad de la familia, según la Palabra de Dios y la Iglesia» գլխում:

7. Այստեղ հայ թարգմանիչները գրել են. «անիծեալ լինի երկիրը քո պատճառովը,» ըստ որին տպավորություն է ստեղծվում, որ Աստվածն է անիծում իր արարչությանը, սակայն բնագրի իմաստը այլ է. ոչ թե Աստվածն է անիծում, այլ Իր խոսքը առհամարիելն է անեծք առաջացնում: Այդ պատճառով ես «լինի» բառի փոխարեն օգտագործել եմ «կղաղնա» բառը:

8. Այստեղից է տոտեմների ծագումը: Բայց դա արդեն ուրիշ թեմա է:

9. Դրա ուշագրավ օրինակ է երկրային սովորույթը (այսինքն «մահվան սովերի երկրի» սովորույթը) երկրի իշխանությունների ծագումը կապել սողունների (այսպես կոչված ռեպտիլոիդների) հետ՝ որպես նրանց «աստվածային» ծագման ապացույց, ինչպես նաև «կապույտ արյան» հասկացողությունը, որի կրողները, իբր թե, պատկանում են գերմարդկային ռասային: Սողունների ազդեցությունը այնքան է մեծացել այսօրվա աշխարհում, որ նրանց պատկերները նույնիսկ երեխաների խաղալիքների մեջ են գերիշխում:

10. Սա գուտ համեմատական հասկացություն է, այլ ոչ թե երկրաբանական:

11. Մինչքրիստոսյան մարդու էությունը հստակ արտահայտված է ջրիեղեղի ժամանակ մահացած բոլոր սողունների (դինոզավրերի եւ այլն) պատկերներում:

12. Տես իմ ռուսերեն և իսպաներեն լեզուներով գրված «Шесть дней творения И Седьмой День»/«Los seis dias de la creación y el Dis Septimo» գրքի «Загадка сыновей Ноя»/ «Enigma de los hijos de Noe» գլխում:

13. Քանանը Աստվածաշնչում ունի նաև այլ անվանումներ, օրինակ, Բաբելոն, որի ծագումը նույնպես Քամից է, և ուրիշներ: Ցավոք, Քանանի մասին ժամանակակից գաղափարը կապ չունի նրա աստվածաշնչյան նշանակության հետ: Տես իմ «Քանան» եռալեզու գործը:

14. Ռուսերեն տեկստը հետևյալն է. «если пшеничное зерно, пав в землю, не умрет, то останется одно; а если умрет, то принесет много плода. Любящий душу свою погубит ее; а ненавидящий душу свою в мире сем сохранит ее в жизнь вечную.» (Ին 12: 24-25). – Այս գիրքը ռուսական Բիրիլայի մաս է կազմել:

Իսկ սա իսպաներեն տեկստն հետևյալն է. “y se hicieron estrechas las entradas de este siglo, dolorosas y trabajosas, y pocas y malas, y llenos de peligros y preñadas de sufrimientos; mas el mundo Mayor (aut. el de Dios) tiene espaciosas y seguras entradas y produce frutos de inmortalidad. Si por lo tanto los que viven no pasan por la entrada de estas cosas estrechas y vanas no podrán recibir las cosas reservadas” (4 Esdras 7: 12-14) – Տես La Sagrada Biblia, según la Vulgata, traducida por el Dr. Felix Torres Amat y revisada y anotada por Mons. Dr. Juan Straubinger. Publicada por los Padres del Verbo Divino.

15. Նույն աղբյուրներից: Ռուսերեն տեկստը հետևյալն է. «Зачем же смущаешься, когда ты пленен, и что мятешься, когда смертен? 16 Зачем не принял ты в сердце твоём того, что будущее, а принял то, что в настоящем?» (3-я Ездры 7, 15-16) Իսկ սա իսպաներեն տեկստն է. “¿Por qué, pues, te turbas ahora, siendo corruptible? ¿Por qué te emocionas siendo mortal? ¿Por qué no admitiste en tu corazón las cosas que vendrán, sino las que ahora suceden?” (4 Esdras 7: 15-16)

6. Ժամանակավոր աշխարհի վերջը

Բայց այս աշխարհն իր մահկանացի մարմնով, ծագած նշյալ միության արդյունքում, նրա համար է ժամանակավոր կոչվում, որ վերջ ունի, որն նկարագրել են համարյա բոլոր մարգարեները, բայց առավել հստակ՝ Հովհաննես առաքյալը: Նրա «Հայտնությունից» մենք իմանում ենք, որ, եթե Քրիստոսի առաջին գալուստը երկիր նշանավորվեց նրանով, որ Սատանան երկնքից դուրս շարժվեց երկիր, իսկ երկնքում հաստատվեց Քրիստոսի թագավորությունը (Հայտն. 12: 9-12), ապա Տիրոջ երկրորդ գալուստը կնշանավորվի նրանով, որ Սատանան արդեն կշարժվի նաև երկրի վրայից: Եվ դա կկատարվի երկու փուլով:

Առաջին փուլը համապատասխանում է արարման վեցերորդ օրվանը, որը կբացահայտի արդար մարդուն: Դա Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան օրն է, երբ, ըստ սաղմոսահարի, Նա կգա « *տիրապետելու իր թշնամիների մեջ*»: (Սաղմոս 110:2) Բայց դրանից առաջ որպես Հակաքրիստոս (Նեո) կհայտնվի մարմնաորված «*վիշապը՝ հին օձը, բանասարկուն ու սատանան*», - որ Ադամի անկման օրից տանջում էր ողջ արարչությունը և, ըստ Քրիստոսի խոսքի, այնպիսի «*մեծ նեղություն*» կբերի, «*որպիսին չի եղել աշխարհի արարչագործութեան սկզբից մինչև այժմ եւ այլևս չի լինի*»:» (Մթ 24: 21) Սակայն նրա իշխանությունը երկար չի տևի, որովհետև հենց իր թագավորության ժամանակ Քրիստոսն երկրորդ անգամ կգա երկրի վրա և կհաստատի Իր իշխանությունը, և, ինչպես հետևանք, ըստ Հովհաննես առաքյալի, այդ Խաբեբան «*հազար տարով կկապվի*» եւ, «*կգցվի դժոխքի անդունդների մեջ, փակված ու կնիք դրված վրան, որպեսզի այլևս երբեք չմոլորեցնի ազգերին, մինչև որ լրանայ հազար տարին: Եւ այնուհետեւ պետք է, որ նա արձակուի մի փոքր ժամանակով*»:» (Հայտնություն 20:1-3)

Սատանայի այդ վնասագերծումից հետո կսկսվի առաջին Դատաստանը սրբությանը անհնազանդ ամբոխների վրա, որի մասին Եսայա մարգարեի բերանով Տերն ասել էր.

«*Եւ ես իրաւունքը՝ չափին հաւասար, եւ արդարութիւնը՝ կշռքին հաւասար պիտի անեմ, եւ կարկուտը պիտի ստութեան պատսպարանը խորտակէ, եւ թաքուստը ջուրերը պիտի ողողեն: Եւ ձեր ուխտը մահի հետ պիտի ջնջուի, եւ դժոխքի հետ արած դաշինքը պիտի չ'հաստատուի, որ երբոր յորդահոս հեղեղն անցնելու լինի, դուք նորանից ոտնահար պիտի լինիք: Քանի անգամ որ անցնէ, ձեզ պիտի տանէ, որովհետեւ ամեն առաւօտ անց է կենալու՝ ցերեկը եւ գիշերը. Եւ մի միայն տոկում է լինելու լուրը առնելը: Որովհետեւ անկողինը կարճ է երկար ձգուելու համար, եւ ծածկոցը նեղ է նորանով ծածկուելու համար: Որովհետեւ ինչպէս Փարասին սարի վերայ՝ վեր է կենալու Տէրը, եւ բարկանալու է, ինչպէս էր Գաբաւոնի ձորումը, որ գործէ իր գործը՝ իր օտարոտի գործը. Եւ կատարէ իր պաշտօնը՝ իր տարօրինակ պաշտօնը*»:¹ <Եսայ 28: 17-21>

Միևնույն ժամանակ, տեղի կունենա առաջին հարությունը , որ միայն արդարների հարությունը կլինի, - նրանց, ովքեր սպանվել էին Հիսուսի վկայության համար, և այժմ իր հետ միասին կկառավարեն աշխարհը:

*«Տեսայ նաեւ գահեր. նստեցին դրանց վրայ. – կարդում ենք «Հայտնությունում», - եւ նրանց իշխանութիւն տրուեց դատելու եւ ընտրելու այն հոգիներին,² որոնք Յիսուսին եւ Աստծու խօսքին իրենց տուած վկայութեան համար չարչարուել էին. նաեւ նրանց հոգիներին, որոնք չերկրպագեցին գազանին եւ չստացան նրա դրոշմը իրենց ճակատների, ոչ էլ իրենց աջ ձեռքի վրայ. եւ նրանք նորից կենք ստացան ու թագաւորեցին Քրիստոսի հետ հազար տարի: Եւ սրանից յետոյ մեռելներից ոչ ոք չկենդանացաւ, մինչեւ կը լրանար հազար տարին: Այս է մեռելների առաջին յարութիւնը: Երանի՛ այն սրբերին, որոնք բաժին ունեն առաջին յարութեան մեջ: **Սրանց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի.** նրանք պիտի լինեն քահանաներ Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի ու նրա հետ պիտի թագաւորեն հազար տարի:» (Հայտն 20: 4-6)*

Ուրեմն, չնայած նրան, որ այս հարություն առած արդարները, ինչպես երեւում է այս խոսքերից, այլեւս մահ չեն տեսնի, վերջինը սակայն դեռ կպահպանվի մնացած մարդկության համար, քանի որ մահի անհետացումը կապված է հենց Սատանայի մահվան հետ, որը տեղի կունենա երկրի վրա Քրիստոսի հազարամյա թագավորությունից հետո:

Բայց այնուամենայնիվ աշխարհում մինչ այդ շատ բան կփոխվի եւ նա կնմանվի դրախտի: Ըստ մարգարեների, մարդիկ, կենդանիները, թռչունները, սողունները եւ ձկները մեծ թեթեւութեամբ շունչ կքաշեն, քանի որ երկրի վրա արդարութիւն կհաստատուի, եւ արդարների կողմից կառավարված երկրի վրա բոլոր արարածների օրերը, - լինի դա մարդ թե այլ կենդանի արարած, - կդառնան ապահով ու լի սիրով ու երջանկությամբ: Երկրի վրայից կանհայտանան հիվանդություններն ու ծերությունը Եվ ամեն արարած հավերժական աշխարհի հեռանալուց առաջ երկրի վրա երկար և երջանիկ կյանք կունենա:

Նկարագրելով այս արդար իշխաններին՝ Տերը Եսայիա մարգարեի բերանով ասում է, որ նրանք *«արդարութեամբ կգօտեւորեն իրենց մեջքը եւ ճշմարտութեամբ կկապեն իրենց կողերը:»* (Եսայ 11: 5), իսկ Ովսե մարգարեի բերանով հայտնում է այն մեծածավալ փոփոխությունների մասին, որոնք տեղի կունենան արարչության մեջ.

«Այն օրը ուխտ կը կնքեմ նրանց հետ՝ անապատի գազաններով, երկնքի թռչուններով եւ երկրի սողուններով հանդերձ. եւ աղեղը, սուրն ու ճակատամարտը կը վերացնեմ երկրից եւ կը բնակեցնեմ քեզ յոյսով: Քեզ կը նշանեմ ինձ յաւիտեան, քեզ կը նշանեմ ինձ արդարութեամբ եւ իրաւունքով,ողորմութեամբ եւ գթութեամբ: Քեզ կը նշանեմ ինձ հաւատով,եւ դու կը ճանաչես Տիրոջը: Այն օրը, - ասում է Տէրը, - ես կունկնդրեմ երկնքին, երկինքը կունկնդրի երկրին» (Օս 2: 19-22)

Փաստորեն, այստեղ Նա խոսում է Սեմի և Հաբեթի, կամ մարդու և Աստծո կանխաորոշված ամուսնության իրականացման մասին, որը նշանակում է միաժամանակ *երկրի* (Եվայի) եւ *երկնքի* (Ադամի) ամուսնությունը, որոնք միմյանց *«կունկնդրեն»*, վերջ տալով երկրի վրա կատարվող կենդանի հոգիների սպանություններին եւ այսպիսով բոլորի համար ապահով աշխարհ կհաստատվի: Այս միության կամ ամուսնության արդյունքում, կոպիտ ասած, կփոխվի այն «օդը», որով շնչում են բոլոր կենդանի հոգիները՝ թե՛ մարդիկ, թե՛ այլ կենդանիները, թե՛ թռչունները, թե՛ սողուններն ու ձկները: Այնպես, որ, եթե առաջ ամեն կենդանի հոգի «շնչում» էր օդի մեջ իշխող մարդասպանի անմաքուր ու մահաբեր ոգով, հիմա կսկսի «շնչել» արդեն օդում հաստատված սիրո եւ կեանքի Սուրբ Ոգով/Շնչով եւ բոլոր կենդանի հոգիները կլցվեն սրբութեամբ, որովհետեւ Սուրբ Ոգին/Շունչն *«մշուշի նման կծածկի երկիրը»* (Սիրաք 24: 3), և *«օրհնությունը կհորդի գետի նման եւ հեղեղի նման կջրի ցամաքը»* (Սիրաք 39:28) Դա կլինի այն *«վաղ եւ ուշացած անձրեւը»*, որի մասին խոսում էր Օսե մարգարեն (Օս 6: 3) եւ որը *լցնելու է երկիրը «Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպես ծովերը ծածկող բազում ջրերն են»* (Ամբ. 2:14) Այդ ժամանակ, ըստ սաղմոսահարի, *«Ողորմությունն ու ճշմարտությունը պիտի հանդիպեն, արդարությունն ու խաղաղությունը պիտի համբուրուեն: Ճշմարտությունը երկրից կբուսա, արդարությունը երկնքից կերեսա: Տէրը բարութիւն պիտի գործի, իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի տայ: Արդարությունը նրա առջեւից պիտի գնայ, ճանապարհ տալով նրա քնթացքին»* (Սաղմ 84: 11-14), որովհետեւ այսպիսին կլինի վերականգնված Ադամի աշխարհը, որում Եվան կվերամիավորվի նրա հետ, իսկ երկիրը՝ երկնքի հետ, լցվելով անթիվ օրհնություններով: Դա կլինի այն ժամանակը, որի մասին Դավիթ սաղմոսահարը ասել է. *«Տէրը թագաւորեց՝ երկիրը կցնծա, կուրախանան բազում կղզիները»* (Սաղմոս 96.1), այսինքն՝ կցնծան մարդն ու բոլոր նրանով ապրողները. կենդանիները, թռչունները, սողուններն եւ ձկները, ինչպես նաեւ ողջ բուսական եւ նույնիսկ հանքային աշխարհը, որին հիշատակել է Հոբբ իր մարգարեության մեջ, ասելով ապագայի մարդուն.

«դաշտի քարերի հետ եւ դաշինք կնքելու, վայրի գազանների հետ խաղաղութեան մեջ եւ լինելու: Ապա իմանալու եւ, որ խաղաղութիւն կայ քո տան մեջ, եւ քո յարկի տակ բան չի պակասելու: Իմանալու եւ, որ բազում են քո սերունդները, եւ քո որդիները դաշտի խոտի պէս են լինելու: Գերեզման եւ իջնելու ժամանակին հնձուած հասուն ցորենի պէս, կամ ինչպէս ժամանակին մէկտեղուած կալի շեղջը» (Յոբ 5: 23-26)

Սա նշանակում է, որ ո՛չ տառապանքը, ո՛չ արցունքներն այլեւս չեն դիպչի արարածին, որը, թե՛ն դեռնս մահկանացու, երկար և երջանիկ տարիներ կապրի երկրի վրա:

«Այնտեղ չի լինելու մանկահասակ եւ կամ ծեր, - ավելացնում է մարգարե Եսայան այդ ժամանակների մասին, - որ լռացրած չլինի իր կեանքի ժամանակը, քանզի հարիւր տարեկանը երիտասարդ կմեռնի, ³ իսկ հարիւր

տարեկան մեղաւորը կանհիծվի» (Եսայ 65: 20), ⁴ քանի որ Տերն եւ հարություն առած արդարները հեթանոս ամբոխներին «հովվելու եւ երկաթէ գաւազանով ու նրանց պիտի փշրի ինչպէս բրուտի անօթ» (Հայտն. 2:27), ուստի նրանք այլեւս չեն կարողանա ումնիցե վնասել:

Ըստ այդմ, կփոխվի նաև կենդանիների կյանքը: Դրա մասին, բացի արդեն հիշատակված Օսեան և Յոբը, բազմաթիվ այլ հաղորդագրություններ կան մեզ հասած: Օրինակ, ահա, թե ինչ է ասում դրա մասին նույն Եսայա մարգարեն.

«Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառիծը ուլի հետ պիտի մակաղի, հորթը, ցուլն ու առիծը միասին պիտի սնունեն, եւ մատաղատի մանուկը պիտի հովուի նրանց: Եզն ու արջը միասին պիտի ուտեն, նրանց ձագերը խառը պիտի շրջեն, եւ առիծը, ինչպէս եզը, յարդ պիտի ուտի: Մատաղատի մանուկն իր ձեռքը պիտի մտցնի իժերի բունը եւ իժերի ձագերի բունը, ու նրանք ոչ ոքի չպիտի վնասեն եւ խայթեն իմ սուրբ լեռան վրայ, քանզի ամբողջ երկիրը լցուելու է Տիրոջ գիտութեամբ, առատ ջրերի նման, որ ծածկում են ծովերը:» (Եսայ 11: 6-9)

Սա նշանակում է, որ Ադամը կգիտակցի բոլոր արարածների վրա իր իշխանության իմաստը և ինչպէս նրանք նախկինում արտացոլեցին նրա հոգու այլասերվածությունը, այդպէս էլ կարտացոլեն նրա հոգու սրբությունը:

Փաստորեն, նույնը կարդում ենք Սիբիլայի օրակույներում, որտեղ ասվում է.

«Գայլերն ու գառները լեռներում միասին խոտ կուտեն, ընձառիծները այծերի հետ միասին կարածեն, արջերը կապաստանեն արոտավայրի մէջ ապրող ցուլերի հետ, իսկ գիշատիչ առյուծը կովի հետ միասին մսուրի մէջ խոտ կուտի, եւ երեխաները, նոյնիսկ ամենափոքրերը, կառաջնորդեն նրանց որովհետեւ Տերը կսասանի երկրի վրա գտնվող գազաններին: Օձերն, նույնիսկ ամենաթունավորները, կքնեն արարածների կողքին եւ չեն վնասի նրանց, որովհետեւ Աստծու ձեռքը նրանց վրա կլինի»: («*Oraculos sibilinos*» - Libro III p. 312) ⁵

Մարգարեների կողմից նկարագրված արարածի ապահով կյանքը, փաստորեն, վկայում է նաև նրա մասին, որ Քրիստոսի իշխանության ժամանակ մարդը կդադարի միս ուտել, եւ, համապատասխանաբար, կդադարեն ուտել այն նաև կենդանիները: Աստծո Խոսքին հնազանդվելով՝ նրանք բոլորը կսնվեն միայն բուսական կերակուրով, ինչը կապահովի բոլորի անվտանգությունը:

Այսպէս. վերականգնված Ադամը կանդորրացնի իր մեջ բոլոր արարածներին եւ նրանք, ինչպէս հայելու մեջ, կարտացոլեն իր հոգեւոր պատկերը, որի արդյունքում աշխարհում ամեն ոք սիրով կլցվի մյուսների հանդեպ, իսկ հանցագործ սերունդը կզրկվի վնաս հասցնելու կարողությունից:

Եվ ինչպէս երկիրն արարչագործության հինգ օրերի ընթացքում ապրեց անմաքուր ոգու գործության ներքո՝ թշնամության եւ սպանությունների մեջ, այնպէս էլ սիրով եւ խաղաղությամբ կապրի «1000» տարի ⁶ Սուրբ Ոգու/Շնչի իշխանության ներքո: Ինչպէս հետևանք, այս երկու ոգիների թագաւորությունների, ինչպէս նաեւ նրանցից ծագած սերմերի միջեւ եղած տարբերութիւնը հստակորէն կերևա և նրանք կբաժանվեն, ըստ իրենց չարի կամ

բարի արմատի, քանի որ ո՛չ չարի սերմը կարող է վերածվել բարի սերմի, ո՛չ էլ բարի սերմը՝ չար սերմի:

Այս աշխարհի վերջի երկրորդ, եզրափակիչ փուլը կսկսվի Քրիստոսի հազարամյա թագավորության ավարտից հետո, քանզի, ըստ Պողոս առաքյալի, *նա պետք է թագաւորի, մինչեւ որ բոլոր թշնամիներին դնի իր ոտքերի տակ: Վերջին թշնամին, որ պիտի կործանուի, մահն է. եւ Աստուած «ամէն ինչ հնազանդեցրեց՝ դնելով նրա ոտքերի տակ»:* (1 կոր 15: 22-23)

Դա տեղի կունենա այն բանից հետո, երբ մահը ծնած Սատանան մի փոքր ժամանակով ազատ կարձակվի իր կապանքներից և նորից կփորձի դուրս գալ Աստծո դէմ, սակայն անմիջապէս *«կգցվի կրակի եւ ծծմբի ծովի մէջ, ուր գտնուում էին զազանք եւ սուտ մարգարէն. եւ նրանք կչարչարունեն օր ու գիշեր»:* (Հայտն 20: 7-10) Եվ դա նրա վերջը կլինի, այսինքն՝ մահվան և նրան ենթակա աշխարհի վերջը, ինչի մասին մեզ հաղորդություն են թողել գրեթէ բոլոր մարգարէները: Օրինակ Եսայա մարգարէն ասում էր, որ Տէրը *«բնաջինջ է անելու այս սարի վերայ երեսի ծածկոցը, որ ծածկում է բոլոր ժողովուրդներին, եւ այն վարագոյրը որ վարագործուած է բոլոր ազգերի վերայ: Նա պիտի կլանէ մահին յաւիտեան, եւ Եհովայ Տէրը պիտի ջնջէ արտասուքը ամեն երեսից, եւ իր ազգի ամօթը պիտի հեռացնէ բոլոր երկրի վերայից, որովհետեւ Տէրն է ասում»:* (Արարատ թ-ն. Ես 25: 7-8)

Պարզ է, որ սա վերաբերում է *երկրի/մարդու* վրա սփռված մահվան *«վարագոյրի»*, կամ նրան ծածկող *«կաշվե զգեստների»* բնաջնջմանը:

Մահվան մահը արձանագրել էր նաեւ Օսե մարգարէն, ում բերանով Աստվածն ասել էր. *«Ես դժոխքից կազատեմ նրանց եւ մահից կը փրկեմ նրանց: Որտե՞ղ է քո յաղթանակը, մահ, որտե՞ղ է քո խայթոցը, դժոխք»:* (Օս 13: 14)

Նույնը կրկնեց նաև առաքյալ Պողոսը, նշելով, որ դա տեղի կունենա, *«երբոր այս ապականացուն անապականութիւնը կ'հազնէ, եւ այս մահկանացուն անմահութիւնը, այն ժամանակ կ'լինի այն խօսքը որ գրուած է թէ Մահն ընկղմուեցաւ յաղթութեան մէջ: Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը. գերեզման, ո՞ւր է քո յաղթութիւնը»:* (Արարատ թ-ն 1 Կոր 15: 54-55)

Այս բոլորը տեղի կունենա Վերջին Դատաստանի ժամին, երբ կկայանա նաև երկրորդ հարությունը, որը կվերաբերի արդեն Ադամի անկումից հետո բոլոր մահացածներին, որոնցից մի մասը հարություն կառնի հավիտենական կյանքի համար, իսկ մյուսը՝ հավերժ տանջանքի:

Այսպիսով Հիսուս Քրիստոսը կավարտի Իր բոլոր գործերը երկնքում եւ *երկրի/հոգու* վրա, որը արդեն լիովին *«մշակված»* կլինի :

«Եւ ապա գալու է վերջը, - ասում է առաքյալը (և մարգարէները), - երբ որ նա կտայ թագաւորութիւնը Աստծու եւ Հօր ձեռքը, երբ որ կործանած կլինի բոլոր իշխանութիւնները եւ ամէն պետութիւն եւ զօրութիւն.» (1 կոր 15: 24) *«Բայց երբ ասում է, թէ՝ ամէն ինչ նրան հնազանդուել է, յայտնի է, թէ բացի նրանից, ով ամէն ինչ հնազանդեցրեց նրան: Իսկ երբ ամէն ինչ նրան հնազանդ լինի, այն ժամանակ*

եւ ինքը՝ Որդին կը հնազանդուի նրան, ով ամէն ինչ հնազանդեցրեց նրան, որպէսզի Աստուած ամէն ինչ լինի ամենքի մէջ» (1 կոր 15: 27-28)

Այսպէս ճշմարտության լիակատար յաղթանակով կաւարտվի Աստուծո, այսինքն՝ «Ճշմարտութեան ճարտարապետի» արարչության վեցերորդ օրը և կսկսվի վերջ չունեցող արարչության Յոթերորդ Օրը, քանզի մարդը, վերջապէս, կդրսևորվի որպէս Այր, այսինքն՝ Աստուծո պատկեր և նմանութիւն, կամ որպէս Աստուած, ապրեցնելով Իր մէջ ամբողջ արարչությունը:

Անցած աշխարհի վերջը կարճանագրվի նաև «մահուան վարագույրի» տակ եղած իր երկնքի ու երկրի վերջով, որոնք «կփախչեն» գահին նստածի երեսից, քանզի «այնտեղ նրանց համար տեղ չի գտնվի») (Հայտն. 20:1), եւ նրանք կփոխարինվեն «նոր երկնքով (Սուրբ Ոգով/Շնչով) եւ նոր երկրով (Սուրբ Հոգով՝ դրսևորված Աստծով), քանզի առաջին երկինքն ու երկիրը անցած կլինեն» (Հայտն. 21:1; տես նաեւ Եսայիա 65.17 եւ այս գլխի համառ ... նշումը) Այս նոր աշխարհում «մահն այլեւս չի լինի» (Հայտն. 21:4), ոչ էլ «գիշեր» (Հայտն. 22:5), քանի որ նա կլուսավորվի արարչության Հորից բխող հավետ չմարող ճառագայթներով :

Իսկ դա նշանակում է, որ ինչպէս երկիրն ու երկինքը, այնպէս և ամեն ոք կունենա նոր, չքայքայվող հոգեւոր մարմին, որի մասին կխոսենք հաջորդ գլխում:

1.Վատ թարգմանություն: Ոչ թե «տարօրինակ» պիսաշտոնը, այլ, օրինակ, «սքանչելի»:

2.Այստեղ «հոգիներին» ճիշտ է թարգմանված, ինչը մեկ ամգամ ևս ի ցույց է բերում համ նաև Աստծուն «հոգի» անվանելու սխալը, համ էլ այդ հարցում շփոթության վարկածը:

3. Այստեղ եւ ճշտել եմ թարգմանությունը, ըստ բնագրի տրամաբանության

4. Ճիշտ է, այստեղ մարգարեն (կամ ավելի շուտ դպիրները, ովքեր հաճախ իրենց մեկնաբանությունները մտցնում են սուրբ տեկստի մէջ, կամ թարգմանչիների սխալ թարգմանության հետևանքում) շփոթում է Քրիստոսի Հազարամյա Թագավորությունը (երբ մահը դեռ գոյություն կունենա) Նոր Երկնքի եւ Նոր Երկրի հետ, որտեղ նա այլեւս չի լինելու: (Հայտնություն 21:4)

5.Տես. “Oraculos sibilinos”, Libro III p. 312 - Apocrifos del AT por A.Diez Macho, Tomo III. - “Los lobos y los corderos en los montes juntos comerán el pasto, los leopardos se alimentarán junto con los cabritos, los osos se albergarán con los terneros que viven de los pastos y el carnívoro león comerá paja en el pesebre como la vaca, y los niños, aun los más pequeños, los llevarán atados, pues hará inocuas a las fieras sobre la tierra. Las serpientes, junto con los áspides, dormirán con las criaturas y no les harán daño, pues la mano de Dios estará sobre ellas”.

6. Մենք չգիտենք, թե իրականում որքան են նշանակում այս «1000» տարիները, քանի որ աստվածային ժամանակագրությունը, ինչպէս երեւում է տեքստերից, չի

համընկնում մարդկային ժամանակագրության հետ: (Տե՛ս իմ «*Шесть дней творения и Седьмой день*»/ “*Los seis días de la creacion y el día séptimo*” երկլեզու գրքի համապատասխան գլուխը): Սակայն կարելի է վստահությամբ ասել, որ Քրիստոսի Հազարամյա իշխանությունը տեւելու է մեկ աստվածաշնչյան օր, այսինքն՝ վեցերորդը, քանի որ Յոթերորդ օրն արդեն նշանավորում է արարչագործության ավարտը եւ նրա մեջ հավերժության հաստատումը: Կարելի է ենթադրել, որ իր տեւողությամբ այն կհամապատասխանի արարչության բոլոր օրերի տեւողության մեկ վեցերորդ մասին:

7. Շնչավոր (Ոգու) մարմինը որպես հարության կամ Յոթերորդ օրվա մարմին:

Ինչպես արդեն նշվեց, «*Նոր Երկինքը եւ Նոր Երկիրը*» վերաբերում են հավերժությանը և ուղղակիորեն կապված են ապականությունից ազատված և «*նորոգված գիտությանը, ըստ իր Արարչի պատկերի*» (Կող. 3:10) հոգու նոր շնչավոր մարմնի հետ, որ կդրսևորվի Երկնային Հոր կատարյալ պատկեր ու նմանություն ստացած Այրով, այսինքն՝ կներկայացնի իրենից Սուրբ **Աստվածաշունչը Սրբացած Հոգու մեջ**, ինչպես մարգարեացել էր Նոյը, օրհնելով Հաբեթի (հավետի) հետ Սեմի միությունը: ¹ Այս նոր մարմինը նրան կհագցվի որպես «*սպիտակ հագուստ*» (Հայտն. 3:5; եւ այլն), որը Եսայիա մարգարեն անվանում է «*արդարության պատմունճան*» ² կամ «*փրկության զգեստ*» (Եսայիա 61:10) և որի մեջ, վերջապես ի հայտ կգա **Աստծո ողջ փառքը**, այսինքն՝ մարդը՝ կդառնա Այր եւ այլևս ոչ մի տնորինության կարիք չի ունենա, որովհետեւ Այրը՝ դրսևորված Աստված է, այսինքն՝ «**Աստված ամեն ինչ կլինի ամենի մեջ**» (1 Կոր 15 : 28): Իսկ դա նշանակում է, որ այն ամենը, ինչ Այրը պարունակում է իր մեջ, կմիախառնվի Աստծուն՝ որպես Նրա մաս:

Այսպիսով ի հակառակ շատ աստվածաբանների համոզվածության, ինչի մասին խոսել եմ վերելում, հոգու հարության մարմինը, շատ կտարբերվի մահկանացու մարդու մարմնից: Բայց, ըստ Պողոս առաքյալի, «*ինչպես որ կրեցինք հողեղենի պատկերը* (հեղ. «*կաշվե զգեստների*» միջոցով), *այնպես էլ կկրենք երկնաորի պատկերը*» (հեղ. «*անապականելի սպիտակ զգեստների*» միջոցով): (Ա Կորնթացիս 15:49)

Ուրեմն որո՞նք են այդ տարբերությունները:

Առաջին տարբերությունը կլինի մահ եւ արյան բացակայությունը մարմնում, քանզի, ինչպես բազմիցս կրկնել եմ, Պողոս առաքյալի վկայությամբ, «*միս (σὰρξ)* ³ *եւ արյուն չեն կարող ժառանգել Աստծո Թագավորությունը, և ոչ էլ ապականությունը անապականություն է ժառանգում*» (1 Կոր 15:50), որովհետև «*մեռելները հարություն են առնում առանց ապականության*» (1 Կորնթացիս 15:52-53), այսինքն՝ առանց որևիցե ժամանակավոր, փթթող տարրի: . Սակայն անապականությունն ու շնչավորությունը չեն նշանակում մարմնի բացակայություն, քանզի, ինչպես արդեն նշել եմ, հոգին՝ դա մի նրբագույն մարմնի տեսակ է եւ որպես այդպիսին շոշափելի է: Մենք տեսնում ենք դա, երբ Հիսուսը, ով հայտնվեց առաքյալներին Իր հարությունից հետո, - ամենայն հավականությամբ որպես *մերկ հոգի*, - սկզբում նրանց կողմից չճանաչվեց, քանի որ նրանք Նրան շունչի տեղ դրեցին, ինչի համար և Հիսուսը արձագանքեց. . «*տեսէ՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետեւ նոյն ինքն ես եմ. շոշափեցէ՛ք ինձ եւ տեսէ՛ք, որովհետեւ ոգին* ⁴ *մարմին (σὰρξ) եւ ոսկորներ չունի. ինչպես տեսնում էք, ես ունեմ*» (Դուկ 24: 39-40)

Այս փաստը վկայում է նաև նրա մասին, որ բացի հոգու շոշափելությունից, այն պահպանում է նաև մահկանացու «կաշվե զգեստներին» հասցված բոլոր վերքերը: Դրա մասին վկայում է նաև Հիսուսի հետևյալ ակնարկը. «քեզ համար լաւ է, որ քո անդամներից մէկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհէն» (Մատթեոս 5.29)

Սակայն հնարավոր է, որ դրանք էլ կվերանան, երբ մարդիք «իրենց զգեստները կլվան ու կսպիտակեցնեն Գառնան արյունով» (Հայտնություն 7.15), քանզի Տերն խոստանում է այդպիսիներին Եսայա մարգարեի բերանով. «եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են, ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն, կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ» (Եսայ 1: 18) և շարունակելով՝ Պողոս առաքյալի միջոցով ավելացնում է. «նորանց անօրէնութիւնները ներող կ'լինիմ, եւ նորանց մեղքերը եւ նորանց անօրէնութիւններն այլ եւս չեմ յիշիլ» (Արարատ Թ-ն. Եբրայ 8: 12 և 10: 17)

Վերադառնալով այժմ Հիսուս Քրիստոսի հարություն առած «կենդանի հոգուն»՝ նկատենք, որ մահկանացու մարդը կարող է զգալ կամ շոշափել այն միայն Աստծո կամքով, ճիշտ այնպես, ինչպես Իր կամքով Քրիստոսը կերպարանափոխվեց լեռան վրա Իր աշակերտների առջեւ, եւ նրանք տեսան այն, ինչ չէին կարող տեսնել իրենց մահկանացու աչքերով: (Մաթ. 17:2)

Հոգու շնչավոր մարմնի երկրորդ տարբերությունն այն է, որ նա որովայն չի ունենա, հետեւաբար նաև նյութական սննդի կարիք:

«Ուտելիքը որովայնի եւ որովայնը ուտելիքի համար է, - ասում է Պողոս առաքյալը: - Բայց Աստուած է՛ւ այս, է՛ւ այն պիտի կործանի. սակայն մարմինը ոչ թէ պոռնկութեան, այլ Տիրոջ համար է, եւ Տէրը՝ մարմնի համար» (1 Կոր 6:13)

Անուղղակիորեն դա մատնանշում է նաև մի հաղորդակցություն, համարյա կորած հակառակ հայտարարությունների մեջ, որ Հիսուսը նույնիսկ իր մահից առաջ ակնարկեց Իր աշակերտներին, երբ նրանք ուտելիք առաջարկեցին Նրան,. «Ես ունեմ ուտելու կերակուր,- ասաց Նա, - որ դուք չգիտէք: Իմ կերակուրն այն է, որ կամքը կատարեմ նրա՛, ով ինձ ուղարկել է, եւ կատարեմ նրա գործը» (Հովհաննես 4:32-34)

Մինչ այստեղ ներկայացված վկայությունները տրամաբանության սահմանում են գտնվում: Սակայն արի ու տես, որ, ըստ Ղուկասի Ավետարանի, ստացվում է, որ նույնիսկ հարություն առած Հիսուսը, իբր թե, ֆիզիկական ուտելիքի կարիք է ունեցել, քանի որ ասել էր Իր առաքյալներին.

«Այստեղ ուտելու բան ունե՞ք»: Եւ նրանք տուին նրան խորոված ձկան մի կտոր եւ մեղրախորիսի: Եւ նա առաւ կերաւ նրանց առաջ, իսկ մնացածները տուեց նրանց»: (Ղուկաս 24:42-44)

Ինչպես տեսնում ենք, այս հայտարարությունը հակասում է, ինչպես այստեղ ներկայացված Սուրբ Գրքի տրամաբանությանը, այնպես էլ Պողոս առաքյալի խոսքերին, քանզի հակառակ նրա ասածին, որ հարություն առած հոգին որովայն չունի, այստեղից դուրս է գալիս, որ ունի, չնայած նրան, որ որովայնը

անհրաժեշտ է միայն մահացու մարմնի կյանքը պահպանելու համար: Այսինքն՝ ստացվում է, որ հարություն առած Հիսուսի մարմինը ոչ մի փոփոխություն չի ունեցել:

Ինչպե՞ս բացատրել նման հակասությունը: Իհարկե, այն փաստով, որ Ղուկասի Ավետարանում սողոսկված է մի կեղծ հայտարարություն, որը իրականում իրենից ներկայացնում է Սուրբ տեքստի մեջ մտցրած մարդուն պատկանող մի մեկնություն, որը վկայում է վերջինի նյութահպատակ բանականության մասին: Այդպիսի մարդու համար Աստծո Խոսքի հոգեւոր էությունը պարզապես անհասկանալի է, քանի որ նա մտածում է ըմբռնում է ամեն ինչ այնպես, ինչպես տեսնում է, այսինքն՝ բառի բուն իմաստով, ինչպես, օրինակ, նա բառացիորեն է հասկացել է մինչեւ օրս էլ այդպես է հասկանում Աբելի կամ Աբրահամի «հոտերի» գաղափարը, մինչդեռ այդ հոտերը վերաբերում են իրենց հոգեւոր հոտին, որ սնվում էր իր հովվի խոսքով: Մարդու կողմից Սուրբ Գրքի բառացիորեն հասկանալու տարածվածության պատճառով է, որ Հիսուսը, խոսելով հոգեւոր հասկացությունների մասին, միշտ նախաբանում կամ ավարտում է Իր խոսքը հետևյալ տիպի արտահայտությաններով. «Ով կարող է տանել, թող տանի», կամ «Ով ակննջ ունի լսելու, թող լսի», քանի որ տարածված բառացի-պատմական հասկացողության ետևում ընկած է կանխամտածված սուտը, որը ներշնչվում է մարդուն օդում գործող այս աշխարհի Իշխանի անմաքուր ոգու կողմից, ով ձգտում է մոլորեցնել ու կործանել մարդ արարածին:

Ինչպես գրել եմ այս գրքի սկզբում, **Արարչի խոսքը անփոփոխ է, սուրբ, եւ հպատակված վերին տրամաբանությանը:** Այս երեք կետերից թեկուզ մեկի բացակայությունն արդեն վկայում է սուրբ տեքստի աղավաղման մասին, որը, ինչպես ասացի, պարտավոր է մարդկային միջամտությանը նրա մեջ: Այսպիսով, Աստծո Խոսքի տրամաբանությունը, Հիսուս Քրիստոսի կյանքն ու մահը այսինքն՝ Սուրբ Գրքի ողջ ուսմունքը վկայում են, որ վավերականը՝ Պողոս առաքյալի խոսքն է, քանզի ֆիզիկական սնունդը, որը, մարսվելով, դուրս է նետվում մարմնից, սնուցում է ապահովում է միայն ժամանակավոր մարմնի կյանքը: Իսկ շնչավոր սնունդը, դեն չի նետվում, այլ անընդհատ և հավերժապես լայնացնելով հարստացնում է Այր-Աստծո կատարելության անթիվ երանգներ ունեցող կալեյդոսկոպը:

Բայց ո՞րն է այդ մարմնի անապականելի կերակուրը:

Հովհաննես առաքյալի «Հայտնության» մեջ այսպիսի տողեր կան.

«Հրեշտակն ինձ ցոյց տուեց նաեւ սատնորակ կենդանի ջրի մաքուր մի գետ, որ բխում էր Աստծու եւ Գառնի գահից ու գնում էր քաղաքի հրապարակների միջով: Գետի եզերքին, մէկ եւ միւս կողմում, կար կենաց ծառ, որ տալիս էր տասներկու անգամ պտուղ. ամէն ամիս՝ իր պտուղը. եւ ծառի տերերը ազգերի բուժման համար էր:» (Հայտն 22: 1-2)

Դատելով այս վկայութիւնից, Այրը «կիսմի» *Աստծո եւ Գառնու գահից բխող մաքուր գետի սատնորակ կենդանի ջուրը*, իսկ կսնուցվի Կենաց ծառի պտուղներով, այսինքն՝ սրբության պտուղներով, քանզի Կենաց Ծառը Սուրբ

Աստծուն է խորհրդանշում , ինչի մասին Աստծո Սուրբ Ոգին/Շունչը ուղղակիորեն էլ է ասում Առաքյալի բերանով. «Ով ականջ ունի լսելու, թող լսի, ինչ որ Ոգին/Շունչը⁵ ասում է եկեղեցիներին. ով յաղթի, ես նրան թոյլ կը տամ ուտելու կեանքի ծառից, որ գտնուիմ է Աստծու դրախտի մեջ»։ (Հայտ2: 7)

Հարկ է նշել, որ թե՛ այստեղ, թե՛ ստորեւ ներկայացված մեջբերման մեջ, խոսելով ծառավը հագեցնելու մասին, Սուրբ տեկստը կրկին Ոգուն է վերաբերում խոսքը: «Ոգին⁶ եւ Փեսան⁷ (են ասում), որ գալու են»։ Եւ ով լսում է, թող ասի՝ ե՛կ: Եւ թող գայ, ով ծառաւ է. նաեւ՝ ով ուզում է առնել կենաց ջուրը՝ ձրի»։ (Հայտ 22: 17)

Իսկ դա նշանակում է, որ ասվածը չի կարելի բառացիորեն հասկանալ, որովհետեւ Ոգու խոսքն միշտ այլաբանական է: Ուստի նշված ջուրը այն «ջուրն» է, որ Հիսուս Քրիստոսը նկատի ունի, երբ սամարացի կնոջ հետ խոսելիս, հակադրում է այն երկրային ջրին, ասելով.

«Ով որ այս ջրից խմի, նորից կը ծառաւի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, յաւիտեան չպիտի ծառաւի: Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բիտոյ ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար»։ (Հովհ 4> 13-14)

Այս ամենը, փաստորեն, մատնացույց է անում նաեւ մարդու նոր, շնչավոր մարմնի կազմությանը, որը հիմնված է «ջրի» (արարչության սկզբնաղբյուրի) վրա՝ որպէս մարմին, եւ «Ոգու/Շնչի» վրա, որպէս՝ Աստծո Ոգու/Շնչի, քանզի մեկ այլ տեղում Հիսուսը նշում է.

«Ճշմարիտ, Ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Ոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել. որովհետեւ մարմնից ծնուածը մարմին է, իսկ Ոգուց ծնուածը՝ Ոգի: Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պէտք է ձեզ վերստին ծնուել» (Հովհ 3: 5-7)⁸

Ասվածի իմաստը վերաբերում է ինչպէս Աստծո Խոսքից ու Ոգուց/Շնչից ծնված մարմնին, այնպէս էլ «երկրին» հաւելու պէս արտացոլող Երկինքը՝ ի կատարումն աղոթքի՝ «որպէս յերկինս եւ յերկրի»:, կամ եղիցի հավետ ամենայն կամքն Աստծո Սուրբ Ոգու:

Ուստի պարզ է դառնում, որ անապականելի Այրի Կյանքի կերակուրը հենց Աստծո Խոսքն ու Ոգին է, ինչը ընդգծում են նաև, որպէս Քրիստոսի վերոհիշյալ խոսքերը. «Իմ կերակուրն այն է, որ կամքը (այսինքն՝ խոսքը) կատարեմ նրա՝ ով ինձ ուղարկել է, եւ կատարեմ նրա գործը» (այսինքն՝ ավարտի հասցնեմ արարչությունը մարդուն Աստված դարձնելով) (Հովհաննէս 4: 34), այնպէս էլ Քրիստոսի պատասխանն այն կնոջը, որ Իրեն տեսնելով, բացականչեց. «Երանի այն որովայնին՝ որ քեզ կրեց, եւ այն ծծերին՝ որ քեզ ծծեցրին»:, և որին Նա առձագանքեց. «Երանի նորանց, որ Աստուծոյ խօսքը լսում են եւ նորան պահում»։ (Արարատ թ-ն. Դուկ 11: 25-26) Այս երկխոսությունը կնոջ որովայնի եւ Աստծո Խոսքի մեջ սեմանտիկ համապատասխանություն հաստատեց, ինչից կարելի է եզրակացնել, որ Խոսքը կփոխարինի եւ՝ որովայնին, եւ՝ սննդին,

այնպես որ **շնչավոր մարմինը կհագեցվի** Աստվածային ճշմարտության հոգեւոր հաճույքներով, որոնց համար որովայնը պետք չէ, ճիշտ այնպես, ինչպես նա պետք չէ Աստծո Խոսքով սնվողի համար, որ «*թաքցուած մանանան*» է տրվող այս աշխարհը հաղթողին: (Հայտ 2: 17) Մա է նաև Հաղորդության իրական նշանակությունը: Երբ Քրիստոսն Իր մարմինն ու արյունը որպես կերակուր է մատուցում, Նա նկատի ունի Իր, ինչպես Աստծո Խոսքն ու Ոգին/Շունչը: Դրանք այն են, ինչը «ուտում» էին, օրինակ, Դավիթ թագավորն ու Երեմիա մարգարեն իրենց հետևյալ խոստովածություններում. «*Որքա՛ն քաղցր են քո խօսքերն իմ քիմքին՝ աւելի քաղցր, քան մեղրն իմ բերանին:*» (Սաղ 118: 103) կամ «*Քո խօսքերը գտնուեցան, եւ ես կերայ նորանց, եւ քո խօսքն ինձ համար սրտիս ցնծութիւն եւ ուրախութիւն եղաւ. Որովհետեւ քո անունը կանչուած է ինձ վերայ, ով Եհովայ Ջօրաց Աստուած:*» <Արարատ թարգմ. Երեմ 15: 16> Ցավալիորեն պետք է նշեմ, որ Եկեղեցիները այս խոսքը բառացիորեն են հասկանում, չկարողանալով սակայն այն հիմնավորել, քանզի սուրբ գրությունների բառացի հասկանալը՝ անհեթեթություն է, իսկ այս դեպքում նաև խելագառություն:

Հոգեւոր մարմնի **երրորդ տարրերությունն** այն է, որ նա անսեռ կլինի, հրեշտակի մարմնի նման: Դա երեւում է Սուրբ Գրքի բազմաթիվ հատվածներից եւ Հենց Քրիստոսի խոսքերից, Ով ասաց.

«*Մոլորուածնե՛ր, ո՛չ Գրքերն էք հասկանում եւ ո՛չ էլ Աստծու զօրութիւնը. Որովհետև յարութեան ժամանակ ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու գնում, այլ կը լինեն՝ ինչպես հրեշտակները երկնքում:*» (Մթ 22: 30)- այսինքն, կույս կմնան:

Կուսության բարձրագույն իմաստը, որը բխում է Հին եւ Նոր Կտակարանների ուսմունքից, մատնանշում են բոլոր մարգարեները, թագավորները, առաքյալները եւ Ինքը Քրիստոսը, **քանզի կուսությունը, գերծ լինելով մարմնական կրքերից եւ հաճույքներից, մաքրության եւ սրբության հոգեւոր գաղափարի անմնացորդ մասն է**: Ընկած մարդուն հատուկ այդ գաղափարի օտարությանն է պարտավոր Քրիստոսի վերոհիշյալ խոսքերի սկիզբը. «*Մոլորուածնե՛ր, ո՛չ Գրքերն էք հասկանում եւ ո՛չ էլ Աստծու զօրութիւնը.*», որով Նա, փաստորեն, անուղղակի ձևով շեշտում է, որ ամբողջ Սուրբ Գիրքը հիմնված է մաքրության եւ կուսության վրա, եւ որ հենց դրանց է Աստված ցանկանում եւ ակնկալում մարդուց, ասելով նրան, ըստ Եզրաս մարգարեի հունական ապոկալիպսիսի.

«*Տուր ինձ աննկուն ու անառիկ գանձը, կուսության զարդը, մարդկանց պատվարը:*»⁹

Նա ասում է դա, որովհետեւ, ինչպես տեսանք, մարդու ստեղծման նպատակը՝ Աստծո հետ անապական ամուսնությունն է, ինչը Աստվածային Շունչը երբեք չի հոգնել կրկնել : Օրինակ, Ովսե մարգարեի բերանով Նա ասել է.

«*Ես նման եմ պտղառատ այգու, ինձանից է (հեղ. պիտի լինի իմաստով) քո պտուղը*» (Օսե 14: 9)

Իսկ այն հարցի պատասխանը, թե ինչպիսին է այդ ամուսնությունը, կարմիր գծով անցնում է Սուրբ Գրքի բոլոր տեկստերով: Ահա թե ինչպես է Տերը բացատրում դա, օրինակ, Երեմիա մարգարեի բերանով.

«*ա՛յս ուխտն է, որ ուխտելու եմ Իսրայելի տան հետ այն օրերից յետոյ, - ասում է Տերը, - իմ օրենքները նրանց մտքի մեջ եմ դրոշմելու, դրանք նրանց սրտերի մեջ եմ գրելու, նրանց համար Աստուած եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ:*» (Երեմ 31: 33) – այլ կերպ ասած, ստեղծված հոգու մեջ է դրոշմելու Իր Խոսքը, որովհետև հիշատակված «*մտքի մեջ*» բառակապակցությունը հենց Այրի հոգուն է վերաբերում, որը Աստծո Ոգուն իրեն մեջ ընդունելու համար, պետք է նույնքան մաքուր եւ կատարյալ լինի, որքան Ինքը Աստվածն է կատարյալ ու մաքուր եւ Նրա Խոսքը: Հենց այդ այրական հոգու կատարելությունն է ամբողջ արարչագործության նպատակը, որը իրականացվում է, ինչպես արդեն նշեցի, մարմնային կրքերի եւ հաճոյքների մերժումով: Դրան են վերաբերում Քրիստոսի հետեւեալ խոսքերը.

«*Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ՝ նրանք, որոնց տրուած է. որովհետեւ կան ներքինիներ, որոնք իրենց մօր որովայնից այդպէս են ծնուել. կան ներքինիներ էլ, որոնք մարդկանց կողմից են ներքինի դարձել. ներքինիներ էլ կան, որոնք երկնքի արքայութեան համար իրենք իրենց ներքինիներ են դարձրել. ով կարող է տանել, թող տանի:*» (Մթ 19: 11-12)

Սա նշանակում է, որ կատարելությանը ձգտող մարդը որպեսզի հասնի Աստծո Թագավորությանը, պետք է, ինչպես Պողոս առաքյալն է ասում, «*խաչի*» իր մարմինը կրքերով եւ ցանկութիւններով հանդերձ: (Գալ 5: 24), քանզի այդ արքայությունը կույսերինն է, և ուստի այս աշխարհից չէ:

Այստեղից պարզ է դառնում, թե ինչ նկատի ունի Եսայիա մարգարեն, երբ ասում է. «*Ուրախացի՛ր, ո՛վ ամուլ, որ չծնեցիր, կանչի՛ր ու աղաղակ բարձրացրու, որ երկունքի ցաւով չբռնուեցիր, քանզի բազում են ամուսնուց լքուածիդ որդիները, աւելի շատ, քան որդիները արամբի կնոջ: Չէ՞ որ Տէրն ասաց. «Ընդարձակի՛ր քո վրանի եւ քո սրահների տեղը, կանգնեցրո՛ւ եւ խնայողութիւն մի՛ արա. երկարացրո՛ւ քո պարանները, հաստատի՛ր քո ցցերը: Աջ ու ձա՛խ տարածուիր, եւ քո սերունդը պիտի ժառանգի հեթանոսներին եւ պիտի կառուցի աւերուած քաղաքները:*» (Եսայ 54: 1-3) կամ Սողոմոնը ասելով. «*Երանելի է անարատ ամուլը, որ մեղքի անկողին չի ճանաչել. նա վարձ կընդունի դատաստանի օրը: Նաեւ ներքինին, որ իր ձեռքով անիրաւութիւն չի գործել եւ ոչ էլ չարութիւն է խորհել Տիրոջ մասին, նրան ըստ իր հաւատի ընտիր շնորհ է տրուելու եւ ցանկալի վիճակ՝ Տիրոջ տաճարում*» (Իմաստ 3: 13-14)

Հովհաննէսի Հայտնության համաձայն՝ այս «*շնորհը*» Քրիստոսի հետ միասին կույսերի թագավորելն է Նրա երկրորդ գալուստից հետո, այսինքն՝ «*այն մարդկանց (...), որոնք չխառնակուեցին կանանց հետ եւ կոյսեր են. սրանք գնում են Գառան յետեւից, ուր էլ նա գնայ: Սրանք ընտրուեցին մարդկանց միջից Աստծու եւ Գառան առաջ: Եւ սրանց բերանում սուտ խօսք չգտնուեց, որովհետեւ անբիծ են:*» (Հայտ 14: 4-5)

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը հենց նման ամուսնության արդյունքում էր ծնվել :

Այս բոլորի մասին ավելի մանրամասնորեն գրել եմ իմ ռուսերեն և իսպաներեն լեզուներով հրատարակված «Шесть дней творения и Седьмой День»/“*Los seis días de la creación y el Día Septimo*” գրքի «Плодитесь и размножайтесь»/“*Sed fecundos y multiplicaos*” գլխում, նաև իմ «Таинство Святой Троицы»/“*El misterio de la Santísima Trinidad*” հավաքացուի «Мог ли Христос быть женатым и иметь потомство? (Отвечая на «Код да Винчи»)»/ *¿Pudo acaso Cristo casarse y tener descendencia? (Contestando al “Código da Vinci”)* հոդվածում, ինչպես նաև իմ «Таинство Девы Марии Богородицы»/*Misterio de la Virgen María, la Santa Madre de Dios (Observaciones bíblicas)* գործում:

Նոր, շնչավոր մարմնի չորրորդ տարբերությունը այն է, որ չնայած իր շոշափելիությանը նա կարող է անցնել պատերի միջով եւ, քնդհանրապես ցանկացած խոչընդոտի միջով, որը պարզապես գոյություն չունի նրա համար: Մենք տեսնում ենք դա, երբ Հիսուսը հանկարծ հայտնվում է փակ դռների ետևում նստած առաքյալների առջև: (Հովհաննես 20:19-20 և շար.)

Եվ վերջապես, շնչավոր մարմնի հինգերորդ տարբերությունն այն է, որ այն ենթակա չէ երկրային ձգողականությանը, ինչպես վկայում է հարություն առած Քրիստոսի համբարձումը առաքյալների աչքերի առջև: (Ղուկաս 24:51)

Այս բոլոր տարբերությունները մատնանշում են շնչավոր մարմնի հրեշտակային բնույթը եւ, բնականորեն, եկեղեցու մասունքների պաշտամունքի անհեթեթությունը, որը բխում է «կաշվե զգեստների» տրամաբանությունից և, ըստ էության, «գերեզմանների» պաշտամունք է հեթանոսների կողմից (նույնիսկ իրենց քրիստոնյա համարող), ովքեր չեն ըմբռնել Աստծո Խոսքի իմաստը:

Իսկ նրա մասին, թե ինչ տեսք ունի Աստծո հրեշտակների մարմինը, մենք կարող ենք դատել, առաջին հերթին, Հովհաննես առաքյալի «Հայտնությունից», որից իմանում ենք, որ շնչավոր մարմնի յուրաքանչյուր կրողը «իր ճակատին», ինչպես «սպիտակ քարի» վրա, (Հայտնություն 22.4) գրված կունենա Աստծո անունը, «որ ոչ ոք չգիտի, բացի նրանից, ով այն ընդունում է» (Հայտնություն 2.17), քանի որ դա Երկնային Հոր անթիվ ու տարբեր հատկանիշների սահմանումներից մեկը կլինի, վկայելով այսպես յուրաքանչյուրի եզակիության և անկրկնելիության մասին:

Բացի դրանից, այս մարմնի մասին կարող ենք որոշ պատկերացում կազմել Ենոք նահապետի նկարագրից, որը գտնում ենք ոչ շատ վաղուց հայտնաբերված իր այսպես կոչված Երրորդ գրքում.

«Եվ դրանից հետո,— կարդում ենք այնտեղ,— ինձ բարձրացրին դեպի երկինք եւ տեսա երկնային ոլորտների որդիներին, որոնք փառքի մեջ շարժվում էին կրակի բոցերի վրայով: Նրանց պատմութանները ձյունի նման սպիտակ էին, իսկ դեմքերը՝ որպես թափանցիկ սաթ : (21:1-6) (...) Նրանք անցնում էին կրակի

միջով, թեթևակի շարժումով, որպես ձուկն է սահում ալիքների վրա»: (Ենոքի 3-րդ գիրք, գլուխ 21:47-50)¹⁰

Հնարավոր է, որ հենց այս մարմնի հետ է կապված ձկան խորհրդանիշը, որը, Ավետարաններում, այդքան մեծ տեղ է գրավում Քրիստոսի երկրային կյանքում, սերտորեն կապելով պատմությունը առակի հետ, բայց, ցավոք, միշտ բառացիորեն հասկացվող:

Վերը ներկայացված Ենոքի վկայությունն համահունչ է այն պատկերին, որ Յիսուսը, պայծառակերպվելով լեռան վրա, ցույց տվեց առաքյալներին նույնիսկ միչնչն իր խաչվելը, երբ *«նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. եւ նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լոյսը»:* (Մթ 17: 2)

Այսպիսին է, ըստ Սուրբ Գրքի, Աստծո Փառքը կրողի, *Այր-Աստծո* հավերժական մարմինը, եւ, հետեւաբար, նաև այն ամենի մարմինը, ինչ որ Նա պարունակում է ապրեցնում է իր մեջ: Այս նոր մարմինը կամ Նրա այս նոր զգեստը կլինի այն շնչային ամրությունից, որ Աստծո անկործանելի Խոսքն է, եւ որի վրա ամեն ինչ հանգստանում է:

Այրական հոգու պայծառակերպումը հավասար է ամբողջ երկրի պայծառակերպությանը: Մնված արդար Ոգով, ըստ նույն Եսայա մարգարեի արտահայտության, այն կլինի *«ինչպես ջրարբի պարտեզ, ինչպես աղբիւր, որից ջուրը չի պակասի»:* (Եսայ 58: 11)

Այլ խոսքով, ինչպես բառացիորեն, այնպես էլ փոխաբերական իմաստով, նոր երկիրը կհայտնվի ընկղմված յաւիտենական ծաղկման մեջ, ինչպես իրենց տեսիլքներում նրան տեսել էին մարգարեները եւ երկինք այցելած Պետրոս առաքելը, որը հետևյալ ձևով է նկարագրել այն.

«Եվ Տերը ինձ ցույց տվեց մի ընդարձակ տեղ այս աշխարհից դուրս, որ ամբողջովին փայլում էր լույսից, եւ օղը այնտեղ թափանցում էին արեւի ճառագայթները, եւ ինքը երկիրն ծաղկում էր անթառամ ծաղիկներով, եւ լի էր համեմունքներով ու բույսերով, որ գերազանցապես ծաղկում էին եւ չէին խամրում եւ օրհնված պտուղ էին բերում: Ծաղիկների բույրն այնքան ուժեղ էր, որ նույնիսկ այնտեղից մեզ էր հասնում»: (Պետրոսի հայտնությունը. XIV 15-16)¹¹

Պարզ է, որ Երկիր/Հոգու *«անթառամ ծաղիկները»* պատկանում են Աստծո Հավերժական օրվան, որը նկարագրվել է գրեթե բոլոր մարգարեների կողմից, սակայն առավել հստակ ձևով Հովհաննես առաքյալի կողմից նրա *«Հայտնության»* 21-րդ եւ 22-րդ գլուխներում:

Այսպիսով՝ մենք քննեցինք Սուրբ Գրություններում հիշատակված մարդու/այրի երեք մարմինները : Բայց ուշադրություն դարձնենք այն փաստին, որ իրականում մարմինը մեկն է, դա Աստծո կողմից ստեղծված մերկ հոգին է, մինչդեռ մնացած երկուսը՝ նրա զգեստներն են. սկզբից՝ *«կյաշվե զգեստները»*, որոնք նրան մահկանացու դարձրին, իսկ հետո՝ *«փրկության սպիտակ*

պատմուճանները», որոնք նրան հավերժական կյանք շնորհեցին: Այդ երկու զգեստները կապված են մարդու գիտակցության հետ, որը ձեւավորվում է կախված նրա «ամուսնությունից» կամ Քամի, կամ Հաբեթի հետ: Առաջին դեպքում, այսինքն՝ Քամի հետ նրա «ամուսնության» դեպքում դա եսասիրական էւ չարի գիտակցություն է, իսկ երկրորդ դեպքում, այսինքն՝, նրա Հաբեթի հետ «ամուսնության» դեպքում, դա ալտոուխստական և բարո գիտակցությունն է: : Առաջինի համար հատուկ է մարմնային մտածելակերպը, իսկ երկրորդի համար՝ շնչավոր:

Այսպիսով, վերջացնելով մարդության ուսումնասիրությունը, անցնենք՝ կենդանական աշխարհին: Բայց քանի որ, ինչպես արդեն նկատեցինք, վերջինը սերտորեն կապված է մարդու հետ և այդ պատճառով արդեն այս կամ այն կերպ հիշատակված է այստեղ, նրա դիտարկումը կանենք եզրակացությունների ձևով:

-
1. Նկատի ունեմ Նոյի հետևյալ խոսքը. «*Աստված թող բարգավաճեցնի Հաբեթին, նա թող բնակվի Սեմի տանը*» (Ծննդ 9: 27), որ վերաբերում է Սուրբ Ոգու բնակվելուն Իր կողմից ստեղծված Այրի *հոգու*: Մանրամասնորեն դրա մասին տես իմ «Шесть дней творения и Седьмой день/ “Los seis días de la creacion y el dia séptimo” երկլեզու գրքի «Загадка сыновей Ноя»/ *El enigma de los hijos de Noe*» գլխում և «*Библейский ключ к сути Богочеловека и Земли Божьей, или еще раз о пророчестве Ноя*»/«*La llave bíblica del problema de Dios hombre y de la Tierra de Dios, o una vez más sobre la profecía de Noé*» նոյնպես երկլեզու հոդվածում:
 2. Հայերեն թարգմանված է որպես «*ուրախության պատմուճան*», բայց դա համարժեք թարգմանություն չէ, քանի որ ուրախությունը միշտ չէ, որ կապված է արդարության հետ, իսկ բնագրի իմաստը՝ հենց արդարությունն է:
 3. Այստեղ հայերեն թարգմանության մեջ «մարմին» է նշված, սակայն խոսքը մսի մասին է գնում, որովհետև մարմինը նշվում է որպես «σῶμα»:
 4. Այստեղ եւ թարգմանության «*հոգին*» փոխարինել եմ «*ոգով*» արդեն բացատրված պատճառով:
 5. Այստեղ նույնպես թարգմանության «*հոգին*» փոխարինել եմ «*ոգով*» նույն պատճառով:
 6. Նաև այստեղ թարգմանության «*հոգին*» փոխարինել եմ «*ոգով*» նշված պատճառով:
 7. Այստեղ ճիշտ թարգմանությունը՝ «*հարսնացուն* » է, քանզի մարդ արարածը Աստծո հանդեպ կին է: Ինչպես ասված է. «*քո այրը քեզ Ստեղծողն է*» (Եսայ 54: 5)
 8. Այստեղ երեք անգամ «*հոգին*» »*ոգով*» եմ փոխարինել արդեն նշված պատճառով:
 9. «*Dame tú el tesoro sin corrupción e inviolable, la joya de la virginidad, la muralla de los hombres*» <Թարգմանությունը՝ հեղինակի>- Տես. Los apocalipsis. 45 textos apocalípticos... A. Piñero. EDAF Madrid-Buenos Aires – 2007, стр. 145:

10. «Y después de estas cosas fui transferid Ascendiendo lejos hasta los cielos. Vi los Hijos de las esferas celestiales, Caminando gloriosamente sobre llamas de fuego. Sus vestiduras eran de blanco puro, Sus rostros eran ámbar transparente.» (Cap.21: 1-6) «Ellos pasaron a través de la Catarata de Llama, Desplazándose con un fácil movimiento, Como los peces se deslizan a través del oleaje. (Cap.21:48-50) – Տէս. Tercer libro de Enoc. Apócrifo de origen desconocido. Véase: <http://www.scribd.com/doc/6541879/Anonimo-El-Tercer-Libro-de-Enoc>

11. Հեղինակի թարգմանությունն է: Տէս տեկստի ռուսերեն տարբերակը. Откровение Петра (апокриф) – см. <http://www.biblicalstudies.ru/Lib/NTApok/OPetr.html>. «И показал мне Господь обширное место вне мира сего, которое все сияло светом, и воздух там пронизывали солнечные лучи, и сама земля цвела неувядающими цветами и была полна пряностей и растений, превосходно цветущих и не увядающих и дающих благословенные плоды. Столь сильным был аромат цветов, что он доносился оттуда даже до нас.» (Откровение Петра XIV: 15-16)

Կա՛մ իսպաներենը. El Apocalipsis de Pedro **Información General** La versión tradicional Traducción y notas de James MR – 1924. “Y el Señor me mostró una región muy grande fuera de este mundo extremadamente brillante con la luz y el aire de aquel lugar iluminado por los rayos del sol y la tierra por sí misma la floración con flores que no se desvanecen, y llena de especias y plantas , fruto bendito de floración justo e incorruptible, y el rumbo. Y tan grande era la flor que el olor del mismo fue llevado allí incluso hasta nosotros.” (Ap de Padro EL FRAGMENTO Akhmim B. 15-16)

II. Կենդանական աշխարհը

(Եզրակացություններ եւ ընդհարումներ)

Ծանոթանալով մարդու/Այրի էությանը, ինչպես նաև Աստծո մնացած արարածների առնչմանը նրա հետ, անդրադառնանք այժմ Պողոս առաքյալի վերոհիշյալ խոսքերին, որոնք, փաստորեն, բոլոր այստեղ շարադրվածից արված եզրակացությունների տեսկ ունեն:

Եզրակացություն առաջին:

1. ստեղծումները ունայնությամբ հնազանդուեցին, ոչ իրենց կամքով, այլ՝ նրանց հնազանդեցության կամքով:

Այստեղ առաքյալը ուղղակիորեն ասում է, որ գազանների, անասունների, թռչունների, սողունների, ձկների մահացության ու չարի միակ պատճառը ոչ թե իրենք են, այլ ինքը՝ մարդը, որի կամքին նրանք հնազանդեցված են :

Արդեն իմանալով մարդու/Այրի ու այլ կենդանիների ներքին կապի մասին, մենք համոզվում ենք, որ Առաքյալի այս ուղերձը վերաբերում է Ադամի անկմանը, որը ոչ միայն իրեն գցեց *սպականության ծառայության* և *ունայնության* մեջ, այլ նաև Աստծո բոլոր մյուս արարածներին – բոլոր գազաններին, անասուններին, թռչուններին, սողուններին ու ձկներին, ինչպես նաև մարդկանց եւ ողջ բուսական աշխարհը, այսինքն՝ նրանց, որ Ադամի *«բոլոր սպորողների հոգու»* մասն են կազմում: Սրանից պարզ է դառնում, որ Ադամի անկումից առաջ բոլոր արարածները, ինչպես և ինքը՝ այրը, գերծ էին *«սպականության ծառայությունից»* և *«ունայնությունից»*, այսինքն՝ ազատ էին մահից, մանավանդ որ դրա մասին ուղղակիորեն վկայում են Սողոմոնի արդեն մեջբերված այստեղ խոսքերը, որ *«Աստուած մահ չի ստեղծել, եւ նա չի ուրախանում ողջերի կորստեան համար: Նա ամէն ինչ հաստատել է լինելու համար, եւ աշխարհի գործերը փրկութեան համար են: Ո՛չ մահաբեր թոյն կայ նրանց մէջ եւ ոչ էլ դժոխքի թագաւորութիւն՝ երկրի վրայ, որովհետեւ արդարութիւնը անմահ է: Իսկ ամբարիշտները ձեռքով ու խօսքով իրենց մօտ կանչեցին մահը, նրան իրենց բարեկամ համարեցին, հալումաշ եղան եւ դաշինք կնքեցին նրա հետ. եւ իսկապէս արժանի են բաժնեկից լինելու նրան»:* (Իմաստ 1: 13-16)

Այսպիսով, մահի հեղինակը դարձան անարդարությունն ու սուտը: Մահը արարչության մեջ դրսևորվեց մահաբեր *«կաշվե զգեստների»* կամ *«ստի հագուստների»* հայտնությամբ, քանի որ ինչպես այրն էր *«մերկ»* իր անկումից

առաջ, այնպես էլ «մերկ» էին նրան կազմող բոլոր կենդանիները, թռչունները, սողուններն ու ձկները: Այս «մերկությունը», այսինքն՝ վերը նշված զգեստների բացակայությունը ի ցույց բերեց **բոլոր արարածների հրեշտակային բնույթը**, որի մասին, բացի արդեն ներկայացվածից, Աստվածաշնչում կան նաև այլ բազմաթիվ հաղորդակցություններ, հատկապես պարականոն գրվածքներում: Օրինակ, Բարուքի Ապոկալիպսիսում, որտեղ մարգարեն, որ իր տեսիլքում տեսել էր լուսնի կառքը, լծված հրեշտակներով, ցույցերով ու գառներով, հարցրեց իրեն ուղեկցող հրեշտակին. «Ովքե՞ր են այս ցլերն ու գառները», և հրեշտակը պատասխանեց. «Նրանք նույնպես հրեշտակներ են»: (Բարուքի Ապոկալիպսիս, 9), ¹ այսինքն՝ «կենդանի հոգիներ»:

Բայց կենդանիների հրեշտակային բնույթի ամենավաղ վկայությունը՝ Ադամին գայթակղած Օձի բնորոշումներն են, ում Տերը համ «գազան» է անվանում, ասելով նրա մասին, որ նա «երկրի վրայ Աստծու ստեղծած բոլոր գազաններից աւելի խորամանկն է» (Ծննդ 3: 1), համ «օծուած քերովբէ»: Այս վերջին սահմանումը մենք գտնում ենք Եզեկիել մարգարեի գրքում, որտեղ Տերը ուղղվում է Օձին ի դեմս Տիրոս քաղաքի թագավորի, որի հոգին գրավված էր նրա ոգով: (Բանը նրանում է, որ Տերը, խոսելով մարդու մասին, կամ մարդու հետ, նկատի չունի այն, ինչ տեսնում են նրա մեջ մարդիք, այսինքն նրա արտաքին կերպարը, այլ միշտ նայում է մարդու էությանը, որը որոշում է նրա մեջ ապրող ոգին, որովհետև մեռնող մարմինը չէ, որ հետաքրքրում է Աստծուն, այլ նրա մեջ ապրող անձնավորությունը:) Ուրվագծելով այդ դեմի ամբողջ ճանապարհը, իր ստեղծման օրից մինչև իր մահվան օրը՝ կրակի Լճում, Տերն ուղղակիորեն նրան քերովբէ է անվանում, այսինքն՝ հրեշտակ:

«Եւ Տիրոջ խօսքն, - կարդում ենք Եզեկիել մարգարեի գրքում, - եղաւ ինձ ասելով. Մարդի որդի, ողբ բարձրացրու Տիրոսի թագաւորի վերայ եւ ասիր նորան. Այսպէս է ասում Տէր Եհովան. Դու կատարելութեան կնիքն ես՝ լիքն իմաստութիւնով, եւ գեղեցկութեամբ կատարեալ: Եղեմումն՝ Աստուծոյ դրախտումն էիր. Բոլոր պատուական քարերը քո ծածկոցն էին՝ սարդիոն, տպազիոն, անդամանդ, ոսկեքար, եղնգնաքար եւ յասպիս, շափիւղայ, կարկեհան եւ զմրուխտ եւ ոսկի. Քո թմբուկների եւ քո սրինգների գործը քեզ համար քո ստեղծուած օրը պատրաստուեցաւ. Դու մի օծուած քերովբէ էիր ծածկող, ² եւ ես քեզ շինեցի. ³ Աստուծոյ սուրբ սարի վերայ էիր. Կրակի քարերի մէջ տեղ էիր ման գալիս: Դու կատարեալ էիր քո ճանապարհներումը քո ստեղծուած օրիցը մինչեւ որ քեզանում անօրէնութիւն գտնուեցաւ: Քո առուտորի շատութեան համար լցուեցաւ քո ներսը զրկանքով եւ դու մեղանչեցիր. Եւ ես քեզ իբրեւ պիղծ հեռացրի Աստուծոյ սարիցը, եւ քեզ փչացրի. ⁴ ով ծածկող քերովբէ, կրակի քարերի միջից: Միրտդ հպարտացաւ քո գեղեցկութիւնովը. Դու ապականեցիր քո իմաստութիւնը քո գեղեցկութեան պատճառով. Ես քեզ գետինը պիտի գցեմ. Թագաւորների առաջին քեզ տեսարան պիտի շինեմ. ⁵ Քո անօրէնութիւնների շատութիւնովը՝ քո անիրաւ վաճառականութիւնովը պղծեցիր քո սրբարանները. Եւ ես կրակ պիտի հանեմ քո միջից. Նա պիտի ուտէ քեզ, եւ ես քեզ մոխիր պիտի շինեմ երկրի վերայ

բոլոր քեզ տեսնողների աչքերի առաջին: Ազգերի մէջ քեզ ամեն ճանաչողները պիտի ապշեն քեզ վերայ. Դու տուկում եղար եւ ոչնչացար յաւիտեան:» (Արարատ Թ-ն. Եզեկ 28: 11-19)

Այսպիսով, Տերը «*դաշտի գազան*» Օձին «*քերովքե*» է անվանում, ինչով ցույց է տալիս, որ ամեն գազանի, անասունի, թռչունի, սողունի, ձկան պատկերների հետեւում մի հրեշտակ է թաքնված, (ինչպես Տերը գառի պատկերում): Այս դեպքում դա դեռ է, մահվան հեղինակը, որ , ինչպես արդեն գիտենք, անեծքի ձևով մտավ ամբողջ արարչության մեջ, որովհետև Ադամի հետ միասին անիծվեցին մահացու «*կաշվե հագուստներ*» հագնելով և դրախտից վտարվելով բոլոր «*կենդանի հոգիները*», որ կազմում են նրա համընդհանուր հոգին:

Սուրբ Գրքում այս համընդհանուր անկման փաստն արտացոլված է, - թեև առանց բացատրելու կապերը, - այնպիսի արդեն մեջբերված իմ կողմից, հաղորդագրություններում, ինչպիսին է, օրինակ, հետևյալը: «*Ապականուեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցուեց անարդարութեամբ: Տէր Աստուած տեսաւ, որ երկիրն ապականուած է, որովհետեւ երկրի վրայ ամէն էակ ապականել էր իր ճանապարհը:*» (Ծննդ 6: 11-12)

Պետք է կրկնեմ, որ «*երկիր*» բառի տակ հասկացվում է նրա երկակի իմաստը. եւ՝ բառացի, եւ՝ որպես «*բոլոր ապրողների հոգի*», այսինքն՝ Ադամի հոգի: Այս կարճ աստվածաշնչյան հաղորդությունը ավելի ընդարձակ տարբերակով գտնում ենք պարականոն «Հոբելյանների գրքում», որտեղ կարդում ենք.

«Անարդարութիւնը երկրի վրա մեծացաւ, եւ ամեն մարմին աղավաղեց իր ճանապարհը՝ մարդկանցից մինչև անասուններ, գազաններ, թռչուններ եւ երկրի վրա քայլող ամէն ոք: Բոլորը շեղեցին իրենց ճանապարհն ու կարգը ու սկսեցին խժոռել միմիանց: Եւ անօրէնութիւնը երկրի վրա աւելացաւ, և մարդկանց որդիների բոլոր մտադրությունները միշտ չար դարձան» (Հոբելյանների գիրք, 5)⁶

- Եվ դա, չնայած նրան, որ ամեն ինչ ստեղծվել էր անապականելիության համար, այդ թվում ամբողջ բուսական աշխարհը, որը նույնպես ենթարկվեց քայքայման եւ մահվան, ինչպես դրա մասին վկայում են մարգարէները: Օրինակ՝ Երեմիա մարգարէն, որ հարցնում է Աստծուն.

«Երկիրը մինչեւ ե՞րբ պէտք է սուգ պահի, ու խոտն ամենուրեք չորանայ: Անասուն ու թռչուն կոտորուեցին երկրի բնակիչների չարութիւնների պատճառով, որովհետեւ ասացին, թէ՛ «Աստուած չի տեսնի մեր արարքները» (Երեմ 12: 4)

Պարականոն «Անդրեաս առաքյալի նահատակությունը (47)» գրվածքում այս ամենը՝, - ունայնությունների այս աշխարհը, որտեղ բոլոր ձեռքբերումներն անիմաստ են, որտեղ «*ոչինչ մշտական չէ, բայց ամեն ինչ փոփոխական է, նույնիսկ մարդկային բարոյականությունը*», քանի որ ամեն ինչ ժամանակավոր է եւ ենթակա մահվան, - կապված է «**բնության մեջ կորած եւ սխալի խոստումները պահպանող մարդկային հոգու չմշակվածության**»⁷ հետ, այլ կերպ ասած, այն կապված է մարդու գիտակցության նյութականացման հետ, որն, կորած լինելով սեփական բնության մեջ, դեռ ոգու կողմից չմշակված *հող/երկիր/հոգի* է: Ինչպես ցույց է տալիս Տերը, հենց այդ «մշակության» անհրաժեշտությունն է եղել

ժամանակավոր աշխարհի հայտնվելու պատճառը, քանզի ասված է. «*Եւ Տէր Աստուած արտաքսեց նրան բերկրութեան դրախտից, որպէսզի նա մշակի այն հողը, որից ստեղծուել էր:*» (Ծննդ 3: 23)

Եվ սա դեռ ամենը չէ. Մարդու անկումն պատճառ դարձավ նաև նրան, որ մնացած արարածները զրկվեցին խոսելու ունակությունից, ամենայն հավանականությամբ, հասկանալու համար, որ, երբ Արարիչն է խոսում, արարածը պետք է լռի եւ չհակասի Նրան, ինչպես դա արեց Աստվածաշնչյան Օձը, քանի որ **ճշմարտությունն ու արդարությունը միայն Արարչի հետ են, ով իր մեջ ընդգրկում է ամենին ու ամեն ինչ**, եւ ոչ թե արարածի խոսքում, որը իր անձնական զգացմունքներից, ընկալումներից, հետաքրքրություններից ու օգուտներից վեր չի կարող մտածել: Այդ փաստի մասին մենք կարդում ենք նույն «Հոբելյանների» գրքում, որտեղ ասվում է հետևյալը.

«Այն օրը, երբ Ադամը դրախտից դուրս եկավ, բոլոր զազանների, անասունների, թռչունների ու նրանց, ովքեր քայլում են ոտքերով և շարժվում, բերանը փակվեց, և նրանք այլևս չկարողացան խոսել, քանզի մինչ այդ նրանք բոլորը խոսում էին իրար մեջ մեկ բերանով ⁸ եւ մեկ լեզվով: Եվ նա քշեց Էդեմի պարտեզից ամեն մի մարմին, որ գտնվում էր այնտեղ, եւ դրանք բոլորը ցրվեցին ըստ իրենց տեսակների, դեպի այն վայրերը, որոնք ստեղծվել էին (հարմար էին) իրենց համար»: (Հոբելյանների գիրք, գլ. 3) ⁹

Թեև այս փաստը մեզ հասել է պարականոն աղբյուրից, սակայն դրա ճշտության ապացույցները, բացի տրամաբանական ակնհայտություններից, մենք գտնում ենք նաև Աստվածաշնչի կանոնական գրքերում: Անուղղակիորեն այն փաստի մասին, որ մինչև Ադամի անկումը, – այսինքն, նախքան նրա մերժումը Աստծո Խոսքի եւ արքայությանը հանուն Օձի խոսքի եւ արքայության, կամ հանուն իր սեփական եսասիրության, – բոլոր արարածները– թե մարդը, թե կենդանիները, թռչունները, սողունները, ձկները – խոսում էին մեկ լեզվով և հասկանում միմյանց, վկայում են, օրինակ, Օձի եւ Եվայի խոսակցությունը (Ծննդոց 3.1-5), կամ Բաղամի էշի նախատինքը, որի բերանը Տերը բացեց այն ժամ: (Թվեր 22: 27–30): Բացի այդ, որքան էլ որ ֆանտաստիկ թվա երկրային մարդուն, կենդանիների խոսելը, դրա փաստը հաստատվում է նաև ինքն իսկ «*կենդանի հոգու*» տրամաբանությամբ, քանի որ խոսքը, որը մտքի արտահայտումն է, բնականորեն, հենց «*հոգի*» բառի մեջ է արտահայտված, եւ նշանակություն չունի, թե ում է նա պատկանում:

Կենդանիների մոտ նախնական ժամանակներում խոսքի առկայության մասին մենք կարող ենք դատել նաև այն բազմաթիվ ձայնային երանգներից, որոնցով նրանք տպավորիչ ձևով առնչվում են իրենց տիրոջ հետ, ցույց տալով իրենց տրամադրությունը, գոհունակությունը կամ դժգոհությունը, կամ այլ զգացմունքները և որոնք հայտնի են ցանկացած մարդու, ով սերտ կապի մեջ է նրանց հետ:

Սակայն Ադամի անկման հիմնական հետեւանքն, իհարկե, մահն է, որը թե՛ մարդու եւ թե՛ բոլոր կենդանիների, թռչունների, սողունների ու ձկների

ենթագիտակցության մեջ ամենասարսափելի անարդարությունն է, քանի որ նրանց «կենդանի հոգիներում» կյանքի նույն գաղափարն է ընկած, որը ընկած է մարդու հոգում եւ, ըստ որի, կյանք հասկացությունը բացառում է մահը: Հետեւաբար, բոլոր «կենդանի հոգիներում» մենք նկատում ենք ճիշտ նույն վերաբերմունքը մահվան նկատմամբ. և մարդը և ամեն կենդանի, թռչուն, սողուն, ձուկ եւ նույնիսկ ամեն մի միջատ հավասարապես սարսափում եւ զզվում են մահվան երեսից: Այս ակնհայտ փաստը շեշտվում է նաեւ Հովսեփ Կարապետի պարականոն գրքում, որտեղ ասվում է.

«Մեծ սարսափն ու դաժան տառապանքը տիրում են բոլոր մարմիններին մահվան օրը, լինեն դա տղամարդիկ, թե կանայք, դաշտի կամ անտառի զազաններ, թե նրանք որ սողում են գետնի վրայով, թե նրանք, որ թռչում են օդում: Բոլոր այն արարածները, որոնք երկնքի տակ են եւ որտեղ կյանքի շունչ կա, սարսափով, մեծ վախով եւ ծայրահեղ զզվանքով են համակվում, երբ հոգիները լքում են իրենց մարմինները»:¹⁰

Եվ դա զարմանալի չէ, քանի որ ամեն արարածի «կենդանի հոգին» այնպես է միացած մեռնող մարմնի հետ, որ մարմնի ամեն մի վերք ցավ ու տառապանք է պատճառում հոգուն, միաժամանակ վախ ծնելով եւ լատենտ ցանկություն ազատվել մարմնի կապանքներից եւ նողկալի, հանցագործ աշխարհից, որտեղ հագած իրենց Աստծուց անջատող մարմինները, թե՛ մարդիկ, թե՛ կենդանիները, թռչունները եւ այլն, գտնվում են սպանության, ցավերի եւ վախերի պտուտակի մեջ, ինչը և ընդգծում է առաքյալը իր հաջորդ արտահայտության մեջ, որը համապատասխանում է երկրորդ եզրակացմանը, որ անում ենք նրա խոսքից.

1. Համեմատեք ռուսերեն և իսպաներեն թարգմանությունները.

"¿Quiénes son estos toros y corderos?", y el ángel le respondió: "Y también son ángeles". (Apocalipsis de Baruc, 9) <http://allforjesus.creatuforo.com/apocalipsis-griego-de-baruc-3-de-baruc-tema110.html> Frederick Guttman R. Pastor Judeo-Mesiánico (Parece ser una traduc xcion automática de ingles) և

«кто эти быки и агнцы?», сопровождающий его Ангел ответил: **«И они тоже ангелы»**. (Апокалипсис Варуха, 9) Библиотека Якова Кпротова. Откровение Варуха http://krotov.info/acts/01/joseph/apok_03.html

2. Ավելի ճիշտ կլիներ թարգմանել «պաշտպանիչ»

3. Ավելի գեղեցիկ կլիներ թարգմանել «ստեղծեցի»

4. Ավելի ճիշտ կլիներ թարգմանել «զրկեցի»

5. Ավելի գեղեցիկ կլիներ թարգմանել «սարքեմ»

6. Հեղինալի թարգմանություն: Տես ռուսերեն տարբերակը. **«неправда усилилась на земле и всякая плоть извратила свой путь, от людей до скота, и до зверей, и до птиц, и до всего, что ходит по земле. Все извратили свой путь и свой порядок, и начали пожирать друг друга. И неправда усилилась на земле, и все помышления разума сынов человеческих сделались столь злыми во всякое время»**, (Книга юбилеев,

5) . См. Книга Юбилеев: Введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. — Казань, 1895. Или

http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm

և խապաներենը. “Creció entonces la iniquidad sobre la tierra, y todos los mortales corrompieron su conducta, desde los hombres hasta los animales, bestias, aves y reptiles. Todos corrompieron su conducta y norma, empezaron a devorarse mutuamente, creció la iniquidad sobre la tierra y los pensamientos conscientes de todos los hijos de los hombres eran malvados siempre.” (Libro de los jub 5: 2) <http://antepasadosnuestros.blogspot.com.ar/2010/07/el-libro-de-los-jubileos-parte-i-de-iv.html>

7. Мученичество святого и преславного первоапостола Андрея Библиотека Наг-Хаммади | Новозаветные апокрифы | http://biblia.org.ua/apokrif/apocryph1/acts_andrey1.shtml.htm

«Мученичестве апостола Андрея, 47» «никто не постоянен, но всё переменчиво, вплоть до нравов человеческих», «необученностью (авт.- неовозделанностью) души человека, заблудившейся в природе и удерживающей залогом заблуждения»

8. Այստեղ *մէկ բերան* ասելով ենթադրվում է Ադամի բերանը, , որով խոսում էր ամեն որ, որ կազմում է նրա համընդհանուր հոգին:

9. Տես ռուսերեն տարբերակը. «В тот день, когда Адам вышел из рая, - сообщает нам апокрифическая Книга Юбилеев, - заключились уста всех зверей, и скота, и птиц, и того, что ходит (ногами), и того, что движется, так что они не могли более говорить, ибо до сего все они говорили между собою одними устами и одним языком. И Он изгнал из сада Едем всякую плоть, которая была в саду Едем; и рассеялась всякая плоть по своим породам и видам в места, которые для них были созданы (удобны)». (Книга юбилеев, гл.3). Հասցեն տես 6-րդ նախադրյալում:

Եվ խապաներեն տարբերակը. “Y el día en que (Adan) salió del Jardín (...)”, leemos al respecto en el Libro de los jubileos, “quedaron mudas las bocas de todas las bestias, animales, pájaros, sabandijas y reptiles, pues hablaban todos, unos con otros, en un mismo lenguaje e idioma. Dios expulsó del Jardín del Edén a todo mortal que allí había: todos fueron dispersados, según sus especies y naturaleza, hacia el lugar que se les había creado. Pero sólo a Adán permitió cubrir sus vergüenzas entre todas las bestias y animales.” (Libro de los jub 3: 27-30) Հացեն նույն 6-րդ նախադրյալում տես:

10. Հովսեփի Կարապետի պարականոն գիրքը տես իր Թարգմանությունը հեղինակի: ռուսերեն տարբերակում այստեղ. Библиотека Якова Кротова. Книга Иосифа плотника, (Русский перевод печатается по изданию: Апокрифические сказания о Христе. Вып. III, Книга Иосифа Плотника. Спб., 1914.) . : «Великий ужас и жестокая тоска овладевают всякой плотью в день кончины – мужи это или жены, звери полевые или лесные, ползают ли они по земле или летают по воздуху. Все твари, сущие под небом и в которых есть дыхание жизни, бывают поражены ужасом, великим страхом и крайним отвращением, когда души покидают тела их».

Եզրակացություն երկրորդ:

2. *գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են մինչեւ այժմ. եւ ոչ միայն նրանք, այլ եւ մենք իսկ, որ Ոգու սկզբնապտուղն ունենք մեր հոգում, մենք եւս մեր մէջ հեծեծում ենք:*

Առաքյալի այս խոսքերը, որ ընդգծում են մարդու եւ այլ արարածների ցավերի լիակատար նմանությունը կապուած են նրանց ընդհանուր բնութեան հետ, այսինքն՝ *բոլոր կենդանի էակների սկզբնահոգու* հետ, որ ժամանակին կեանք տվեց իր մէջ պարունակվող բոլոր հոգիներին, իսկ հիմա սպանում է նրանց տարբեր տեսակի տանջանքներ ծնելով որպէս մարդու, այնպէս և այլ կենդանի արարածների մէջ:

Նախորդ մասում եւս արդեն խոսել եմ բոլոր կենդանիների, այդ թվում և մարդու, ընդհանուր հոգու մասին, ըստ որին մարդն ու անասունը իրենց բնությունով չեն տարբերվում: Դա նշում են նաև Աստվածաշնչի Հին, և նոր կտակարանները: Օրինակ, Ժողողովը ասում է.

«Եւ սրտիս մէջ մարդու որդիների խօսքերի համար ասացի, որ Աստուած պիտի դատի նրանց, որպէսզի ցոյց տայ, թէ իրենք էլ անասուններ են: Արդարեւ, նոյն դիպուածն է պահուած թէ՛ մարդու որդիների եւ թէ՛ անասունների համար, նոյն պատահարն է լինելու նրանց բոլորի համար: Ինչպէս որ մէկի մահն է, նոյնպէս եւ՝ միւսի մահը, եւ բոլորի մէջ նոյն շունչը կայ. էլ ի՞նչ առաւելութիւն ունի մարդն անասունից. ո՛չ մի, քանի որ ամէն ինչ ունայնութիւն է: Ամէն բան մի տեղ է գնում, ամէն ինչ հողից է եղել, եւ ամէն ինչ հող է դառնում: Եւ ո՞վ գիտէ, թէ մարդու որդիների շունչը՝¹ ելնում է վեր, իսկ անասունների շունչը՝² իջնում է ցած՝ հողի մէջ:» (Ժող 3: 18-21)

Ինչ վերաբերում է վերջին հարցին, հիմնվելով Պողոս առաքյալի խոսքերի վրա, կարող ենք վստահորեն ասել, որ կենդանիների ոգին միանշանակ գնում է այնտեղ, ուր գնում է մարդկանց որդիների ոգին, քանզի մարդուն հպատակված լինելով, նրանք չունեն առանձին ոգի/շունչ և հպատակվում են մարդու ոգուն/շնչին»:

Իսկ ինչ վերաբերում է «բոլորի մէջ նոյն շնչին», ապա պարզ է դառնում, որ այն նոյն շունչն է, որով Աստվածը կյանք տվեց Ադամին, իսկ Ադամի մէջ՝նաև Իր ստեղծած բոլոր մյուս կենդանի հոգիներին: Ուրեմն, մարդու հոգին դեռ չներառված՝ Աստծո Սուրբ Ոգով, պարզապէս կենդանի արարածներից մեկն է: Ուստի մարդու և վերջինների բնության ու ճակատագրի նույնությունը գրկում է մարդուն որևէ առավելությունից նրանց հանդէպ:

Անուղղակիորեն մարդու կենդանական հիմքի գաղափարը առաջին անգամ արտահայտել է Ենոք նահապետը, որը արարչագործության ողջ ընթացքը վերարտադրել է կենդանիների պատկերներով : Այս վերարտադրման մէջ մարդը ներկայացված է որպէս «սպիտակ ցուլ»,³ որից, ըստ աստվածաշնչի

տրամաբանության, պետք է «մշակվի» իսկական Այրը՝ Աստծո պատկերն ու նմանությունը:

Նույն փաստը նահապետը նշել է նաև ուղղակիորեն՝ ասելով.

«Մարդիկ ոչ մի կերպ չեն տարբերվում այլ կենդանի արարածներից, բացառությամբ միայն իրենց ոգիների բնույթի: (...) բայց կյանքի միեւնոյն սկզբունքը կենդանացնում է բոլորին:» (Ենոքի 3-րդ գիրքը, 14: 10) ⁴ - այսինքն՝ նրանց կենդանացնում է Ադամի *«բոլոր կենդանի էակների հոգին»*, որի մեջ Տերը փչեց կյանքի շունչը:

Իսկ խոսելով մարդու եւ կենդանիների միջեւ եղած տարբերության մասին, որը սահմանվում է *«նրանց հոգիները բնակող ոգու բնույթով»*, Ենոքը նկատի ունի այն երկու ոգիներից մեկին, որոնք Նոյի հետ կապված աստվածաշնչյան առակում հանդես են գալիս որպես Նոյի որդիներ, այսինքն՝ *Հաբեթը*, Աստծո Սուրբ Ոգին (կամ բարին) եւ *Քամը*՝ կենդանի մարմնի անմաքուր եսասեր ոգին (կամ չարը), քանզի մարդը (*Սեմը/Ադամը*) իրեն դրսևորում է որպես Աստված ու Թագավոր միայն այն դեպքում, երբ *Քամը*՝ ստեղծված մարմնի ոգին, լիովին ենթարկված է *Հաբեթին*, Աստծո Սուրբ Ոգուն: Մի խոսքով, ինչպիսին է մարդը, այնպիսին են նաև մնացած կենդանիները:

Մարդու *«անմշակ» երկրի/հոգու* կենդանական բնույթը շատ հստակ ձևով արտացոլում է նաև *«ախոռը»*, որ Քրիստոսը ընտրեց որպես Իր ծննդավայր երկրի վրա: Դրանով Նա ցույց տվեց, որ իջել է ոչ թե այրերի, այլ կենդանիների աշխարհ, որոնց թվում նաև նրանք են, որ իրենց մարդ են համարում, այն ժամանակ, որ ճշմարիտ այրը հոգեւոր, համապարփակ եւ ալտրոսոսական հասկացություն է, կապված արարչության միասնության եւ ոչ թե ինքնին գիտակցության հետ, հիմնված միայն յուրաքանչյուր մարմնի շահերի և հետաքրքրությունների վրա: Երբ Քրիստոսի մոր՝ Մարիամի ծննդաբերելու ժամը եկավ, մարդկանցից ոչ ոք իր դուռը չբացեց նրա առջև: Նա ապաստան գտավ միայն կենդանիների շրջանում: Իսկ ով իրեն մարդ էր համարում, լինելով իրականում նույն կենդանին, թագավորող իր նման կենդանիների վրա, կարծես թե ասում էր Տիրոջն ու Իր մորը. *«Հեռո՛ւ կաց ինձնից, մի՛ մօտեցիր ինձ, որովհետեւ ես սուրբ եմ»*: (Եսայ 65: 5) Այլ կերպ ասած՝ Քրիստոսը իջավ մարդու *«անմշակ» հոգու/երկրի* աշխարհ, որպեսզի շարունակի նրա *«մշակելու»* գործը, որ Ջրհեղեղից հետո սկսել էր Աբրահամը:

Այն, որ «մարդ» հասկացողության գաղափարը չի որոշվում նրա արտաքինով, նշում է նաեւ Փիլիպոս առաքյալը, որի ավետարանում կարդում ենք.

«Աշխարհում կան շատ կենդանիներ, որոնք մարդու կերպարանքով են» (Ավետ Փիլիպոսի 119) ⁵

Որպես կանոն, դա նրանք են, ովքեր իրենց ազատ կամքը ստորադասել են ժամանակավոր մարմնին եւ նույնիսկ փորձում են «գիտականորեն» հիմնավորել նման ենթարկության բնականությունը, բացահայտելով այդպիսով այն փաստը, որ իրենց կենդանական սկզբունքը գերիշխում է ոգու սկզբունքի վրա, մինչդեռ

մարդը, ինչպես տեսանք, սահմանվում է միայն նրա հոգու մեջ ապրող ոգով/շնչով:

Փաստորեն, Պողոս առաքյալը նույն բանն է նշում, երբ նախատում է Աստծո որդիներին այրի պատկերը նվաստացնելու համար, քանի որ *«կենդանի Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի եւ թռչունների եւ չորքրտանիների եւ սողունների»* (Հռոմ 1: 23), - այսինքն՝ քայքայեցին իրենց բնությունը՝ զերադասելով այն Աստծո Ոգուց/Շնչից, կամ էլ Աստծո Ոգուն/Շնչին առանձնացրին բնությունից, որը այդ պատճառով քայքայվեց և մահկանացու դարձավ:

Այսպիսով, մարդը, որպես *«կենդանի հոգի»*, իր բնությամբ չի տարբերվում այլ կենդանիներից, թռչուններից, սողուններից եւ ձկներից, ունենալով նույն հատկությունները, ինչ նրանք, այսինքն՝ Պողոս առաքյալի խոսքից ու արարչության տրամաբանությունից պարզ է դառնում, որ ցանկացած վնաս, որ մարդը հասցնում է այլ արարածներին, առաջին հերթին վնասում է իրեն իսկ և վկայում է իր անգիտակից, խելագառությանը նման վիճակի մասին :

Իսկ խոսելով մարդու եւ մնացած արարածների միջեւ եղած միակ տարբերության մասին՝ Առաքյալը, Ենոք նահապետի պես, հստակորեն ցույց է տալիս, որ այդ տարբերությունը Աստծո *«ոգու/շնչի սկզբնապտուղն է մարդու հոգուն»*, որից, ինչպես արդեն նշել եմ, այլ արարածները զրկված են, եւ այդ պատճառով էլ ենթարկվում են մարդու ոգուն: Իսկ մարդու հոգու մեջ *«ոգու սկզբնապտուղները»* ամենից հաճախ արտահայտվում են *խղճի* եւ *ազատ կամքի* առկայությամբ, որ նրա աստվածային ծագման եւ աստվածային իշխանության նշաններ են, տրված նրան հեռանկարային իմաստով եւ միշտ սահմանվող արարչագործության եւ մտքի սրբության հանդեպ իր ունեցած սիրով, քանի որ մարդը ստեղծված է Արարչության Հոր Սուրբ Ոգու՝ մարմնավորումը դառնալու համար: Իսկ թե ինչպես նա կօգտագործի այս նախամտածվածությունը, կամ վերը նշված երկու ոգիներից որին կհետևի՝ *Հաբեթին* թե *Քամին*, կախված է եւ՝ նրա եւ՝ ողջ արարչության ճակատագիրը, քանզի իշխանությունը, համապատասխանաբար, նույնպես երկու տեսակի է լինում՝ սիրո եւ կյանքի իշխանություն, և չարի ու մահվան իշխանություն: Այս իմաստով *«ոգու սկզբնապտուղները»* վերաբերում են այն մարդուն, ով գիտակցում է կամ կարող է գիտակցել, որ իր հոգին, (ընդգրկող իր մեջ բոլոր կենդանի հոգիներին) ի սկզբանե ոչ թե հասարակ կենդանի հոգիներից մեկն է եղել, այլ այն կենդանի հիմքը, որը ներառում է արարչության կյանքի ողջ հյուսվածքը, և որի կենսունակությունը պահանջում է իր մեջ նեոարված բոլոր տարրերի միասնությունն ու փոխադարձ սերը: Միայն Ադամի անկումից հետո նա բաժանվեց իր մեջ և ուղղերգվելով մարմնի ոգով, դառցավ հասարակ կենդանի հոգիներից մեկը:

1-2. Այստեղ, «*որդիների հոգին ելնում է վեր, իսկ անասունների շունչը...*» հատվածում, ինչպես միշտ, հայ թարգմանիչը հոգին ու ոգին (շունչը) բացի չտարբերելուց, նաև մարդու շունչը «*հոգի*» է անվանել, իսկ այլ արարածներին՝ «*շունչ*», ինչը անհեթեթություն է, քանզի Աստծո Շունչը միակն է, որ կենդանություն է տալիս համ մարդուն, համ էլ *մարդու միջոցով* անասուններին, զագաններին, թռչուններին, սողուններին, ձկներին և այլ արարածներին, մանավանդ որ բնագրում երկու տեղում էլ *πνεῦμα –շունչ* բառն է օգտագործված: Ես ներկայացրել եմ ճիշտ տարբերակը. «*որդիների շունչը ելնում է վեր, իսկ անասունների շունչը...*»

3. Տե՛ս Ենոքի գիրքը, գլուխ 17 ռուսական տարբերակի. КНИГА ЕНОХА, гл. 17 (Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001) http://krotov.info/libr_min/from_1/0008.html

և գլուխներ 86-90 իսպանական տարբերակի. Libro de Enoc cap-s 86-90 LAS MARAVILLOSAS PROFECÍAS DEL LIBRO DE ENOC UNA SELECCIÓN DE LAS PROFECÍAS DEL PROFETA ENOC, CON 123 COMENTARIOS DE TEXTO Por *Tito Martínez* (Teólogo bíblico y administrador general de la Comunidad de Doctrina Cristiana) <http://las21tesis.webcindario.com> <http://es.geocities.com/titomartinez21tesis> <http://groups.msn.com/DOCTRINACRISTIANA>

4. «*Los hombres de ninguna manera difieren de otras criaturas vivientes, salvo solamente en la naturaleza de sus espíritus; para algunos ellos son inferiores, pero para otros superiores; pero el mismo principio de vida los anima a todos*». (3-er libro de Enoc Cap 14: 10) Tercer libro de Enoc (*Apócrifo de origen desconocido*) Տես այստեղ. <http://www.scribd.com/doc/6541879/Anonimo-El-Tercer-Libro-de-Enoc>

5. Տես «*Есть много животных в мире, имеющих форму человека*» (Еванг. От Филиппа 119) Библиотека Наг-Хаммади. http://apokrif.fullweb.ru/nag_hammadi/ev-phil.shtml

Կամ իսպանական տարբերակում. “*Hay muchos animales en el mundo que tienen forma humana.*” (*Evang según Felipe 119*) - Evangelio según Felipe Fuente: *Los Evangelios Apócrifos*, por Aurelio De Santos Otero, BAC

Եզրակացություն երրորդ

3. *ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը (...) այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար. (...) սպասելով որդեգրութեանը մեր մարմնի փրկութեանը*

Այս եզրահանգումը գալիս է առաքյալի նախորդ երկու հաղորդակցություններից, քանզի առաջին բանը, որ այստեղ նշվում է, դա հույսի խոսքերն են (*սպասում են, հույսով, սպասելով*), որ շեշտվում են Առաքյալի կողմից, հստակորեն վկայելով արարածների գիտակցության (նույնիսկ եթե դա ենթադիտակցություն է) ու հիշողության ներկայության մասին, որոնց շնորհիվ նրանք հասկանում են իրենց կախվածությունը մարդուց, ինչն իր հերթին վկայում է իրենց մտածելու կարողության մասին, չնայած նրան, որ մտածելու կարողությունն արտահայտված է հենց «*հոգի*» բառի մեջ, որը, ինչպես արդեն ասվեց այստեղ, վերաբերում է հոգեբանություն ու բանականություն ունեցող մի անոթի:

Մոռանալով կամ ընդհանրապես չիմանալով, որ մարդկանց եւ կենդանիների բնությունը նույնն է, մենք սովոր ենք արհամարհանքով մտածել վերջինների մասին, զրկելով նրանց բանականությունից, իսկ ինչ որ նմանվում է դրան, վերագրել բնագոյներին: Մինչդեռ նման տեսակետը հիմնականում խոսում է մեր իսկ անտրամաբանության եւ կարճատեսության մասին, երբ նույնիսկ ունենալով խոսելու ունակություն, մենք վկայում ենք, որ ձախողված «մարդիկ» ենք, երբեմն նույնիսկ մակարդակով ավելի ցածր, քան մյուս կենդանի արարածները: Դա է ակնարկում, օրինակ, նահապետ Յոբը, ըստ որի, Տերը, հորդորելով անխոհեմ մարդուն, ասում է նրան.

«Բայց ա՛յ՜ է հարցրու անասուններին, որ քեզ սովորեցնեն, եւ երկնքի թռչուններին, որ քեզ իմացնեն: Կամ խօսիր երկրի հետ, եւ նա քեզ կ'սովորեցնէ, եւ քեզ կ'սպասմեն ծովի ձկները: Ո՛վ չի հասկանալ այս բոլոր բաներովը, որ Տիրոջ ձեռքն է արել այս բաները, Որ նորա ձեռքին է բոլոր կենդանիի կեանքը, եւ բոլոր մարդկային մարմնի ոգին» (Արարատ Թ-ն. Յոբ 12: 7-10) ¹

Փաստորեն, նույնը նկատի ունի նաև Եսայա մարգարեն, ներկայացնելով Աստծո ավստասանքով լի խոսքերը.

«Եզն իր տիրոջն է ճանաչում, եւ էշը՝ իր տիրոջ մտորը, բայց Բսրայէլն ինձ չճանաչեց, իմ ժողովուրդն ինձ չհասկացաւ» (Եսայ 1: 3)

Ի՞նչ են ուզում դրանով ասել Յոբն ու Եսայա մարգարեն. Իհարկէ, հետևյալը.

- *նայիր շուրջդ, մարդ արարած, ամբողջ արարչությունը բանականությամբ է լցված, միայն դու ես, որ դա չես տեսնում, կենտրոնացած ինքդ քո վրա, և*

մտածելով, որ միակն էս, որ բանականություն ունի, երբ իրականում, չհնազանդվելով Աստծո Խոսքին, ինքդ քեզ հեռացրիր մյուս արարածներից, և կորցնելով արարչության միության զգացումը, կորցրիր նաև քո բանականությունը, և այժմ Տիրոջ մասին քեզ կարող են սովորեցնել նույնիսկ նրանք, ում դու թերագնահատում էս:

Մի խոսքով, նահապետը, մարգարեն ու առաքյալը վկայում են, որ բոլոր կենդանի արարածներին հատուկ են բանականություն և հիշողություն և որ նրանք սպասում են մարդու դրսևորմանը որպես արարչության Տիրոջ, երբ նա, ազատվելով, վերջապես, «*ապականության ծառայությունից*», կազատի նաև նրանց այդ մահաբեր չարիքից: Կենդանի արարածների այդ ներքին գիտակցական կամ ենթագիտակցական համոզվածությունը նշվում է շատ պարականոն գրվածքներում, որոնք, դժբախտաբար, ընդունված չեն Եկեղեցիների կողմից: Օրինակ, Աբգարի լեգենդում ասվում է. «*Ինչպես մարդիք, այնպես և այլ արաածները հավատում են Աստծուն, որ Այր էր*»:²

Բայց աշխարհի հետ գործաբցող Եկեղեցիները պատրաստ չեն դա գիտակցել և համաձայնվել, որ կենդանիներն էլ են հավատում Աստծուն: Եվ ինչպես հետևանք մարդը մնում է խուլ ու համր նույնիսկ երբ տեսնում է նրանց բանականության ապացույցները, օրինակ, լինում են դեպքեր, երբ մարդու հանդեպ թշնամությամբ լցված վայրի գազանները, գտնվելով անհուսալի վիճակում, գալիս են մարդու մոտ օգնություն ակնկալելով նրանից և հուսալով, որ նրա մեջ կարդնանա, վերջապես, նրանց երբեմնի հայրը և կհոգա իրենց մասին:

Կենդանիների կյանքի դիտարկումները նույն եզրահանգման են բերում: Նրանք ցույց են տալիս, որ բոլոր կենդանիները, թռչունները, սողուններն ու ձկները, իրոք, մտածելու և հիշելու ունակություն ունեն, չնայաց շատերի հակառակ համոզմունքին: Վերջինները կենդանիների անխոսության մեջ ապացույց են տեսնում տրամաբանության բացակայության: Հենց այդ, հիմնված մարդու տգիտության վրա հակառակ համոզմունքն է, որ մարդու մեջ զարմանք է առաջացնում ամեն անգամ, երբ նա առնչվում է կենդանիների խելքի, շնորհակալության և այլ առժեքների հետ, որոնք համարվում են միայն մարդուն բնորոշ առժեքներ, սակայն իրականում բնորոշ են ամեն մի «*կենդանի հոգու*»՝ որպես մաս կազմող *բոլոր կենդանի արարածների ընդհանուր հոգու*, այսինքն՝ Ադամի:

Ամենավառ ձևով «*կենդանի հոգու*» այդ ունակությունները դրսևորվում են (տեսնողների համար, իհարկե), երբ մարդն ու այլ կենդանի արարածը – գազանը, անասունը, թռչունը, սողունը, ձուկը – նայում են ուղիղ միմյանց աչքերի մեջ լուռ վկայելով մեկը մյուսի մասին և երբ այդ կենդանիների աչքերում կամ նախատինք և դաժանություն է զգացվում մարդու մեջ մարդկայնության բացակայության պատճառով, կամ էլ, հակառակը, անսահման սեր, շնորհակալություն և նվիրվածություն մարդուն նրա բարի վերաբերմունքի

համար, այսինքն՝ մարդու մեջ դրսևորված հոգատար «հոր» կերպարի համար, որ բոլոր հոգիների ապաստանն է :

Մարդու նշված կուրությունն ու դաժանությունը, ինչպես արդեն ասվեց, նրա իր իսկ էության մասին անտեղյակության հետևանքն է, այսինքն՝ այն բանի, որ մարդն ու այլ կենդանի արարածները հակադրված չեն իրար, ինչպես նա մտածում է, այլ միացված են իրար, ինչպես գլուխն մարմնի հետ, կամ ինչպես երկինքն երկրի հետ: Եվ եթե գլուխը հանցագործ է դառնում, ինչպես հանցագործ դարձավ Ադամը իր անկումից հետո, հանցագործ է դառնում նաև նրա մարմինը, որ ծառայում է գլխին կամ արտացոլում և իրականացնում նրա բոլոր նկատառումները: Հավասարապես, եթե գլուխը ազատվում է չարից, այսինքն՝ *«ապականության ծառայությունից»* , ինչպես Հիսուս Քրիստոսը, կամ վերականգնված Ադամը, այդ նույն չարից ազատվում է նաև մարմինը: Իսկ մենք, ինչպես ասում է Պողոս առաքյալը, *«ինչպես որ կրեցինք հողեղենի պատկերը (այսինքն՝ հանցագործի), այնպես էլ կկրենք երկնայինի պատկերը (այսինքն՝ սրբի)»* (1 Կոր 15: 49) Համապատասխանաբար, մարդու ազատումը ապականությունից կրերի նաև բոլոր կենդանի էակների ազատմանը նույն ապականությունից, քանզի նրանք, ինչպես արդեն գիտենք, մաս են կազմում մարդու բոլորին ընդգրկող կենդանի հոգու:

Այն որ բոլոր կենդանիներին, թռչուններին, սողուններին ու ձկներին սպասում է ազատագրում *«ապականության ծառայությունից»*, միայն Պողոս առաքյալը չէ, որ վկայում է: Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարաններում կան բազմաթիվ անուղղակի վկայություններ նույն նյութի վերաբերյալ: Օրինակ, այն պատառիկներում, որ պահանջում են բոլոր անասունների պարտադիր մասնակցությունը արարչության Յոթերորդ Օրվա տոնակատարման մեջ:

«Եօթներորդ օրը քո տեղ Աստծու շաքարօրն է, - կարդում ենք Երկրորդ Օրենքի գրքում: - Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես, ոչ էլ քո տղան ու աղջիկը, քո ծառան ու քո աղախինը, քո էջն ու քո եզրը, քո բոլոր անասունները, քեզ մօտ գտնուող օտարականն ու քեզ մօտ բնակուող պանդուխտը» (Ելք 20: 10, կամ Երկ. օնք 5: 14) , ինչպես նաև Ելքի գրքում, որտեղ ասվում է.

«Վեց օր կ'աշխատես, իսկ եօթներորդ օրը կը թողնես, որ հանգստանան քո եզն ու էջը, հանգստանան նաեւ քո աղախնու եւ օտարականի որդիները:» (Ելք 23: 12)

Արդեն միայն այս դիտողությունը, որ անասուններն էլ պիտի մասնակցեն արարչության Յոթերորդ Օրվա տոնակատարմանը, պարզ ձևով խոսում է նրա մասին, որ յոթերորդ օրվա բարիքները, այսինքն՝ հավիտյան կյանքը կժառանգեն նաև բոլոր կենդանիները: Դրա մասին կա և ուղղակի վկայություն: Ըստ պարականոն Առաքյալ Փիլիպոսի գործերի, առաքյալը ասում է եզին.

«Մի՛ վնասիր մարդուն, գնա՛ քո տիրոջ հետ եւ ծառայիր նրան: Տէրը քեզ էլ կը բժշկէ, եւ այնպիսի դարմանումով, որ էլ երբեք չես չարչարվի»: (Գործք Փիլիպոս 10)³

Սակայն ամենակարևորը այն է, որ Քրիստոսն ինքն է դրա մասին հիշատակում իր Հորը ուղղված հետևյալ աղոթքում.

«Յիսուսը այս խօսեց, եւ իր աչքերը բարձրացրեց դէպի երկինքը եւ ասեց. Հայր, ժամը հասել է, փառաւորիք քո Որդուն, որ քո Որդին էլ քեզ փառաւորէ. Ինչպէս նորան իշխանութիւն տուիր **ամեն մարմնի** ⁴ **վերայ որ յաւիտենական կեանք տայ այն ամենին՝ որ տուիր նորան:**» (Արարատ թնթ Հովհ 17: 1-2)

Այսպիսով պարզ է, որ ոչ միայն «մարդուն» (այրին) է վիճակված հավիտենական կյանքը, այլև «**ամեն մարմնին**», որ Այրի հետ հավասար պիտի փառաբանի Արարչին: «**Եվ կփառավորվի անունը Քո մեր և համր զազանների կողմից**» կարդում ենք մենք Հուդա առաքյալի գործերից յոթերորդում (138) ⁵

Նույնը եզրափակիչ ակորդի նման վկայում են Հայտնության հետևյալ տողերը.

«**Լսեցի նաեւ, որ երկնքում, երկրի վրայ եւ ծովում եղած բոլոր արարածները, ինչպէս նաեւ դրանց մէջ եղած ամէն ինչ ասում էին. «Նա, որ նստած է աթոռի վրայ, ինչպէս եւ Քառը, թող օրհնեալ, բարձրացեալ եւ փառաւորեալ լինի յաւիտեանս յաւիտենից»:** **Եւ չորս կենդանիներն ասում էին՝ Ամէն:** Եւ երեցներն ընկնում էին նրա առաջ ու երկրպագում:» (Հայտն 5: 13-14)

Այստեղ վկայություն ենք տեսնում ոչ միայն կենդանիների փրկության, այլ նաև նրանց խոսելու ունակության վերադարձի:

Իսկ ինչ վերաբերում է առաքյալ Պողոսի խոսքերին «**սպասելով որդեգրութեանը՝ մեր մարմնի փրկութեանը**», նկատենք, որ դրանք վերաբերում են հենց *Այրի բոլոր ապրողների հոգուն*, որի փրկությունից է կախված ամբողջ արարչության կյանքը: Իսկ Այրի (կամ բոլոր ապրողների) հոգին փրկվում է միայն իրեն վրա հազցված մահաբեր մարմնի մահով, կամ «**կաշվե զգեստների**» մահով: Այդ ժամանակավոր մարմինը, որ պտուղն է ժամանակավոր իսկ մարմնի, ոչ մի կապ չունի կյանքի ու նրա Արարչի հետ, որը չի մասնակցում նրա ծննդյան արարողությունում: Հետևաբար, մարմնից (մսից) ծնվածները՝ մարմնի (մսի) որդիներ են և ոչ թե Տիրոջ; ուստի դրանք միայն կարող են որդեգրված լինել Տիրոջ կողմից նույն մահաբեր մարմնի հանուն Աստծո մահի միջոցով, այսինքն՝ մահկանացուն մահին հանձնելով հանուն Աստծու Ոգուց վերածնվելու: Ինչպես Հիսուսն ասաց, «**Ճշմարիտ, Ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Ոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայությունը մտնել. «որովհետեւ մարմնից ծնուածը մարմին է, իսկ Ոգուց (Շնչից) ծնուածը՝ նգի (Շունչ): Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պետք է ձեզ վերստին ծնուել. «որովհետեւ քամին ուր ուզում է՝ փչում է, եւ նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպէս է եւ ամէն ոք, որ Հոգուց է ծնուած:**» (Հովհ 3: 5-8), ⁶ այսինքն՝ ծնվել ներքին մարդու (կամ նրա հրեշտակի) և Աստծո «ամուսնությունից»:

Միայն այս վերին ծնունդը մարդուն, եւ նրա հետ Աստծո ողջ մնացած արարածներին,- որ, ինչպես տեսանք, մարդկային հոգու ողջ հարստության մարմնավորված պատկերներն են, - կրերի ազատագրմանը իրենց մահաբեր կապանքներից, - ինչպես Առաքյալն է ասում. «**ստեղծուածներն իրենք էլ կազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար.**», քանզի արդեն տեսանք, որ կենդանական աշխարհի ազատագրումը կապված է մարդու ազատագրման հետ: Իրոք, **Այրի**

փրկված հոգին չի կարող իր մեջ պարունակել ոչ մի ապականություն: Ուստի երբ մարդը, Բարուք մարգարեի արտահայտությամբ, «*կհանի իր սգի ու լլկանքի զգեստը եւ յաւիտեան կհագնի Աստծու փառքն ու վայելչութիւնը, իր վրայ առնելով Աստծու արդարութեան վերարկուն եւ գլխին դնելով յաւիտենական Տիրոջ փառքի խոյրը*», (Բարուք 5: 1-2), կամ երբ, ըստ Մնացորդաց, «*Տիրոջ փառքը կլցնի Աստծու տունը*»: (2 Մնացորդաց 5: 14), - այսինքն՝ Ադամին, այն ժամանակ և այլ արարածներն «*էլ կազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար*»: Այլ կերպ ասած՝ այդ նույն փառքի մաս կդառնա, որ բաղկացած է ինչպես մարդու, այնպես էլ կենդանիների փոխակերպված հոգիներից: Իսկ այդ փոխակերպումը, ըստ նույն Պողոս առաքյալի, նրանց մեջ ապականված ոչ մի բան չի թողնի. ո՛չ արյուն, ո՛չ մահաբեր մարմին (Ա Կորնթացիս 15: 50), ոչ ֆիզիկական սնունդ պահանջող «որովայթ», ոչ էլ սեռ, որը ծառայում է մահկանացու մարմինների բազմացման համար: (Ա Կորնթացիս 6.13), քանզի մահկանացու բաները կյանքի համար չեն, այլ մահվա,⁷ որը պարզապես կրկին կմերկացնի նրանց երբեմնի մերկ հոգիները, որպեսզի նրանք փոխակերպվեն մարդու հետ միասին՝ դառնալով Նրան ընդգրկած Աստծո Փառքի մաս: Իսկ դա նշանակում է, որ Աստծո Արքայությունում հայտնված Այրի կողքին կապրեն նաեւ կենդանական աշխարհի փոխակերպված ներկայացուցիչները, քանի որ Այրի և իր բոլոր բաղադրիչների հետ միասին կդրսևորվի Աստվածը, ինչպես գրված է. «*Աստուած ամէն ինչ կլինի ամենքի մէջ*» (Ա Կորնթացիս 15.28): Եվ այրն ու այլ արարածները կլինեն որպես սուրբ հրեշտակներ:

Այնպես որ, արհամարհական ու նվաստացուցիչ կերպով վերաբերվելով կենդանիներին՝ մարդը չի գիտակցում, որ իրականում իր անմտության շնորհիվ արհամարհում ու նվաստացնում է ինքն իրեն եւ Արարչին: Եվ այդ բոլորը, ըստ Ենոքի Գաղտնիքների, կամ Երկրորդ, Գրքի, լիովին կդրսևորվի Աստծո Դատաստանի ժամանակ, քանզի այդ գրքում կարդում ենք.

«Ուստի, Տերը մարդուն տեր է դարձրել իր բոլոր բարիքներին, եւ նա չի դատում զազանների ոչ մի հոգու՝ մարդու պատճառով. այլ դատում է մարդկային հոգիները՝ զազանների հոգիների պատճառով մեծ էոնում: ⁸ Քանզի մարդուն հատուկ տեղ է տրված, եւ ինչպես բոլոր մարդկային հոգիները հաշված են, այնպես էլ հաշված են զազանների հոգիները, եւ Տիրոջ կողմից ստեղծված այս հոգիներից ոչ մեկը չի կարող կորչել մինչեւ մեծ դատաստանի օրը: Եվ զազանների բոլոր հոգիները մեղադրում են մարդուն, որ նա վատ հովիվ է, վատ է վարվում զազանների հոգիների հետ, վատ է վարվում իր սեփական հոգու հետ» (2 Ենոք, կամ Ենոքի գաղտնիքների գիրք 15.5-9) ⁹

Մենք կարող ենք պատկերացնել, թե այդ ժամանակ ինչպես կբացահայտվեն կենդանիների, թռչունների եւ այլ կենդանի արարածների հանդեպ մարդու դաժանության ողջ մղձավանջն ու սարսափը, որը կհանգեցնի իր հանդեպ սեփական վերաբերմունքի մղձավանջի եւ սարսափի բացահայտմանը, վկայելով նրա խենթության մասին: Այդ խենթության էությունը ներկայացված է շատ

պարականոններում, օրինակ, Եսենների Աւետարանի մէջ, որ եկեղեցիները հերքում են Ճիշդ այն սրբություն արտահայտող մտքերի պատճառով, որոնք նրանք անիրական են համարում, անտեսելով, որ այնտեղ ներկայացված գաղափարները միայն սրբությունն է կարող արտայայտել: Այդ գաղափարները հետևյալներն են.

«Ճշմարիտ եմ ասում քեզ, ով սպանում է, ինքն իրեն է սպանում, եւ ով որ ուտում է սպանված գազանների միսը, մահվան մարմիններ է ուտում: Որովհետեւ նրա արյան մէջ նրանց արյան ամեն կաթիլը թույնի է վերածվում, նրա շնչառության մէջ նրանց շնչառությունը գարշահոտության է վերածվում, նրա մարմնում նրանց մարմինը բորբոքված վերք է դառնում, նրա ոսկորներում նրանց ոսկորները կիր են դառնում, նրա ընդերքուն նրանց ընդերքը – փտածություն, նրա աչքերում իրենց աչքերը՝ շղարշ, նրա ականջներում նրանց ականջները՝ ծծմբի խցան: Ու նրանց մահը կդառնա նրա մահը: Քանզի միայն երկնային Հորը ծառայելու շնորհիվ է, որ յոթ տարվա պարտքերը յոթ օրում են ներվում: (...) Մի՛ սպանեք եւ մի՛ կերեք ձեր անմեղ գոհի մարմինը, որ չդառնաք սատանայի ստրուկները: Քանզի դա տառապանքների ուղի է, եւ տանում է դեպի մահ: Բայց կատարեք Աստծո կամքը, որպեսզի նրա հրեշտակները կարողանան ծառայել ձեզ ձեր կյանքի ուղու վրա: Կատարեք Աստծու կամքը, որ ասել էր. «Ահա ես ձեզ տուի ցորեն բերող բոլոր խոտերը, որ ամբողջ երկրի վրայ են, եւ բոլոր պտղատու ծառերը, որ դուք ուտեք: Եվ երկրի ամեն մի գազանին, եւ ամեն ճախրող թռչունին, և ամենին, որ սողում է երկրի վրա, ում մէջ կյանքի շունչ կա, եւ տվել եմ բոլոր կանաչ խոտաբույսերը՝ որպէս ուտելիք: (...) Բայց միս ու արյուն պիտի չուտեք: Եվ, իհարկե, եւ կպահանջեմ ձեր հոսող արյունը, ձեր արյունը, որի մէջ հոգին է, Եւ կպահանջեմ բոլոր սպանված կենդանիների եւ բոլոր սպանված մարդկանց հոգիների համար» (Ավետարան Էսսենների): ¹⁰

Այստեղ պետք է ասել, որ վերջին արտահայտությունը թարգմանիչները չեն հասկացել, ինչը երևում է նրա անհետեւողականությունից ու շփոթվածությունից, որ տեսնում ենք տարբեր լեզուների թարգմանություններից, քանի որ չեն պատկերացրել, որ մարդը կարող է դատվել կենդանիների պատճառով և փորձել են հակառակ իմաստ տալ վերջին նախադասությանը, սակայն նրանց մատնում է ամբողջ պատառիկի միտքը, որին հակասում է իրենց փորձը: Իսկ իմաստը, որ բխում է ամբողջ պատառիկի տրամաբանությունից, հետևյալն է. *Ես ձեր արյունը կպահանջեմ թե՛ ձեր կողմից սպանած մարդկանց արյան համար, թե՛ ձեր կողմից սպանած կենդանիների, թռչունների, սողունների եւ ձկների արյան համար:* Այսպիսի հատուցման հաստատումը, բացի այն ամենից, ինչ տրված է այս գրքի նախաբանում, նաև Տիրոջ հետևյալ խոսքերում է արտասանված Ամբակում մարգարեի բերանով, և որոնցից պարզ է դառնում, որ մարդը իր բոլոր չար արարքների, այդ թվում՝ կենդանիների սպանության համար չի խուսափի գալիք հատուցման օրից. *«Քանի որ Լիբանանի ամբարշտութիւնը կը ծածկի քեզ, գազանների թշուառութիւնը կը զարհուրեցնի քեզ՝ մարդկանց արեան, երկրի, քաղաքի ու նրա բոլոր բնակիչների ամբարշտութեան պատճառով:»* (Ամբակ 2:

17), քանի որ կենդանիների արյունը, ինչպես տեսանք, դա նրա համապարփակ արյունն է, ով միավորում է բոլորին իր մեջ, ինչպես երկրային Օվկիանոսն է միավորում իր մեջ բոլոր լճերի, ծովերի, օվկյանոսների, գետերի ու վտակների, աղբյուրների սառը եւ տաք, անալի և աղի ջրերը, ամբողջ իրենց բազմազանության մեջ:

Մակայն հատուցումը լինելու է ոչ միայն կենդանիների սպանության, այլև նրանց անխնահ շահագործման համար: Դա կարելի է եզրակացնել Զաքարիա մարգարեի բերանով արտասանված Տիրոջ հետեւյալ խոսքերից. *«Այդ օրերից առաջ վարձ չէին տալիս մարդու՝ իր աշխատանքի համար, եւ ոչ էլ յարգի էր վարձը անասունների համար, խաղաղություն էլ չկար եկողի ու գնացողի համար՝ թշնամու տուած նեղությունից, քանի որ ես թշնամացրել էի բոլոր մարդկանց՝ իւրաքանչիւրին հանելով իր ընկերոջ դէմ»* (Զաք 8: 10), որոնք ցույց են տալիս, որ նման հատուցման օրը հաստատ կգա: Եւ դա լինելու է Աստուածային Դատաստանի օրը:

Իսկ նրանց, ով հոգ է տանում կենդանիների մասին, Աստվածը մարգարեի բերանով *երանի* է տալիս, ասելով. *«Երանի՛ նրանց, ովքեր սերմ են ցանում այն բոլոր ջրերի մօտ, ուր ոտք են դնում եզն ու էշը»* (Եսայ 32: 20), քանզի նրանց մասին հոգ տանելը *արդարության* նշան է, որ միշտ գալիս է Աստծո և նրա արարչության սիրուց, ինչը նաև խելքի առկայության դրսևորում է: Ինչպես Սողոմոնն է ասում իր Առակներում, *«Արդարը խղճում է իր անասունին, բայց ամբարիշտները անողորմ են»*: (Առակ 12: 10)

Խոսքում արտահայտված արդարությունն ու սերն են, որ անսխալ կերպով սահմանում են այն որպես աստվածաշունչ: Եվ հենց դրանք են տարբերում Աստծո որդիներին օտարներից: Դրա մասին վկայում է նաև հայրապետ Զավենի կտակը իր որդիներին՝ ի համաձայն Տասներկու հայրապետների պարականոն Կտակարանի, որտեղ նա ասում է.

«Այժմ, իմ զավակներ, ես պատվիրում եմ ձեզ պահել Տիրոջ պատվիրանները եւ ողորմություն ցուցաբերել ձեր մերձավորին, եւ լինել բարի սրտով ոչ միայն մարդկանց, այլ նաեւ համր կենդանիների հանդեպ: Հենց այդ բանի համար Տերն օրհնեց ինձ, եւ երբ բոլոր եղբայրներս հիվանդացան, ես առողջ մնացի. քանզի Տերը գիտեր բոլորի մտքերը»: (12-ը պատ. Զաւէն, Վ, 1-2) ¹¹

Եվ ինչպես, ըստ Քրիստոսի, մարդկանց *«գլխի մազերը բոլորն իսկ հաշուուած են»*: (Մթ 10: 30), այնպես էլ հաշված են բոլոր կենդանիների – զազանների, անասունների, թռչունների սողունների որ ձկների հոգիները, որ չեն կարող կորչել: Եվ ինչպես մարդու գլխի մազերը ենթակա չեն Դատի, նույնպես էլ ենթակա չէ Դատի ոչ մի կենդանի, քանի որ Դատը միայն «գլխի» վրա պիտի լինի, որի պատճառով բոլորը ապականեցին իրենց ճանապարհը – ոչ, ըստ իրենց ցանկության, այլ իրենց վրա իշխող մարդու կամքով, որը Բարի Հովիվ լինելու փոխարեն ոչ միայն թողեց նրանց բախտի քմահաճույքին, բայց և ինքն իր խելագառության մեջ սկսեց սպանել և ուտել նրանց մարմինները, վերածելով բոլոր կենդանիների, և հատկապես անասունների, կյանքը անվերջ սարսափի ու

մղձավանջի, որում, առտացուլելով մարդուն, նաև նրանք, մարդու նման, վայրի գազաններ դարձած, սկսեցին սպանել և ուտել միմյանց, քանի որ ամբողջ երկիրը պատած չար շունչը ներխուժեց նաև իրենց անոթների մեջ:

Դրանով հանդերձ պետք է նշել, որ ոչ բոլոր կենդանիներն են Աստծո կողմից ստեղծված: Նրանք, որ չարի կերպարն են ներկայադնում, չարի ստեղծագործությունն են և Աստծո օրհնությունից զրկված՝ կանհայտանան, ինխպես կանհայտանա ինքն չարը: Այսպիսի եզրակացության են բերում Սողոմոնի հետևյալ խոսքերը, որ վերաբերում են չարի՝ Քանանի որդիներին, և որոնք, ինչպես նա ասում է, *«գարշելի կենդանիներ են պաշտում, ինչն արդեն ծայրայեղ անմտութիւն է: Եթէ այդ կենդանիները համեմատուեն ուրիշների հետ, կտեսնենք, որ դրանք չունեն նրանց գեղեցկությունն ու գրավչությունը և զրկված են Աստծո հավանությունից ու օրհնությունից:»* (Իմաստ. Սողոմոնի 15: 18-19) ¹²

Բայց նրանք պաշտում են դրանց՝ տեսնելով նրանց մեջ իրենց իսկ էությունը արտահայտող պատկերները:

Կարելի է հասկանալ, որ դրանց շարքում են նաև այն մինչքրիստոսյան սողունները, որ անհայտացել են երկրի երեսից, թեև ներկա են նրանց պատկերը կրողները, և ներկա կլինեն մինչև Վերջին Աստծո Դատը: Եվ նրանք ոչ միայն ներկա են, այլև աննկատ կերպով ազդում են մարդու բոլոր ստեղծագործությունների վրա, այս կամ այլ ձևով դրանց սողունների պատկեր տալով: Այդ ստեղծագործություններից ամենատպալորիչը Վատիկանի ընդունելության սրահն է, որտեղ ակնհայտ ձևով նկատվում է Օձի պատկերը: ¹³ Այդ անհայտացած սողունների, տարբեր տեսակի դինոզավրերի պատկերներով է ներշնչված, օրինակ, ժամամնակակից ավտոմեյենաների դիզայնը, նրանց պատկերներն ենք տեսնում երեխաների խաղալիքներում եւ այլն: Այս ամենի մեջ զգացվում է մի լուր նոստալգիկ հակվածություն վերակենդանացնելու այն, ինչ վերացվել է Տիրոջ կողմից, եւ ակնհայտ վկայություն Աստծո եւ Նրա Սրբության դեմ աշխարհի կողմից տարվող թաքնված պատերազմի հստակ ապացույց:

1. Այստեղ « հոգի» է թարգմանված սխալ ձևով. Ուստի եւ «հոգին» փոխել եմ «նզով»

2. Легенда об Авгаре Памятник датируется концом IV - началом V века. Воспроизводится по публикации: Е.Н.Мещерская. Легенда об Авгаре. М.: Наука, 1984. С. 185-203. Здесь же комментарии и фототипическое воспроизведение сирийского оригинала. – Ինտենսետում տեւ. Библиотека Якова Кротова. «ЛЮДИ И ТВАРИ ВЕРЯТ В БОГА, КОТОРЫЙ БЫЛ ЧЕЛОВЕКОМ».

3. *« Не вреди человеку и ступай с хозяином своим, да служи ему. Исцелит и тебя Господь, и его таким целением, что никогда страдать тебе не придется.»*

(Деяния Филиппа 10) Տե՛ս Библиотека Якова Кротова. Деяния апостола Филиппа.
<http://krotov.info/acts/05/3/filip.htm>

4. Այստեղ Եջմիածնի թարգմանության մեջ թարգմանիչը առհամարհելով բնագրի խոսքը «մարմնի» փոխարեն «մարդիք» է գրել: Դա կարևոր է նշել, որովհետև «մարդը» միայն մարդուն նկատի ունի, իսկ «մարմինը» ամեն տեսակ մարմնին է վերաբերում, լինի դա մարդ թե այլ արարած:

5. Ռուսերենից թարգմանություն: Деяния Иуды-апостола. Деяние седьмое (138): «и прославится имя Твоё нами и животными бессловесными» Տե՛ս. Библиотека Гумер
https://www.gumer.info/bogoslov/Buks/apokrif/Dejan_IudFom.php

6. Այստեղ նույնպես բնագրի πνεῦμά -ն թարգմանված է որպես հոգի: Արդեն ասված պատճառով ես ուղղել եմ այդ սխալը և «հոգու» փոխարեն « ոգի եմ գրել: Պետք է ասեմ նաև, ու եթե թարգմանիչը ուշադիր լիներ, հետևյալ խոսքերից կհասկանար, որ խոսքը գնում է շնչի մասին և ոչ թե հոգու, որ անոթ է իրենից ներկայացնում և չի կարող «քամի» լինել, որ «ուր ուզում է՝ փչում է»:

7. Սրանից մենք կարող ենք հասկանալ, թե ինչու է Աստծո Խոսքը մերժում ամեն տեսակ պատկերներ, լինեն դրանք երկնքի կամ երկրի ներկայացուցիչների պատկերներ, կամ երկրի տակ և ջրերում ապրողների պատկերներ, քանի որ ճանաչված երկրային պատկերները չեն ներկայացնում ո՛չ մարդու մարմնի, ո՛չ էլ որեւէ այլ արարածի մարմնի իրական պատկերը: Ուստի երկրի վրա արված պատկերները մոլորեցնում են մարդուն, պահում են նրա գիտակցությունը երկրային գաղափարների, այսինքն՝ նյութական աշխարհի մահկանացու տարրերի շրջանակում, քանզի մարդը չի կարող նույնիսկ պատկերացնել կյանքն առանց արյան, արանց որովայնի, առանց սեռային տարբերությունների, որոնք ներկա են իր կողմից ստեղծված մարդու, սրբերի և կենդանիների բոլոր պատկերներում:

8.«Էռն» բառը, որ բնորոշ չէ Սուրբ Գրքին, պատճառ հանդիսացավ այս աղբյուրը վերագրելու գնոստիկական պարականոն գրվածքներին, այսինքն՝ նրանց, որ իրենցից մարդկային մտքի պտուղ են ներկայացնում, զուրկ աստվածային ներշնչանքից կամ սրբությունից: Բայց պետք է նկատել, որ հենց սրբութիւնն է, որ ընկած է այս պատգամի հիմքում, որովհետև մարդկային միտքը, որ լի է կենդանիների նկատմամբ արհամարհանքով, չի կարող նման բան արտահայտել: Եվ պետք է նաև նկատել, որ անկախ այն բանից, թե ինչ բառապաշարով է արտահայտվում պարականոնը, կարելո՞րը միտքն է, որը նա արտահայտում է: Իսկ, ըստ այդ մտքի, խոսքը գնում է Աստծո Արքայության մասին:

9. “El Señor ha hecho, pues, al hombre dueño de todos sus bienes y no juzga ni un alma de las bestias a causa del hombre, sino que juzga a las almas humanas a causa del alma de las bestias en el gran eón. Pues el hombre le ha sido deparado un lugar especial, y de la misma manera que todas las almas humanas están contadas, asimismo las de las bestias, sin que pueda perecer ni una de estas almas creadas por el Señor hasta el día del gran juicio. Y todas las almas de las bestias acusan al hombre que mal las apacienta. Quien se porta mal con el alma de las bestias, se porta mal con su propia alma” (2 Henoc, o Libro de los secretos de Henoc 15: 5-9) Fuente: A. Díez Macho, ed. Apócrifos del

Antiguo Testamento, en 5 vols. publicados. Libro de los secretos de Henoc (2 Hen [eslavo]), trad. por A. de Santos Otero, en el vol. 4 [Cristiandad: Madrid, 1982], págs. 161-202.

10. “quien mata, mata a su hermano. Y de él se alejará la Madre Terrenal y le retirará sus pechos vivificadores. Y se apartarán de él sus ángeles y Satán tendrá su morada en su cuerpo. Y la carne de los animales muertos en su cuerpo se convertirá en su propia tumba. Pues en verdad os digo que quien mata se mata a sí mismo, y quien come la carne de animales muertos come del cuerpo de la muerte. Pues cada gota de su sangre se mezcla con la suya y la envenena; su respiración es un hedor; su carne se llena de forúnculos; sus huesos se convierten en yeso; sus intestinos se llenan de descomposición; sus ojos se llenan de costras; y sus oídos de ceras. Y su muerte será la suya propia. Pues solamente en el servicio de vuestro Padre Celestial son vuestras deudas de siete años perdonadas en siete días. (...)No matéis, ni comáis la carne de vuestra inocente presa, no sea que os convirtáis en esclavos de Satán. Pues ése es el camino de los sufrimientos y conduce a la muerte. Sino haced la voluntad de Dios, de modo que sus ángeles os sirvan en el camino de la vida. Obedeced, por tanto, las palabras de Dios: "Mirad, os he dado toda hierba que lleva semilla sobre la faz de toda la tierra, y todo árbol, en el que se halla el fruto de una semilla que dará el árbol. Este será vuestro alimento. Y a todo animal de la tierra, y a toda ave del cielo, y a todo lo que se arrastra sobre la tierra, donde se halle el aliento de la vida, doy toda hierba verde como alimento. (...). Pero no comeréis la carne, ni la sangre que la aviva. Y en verdad demandaré vuestra sangre que brota con fuerza, y vuestra sangre en la que se halla vuestra alma. Demandaré todos los animales asesinados y las almas de todos los hombres asesinados.” EL EVANGELIO DE LOS ESENIOS – EVANGELIO DE LA PAZ.

EdmondSzékely, Londres, 1937. Primera edición: Junio de 1986. Octava edición: Febrero de 2001
«истинно говорю вам, - читаем мы в нём, - кто убивает - убивает самого себя, а кто ест плоть убитых зверей - ест тела смерти. Ибо в крови его каждая капля их крови превращается в яд, в его дыхании их дыхание превращается в зловоние, в его плоти их плоть - в гнойные раны, в его костях их кости - в известь, в его внутренностях их внутренности - в гнилье, в его глазах их глаза - в пелену, в его ушах уши их - в серную пробку. И смерть их станет его смертью. Ибо только через служение вашему Отцу Небесному ваши долги семи лет прощаются за семь дней. (...) Не убивайте и не питайтесь плотью невинной жертвы своей, чтобы не стать вам рабами Сатаны. Ибо это путь страданий, и ведет он к смерти. Но исполняйте волю Бога, чтобы ангелы его могли служить вам на пути жизни. Итак, повинуйтесь словам Бога: "Взгляните, я дал вам все травы, несущие зерно, которые по всей земле, и все деревья, несущие плоды, дабы принимали вы в пищу. И каждому зверю земному и каждой птице парящей и всему, что ползет по земле и в чем есть дыхание жизни, дал я все травы зеленые в пищу. (...)Но плоть и кровь вы не должны есть. И, конечно, потребую я кровь вашу струящуюся, вашу кровь, в которой душа; потребую я (за) всех убитых зверей и души всех убитых людей» (Евангелие от есеев).См. в интернете в библиотеке Гумер. Перевод с арамейского Э. Б. Шекли; русское изд., С. Богачкина, А. Журавлёв.

11.« Ныне, дети мои, **завещаю вам хранить заповеди Господа, и творить милость ближнему, и добросердечными быть не только к людям, но и к бессловесным животным.** За это и благословил меня Господь, и когда занемогли все братья мои, оставался я здоров; ибо знал Господь помыслы каждого». (Завещ.12 патр. Завулон,

V, 1-2) - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001
http://krotov.info/acts/01/joseph/apok_01.html

Կամ իսպանական տարբերակը. *“Ahora, hijos míos, os conmino a que guardéis los mandamientos del Señor, seáis misericordiosos con el prójimo y mostréis entrañas de misericordia hacia todos, no sólo hacia los seres humanos, sino también hacia los irracionales. Por esta razón me ha bendecido el Señor, y mientras todos mis hermanos han sufrido enfermedades, yo he pasado la vida sin ellas, pues el Señor conoce el propósito de cada uno.”* (Test. de Zabulon 5: 1-2) - TESTAMENTOS DE LOS DOCE PATRIARCAS, HIJOS DE JACOB (apócrifo pseudoepigráfico) por A. Díez Macho

12. Այստեղ բնագրի միտքն նորից աղավաղված է, ինչի պատճառով ես ինձ թույլ տվեցի ուղղել այն, հիմնվելով ինչպես հունական բնագրի, այնպես և տարբեր լեզուների թարգմանությունների վրա: Այս է հաերեն թարգմանությունը, *«գարշելի կենդանիներ են պաշտում, ինչն արդեն ծայրայեղ անմտություն է: 19 Եթե այդ կենդանիները համեմատունեն ուրիշների հետ, աւելի վատթար պիտի համարունեն, որովհետեւ անասունը չունի այն գեղեցկությունը, որ կարելի է ցանկանալ:»* Ինչպես տեսնում ենք, 19 համարի տակ գրվածը անիմաստ հորինում է:

13. Տես, օրինակ, այստեղ. <https://historia-arte.com/articulos/la-serpiente-escondida-en-el-vaticano>

Վերջաբան

Իհարկե, ապրելով, ըստ մարգարեի, «*խավարի մեջ ընթացող*» աշխարհում, որտեղ սրբությունը պատիվ չունի, մենք ինքներս չենք կարող որևէ բան փոխել այստեղ, բայց կարող ենք հասկանալ իրերի փոխկապվածությունը եւ փոխել ինքներս մեզ: Օրինակ՝ մենք կարող ենք հասկանալ այն փոխկապվածությունը, որ ընկած է Պյութագորասի հետևյալ խոսքերում. «*Քանի դեռ մարդիկ ոչնչացնում են կենդանիներին, նրանք շարունակելու են սպանել միմյանց: Մարդը, որը սպանության ու ցավի սերմեր է ցանում, չի կարող ուրախություն ու սեր հնձել*»:

Պարզ է, որ այդպիսի հասկացություն մարդուն պիտի ուսուցաներ Եկեղեցին...

Բայց, ինչպես տեսնում ենք, Քրիստոնեական Եկեղեցին, որը, ըստ իր սահմանման և ինչպես իր հիմնադիր Հիսուս Քրիստոսը, *չպիտի լիներ այս աշխարհից*, փաստորեն դարձել է հենց այս աշխարհի եկեղեցի, մտել է կոմպրոմիսի մեջ նրա Իշխանի հետ և ապրում է հեթանոսական ստում, ծառանելով ավելի շատ մարդու որովայնին, քան Սուրբ Աստվածաշնչին, քանզի նրա սրբությունը միայն խոսքերորմ է, եւ ոչ թե իր գործերում: Ավաղ...